

Է. Բ. ԱՂԱՅԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ
ՀԱՅՈՅ
ՏՈՄԱՐՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

Э. Б. АГАЯН

ОЧЕРКИ ПО ИСТОРИИ
АРМЯНСКИХ КАЛЕНДАРЕЙ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1986

63

Ch - 114

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱԺԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Է. Բ. ԱՂԱՅԱՆ

Ա Կ Ն Ա Ր Կ Ն Ե Ր
ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

2906



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1986

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ Հ. Գ. ՀԱԿՈՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր Հ. Զ. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ և բանասիրական գիտությունների թեկնածու Ն. Մ. ՍԻՄՈՆՅԱՆԸ

Աղայան Է. Բ.

Ա. 442 Ակնարկներ հայոց տոմարների պատմության: ՀՍՍՀ ԳԱ. Հ. Աճառյանի անվ. լեզվի ին-տ./Պատ. խմբ.՝ Հ. Գ. Հակոբյան.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986.— 300 էջ

Մենագրությունում արված է հայ ժողովրդի օգտագործած տարբեր տոմարների քննական պատմությունը՝ սկզբից մինչև XVII դարի սկիզբը: Աշխատության մեջ ներկայացվել ու բնութագրվել են արեգակնային օրացուցային համակարգով ստեղծված հայոց Բուն թվականը, հայոց Մեծ թվականը և հայոց Փոքր (Սարկավաղաղիր) թվականը: Աշխատությունն ունի պատմական-տեսական և գործնական նշանակություն՝ հայերի օգտագործած շարժական օրացուցային համակարգով և տարբեր «թվականներով» արձանագրված տարեթվերի վերծանության համար:

Հասցեագրվում է հայ մշակույթի պատմաբաններին և ընթերցող լայն շրջաններին:

Ա 1402000000 43—85 703(02)—85

ԳՄԴ

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1936

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ ժողովուրդը, սկսած հնագույն ժամանակներից, տարբեր դարաշրջաններում օգտագործել է տարբեր «թվական»-ներ, այսինքն՝ տոմարներ: Այդ տարբեր թվականների ուսումնասիրությամբ զբաղվել են բազմաթիվ հայագետ-տոմարագետներ, որոնք և ստեղծել են հայագիտության ճյուղերից մեկը՝ հայկական տոմարագիտությունը, հայոց թվականների գիտական պատմությամբ հանդերձ: Մինչսովետական շրջանի այդ կարգի լավագույն ուսումնասիրությունները պատկանում են է. Գյուլոբրիեին¹ և Ղ. Ալիշանին², որոնց աշխատությունները հիմք և ուղեցույց են հանդիսացել հետագայի տոմարագիտական հետազոտությունների համար: Տոմարագիտական ուսումնասիրությունները մեծ ծավալ ստացան ու նոր, ավելի բարձր մակարդակի հասցվեցին սովետահայ մաթեմատիկոս-տոմարագետներ Բ. Ե. Թումանյանի³ և Հ. Ս. Բաղալյանի⁴ հետազոտություններով, ինչպես և Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի մի շարք տոմարական ձեռագրերի հրատարակություններով⁵, որոնք հսկայական նյութ են մատակարարում հայոց թվականների պատմության ուսումնասիրության համար:

Այդ նյութերի հետազոտությամբ հայ ժողովրդի կողմից օգտագործված զանազան տոմարների պատմությունը ներկայացվել է իր ամբողջությամբ մեջ:

Սակայն, շնայած դրան, դեռ կան չպարզաբանված խնդիրներ, այսպես ասած, բաց տեղեր, որոնց լրացումը հետագա ուսումնասիրություն է պահանջում: Ավելին. որոշ հարցերի քննությունը կատարվել է եղած աղբյուրների մակերեսային ուսումնասիրության, երբեմն էլ կողմնակալ

¹ M. E' Jouard Dulaurier, Recherches sur la chronologie arménienne technique et historique, Paris, 1859.

² Ղ. Ալիշան, Յուշիկը Հայրենաց հայոց, Վենետիկ, 1869:

³ Բ. Ե. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երևան, Ա, 1964, Բ, 1968: Նույնի՝ Տոմարի պատմություն, Երևան, 1972:

⁴ Հ. Ս. Բաղալյան, Օրացույցի պատմություն, Երևան, 1970:

⁵ Պրոֆ.-դ-ր Ա. Գ. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944: Նույնի՝ Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, և այլն (այսուհետև առաջինը՝ ՇԻՐ., երկրորդը՝ Հովհ.):

մոտեցման հիման վրա, որոնք և առաջ են բերել ոչ միայն իրարամերժ կարծիքներ, այլև, առանձին դեպքերում՝ բացահայտ թյուրիմացություններ:

Հայկական հին տոմարի՝ «Բուն հայոց թվականի» և հետագայում օգտագործված տարբեր «թվականների» հետ կապված մի քանի, դեռևս բոլորի կողմից որպես ճշմարտություն ընդունված լուծում շատացած խնդիրների, ինչպես և մի քանի վիճելի հարցերի քննությանն էլ, ահա, նվիրված է սույն աշխատությունը:

Հեղինակ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա. ՆԱԽԱԳԻՏՅԵԼԻՔ

Ժամանակաշափությունը, այսինքն՝ ժամանակի շափումը և որոշ միավորներով (օրերով, ամիսներով և այլն) հաշվելը հիմնված է երկնային մարմինները (Արեգակ, Լուսին, Սիրիուս, Յուպիտեր) տեսանելի շարժման և բնության դանաղան երևույթների ժամանակային զուգահիշյունների վրա: Արեգակի թվացող օրական պտույտը, իրականում՝ երկրի պտույտն իր առանցքի շուրջը, առաջ է բերում օրվա երկու մասերի՝ ցերեկվա և գիշերվա, անընդհատական հաջորդականությունը. ցերեկը և գիշերը դառնում են ժամանակի շափման միավորներ՝ մոտավորապես հավասարաչափ, բայց առանձին-առանձին (օրինակ՝ հինգ ցերեկ և հինգ գիշեր): Զարգացման հաջորդ աստիճանում դրանք միավորվում ու գիտակցվում են իրրև մեկ ամբողջություն՝ իր երկու մասերով, որով և առաջանում է օրվա, որպես ժամանակի շափման ամբողջական միավորի, գաղափարը: Հաջորդ, մարդկանց համար նույնքան կենսական նշանակություն ունեցող և միանգամայն «շոշափելի», այսինքն՝ անխուսափելիորեն ճանաչելի երևույթը միմյանց կանոնավորապես հաջորդող եղանակների պարբերականությունն է: Մարդու կյանքի ու գործունեության և ամբողջ օրգանական աշխարհի կենսագործունեության մեջ վիթխարի դեր խաղացող՝ եղանակների այդ պարբերականորեն կրկնվող հաջորդականությունը ինքնին արդեն որոշակի միավոր է անընդհատական ժամանակի անսկիզբ և անվախճան տևողության մեջ, և մարդը, որի գործունեությունն անխզելիորեն կապված է իրեն շրջապատող բնության հետ, վաղնջական ժամանակներից տարբերակում է տարվա եղանակներն ու գիտակցում դրանք որպես որոշակի ժամանակահատված ներկայացնող միավորներ իրենց ամբողջության՝ տարեկան շրջանի մեջ: Եղանակների փոխհաջորդման ընթացքը կապված է զարնանային ու աշնանային գիշերահավասարների (մարտի 20—21 և սեպտեմբերի 22—23) և ամառային ու ձմեռային արևադարձերի (հունիսի 22 և դեկտեմբերի 22—23), իսկ դրանք էլ, ինչպես ուսուցանում է աստղագիտությունը, համապատասխանում են երկրի որոշակի դիրքերին՝ Արեգակի շուրջը պտտվելու նրա տարեկան շրջանի մեջ: Տարվա այդ շորս կետերում, յուրաքանչյուրի սկզբից մինչև վերջը, դիտողի համար արևածագի ու մայրամուտի պահերին Արեգակը դիտվում

է հորիզոնի տարրեր հատվածներում (հարավ—արևելք—հարավ արևմուտք, արևելք—արևմուտք և այլն): Սա նշանակում է, թե մարդիկ, երկար ժամանակամիջոցում դիտարկելով արևածագի և մայրամուտի պահերին արեգակի դիրքը հորիզոնի վրա, դրան զուգահեռ պող եղանակների փոփոխությունը և ցերեկվա ու գիշերվա տեղությունների կարճացում-երկարացումները, աստիճանաբար դիտակցում են Արեգակի «տարեկան պտույտը» Երկրի շուրջը և դրանով իսկ գտնում ժամանակի շափման ավելի մեծ միավորի՝ տարվա տեղությունը: Քանի որ այս նոր միավորի՝ տարվա տեղությունը հավասար է պարբերաբար կրկնվող շորս պահերի մեկ շրջանին¹, ապա հասկանալի կերպով կարելի է դրանցից որևէ մեկը ընտրել իբրև սկիզբ և հաշվել մինչև հաջորդ սկիզբն ընկած ժամանակամիջոցի օրերի թիվը, ըստ որում դրանցից որն էլ իբրև սկիզբ առնելու լինենք, միևնույն արդյունքին կհասնենք՝ 365 օր (կլոր հաշվով): Սրանով էլ բացատրվում է տարբեր ժողովուրդների հին օրացույցների տարեսկզբի տարբերությունը, եգիպտացիները իրենց տարին սկսում էին հուլիսի 19-ով, հին հռոմեացիները՝ մարտ ամսով, հին հույները՝ հուլիսի 22-ով, ռուսները՝ մարտի 1-ով, հետագայում (1493 թվականից սկսած)՝ սեպտեմբերի 1-ով և այլն, և այլն: Իհարկե, դրանք պատահական, քմահաճորեն ընտրված տարե-սկիզբներ չեն, այլ հնադարյան տարրեր հանրությունների կյանքով ու գործունեությամբ պայմանավորված ընտրություն: Օրինակ, հին հռոմեացիների ընտրությունը՝ տարին մարտից սկսելը, կապված էր զարնանամուտի հետ, իսկ հետագայում փոխադրությունը հունվարի 1-ին՝ զինվորական գործի հետ: Հին Հռոմում մինչև նոր տարվա սկիզբը, ուրեմն՝ մարտից առաջ, զորքերը բաժանում էին կոնսուլների միջև, որպեսզի անհրաժեշտ պատրաստությունները տեսնվեն զարնան սկսվող ռազմարշավների համար: Այս կարևոր ռազմական իրադարձությունն էլ, ահա, Հուլիոս Կեսարը հիմք ընդունեց՝ տարեսկիզբը մարտից հունվարի 1-ը փոխադրելու համար: Հին եգիպտացիների տարեսկիզբը կապված էր հուլիսի 19-ից սկսվող հորդ անձրևների և դրա հետևանքով տեղի ունեցող՝ նեղոս գետի հորդացման հետ և այլն, և այլն:

Ցերեկվա ու գիշերվա և եղանակների պարբերականորեն կրկնվող փոխհաջորդականություն հետ մեկտեղ, ժամանակի հատվածների որոշման համար կարևոր նշանակություն ունի Լուսինը: «Գիշերային լուսատուն» կարևոր դեր էր կատարում հնադարյան մարդու կյանքում. Լուսնի լույսով լուսավորված գիշերները բարենպաստ պայմաններ էին ստեղծում գիշերը

երկրագործական աշխատանքներ կատարելու, ճանապարհորդելու և այլ գործերի համար, ուստի և Լուսնի «ծնվելու», «աճելու», ապա՝ «նվազելու» և «մահանալու» նույնպես պարբերականորեն կրկնվող պահերի իմացումն ու որոշումը գործնականորեն կարևոր նշանակություն ունեցող մարդկանց համար: Լուսնի շորս փուլերի ամբողջությունը հեղուկությամբ որոշվում է սովորական դիտարկումով, երկնակամարում Լուսնի եղջյուրի երևալու օրվանից մինչև հաջորդ անգամ երևալը տևում է մոտ երեսուն օր, եթե այդ տեղությունը պայմանականորեն կոչենք մեկ լուսին, ապա՝ շորս եղանակների համար անհրաժեշտ ժամանակամիջոցում կունենանք 12 լուսին, այլ կերպ ասած՝ մեկ տարվա ժամանակամիջոցը բաժանվում է 12 լուսնային ամսի: Անշուշտ այս հաշիվը «կոպիտ» է, ուստի և հետո է գիտական ճշգրտությունից, բայց մեզ համար այժմ կարևորն այդ չէ, այլ այն, որ եթե մենք տարվա որևէ եղանակի նորալուսնից սկսենք օրերի հաշիվը, ապա տասներեքերորդ նորալուսինը կլինի նույն եղանակին, որ նշանակում է, թե մեկ տարվա ժամանակաշրջանը կտևի մոտավորապես 12 լուսին (= 12 լուսնային ամիս): Այժմ, եթե համեմատենք ժամանակի շափման համար որպես կաշուն միավորներ ընդունվող երևույթները, այսինքն՝ մի կողմից գիշերահավասարներն ու արևադարձերը, իսկ մյուս կողմից՝ լուսնային ամիսները, ապա կստանանք ժամանակաշափության երկու համակարգեր կամ երկու կարգի օրացույցներ՝ լուսնային և արեգակնային օրացույցներ, որոնց համադրությամբ էլ առաջացել է երրորդ համակարգը՝ լուսնաարեգակնային օրացույցը:

1. Լուսնային օրացույցը հիմնված է Լուսնի փուլերի կրկնության պարբերության վրա: Քանի որ Լուսնի շորս փուլերի տասներկու այգուլիսի պարբերությունը տևում է մոտավորապես մեկ տարի, ապա դրա վրա հիմնված տարին՝ լուսնային տարին, բաղկացած է լինում 12 լուսնային ամսից: Ընդունված է, որ բոլոր ժողովուրդներն էլ նախապես ունեցել են լուսնային օրացույցային համակարգ, և դա միանգամայն հասկանալի է: Ցերեկվա և գիշերվա պարբերական հաջորդականությունից հետո, ամենից ավելի դյուրությամբ դիտարկվող և որոշակի ժամանակահատվածի տեղություն ներկայացնող պարբերականությունը Լուսնի փուլերի կրկնվող հաջորդականությունն է, որ և կազմում է լուսնային ամիսը: Պատահական չէ, ուրեմն, որ բազմաթիվ լեզուներում ամիս բառը ծագում է լուսին նշանակող արմատից. ռուսերենում месяц «ամիս» նախապես նշանակել է «լուսին» և ժամանակակից ռուսերենում էլ դեռևս այդ իմաստով գործածվում է, պարսկերեն 𐎠𐎡𐎴 նշանակում է և՛ լուսին, և՛ ամիս (դրա նվազական ձևից է մեր մանիկ բառը), հունարեն μῆνῃς «լուսին» μῆν «ամիս», գերմ. Mond «լուսին» և (բանաստեղծական) «ամիս» և այլն. այս բոլոր բառերը, ինչպես և հայերեն ամիս, լատիներեն mens «ամիս» բառերը ծագում են հնդեվրոպական mēn, mēnes, mēns > mēs

¹ Հնագույն ժամանակներում, տարբեր աշխարհագրական գոտիների կլիմայական պայմաններին համապատասխան, տարին բաժանել են նաև 3 եղանակի:

բառաձևերից, որոնք բոլորն էլ նշանակում էին լուսին և կազմված են պարզական me արմատից, որ նշանակել է «չափել» (հմմտ. հունարեն μέτρον «չափ», լատիներեն metari «չափել» և այլն)²: Թեև ժողովուրդների մեծագույն մասը ժամանակի ընթացքում անցել է արեգակնային կամ լուսնաարեգակնային օրացույցին, բայց դեռ կան ժողովուրդներ, որոնք պահպանել են լուսնային օրացույցային համակարգը, ինչպես, օրինակ, արաբները և թուրքերը:

2. Արեգակնային օրացույցը հիմնված է Արեգակի շուրջը Երկրի տարեկան պտույտի տևողության վրա: Աստղագիտական ճշգրիտ հաշվումներով այդ տևողությունն է 365 օր, 5 ժամ, 48 րոպե, 46 վայրկյան. այդ տևողությունը աստղագիտության մեջ կոչվում է արեադարձային տարի: Հասկանալի է, որ հին ժամանակներում տարվա տևողության այդպիսի ճշգրիտ հաշվարկման չէին հասել, ուստի և տարվա տևողությունը որոշել են ամբողջ օրերի թվով՝ 365 օր: Բայց եթե նույնիսկ այդ ճշգրտությամբ էլ որոշած լինեին տարվա տևողությունը, այնուամենայնիվ տարվա օրերի թիվը օրացույցում չէր կարող արտահայտվել կոտորակներով. ժամանակաշափության հիմնական միավորը հաստատուն մեծություն է՝ 24 ժամից բաղկացած ամբողջ օրը, և այդ է պատճառը, որ այժմ էլ, երբ աստղագիտությունը հասել է դարգացման բարձրագույն աստիճանին, աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների կողմից ընդունված օրացույցային համակարգում (հուլյան համակարգում) կոտորակներ չկան. տարվա տեվեղության կոտորակային մասերը վերածվել են մեկ ամբողջ օրվա՝ շորս տարվա ընթացքում, այսինքն՝ 5 ժամ 48 րոպե 46 վայրկյանը հավասարեցվել են 1/4 օրվա, կամ որ նույնն է, 6 ժամվա: Ըստ այսմ, մեր այժմյան տոմարով օրացույցային տարին արեադարձային տարվա համեմատությամբ երկար է 11 րոպե 14 վայրկյանով, որը հասնում է 1 օրվա տարբերության մոտ 130 տարում: Մի կողմ թողնելով այդ ճշգրիտ հաշվումները, հավաստենք, որ բոլոր հին ժողովուրդները, որոնք օգտագործել են արեգակնային օրացույցային համակարգ, տարին հավասարեցրել են 365 օրվա: Ինչպես ասացինք, այդ տևողության որոշումը հիմնված էր տարվա շորս եղանակների պարբերականության, իսկ դա էլ՝ դարնանային ու աշնանային գիշերահավասարների և ամառային ու ձմեռային արեվադարձերի վրա: Այդ պահերի որոշումը, որով եղանակների հաջորդականության սահմաններն են ճշգրտվում, հեշտ էր նրանով, որ զուգորդվում էր ժամանակաշափության հիմնական միավորի՝ օրվա երկու մասերի (ցերեկվա և գիշերվա) տևողության փոփոխություններով: Եղանակների հաջորդականության ու դրանցից յուրաքանչյուրի տևողության որոշումով

զբաղվող հին «տոմարագետները» տարիների ընթացքում կատարվող դիտարկումների հիման վրա կարող էին ճիշտ կերպով որոշել, թե երբ են գիշերը և ցերեկը հավասար տևողություն ունենում, երբ են լինում ամենաերկար ցերեկն ու ամենակարճ գիշերը, և երբ՝ ամենակարճ ցերեկն ու ամենաերկար գիշերը, իսկ դրանով էլ՝ յուրաքանչյուր եղանակի սկիզբը:

3. Լուսնաարեգակնային օրացույցը լուսնային օրացույցն է՝ համապատասխանեցրած արեադարձային տարվան: Լուսնի շուրջերկրյա պտույտի տևողությունն է 27,3 օր, որի ընթացքում վերականգնվում է նրա դիրքը աստղերի նկատմամբ: Այդ տևողությունը կոչվում է լուսնի սիդերալի³ ամիս: Սակայն լուսնի փուլերի հաջորդականությունը հետևանք է լուսնի, Երկրի, Արեգակ երկնային մարմինների փոխադարձ դասավորության փոփոխության, իսկ Արեգակը նույնպես փոխում է իր դիրքը աստղերի նկատմամբ: Եվ որովհետև լուսնի փուլերի փոխհաջորդման կրկնության պարբերությունը հավասար է Արեգակի նկատմամբ Լուսնի ունեցած ելակետային կամ սկզբնակետային դիրքի վերականգնման պարբերությանը, ապա լուսնային լրիվ ամսվա տևողությունն էլ հավասար կլինի այդ պարբերության ժամանակամիջոցին, որ կազմում է 29 օր, 12 ժամ, 44 րոպե, 3 վայրկյան, որը կլորացնելով կունենանք 29,5 օր: Այսպիսի լուսնային ամիսն էլ կոչվում է սինոդալի⁴ ամիս: 12 լուսնային սինոդային ամիսը, այսինքն՝ մեկ լուսնային տարին, ըստ այդմ, պարունակում է 354 օր, որ արեգակնային տարուց պակաս է 11 օրով: Լուսնաարեգակնային օրացույցների կազմության հիմքում էլ, ահա, ընկած են այդ երկու տվյալները. մի կողմից՝ լուսնային ամսվա համապատասխանությունը լուսնի փուլերին, մասնավորապես ամսվա սկզբի և նորալուսնի զուգորդությունը, մյուս կողմից՝ այդպիսի օրացույցային ամիսներից զոչացող տարվա սկզբի գեթ մոտավոր համընկումը արեադարձային տարվա վերը նշված շորս կարևոր պահերից որևէ մեկին, ասենք՝ դարնանային գիշերահավասարի օրվան:

Ինչպես արեադարձային տարվա 365 1/4 օրը կլորացնելով ստացվում է 365 օր (12 ամիս՝ 30-ական օրով և հավելյալ 5 օր), այնպես էլ լուսնային ամսվա 29,5 օրը կլորացվում է՝ 12 ամիսներից 6-ը՝ 29-ական օրով (թերի ամիսներ), 6-ը՝ 30-ական օրով (լի կամ լրիվ ամիսներ), տարին՝ 354 օր:

Հիշյալ երկու հիմունքներին համապատասխանող օրացույցը, հասկանալի կերպով, պահանջում է լրացնել 11-օրվա պակասը (365—354=

² Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, 1971, էջ 157—158:

³ Լատիներեն sidus (սեոսկանը՝ sideris) «համաստեղություն, երկնային լուսատու, աստղ», որից՝ sidereus «աստղային»:

⁴ Հունարեն σήνοδος «մերձեցում, առընթացում», որից՝ սինոդիկ «առընթացական, համընթացական, զուգընթացական»:

11) ինչ-որ եղանակով: Ամենանախնական ու պարզ եղանակն է 3-րդ տարում մեկ լի ամսով երկարացնել լուսնային տարին, որով կստացվի՝

$$3 \text{ արեգակնային տարի} \times 365 + 1095 \text{ օր}$$

$$3 \text{ լուսնային տարի} \times 354 + 30 \text{ օր} = 1092 \text{ օր:}$$

Այսպիսով, եթե երեք տարուց մեկն ունենա 13 ամիս, ապա լուսնային երեք տարիները մոտավորապես կհավասարվեն արեգակնային տարվա երեք տարիներին (3 օրվա պակասով): Այս հաշվով երեք լուսնային տարին ունենում է 37 ամիս, որոնցից 19-ը՝ լի (30 օր), 18-ը՝ թերի (29 օր): Սակայն երեք օրվա անճշտությունը այնքան էլ փոքր բան չէ. հինգ տարում այդ տարբերությունը կդառնա կես ամիս, որը և զգալի խախտում կառաջացնի տարեկիրից—նորալուսին—գարնանային գիշերահավասար համապատասխանությունից մեջ: Եվ բոլոր այն ժողովուրդները, որոնք հնագույն ժամանակներից լուսնային օրացույցը փոխարինել են լուսնաարեգակնայինով, սկսել են եռամյա պարբերաշրջանով, բայց բայլ առ բայլ մշակել ու կատարելագործել են համապատասխանեցման հիմունքները և հասել հիանալի արդյունքների:

Այսպես, եթե երեք տարվա փոխարեն վերցնենք 8 տարի, ապա երկու եռամյակներում (6 տարում) կունենանք 2184 օր, մնացած երկու տարին՝ 708 օր, ընդամենը՝ 2892, իսկ արեգակնային տարին (365,25·8) հավասար է 2922 օրվա, այսինքն՝ 30 օրով ավելի. սրանից հետևում է, որ եթե 8 տարիներից ոչ թե երկուսը, այլ երեքը դարձնենք 13-ամսյա, ապա կստանանք նույնպես 2922 օր: Այս թվացող ճշգրիտ համապատասխանությունն էլ, սակայն, իրականում ունի զգալի անճշտություններ: Այսպես. եթե մենք հավելյալ (էմբոլիսմիկ) 13-րդ ամիսը ավելացնում ենք 3-րդ, 6-րդ և 8-րդ տարիներում, ապա շորորդ տարվա սկիզբը 3 օրով առաջ է ընկնում, 5-րդ տարին՝ 14 օրով, իսկ 6-րդը՝ 25 օրով, որ ինքնին արդեն մեծ անհամապատասխանություն է: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է որոշել, թե 8 հաջորդական տարիներից որը պետք է լինի հասարակ (12 ամիս=354 օր) և որը՝ «նահանջ» կամ երկար (13 ամիս=384 օր): Երկարամյա դիտարկումների հետևանքով հին ժողովուրդներից շատերը հասել են միանգամայն ճիշտ արդյունքների. երկար տարիները պետք է լինեն 2-րդը, 5-րդը և 7-րդը:

Երկրորդ անհամապատասխանությունն առաջանում է արեգակնային և լուսնային 12-ամսյա տարիների օրերի դեմ նետված կամ կլորացված կոտորակային մասերի՝ ութ տարվա ընթացքում գոյացող տարբերությունից, որը թեև շատ փոքր է, բայց և այնպես երկար ժամանակամիջոցում զգալի տարբերության է հանգեցնում:

Այս հանգամանքներն էլ, ահա, խթան են հանդիսանում հետագա ճշգրտումների, որոնք և հանգեցնում են 19-ամյա (հուն. Ξενοκλειδαιος, հայերեն՝ տասնիններեակ) պարբերաշրջանի համակարգին: Թեև այդ պար-

բերաշրջանի գործադրությունը միմյանցից անկախ հասել են շատ ժողովուրդներ (բաբելացիներ, հրեաներ, հնդիկներ, չինացիներ և այլն), բայց աստղագիտության մեջ մտել է հույն Մետոնի (5-րդ դար մ. թ. ա.) անունով՝ Մետոնի պարբերաշրջան (Մետոնի ցիկլ), ըստ որում հույների մոտ այդ պարբերաշրջանը ստացավ իր հետագա ճշգրտումները Կալիպոսի (4-րդ դ. մ. թ. ա.) և Հիպարքոսի (2-րդ դ. մ. թ. ա.) ուղղումներով: Մետոնի սահմանումի համաձայն 235 լուսնային ամիսը (125 լրիվ և 110 թերի, ընդամենը՝ 6940 օր), համապատասխանում է 19 արեգակնային տարվա:

Կալիպոսի ուղղումը հետևյալն է. «Մետոնի շրջանից դուրս բերված արեգակնային տարին չափազանց երկար է: Հիրավի, ունենք՝

$$\frac{6940}{19} = 365 \frac{5}{19} = 365 \frac{20}{76} \text{ օր}$$

Սակայն, ըստ եզրակացությունների, արեգակնային տարին հավասար է

$$365 \frac{1}{4} = 365 \frac{19}{76} \text{ օրվա:}$$

Այսպիսով, արեգակնային տարին Մետոնի շրջանում $\frac{1}{76}$ օրով երկար

է հարկ եղածից. 76 տարում օրացույցը հեռանում է արեգակից մեկ օրով: Դրա համար էլ բնական է Մետոնի շրջանը կրճատել 1 օրով՝ մեկ լրիվ ամիսը փոխարինելով թերի ամսով: Այդ զեպքում կստացվի.

$$76 \text{ տարի} \times 365 \frac{1}{4} \text{ օրով} = 27759 \text{ օրվա,}$$

$$\text{Մյուս կողմից: } 499 \times 30 + 441 \times 29 = 27759:$$

Ըստ այդմ, կարելի է ընդունել. 76 (հուլյան) տարին = 940 լուսնային ամիսների, որոնցից թերի են 441-ը և լրիվ՝ 499 = 27759 օրվա⁵:

Մենք այսպես մանրամասն խոսեցինք Մետոնի շրջանի և Կալիպոսի ուղղման մասին՝ քաղվածաբար առնելով Իգելսոնի գրքից, որովհետև, ինչպես ստորև կտեսնենք, այդ երկու պարբերաշրջանների (19-ամյա շրջան՝ տասնիններյակ և 76-ամյա շրջան) համաձայն կազմել են 19-ամյա և 76-ամյա զատկացանկեր քրիստոնեական եկեղեցու համար, զանազան երկրներում, այդ թվում և Հայաստանում: Այդ զատկացանկերի հիմունքը եղել է այն, որ տասնինն տարվա (Մետոնի պարբերաշրջանի) նորալուսնի օրերը կրկնվում են նույնությամբ. եթե, օրինակ, տասնիննամյա պարբերաշրջանի առաջին տարում, ասենք՝ 1900 թվականին, զատկական նորալուսինը եղել է ապրիլի 5-ին (հին տոմարով), ապա նորալուսինը նույն

⁵ Н. Идельсон, История календаря, Л., 1925, с. 124—125

օրը Լլինի նաև 1919, 1938, 1957 և հաջորդ 19-ամյակների առաջին տարում: Հասկանալի է, որ Կալիպոսի ուղղումով ստացված 76-ամյա շրջանը շատ ավելի ճշգրիտ է, որի պատճառով էլ մ. թ. III—IV դարերում շատ ժողովուրդներ անցել էին այդ պարբերաշրջանի համաձայն կազմվող դատկացանկերին:

Բ. ՏՈՄԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԸՆԵ ՀԱՏԱՍՏԱՆՈՒՄ

Մեզ հայտնի հայկական հին օրացույցի («Բուն թվականի») սկզբնավորումը հասնում է մ. թ. ա. առաջին հազարամյակի կեսերին: Այդ թվականը, այսինքն տոմարը, ներկայացնում է արեգակնային օրացույցային համակարգը և վկայում է այն մասին, որ հին Հայաստանում մ. թ. ա. I հազարամյակում օգտագործվել է օրացույցային մի համակարգ, որն իր կառուցվածքով, զարգացման աստիճանով և աստղագիտական գիտելիքների մակարդակով կարող է համեմատվել հին ժողովուրդների արեգակնային օրացույցների այնպիսի դասական նմուշի հետ, ինչպիսին եղել է եգիպտական օրացույցը: Հասկանալի է, որ իր զարաշրջանի համար այդպիսի մի կատարյալ օրացույցային համակարգի գոյությունը անխուսափելիորեն ենթադրում է աստղագիտական գիտելիքների և ժամանակաչափության ավելի նախնական համակարգերի երկարատև զարգացում ու կատարելագործում: Ուստի և՛ հայերի օգտագործած հին տոմարի («Բուն հայոց թվականի») ուսումնասիրությանն անցնելուց առաջ, անհրաժեշտ է գոնե թուղիկ կերպով ծանոթանալ դրան նախորդած տոմարական համակարգերին և աստղագիտական գիտելիքներին: Սակայն, նախքան առաջադրված խնդրին անցնելը, մենք անհրաժեշտ ենք համարում հետևյալ պատմագիտական ու տերմինաբանական ծանոթությունը տալ:

Սովետահայ պատմագիտության զարգացման արդի փուլում ընդունված տեսակետ է այն, որ հայ ժողովրդի կազմավորումը իր ավարտին է հասնում մ. թ. ա. VI—V դարերում, ըստ որում V դարում արդեն գոյություն ունեւր հայկական պետականություն (Երվանդունիների թագավորությունը): Այդ ժամանակաշրջանին նախորդած այն պետական կազմավորումները, ցեղային միությունները, ցեղախմբերն ու առանձին ցեղերը, որոնք եղել են պատմական Հայաստանի տարածքում, հասկանալի պատճառով ընդհանուր անվանում չունեն: Մյուս կողմից, այդ դարաշրջանի աստղագիտական այն գիտելիքներն ու տոմարական համակարգերը, որոնց մասին խոսելու ենք, չենք կարող հատկացնել այդ կամ այն ցեղախմբին, ցեղային միավորման կամ ցեղին, քանի որ եղած տվյալները դրա հնարավորությունը չեն տալիս: Սա նշանակում է, թե մ. թ. ա. V—VI դարերին նախորդած զարաշրջանների համար «հայկական» անվա-

նումը գործածելը նպատակահարմար չէ, որովհետև այդ բառը նշանակում է հայերին վերաբերող՝ պատկանող, հայերի օգտագործած կամ ըստեղծած՝ զարգացրած: Ընդդէմ է, այդ բառը որոշ բառակապակցություններում գործածվում է նաև «Հայաստանի, հայաստանյան» նշանակությամբ (հմմտ. Հայկական լեռնաշխարհ և այլն), բայց հենց այդ երկրմասությունն էլ տվյալ դեպքում հնարավոր չի դարձնում «հայկական» բառի օգտագործումը նշված դարաշրջանի պատմական իրադարձությունների, հուշարձանների, երևույթների համար (ոմանք կհասկանան և կմեկնարանեն «Հայաստանի», իսկ ոմանք էլ՝ «հայերի» նշանակությամբ): Այս նկատառումներով մ. թ. ա. V—VI դարերին նախորդող զարաշրջանների տոմարը, տոմարական համակարգերը և այլն կոչելու ենք ճիշտ հայաստանյան կամ ճիշտ հայաստանցիների (= Հին Հայաստանի բնակիչների) ընդհանուր անվանումներով:

Հին հայաստանցիների աստղագիտական և տոմարական գիտելիքների մասին իրական տվյալներ մեզ հաղորդում են ժայռապատկերներն ու հնագիտական գտածոները: Ժայռապատկերներ հայտնաբերվել են Հայաստանի բազմաթիվ վայրերում. դրանցից հնագույնները հասնում են մինչև մ. թ. ա. 8-րդ հազարամյակը⁶, իսկ նորագույնները՝ մ. թ. ա. առաջին հազարամյակի կեսերը: Առայժմ հայտնի և ուսումնասիրված ժայռապատկերների եղած աստղագիտական տվյալները հետևյալներն են:

1. Արեգակի, Լուսնի և մոլորակների կամ աստղերի գաղափարազրական պատկերումները, որոնք արտացոլում են հին հայաստանցիների պատկերացումները՝ մեզանից 9—10 հազար տարի առաջ: Ուսումնասիրողները գտնում են, որ ժայռապատկերների մեջ շատ հաճախակի հանդիպող արեգակի գաղափարանշանը վկայում է հին հայաստանցիների արեգակաշտություն մասին:

2. Մի քանի ժայռապատկերներում կան գաղափարանշաններ, որոնք պատկերում են Լուսնի փուլերի և, դրանով իսկ՝ լուսնային ամսվա տևողությունը: Ուսումնասիրելով այդ ժայռապատկերները, աստղագետ Բ. Ն. Թումանյանը հետևյալն է գրում. «Վերջին տարիներս Գեղամա և Վարդենիսի լեռներում հայտնաբերվեցին աստղագիտական բնույթի ժայռապատկերներ, որոնք թվազարվում են I—IV հազարամյակը (մ. թ. ա.): Գրանցից երկուսի վրա պատկերված սկավառակների շուրջը կան 27 ճառագայթներ և բացի այդ, երկու իրարից տարբեր՝ մեկը մյուսից փոքր-ինչ երկար, գծիկներ: Այստեղ, անկասկած, մենք գործ ունենք Լուսնի փուլերի կըր-

⁶ Ժայռապատկերների պատճենակարների հավաքածուները և դրանց ուսումնասիրությունները տե՛ս Գ. Հ. Կաթախանյան և Պ. Գ. Մախյան, Մյունխենի ժայռապատկերները, Երևան, 1971: Հ. Ա. Մարտիրոսյան և Հ. Ռ. Իսախանյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1971:

կրնման պարբերության հետ: Եվ իրոք, լուսնային (սինդոլային) ամիսը մոտ 29,5 օր է, որից անդին աչքով կուսինը Հայաստանից երևում է 27 օր, իսկ 2,5 օրն էլ չի երևում՝ գտնվելով Արեգակից ոչ շատ մեծ անկյունային հեռավորության վրա (կորչում է նրա շլացուցիչ ճառագայթներում): Իհարկե շերեացող օրերը անհրաժեշտ կլինեն երկացող օրերից տարբեր ձևով պատկերել, մի բան, որը, ինչպես տեսանք, կատարված է ժայռապատկերների վրա⁷: Մեր լավագույն տոմարագետ-աստղագետ Բ. Թումանյանի վերծանումը միանգամայն ընդունելի է, իսկ առանձնացված երկու գծիկների մասին արված մեկնաբանությունը՝ ճշմարիտ, ըստ որում այդ նույն բանը շատ ավելի որոշակի կերպով իր արտահայտությունն է գտել, ինչպես ստորև կտեսնենք, նաև գոտի-օրացույցով ներկայացված օրացուցային համակարգում:

Ժայռապատկերների տվյալների զուգահեռները հայտնի են հնագիտական պեղումներով գտնված բրոնզե ու կավե դանագան իրերի վրա: Այդ իրերի վրա պատկերված են Արեգակը, Երկիրը, կուսինը, իսկ դա ցույց է տալիս, որ դեռևս վաղնջական ժամանակներում հայաստանցիներն զբաղվել են աստղագիտական դիտարկումներով ու ձեռք բերել որոշակի գիտելիքներ, որոնք և ժամանակաշարի մասին անխախտ հիմքն են հանդիսացել: Աստղագիտական տեսակետից կարևոր նշանակություն ունի, այսպես կոչված, «արեգակնային համակարգության մոդելը», որի մասին Բ. Թումանյանն ու Հ. Մնացականյանը գրում են. «Աստղագիտական տեսանկյունից մեծ արժեք է ներկայացնում արեգակնային համակարգության մոդելը պատկերացնող բրոնզե թիթեղից պատրաստված իրը, որը գտնվել է Սևանի ավազանում: Այն պատկանում է 10—9-րդ դարերին (մ. թ. ա.): Նրա ստորին մասում համեմատաբար մեծ չափերով պատկերված է սնամեջ Երկիրը՝ շրջապատված ջրային ու մթնոլորտային շերտերով, իսկ դրանից վերև պատրաստված են յոթ լուսատուները: Ընդ որում ամենավերելի ճառագայթող սկավառակը մյուսներից ավելի մեծ է և, հավանաբար, խորհրդանշում է արեգակը»⁸:

Հին Հայաստանում գոյություն ունեցած աստղագիտական գիտելիքների մակարդակի և, մասնավորապես, օրացուցային համակարգի մասին շատ որոշակի տվյալներ է ներկայացնում Սանահինում 1946 թվականին գտնված գոտի-օրացույցը, որի ուսումնասիրությունն էլ նվիրված է Բ. Թումանյանի և Հ. Մնացականյանի արդեն հիշված աշխատությունը: Գոտու վրա պահպանված պատկերները և երկրաչափական ձևերը, ըստ հեղինակների, հետևյալներն են⁹.

⁷ Բ. Ե. Թումանյան, Տոմարի պատմություն, էջ 39:

⁸ Բ. Թումանյան, Հ. Մնացականյան, Բրոնզե դարի գոտի-օրացույցը, Երևան, 1965, էջ 11—12:

⁹ Նույն տեղում, էջ 34—42:

1. Երեք խմբի բաժանված 12 ձևերի պատկերներ (չորսական՝ յուրաքանչյուր խմբում). խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է տարվա մեկ եղանակը, հետևաբար՝ գոտին պատրաստելու դարաշրջանում հայաստանցիները տարին բաժանել են երեք եղանակի՝ չորսական ամիսներով:

2. Կուսնի երկու պատկեր, որոնց շուրջը դրված են 14-ական կետեր: Երկու պատկերներում էլ կուսինը մանգաղաձև է, միմյանց հակադիր դիրքով, ուստի և խորհրդանշվում է լուսինը տեսանելի ձևով՝ առաջին և վերջին քառորդներում: Կետերը ներկայացնում են օրերի քանակը՝ նորալուսնից-լիալուսին և լիալուսնից-վերջալուսին՝ 14-ական օր, ընդամենը՝ 28 օր: Ամիսը, հետևաբար, կետերի հաշվով ներկայացված է 28 օրով:

3. Պատկերված են 27 եռանկյուններ, որոնք «ցույց են տալիս աստղերի նկատմամբ կուսնի դիրքի վերականգնման պարբերությունը՝ լրիվ օրերով արտահայտված»:

4. Գոտին ունի 236 պարույր և 118 կետ, ընդամենը՝ 354, որ լուսնային տարվա 354 օրն է:

5. Գոտու վրա չորս խմբի բաժանված շեղանկյուններ (ոմբեր) կան, 2 խմբում՝ վեցական, երկուսում՝ յոթական: Շեղանկյունները ենթադրում են, որ դրանք շաբաթվա օրերի թիվն են ներկայացնում. 7 շեղանկյունները՝ ամբողջական յոթնօրյա շաբաթը, 6-ը՝ շաբաթվա միայն 6 աշխատանքային օրերը:

Հանգամանորեն քննության առնելով թվարկված բոլոր պատկերները և երկրաչափական ձևերը՝ հեղինակները հանգում են հետևյալ եզրակացություններին: «Հայկական լեոնաշխարհում մոտ 3000 տարի առաջ ապրող տեղաբնիկները աստղագիտական բարձր կուլտուրայի հետ, ինչպես սպասելի էր, ունեցել են նաև բավականին կատարելագործված լուսնաարեգակնային օրացույց: Այդ օրացույցում՝

1. Տարին կազմված էր 12 լուսնային ամսից և պարունակում էր 354 օր:

2. Տարին բաժանված էր 3 եղանակի:

3. Տարեսկիզբը մոտավորապես համընկնում էր դարձան սկսվելու հետ:

4. Որպեսզի տարեսկիզբը շատ շտեղափոխվի, ժամանակ առ ժամանակ մոտցվում էր օրացուցիչ ամիս:

5. Ամիսների սկիզբը որոշվում էր նորալուսնի մահիկի անմիջական դիտումներով, իսկ տեսանելի փուլերը հաշվում էին 28-օրյա տևողությամբ:

6. Ամիսը բաժանված էր շաբաթների, որոնք հավանաբար կրում էին Արեգակի, կուսնի և անդեն աչքով նկատվող 5 մոլորակների անունները»¹⁰:

¹⁰ Նույն տեղում, էջ 41:

Համեմատելով ժայռապատկերների, արեգակնային համակարգության մոդելի և գոտի-օրացույցի տվյալները՝ տեսնում ենք, որ դրանք փոխադարձաբար հաստատում ու լրացնում են միմյանց, ուստի և բերված եզրակացությունները լիովին հիմնավորված են: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ երկու վերապահություն կարելի է անել:

1. Ինչպես տեսանք, ժայռապատկերների մեջ Լուսնի տեսանելի օրերի տևողությունը ներկայացվել է 27 ճառագայթներով (=27 օրով) և երկու առանձնացված գծիկներով (2 օր Լուսինը չի երևում), ուստի և լուսնային ամիսը հավասարվում է 29 օրվա: Գոտի-օրացույցի վրա տեսանելի օրերի թիվն է 28, որ ավելի մոտ է իրականությանը. քանի որ ժայռապատկերներն ավելի հին են, քան գոտին, այս ճշգրտումը ժամանակի ընթացքում գիտելիքների զարգացման արդյունքն է¹¹: Տարօրինակ է, սակայն, որ ժայռապատկերներում գծերով ներկայացված լուսնային ամսի 2 օրն իրենց արտահայտությունը չեն գտել այդքան խնամքով պատրաստված գոտի-օրացույցի վրա: Ուշադրությամբ քննության առնելով եղած երկրաչափական ձևերը, մենք հանգել ենք հետևյալ ենթադրություն: Տարվա երեք եղանակների օրերի թիվն արտահայտվել է պարույրներով (236 հատ) և կետերով (118), սակայն այդ կետերից երկուսը փոքրիկ պարույրներ են, ուրեմն՝ 116 կետ և 2 պարուրիկ: Հնարավոր է մտածել, որ այդ 2 պարուրիկները պատկանում են միաժամանակ նաև 116 կետերի շարքին, որով լուսնային լրիվ ամսվա օրերի թիվը դառնում է 30:

2. Ուսումնասիրության հեղինակները գոտու լայնությամբ պատկերված 7 և 6 շեղանկյունները մեկնաբանում են որպես շաքաթվա օրերի խորհրդանիշեր, իսկ դրա հիման վրա էլ եզրակացնում, որ ամիսը բաժանված էր շաքաթների: Մենք հավանական չենք համարում և՛ շեղանկյունների մեկնաբանությունը, և՛ դրանից բխեցրած եզրակացությունը: Հայկական հնագույն օրացույցային համակարգում, որը հին Հայաստանի աստղագիտության ու տոմարի օրինաչափ շարունակությունն ու զարգացումն է ներկայացնում, ամիսները շաքաթների չեն բաժանվել, ամսվա բոլոր օրերն ունեցել են իրենց անունները՝ 30 օրանուն: Դժվար է հաշտվել այն մտքի հետ, թե հայ ժողովուրդը իր կազմավորումից հետո հրաժարվեց ավելի ուղիղնալ համակարգից և անցավ մի նոր ու դժվարին համակարգի: Ամիսը շաքաթների բաժանելը նշանակում է միայն յոթ օրերի անվանումներ ունենալ, իսկ շաքաթները՝ 30 օրերի: Առաջինը շատ հեշտությամբ է սովորվում և մտապահվում, մինչդեռ 30 օրերի անուններն

իրենց հաջորդականությամբ սովորելն ու մտապահելը զգալիորեն դժվար է: Առաջինը, իր հեշտությամբ և օրերի փոքր թիվով, համապատասխանում է «նվազագույն ճիգի», կամ՝ ժամանակակից գիտական տերմինով՝ խնայողության սկզբունքին, իսկ երկրորդը հակասում է դրան: Այս դատողությունները մեզ հիմք են տալիս տարակույս հայտնելու 13 շեղանկյունների մեկնաբանության և դրա հետ կապված՝ ամիսը շաքաթների բաժանված լինելու կարծիքի մասին: Մեր կողմից կառաջարկելիք շեղանկյունների հետևյալ մեկնաբանությունը:

Շեղանկյունները դասավորված են գոտու լայնությամբ, բաժանված 4 խմբի՝ 2-ում վեցական, 2-ում՝ յոթական: Եթե ուշադրություն դարձնենք վերը բերված եզրակացություններին, այս կտեսնենք, որ կա ամսվա, տարվա եղանակների և դրանց պարունակած ամիսների թիվը, բայց բաժանված է տարվա ամիսների թիվը: Ահա, այս նկատի ունենալով, մենք կարծում ենք, որ շեղանկյունները ներկայացնում են հենց ամիսների քակարճում ենք, որ շեղանկյունների գումարն է 12, ուրեմն՝ սարին նակը. երկու խմբի վեցական ամիսների գումարն է 12, ուրեմն՝ սարին բաղկացած է տասներկու ամսից: Լուսնային տարին ունի 354 օր, որ ինքբաղկացած է տասներկու ամսից: Լուսնային տարին ունի 354 օր, որ ինքբաղկացած է 12 ամիսներից 6-ն ունեն 30-ական օր (6·30=180), նին նշանակում է, թե 12 ամիսներից 6-ն ունեն 20-ական օր (6·30=180), իսկ մյուս վեցը՝ 29-ական (6·29=174): Հենց դրա համար էլ 6-ական ամիսները ներկայացվել են առանձին-առանձին: Մյուս 2 խմբերի 7-ական ամիսները ներկայացվել են առանձին-առանձին: Մյուս 2 խմբերի 7-ական ամիսները ներկայացված տարին ունենում էր 13 ամիս, որոնցից 7-ը՝ լուսնային այդ երկարացված տարին ունենում էր 13 ամիս, որոնցից 7-ը՝ 30-ական, իսկ 6-ը՝ 29-ական օրից բաղկացած: Ահա, 6 շեղանկյուններին գումարած 7 շեղանկյունները, կստանանք 13 ամիս: Այսպիսով, մենք գումարած 7 շեղանկյունները, կստանանք 13 ամիս: Այսպիսով, մենք ամսյա լուսնային տարին՝ 30-օրյա և 29-օրյա ամիսներով, իսկ 6-ական և 7-ական շեղանկյունները՝ 13-ամսյա տարին՝ 30-օրյա 7 ամիսներով և 29-օրյա 6 ամիսներով:

Ինքնին հարց է առաջանում, թե ինչու է երկու 7-յակ է պատկերված: Երկու վեցյակը, հասկանալի է, ներկայացնում են 12-ամսյա տարին, մեկ վեցյակը և մեկ 7-յակն էլ հավասար են 13-ի, ուստի և խորհրդանշում են 13-ամսյա տարին: Խնչ կարիք կար երկրորդ 7-յակի: Կարծում ենք, որ դա էլ իմաստավորված է. եթե գումարենք առանձին-առանձին մեկ վեցյակը և մեկ 7-յակը, կստանանք երկու 13-ամսյա տարի, որ նշանակում է, թե գոտին խորհրդանշում է 2 լի տարիների հավելում, այսինքն՝ վեցամսյա պարբերաշրջան, որ եռամսյա շրջանից ավելի կատարյալ է:

Իհարկե, մեր այս բացատրությունը հնարավոր մեկնաբանություն-

¹¹ Հնարավոր է մտածել նաև, որ 27 ճառագայթներն արտահայտում են աստղերի նկատմամբ Լուսնի դիրքի վերականգնվելու պարբերության տևողությունը, ինչպես որ գոտու վրա 27 կետայինները, որոնք «ցույց են տալիս աստղերի նկատմամբ Լուսնի դիրքի վերականգնման պարբերությունը՝ լրիվ օրերով» (նույն տեղում, էջ 38):

ներից մեկն է միայն, թերևս առավել հավանականը, բայց դրա հաստատման համար պետք է սպասել նոր գտածոների:

Ի մի բերելով վերը քննության առնված տվյալները, հանգում ենք հետևյալ ընդհանուր եզրակացության:

Հին հայաստանցիները դեռևս մ. թ. ա. 3—2-րդ հազարամյակներում ունեցել են իր ժամանակի համար բավականաչափ զարգացած աստղագիտություն, իսկ դրա հիման վրա էլ՝ նույնքան զարգացած տոմարագիտություն: Արդեն երկրորդ հազարամյակում (մ. թ. ա.) հին հայաստանցիները օգտագործել են լուսնաարեգակնային օրացույցային համակարգ, որի ապացույցն է բունգեդարյան գոտի-օրացույցը:

Այս ընդհանուր եզրակացությունը թույլ է տալիս նաև հետևյալ դատողություններն անել:

Հին Հայաստանում մինչև մ. թ. ա. VI—V դարերը որևէ ժողովուրդ (էթնոս) կազմավորված չի եղել, թեև ժողովրդի կազմավորման ներքին պրոցեսն սկիզբ էր առել շատ ավելի վաղ ժամանակներում (երկրորդ հազարամյակի կեսերին): Վանյան պետությունը («ուրարտական պետությունը»), որ մասնագետները բնութագրում են որպես ստրկատիրական պետություն, չկարողացավ կազմավորել մեկ միասնական ժողովուրդ, և միայն այդ պետության կործանումից հետո, համեմատաբար պատմական կարճ ժամանակամիջոցում, նրա փլատակների վրա ավարտին հասավ հայ ժողովրդի կազմավորումը, և բարձրացավ հայոց պետությունը: Հասկանալի է, որ դրան նախորդած դարաշրջանում գոյություն ունեցող պատմական իրադրություն մեջ, հին Հայաստանի բազմաթիվ ցեղերը և դրանց ղանազան խմբավորումները՝ ցեղախմբերն ու ցեղային միությունները, ընդհանուր առմամբ քաղաքակրթության մոտավորապես նույն մակարդակի վրա գտնվելով, աչնուամենայնիվ կարող էին տնտեսական-քաղաքական և մշակութային որոշ չափով տարբեր մակարդակներ ունենալ: Ելնելով այն փաստից, որ ուրարտական պետության կործանումից անմիջապես հետո կազմավորվեց հայ ժողովուրդը, պետք է մտածել, որ այդ ժողովուրդը կազմավորող ցեղախումբը կամ ցեղային միությունն էլ պետք է լիներ ոչ միայն ամենահզորը, այլև առավել զարգացածը: Ուստի և հավանական է նաև այն, որ աստղագիտական գիտելիքներով ևս դրանք կանգնած էին հին Հայաստանում աստղագիտության զարգացման առավել բարձր աստիճանի վրա, մի բան, որն ապացուցվում է նաև նրանով, որ հայկական պետականության ստեղծումից կարճ ժամանակ հետո հայ ժողովուրդը ստեղծում է նաև իր արեգակնային օրացույցը՝ Բուն հայկական թվականը:

1. Հին ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՄԱՐԸ, ՆՐԱ ՍԿԻԶԲԸ ԵՎ ՀԱՅԿՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Հինգերորդ դարի մատենագրության մեջ բազմաթիվ տվյալներ կան, որոնք ապացուցում են, որ հայերն ունեցել են սեփական տոմարական համակարգ: Այդ համակարգը, որ օգտագործվել է նաև հետագա դարերում, կոչվում է հայոց «Բուն թվական» և պատկանում է արեգակնային շարժական օրացույցների թվին: Տարին բաղկացած է 12 երեսնօրյա ամիսներից և հինգ օր պարունակող մեկ՝ հավելյալ «ամսից», ընդամենը՝ 365 օր: Ամիսների անվանումներն են. Նավասարդ, Հոռի, Սահմի, Տրէ, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից, Աելյաց: Ամիսները շարաթիների չեն բաժանվել, ամսվա 30 օրերն ունեցել են իրենց անունները (1. Արեգ, 2. Հրատ, 3. Արամ, 4. Մարգար, 5. Ահարան, 6. Մաղդեկ և այլն)¹: Ավելյաց ամսի օրերը կոչվել են. 1. Լուծ, 2. Եղջերու, 3. Փառազնոտ, 4. Արտախուր, 5. Մկրատրի: Հայերը յոթնօրյա շաբաթվա անցել են քրիստոնեություն ընդունելուց հետո և, ինչպես ցույց են տվել տոմարագետները, հետևել են հրեաներին: Վաղագույն ժամանակներից հայերը օրը բաժանել են 24 ժամերի (12 ցերեկային և 12 գիշերային), որոնք նույնպես ունեցել են իրենց անվանումները²: Աստղագիտական ճշգրիտ հաշվումներով տարվա տևողությունն է 365 օր, 5 ժամ, 48 րոպե, 48 վայրկյան (365, 2422 միջին արեգակնային օր). կոտորակներից խուսափելու համար հուլյան տոմարում հաշվվել է 365 օր և 6 ժամ, որը և 4 տարվա ընթացքում դումարվելով դառնում է 24 ժամ = 1 օր, ուստի և 4 տարիներից 3-ը ունենում են 365, մեկը՝ նահանջ տարին, 366 օր (4 տարին հավասար է 1461 օրվա):

Ինչպես արդեն ասվեց, հայոց Բուն թվականի տարին ունեցել է 365 օր (նահանջ տարի չի եղել), որով շորս տարվա օրերի թիվն է 1460, մեկ օրով պակաս հուլյան տոմարի մեկ քառամյակի օրերի թվից: Այս մեկ օրվա տարբերությունն էլ, ահա, առաջ է բերում մեր Բուն թվականի ամսաթվերի և հուլյան տոմարի ամսաթվերի համապատասխանության փոփո-

¹ Ամսվա օրանունների լրիվ ցուցակը տե՛ս 2. Ս. Բաղալյան, նշված աշխ., էջ 100: Բ. Ն. Բունյան, Տոմարի պատմություն, էջ 42:

² 2. Ս. Բաղալյան, նշված աշխ., էջ 105—106:

կաններին և փոխվել 432 թվականին (Նավասարդի 1 = օգոստոսի 10) և այդպես շարունակ: Ըստ այսմ, եթե հուլյան օրացույցով նահանջ տարին քառամյակի վերջին՝ 4-րդ տարին է, ապա՝ հայոց շարժական տարվա տարեկզբի (և տարվա բոլոր օրերի) ու հուլյան տոմարի տվյալ օրվա համապատասխանությունների համակարգի մեջ քառամյակի առաջին տարին է նահանջ տարին կամ այլ կերպ՝ այն թվականը, որ առանց մնացորդի բաժանվում է չորսի⁴: Վերը մեր բերած օրինակների (300, 352, 400, 448, 500, 552 թթ.) համապատասխանությունները պահպանվել են նաև հաջորդ երեք տարիներում՝ 301, 302, 303; 353, 354, 355; 401, 402, 403 և այլն:

Նրած տվյալների վրա հենվելով և համապատասխան հաշվումներ կատարելով՝ հայ տոմարագիտության մասնագետները (Դյուլորիե, Լ. Բադալյան, Բ. Թումանյան և այլք) կազմել են հայոց տոմարի ամսամուտների և հուլյան տոմարի համապատասխան օրերի համեմատական տախտակները՝ ինչպես Բուն թվականի, այնպես էլ Հայոց մեծ թվականի համար⁵: Մենք էլ, գրքիս վերջում, որպես հավելված տվել ենք այդպիսի տախտակ՝ Բուն թվականի սկզբից մինչև 2464 թվականը (2-րդ հայկյան շրջանի վերջը):

Այս նախնական գիտելիքներն ունենալով, մենք պետք է որոշենք, թե երբվանից է սկզբնավորվել մեր Բուն թվականը, իսկ դրա համար անհրա-

⁴ Հնարավոր է, որ հայոց շարժական տոմարի ամսները համապատասխանի հուլյան տոմարի կենտ թվականին, որ, բնականաբար, առանց մնացորդի չորսի չի բաժանվում: Դա լինում է այն տարիներին, երբ Նավասարդի 1-ը համընկնում է հուլյան նահանջ տարվա փետրվարի 29-ին, որին հաջորդող երեք տարիներում Նավասարդի 1-ը փոխադրվում է փետրվարի 28-ին: Այդ պահից սկսած հայոց Նավասարդի 1-ը հուլյան նահանջ տարվա փետրվարի 29-ից առաջ է ընկնում, և թեպետ հուլյան նահանջ տարին քառամյակի վերջինն է (հետևաբար՝ առանց մնացորդի բաժանվում է 4-ի), բայց նահանջի հավելյալ օրը՝ հաջորդելով հայկական ամսներին, Նավասարդի 1-ը մեկ օրով առաջ է փոխադրում հաջորդ տարում: Օրինակ՝ մ. թ. 1084 թ. Նավասարդի 1-ը համընկել է փետրվարի 29-ին և միանգամայն բնականոն կերպով ամսները մեկ օրով առաջ է անցել, ընկել փետրվարի 28-ին, հաջորդ՝ 1085 թ.: Դրանից հետո մինչև 1088 թվականը պահպանվել է Նավասարդի 1-փետրվարի 28 համապատասխանությունը, և միայն 1089 թվականին է Նավասարդի 1-ը փոխադրվել փետրվարի 27-ին: Ըստ այսմ, այն բոլոր տարիների ընթացքում, երբ հայոց Նավասարդի 1-ը համապատասխանում է հուլյան հունվարի 1-ից մինչև փետրվարի 28-ի միջև ընկած որևէ օրվան, նահանջ տարվա մեկօրյա հավելումով տեղի ունեցող մեր ամսների առաջխաղացումը տեղի է ունենում հաջորդ հասարակ տարում, որ կենտ թվական է: Այսպես շարունակվում է մինչև այն թվականը, երբ Նավասարդի 1-ն համընկնում է նահանջ տարվա դեկտեմբերի 31-ին (այսինքն՝ նահանջ տարվա փետրվարի 29-ից հետո), որից հետո ամսների առաջխաղացումը դարձյալ ընկնում է առանց մնացորդի բաժանվող զույգ թվականներին:

⁵ Dulaurier, նշված աշխ., էջ 383—389; Բ. Ե. Թումանյան, Տոմարի պատմություն, էջ 51—112, նույնի՝ Հայոց և հունական տոմարների զուգակցությունը 8—552 թ. համար, Բեձ, 1977, № 3, էջ 30—62; Լ. Ս. Բադալյան, Օրացույցի պատմություն, էջ 314—434:

մեշտ է ամենից առաջ որոշել, թե հայոց Բուն թվականի ամսները, այսինքն՝ Նավասարդի 1-ը, հուլյան տոմարի ո՞ր ամսվա ո՞ր օրվան է համապատասխանել Բուն տոմարի սկզբնավորման ժամանակ: Ներածություն մեջ արդեն նշել ենք, որ տարբեր ժողովուրդների ամսները եղել է տարվա տարբեր ամիսների:

Իսկ ո՞ր ամսին է եղել հայոց օրացուցային տարվա սկիզբը: Դյուլորիեին բերում է մեր բազմաթիվ մատենագիրների վկայություններն այն մասին, որ հայոց Նավասարդը համապատասխանում է պարսից նովրուզին (հին պարսկական տարվա առաջին ամսվան), ինչպես և մեր միջնադարյան տոմարագիտական վկայությունները տարեմուտի մասին, և եղբակացնում, թե հայոց տարեմուտը՝ Նավասարդ ամսի 1-ը եղել է դարնանային (մարտյան) գիշերահավասարի օրը: Այնուհետև, հենվելով իր այն դրույթի վրա, որ հայոց Բուն թվականի կառուցվածքը հար և նման է հին պարսկական տոմարին, հայոց տոմարի սկզբնավորումը հանգեցնում է պարսկական տոմարի սկզբնավորման դարաշրջանին: Նա հատկապես շեշտում է, որ դա տեղի է ունեցել Զրադաշտի գործունեության ժամանակներում, և հեղինակն էլ Զրադաշտն է⁶: Գինցելն իր հայտնի աշխատության 3-րդ հատորի «Ժամանակի հաշվումը հայերի մոտ» գլխում, հենվելով Դյուլորիեի ուսումնասիրության վրա, գրում է. «Հայերը շարժական տոմարն ստացել են պարսիկներից, ըստ Դյուլորիեի, Զրադաշտի ուսմունքի սկզբնավորման ժամանակներում (VII դար): Այդ շափազանց վաղ ժամանակն ընդունելուց ավելի հավանական պետք է լինի այն կարծիքը, ըստ որի շարժական տարին Քրիստոսից առաջ 488 թվականին, Դարեհի ժամանակն է մուտք գործել միաժամանակ Իրան և նրա գաղութներ Հայաստան ու Կապադովկիա»⁷:

Ինչպես պարզ կերպով հասկացվում է, Գինցելը, ընդունելով Դյուլորիեի կարծիքը հայոց շարժական տոմարի մասին, իր վարկածն է առաջ քաշում, գտնելով, որ ինչպես պարսիկները, այնպես էլ հայերն ու կապադովկիացիներն ընդունել են շարժական տոմարը միաժամանակ, ըստ որում այդ էլ ժամանակագրում է Դարեհի թագավորության վերջին տարիներով (Դարեհը թագավորել է մինչև մ. թ. ա. 486 թվականը): Ինչպես ստորև կտեսնենք, այդ վարկածը ժամանակագրական տեսակետից մոտ է ճշմարտության:

Հայոց տարեմուտի խնդրի հանգամանալից ուսումնասիրությամբ ըզբազվել է Ղ. Ալիշանը:

Նախքան առաջադրված հարցին պատասխանելը, նա հանգամանորեն

⁶ Dulaurier, նշված աշխ., էջ 1—17:

⁷ F. K. Ginzel, Handbuch der mathematischen und technischen Chronologie; Das Zeitrechnungswesen der Völker, III B., Leipzig, 1914, s. 314.

խոսում է հաստատուն (կայուն) և շարժական օրացույցների մասին, բացատրում Բուն թվականի, բրպես շարժական օրացույցի, կառուցվածքը, ապա անդրադառնում այն հարցին, թե հայերը նախաքրիստոնեական և քրիստոնեական շրջաններում, մինչև 532-ամյա (ՇԼԲ) տոնացույց-տոմարը գործադրության մեջ զննելը, միայն շարժական օրացույց են ունեցել, թե՞ դրա հետ միաժամանակ օգտագործել են նաև հաստատուն տոմարի քննությունների եղրակացությունն այն է, թե հայերը շարժական տոմարից բացի անհրաժեշտաբար պետք է ունեցած լինեին նաև հաստատուն տոմար: Որպես այդ եղրակացության հիմնավորում, նա գրում է հետևյալը. «Գարնանամուտն՝ որ հիմա մեհեկանի կամ արեգի մեջ կուգա, ատեն մ'ալ աճկի ամիսը կուգա, ատեն մը քաղոցի և այլն, ամեն կետ ամեն ամսո ամեն օրվան կուհանդիպին զանազան տարիներ: Ասով երկրագործաց և նմանյաց արվեստից շփոթություն կըլլա, ո՞ր օր ընելիքնին շեն գիտնար, և ինքն իրեն հարկ կըլլա, որ հաստատուն տոմար կամ օրացույց մը փնտրեն: Նույնպես եկեղեցական տարին այլ հաստատուն տոմար մը կուզե անհրաժեշտ, վասնզի ինքն այլ երկրագործի և աստեղաբաշխի պես, և այլ ավելի, տարվույն ամեն մեկ օրը իմանալի երկնից մեկ մեկ կետին՝ այսինքն հիշատակի հետ՝ կապած է. և դարձյալ կուզե, որ այս կետերն այլ արեգակնային կետերուն հարմարցընե, որպեսզի անմոռաց և անշփոթ կատարե իր գործը... Արդ եթե այս հիշատակներս մեր հայոց անհաստատ տոմարին օրերուն վրա հաստատեր և ըստ այնմ տոներ, ի՞նչ կըլլար.— օր մը Մնունդը ձմռան խորը կու տոնելնք, օր մ'այլ ամառուան տաբերուն... ըստ այսմ ամեն տոներ և հիշատակներ այլ անդադար և անպատճառ կու փոփոխելին: Ոչ ոք հանձն կանու այս բանս. տեղ մը և եկեղեցի մ'այլ չկա՝ որ հանձն առած ըլլան: Ըսել է որ շարժուն և անհաստատուն տոմար ունեցողք այլ՝ այս բանիս համար հաստատուն կերպ մը տոմար մը բնտոած և ընդունած են: Նույնպես այլ երկրագործության և ուրիշ կարևոր արհեստից և քաղաքական կարգաց և հանդիսից համար՝ պետք է որ հաստատուն տոմար մ'այլ ունեցած ըլլան այն ամեն աղզք և ժողովուրդք, որք շափավոր քաղաքականություն և կրթություն մ'ունեցեր են, ինչպես մեր հայոց աղզն այլ՝ շատ դարերե առաջ: Ուրեմն մեր աղզն այլ իր շարժուն քաղաքական տոմարեն զատ՝ անշարժ, հաստատուն և հին տոմար մ'ունեցեր է»⁸: Այս դատողությունները միանգամայն ճիշտ են, ուստի և անխուսափելի է այն ենթադրությունը, ըստ որի հայերն էլ, ուրիշ ժողովուրդների նման, պետք է ինչ-որ եղանակով կարողանային պահպանել կրոնական տոների գոնե՝ հարաբերականորեն կայուն կամ հաստատուն ժամանակը, ասենք՝ գարնանային տոները՝ գարնան, ամառային տոները՝ ամռան, աշնանայինը՝ աշնան և ձմեռայինը՝

ձմռան ամիսներին: Թե ինչ եղանակով են դեթ մոտավոր կերպով օրացուցային տոները հաստատուն դարձրել, այդ մասին կխոսենք ստորև. այստեղ բավականանանք միայն հավաստելով, որ Ղ. Ալիշանն ընդունում է Բուն հայոց թվականի երկու տարբերակ՝ շարժական և հաստատուն: Այնուհետև նա անցնում է հայոց Բուն թվականի սկիզբը գտնելուն. այդ նպատակով նա որպես ելակետ ընդունում է 428 թվականի հայոց և հուլյան տոմարների համապատասխանությունը՝ հայոց Նավասարդի 1 = հուլյան օգոստոսի 11: Այդ համապատասխանությունը հաստատվում է ինչպես հայ հին մատենագրության մեջ եղած տվյալներով, այնպես էլ տոմարագիտական հաշվումներով: Որպես ապացույց այդ համապատասխանության, նա հիշում է նաև հայոց մեծ թվականի՝ Շիրակացու կաղված 532 տարվա պարբերաշրջանի սկիզբը, այն է՝ հուլյան 552 թվականի Նավասարդի 1 = հուլիսի 11 համապատասխանությունը, որ ճշգրտորեն ստացվում է նաև պարզ թվաբանական հաշվարկով, այսպես՝ 552 թվականից հանած 428 թվականը = 124 տարվա. 124:4 = 31 օր, և քանի որ 428 թվականին Նավասարդի 1-ը համընկել է օգոստոսի 11-ին, ապա օգոստոսի 11-ից հանելով 31 օր, կստանանք ճիշտ ու ճիշտ Նավասարդի 1 = հուլիսի 11 համապատասխանությունը: Վերջապես, նա իբրև կովան բերում է նաև այն փաստը, որ Հովհաննես Իմաստասերը (Սարկավազը) իր անշարժ տոմարի («Սարկավազադիր տոմար հայոց») համար իբրև տարեսկիզբ (այսինքն՝ Նավասարդի 1-ն) է ընդունել օգոստոսի 11-ը, թեև իր տոմարի առաջին տարում (1084 թ.) Նավասարդի 1-ը համապատասխանել է փետրվարի 29-ին: Ահա, այս բոլորի հիման վրա էլ Ղ. Ալիշանը հանգում է այն եզրակացության, որ իբրև Հայկյան շրջանի դարագլուխ կամ այլ կերպ՝ հայոց Բուն թվականի նահանջից նահանջի (ապոկատաստասի) տարի պետք է ընդունել 428 թվականը, որով և Բուն թվականի առաջին տարի տարեսկիզբը՝ Նավասարդի 1-ն ընկնում է օգոստոսի 11-ին: Այդպես ընդունելուց հետո արդեն մնում է թվաբանական հաշվումներով դեպի ետ գնալ և գտնել նախորդ դարաշրջանների (1460-ամյա շրջանների) պիետ գնալ և գտնել նախորդ դարաշրջանների (1460-ամյա շրջանների) սկիզբը. այսպես՝ մ. թ. 428 թվականից հանած 1460 տարի, հավասար է մ. թ. ա. 1032 թ., 1032 + 1460 = մ. թ. ա. 2492 թվական: Այս էլ, ահա, Ղ. Ալիշանն ընդունում է որպես հայոց Բուն թվականի սկիզբ: Ըստ այսմ՝ Հայկյան առաջին շրջանն սկսվել է մ. թ. ա. 2492 թվականին, երկրորդը՝ մ. թ. ա. 1032 թվականին, երրորդը՝ մ. թ. 428 թվականին, չորրորդը՝ 1888 թվականին, այժմ (1985 թ.) 4-րդ շրջանի 97-րդ տարին է, կամ Բուն թվականի սկզբից հաշված՝ հայոց 4480-րդ տարին (= 4477 հուլյան տարու), որից դուրս ձգելով յուրաքանչյուր պարբերաշրջանի մեկ ավելորդ տարին (1461-րդ տարին), կլինի 4477 թվականը:

Այսպես որոշելով հին հայոց շարժական տոմարի սկիզբը, Ղ. Ալիշանն անդրադառնում է նաև հաստատուն տոմարի խնդրին և գրում. «Ու-

⁸ Ղ. Ալիշան, նշված աշխ., 1-ին, էջ 83—84:

րիշ հին գիտուն ազգաց պես երկու տարի ունեին, մեկն քաղաքական, մյուսն սրբազան՝ որ էր հաստատուն, և անտարակույս ասոր սկիզբն էր հինգ ամսով մ'առաջ, արեգ ամսեն սկսելով, որուն անունն կու նշանակե զարև և կուսկսի բուն արեգակնային ըսվելու վայելուչ օրեն, այսինքն զարևանամուտեն (ի 9—21 մարտի). և ասով այլ նավասարդի գլուխն կամ քաղաքական տարեմուտն՝ նույնպես ճիշտ օգոստոսի 11-ին (23-ին) կու հանդիպի»⁹: Այս հարցում էլ նա, ինչպես կարող ենք համոզվել, որպես կլակետ է ընդունում 428 թվականի համապատասխանությունը: Այսպես. արեգը մեր 8-րդ ամիսն է, ուստի և արեգի 1-ից (ներառյալ) մինչև տարեվերջը լինում է 155 օր (5 լրիվ ամիս՝ 30-ական օրով = 150 օր + հավելյալ 5 օրը = 155 օր), օգոստոսի 11-ից (= նավասարդի 1) հանած 155 օր՝ կհասնենք մարտի 9-ին: Հետևաբար 428 թվականին արեգի 1-ը համընկել է մարտի 9-ին, նավասարդի 1-ը՝ օգոստոսի 11-ին: Այս է նկատի ունեցել Ղ. Ալիշանը, որ զարևանամուտի օրը համարել է մարտի 9-ին (նոր տոմարով՝ 21-ին): Ինքնին հասկանալի է, որ եթե 428 թվականին՝ Հայկյան շրջանի առաջին տարում, արեգի 1-ը համընկել է մարտի 9-ին, ապա նախորդ շրջանների առաջին տարում էլ (մ. թ. ա. 1032 և 2492) նույն համապատասխանությունը պետք է լիներ:

Հաստատելու համար, որ հայոց Բուն թվականի իր որոշած սկիզբը՝ մ. թ. ա. 2492 թ., ճշմարիտ է, Ղ. Ալիշանը դիմում է նաև այլ փաստարկներին: Հենվելով հին տոմարագիրների և Հայսամվուրբների վրա, որոնց գրածների համաձայն բաբելոնյան խառնաշփոթությունից հետո նահապետները պատվիրել են՝ Բաբելոնից իրենց երկիրը վերադառնալու օրը տոնել ամեն տարի, նա գրում է. «Մեր Հայկ նահապետն ալ, կրսեն, մտավ Այրարատ աշխարհքը կամ իր Պորգոմա Հորը բնակած երկիրը՝ օգոստոսի 11—23-ին, և հրամայեց նույն օրը տարվույն սկիզբն սեպվի: Կու հաստատեն դարձյալ, թե այս դուցազնս առաջին եղավ տարեցույց տալու իր

⁹ նույն տեղում, էջ 88: Ինչպես մարտի 9/21, այնպես էլ օգոստոսի 11/23 համապատասխանության մեջ առաջինը հուլյան (հին) տոմարով է, երկրորդը՝ գրիգորյան (նոր) տոմարով: Գարնանային գիշերահավասարը, ինչպես հայտնի է, լինում է մարտի 20—21-ին: Եթե ընդունենք, որ հայերի ամսնորը օգոստոսի 11-ն է եղել, ապա արեգի 1-ը, որ ըստ Ղ. Ալիշանի, զարևանամուտի օրն է եղել հայոց անշարժ (սրբազան) տոմարով, կընկնի մարտի 9-ին, այսինքն՝ իրական գիշերահավասարից 11—12 օր առաջ: Այդ անձնությունը վերացնելու և իր կարծիքին անպայման հավանականություն տալու նպատակով, նա գումարում է 12 օր՝ իբրև հին և նոր տոմարների տարբերություն: Սակայն նոր կամ գրիգորյան տոմարի սկիզբն է 1582 թվականի հոկտեմբերի 15-ը (հին տոմարով՝ 5-ը). այդ թվականից առաջ հին և նոր տոմարների տարբերություն չի եղել, քանի որ նոր տոմարն էլ զեռ չի եղել: Գարնանային գիշերահավասարը թե՛ հին և թե՛ նոր տոմարներով եղել է և է՛ մարտի 20—21-ին: Ի դեպ, գրիգորյան կամ նոր տոմարի ընդունումը հենց իրական և տոմարական գիշերահավասարի օրվա անհամապատասխանության վերացման նպատակն է ունեցել: Ղ. Ալիշանն, իհարկե, գիտեր այդ, բայց իր վարկածն ապացուցելու ձգտումը շատ է ուժեղ եղել:

նորածին ազգին, զոր և կուպահե մեր ազգն մասամբ անփոփոխ, ինչպես որ իրեն ավանդվեցավ այն նախնական դարերուն մեջ»¹⁰:

Վերջապես, այս բոլորին ավելացնում է նաև, որ օտար ժամանակագրություններն էլ Հայկի և Բելի պատերազմի համար նույն թվականն են նշում. «Ափրիկանոս և Եվսեբիոս իրենց մանրամասն թիվերովը Բելա երկու շար թագավորաց կու դնեն՝ արաբացվոց և Քաղղեսացվոց, 440 տարի և 8 ամիս թագավորած, իրենց տարիովը, որ էր 360 օր, որով 440 տարի և չեթ ամիսն կըլլա 435 տարի և 5 ամիս. արդ 435 + 2057 = 2492, որ է մեր Հայկա թվականն»¹¹:

Ղ. Ալիշանի այս տեսությունը լայն տարածում է գտել հայերի մեջ: Ամենից առաջ հայկյան թվականի (= Բուն թվականի) սկիզբը՝ 2492 թվական, ընդունել է հայ լուսավորչական եկեղեցին, և էջմիածնի օրացույցում մենչև այժմ էլ մեր թվարկության տարեթվի հետ զուգահեռ տրվում է նաև հայոց Բուն թվականը՝ ըստ Ղ. Ալիշանի: Այդ տեսությունն ընդունել են նաև XIX դարի հայ տոմարագետները. օրինակ՝ Ղ. Աղանյանցը գրում է. «Որովհետև Հայկա թվականը սկիզբն է առել Քրիստոսից 2492 տարի առաջ, ուստի առաջին հանդիպումը (նահանջից նահանջը.— է. Ա.) եղած է 1460 տարի հետո, այն է 2492—1460 = 1032 թվին նախքան Քրիստոս Հայկազանց Պերճ երկրորդ ազգապետության և Դավիթ մարգարեի թագավորության օրերում: Երկրորդ հանդիպումը եղավ Քրիստոսի 428 թվականին ... երրորդ զուգադիպումը տեղի ունեցավ 1888 թվի օգոստոսի 11-ին հինգշաբթի օրը: Իսկ չորրորդ հանդիպումը կլինի Հայկա 5840 և փրկչական 3348 թվին»¹²:

Իր նույն աշխատության 2-րդ հրատարակության մեջ էլ նա այդ բանը կրկնում է, ավելացնելով, որ գրքի հրատարակության տարում (1894 թ.) Բուն հայոց 4386 թվականն է, որով բուն թվականի սկիզբը լինում է մ. թ. ա. 2492 թ. (4386—1894 = 2492): Ավելորդ ենք համարում թվարկել մինչև սովետական շրջանի այն բոլոր տոմարագետ-հայագետներին, որոնք ընդունել են Ղ. Ալիշանի կարծիքը, և անցնում ենք սովետական շրջանի տոմարագետներին: Մեր երկու մասիմատիկոս-տոմարագետները, Բ. Թումանյանը և Հ. Բաղալյանը, որոնք գրել են հայ տոմարների պատմություն, Բուն թվականի սկզբնավորման մասին որոշակի կարծիք չեն արտահայտել: Բ. Թումանյանն իր աշխատություններին¹³ մեջ բերում է Ալիշանի

¹⁰ նույն տեղում, էջ 94—95:
¹¹ նույն տեղում, էջ 95:
¹² Գ. Աղանյանց, Տոմար և տոնացույց Հայաստանյայց եկեղեցվո, Տփղիս, 1890, էջ 9—10:
¹³ Բ. Թումանյան, Հայոց Մեծ և Փոքր թվականների տարեկարի հարցի շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 6, էջ 99—100: Նույնի՝ Տոմարի պատմություն, 1972, էջ 47:

կարծիքը ընդունողներից մի քանիսին, բայց առանց իր կողմից քննարկման առարկա դարձնելու և ընդունելու կամ մերժելու: 2. Բաղալյանը իր հետազոտությունների մեջ նույնպես մանրամասնորեն խոսում է Ալիշանի կարծիքի մասին, բերում նրա փաստարկները՝ առանց որևէ հերքման կամ հաստատման, սակայն, ըստ երևույթին, հեղինակը լուռ կերպով ընդունում է այդ կարծիքը, որ կոահվում է նրա մի ենթադրությունից: «Որոշ հեղինակներ այն կարծիքին են, որ նախքան արեգակնային օրացույցին անցնելը, հայերը ունեցել են լուսնային օրացույց, մի կարծիք, որի հետ համամիտ չենք: Մեր կարծիքով հայերը սկզբից եթ գործ են ունեցել արեգակնային օրացույցի հետ»¹⁴: Լ. Սեմյոնովը հատուկ քննություն առարկա դարձնելով հայկական տոմարի սկզբնավորման հարցը՝ այն եզրակացություն է հանգել, որ Հայկա շրջանն սկսվել է մ. թ. ա. 2492 թվականից, բայց հայերն այդ արեգակնային տոմարն սկսել են օգտագործել մ. թ. ա. 460 թվականից¹⁵: Վերջապես, պատմաբան Ա. Գ. Աբրահամյանը, որ հայտնի տոմարների լավագույն մասնագետներից մեկն էր, իր մասնականից միայն մեկ տարի առաջ լույս տեսած աշխատության մեջ մանրամասնորեն շարադրում է Ղ. Ալիշանի կարծիքը, ավելացնելով, սակայն, որ «Ալիշանի և Սեմյոնովի կարծիքները, մեր կարծիքով, ընդունելի համարել չի կարելի»¹⁶: Նա, բացի դրանից, այն կարծիքն է հայտնում նաև, որ հին հայկական տոմարը շարժական չի եղել: Սա, եթե ավելի խիստ շարտահայտվենք, մի տարօրինակ կարծիք է, որին կանդաղադանանք ստորև:

Այսպես, ուրեմն, Բուն տոմարի սկզբնավորման մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ, որոնք կարող ենք խմբավորել հետևյալ ձևով: Բուն տոմարը հայերն օգտագործել սկսել են՝ 1. մ. թ. ա. VII—VI դարերում (Գյուլոբիև), 2. մ. թ. ա. 488 թվականին (Գինցել), 3. մ. թ. ա. 2492 թվականին (Ալիշան և այլք), 4. 2492 թվականից սկզբնավորումը, օգտագործումը՝ մ. թ. ա. 460 թվականին (Լ. Սեմյոնով):

¹⁴ Լ. Ս. Բաղալյան, նշված աշխ., էջ 54:

¹⁵ Լ. Սեմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին, ՀՍՍՀ Մատենագրանի «Գիտական նյութերի ժողովածու», № 1, 1941, էջ 12—30:

¹⁶ Ա. Գ. Աբրահամյան, Նախամաշտոցյան հայ գիր և գրություն, Երևան, 1982, էջ 108:

* Հետաքրքիր մտտեցումով է 2. Անտոյանը փորձել Բուն թվականի սկզբնավորման ժամանակը գտնել: Ստուգարանից բազմա ամսանունը որպես «Մաղերի ամիս», այսինքն՝ քաղերը (արու այծերը) էգերին խոսնելու ամիս, և կարծելով, թե զա տեղի է ունենում մարտ ամսին, նա գրում է. «...Պետք է փնտրել, թե ո՞ր թվին է, որ քաղոց ամիսը մարտին կիցնա: Տոմարական հաշիվները կցուցնեն, որ նավատարդի մեկը նոյեմբերի մեկին եկած է 1560 թվին. հետևաբար նույն հայկական տարվա քաղոցի մեկը եղած է 1561 թվի մարտի 1-ին: Ասկե ավելի առաջ մինչև 6 դար՝ երբ ավանդված են մեզ մեր ամսանունները իրեն պատրաստ տոմար, երբեք քաղոցը մարտին պատահած չէ: Ետ երթալով 1560 թվին մեկ Հայկա շրջան (1460 տարի), կդտնենք, որ մեկ անգամ ալ քաղոցը մարտին

ինչպես արդեն ասվեց, Բուն տոմարով գրադված կամ թեկուզ մակերեսորեն դրան անդրադարձած հայագետ-տոմարագետներն ընդունում են, որ այդ տոմարը եղել է շարժական: Բացառություն է կազմում միայն Ա. Գ. Աբրահամյանը, որը գրում է. «Տոմարագիտության մեջ քաղաքացիություն ունի այն կարծիքը, որ հայ տոմարում գոյություն է ունեցել հայկական տոմարական երկու համակարգ՝ շարժական և անշարժ: Հին հեթանոսական տոմարն արեգակնային էր, ուստի նախամաշտոցյան շրջանում շարժական տոմարի մասին խոսելը բացառվում է: Հայերը քրիստոնեություն ընդունելուց հետո, երբ անհրաժեշտ եղավ առաջնորդվել արեգակնային տոմարով, հիմք ընդունեցին շարժականը, սակայն շարժականին զուգընթաց, հին ավանդույթով, ժողովուրդը շարժականից անշարժ տոմարի գործածությունը, որը խիստ կարևոր է երկրագործական աշխատանքների ժամանակը որոշելու համար»¹⁷: Այս վարկածը մի զարմանալի թյուրիմացություն է, որը զուրկ է որևէ պատմական և դիտական հիմքից: Ամենից առաջ պետք է ի նկատի ունենալ, որ հայերը քրիստոնեություն ընդունել են IV դարի սկզբում, և եթե հայերը «քրիստոնեություն ընդունելուց հետո, ...հիմք ընդունեցին շարժականը» ապա, դա պետք է տեղի ունենար հենց IV դարում: Ինքը՝ Ա. Գ. Աբրահամյանն ընդունում է, որ Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը հայերն օգտագործել են IV դարից սկսած (353 թվականից), ինչպես ընդունում են նաև մեր աստղագետ-տոմարագետները, որ նշանակում է ինքնին, թե քրիստոնեություն ընդունելուց հետո արդեն հայերն անհրաժեշտաբար այդ տոնացույցը յուրացրել են, որպեսզի իրենց շարժական տոմարը հաստատուն (անշարժ) տոմարների հետ զուգադրելով՝ կարողանան քրիստոնեական տոները կատարել ճիշտ ժամանակին: Միանգամայն հասկանալի է, որ եթե IV դարում (քրիստոնեություն ընդունելուց հետո) շարժական տոմար են ունեցել, ապա բոլորովին էլ չի բացառվում «նախամաշտոցյան շրջանում շարժական տոմարի մասին խոսելը», քանզի մաշտոցյան շրջանը V դարին է վերաբերում, իսկ IV դարը V դարից հետո չէ, այլ առաջ, այսինքն՝ նախամաշտոցյան շրջան է: Այնուհետև ինչպես հայտնի է, հենց ըրիստոնեություն ընդունելուց հետո է, որ հայերը, ինչպես և ուրիշ ժողո-

հանդիպած է 2. Ք. 100 թվին, ուստի 2. Ք. 100 թվականին է, որ գրված է քաղոց բառը կամ նույն է բռել, թե այս թվականն է, որ կազմված է հայկյան տոմարը» (ՀԵ. Անտոյան, Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ, հ. 2, Վենետիկ, 1926, էջ 282): Մենք այս կարծիքը շփոթեցնելով վերը բերված շոքս կարծիքների հետ, որովհետև հետազոտում, իմանալով, որ քաղերի խոսնից ժամանակը սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներն են, «Հայերեն արմատական բառարանում» գրել է. «Միայն է այս թիվը, ըստ որում մարտը խոսնից ամիսը չէ, այլ ծնունդների, ըստ այսմ պետք է փոփոխել թվականը (2. IV, 1979, էջ 345):

¹⁷ Նշված աշխ., էջ 114 (ընդգծումները մերն են.—է. Ա.):

վորդներ, հաստատուն օրացույցի ստիպողական անհրաժեշտութուն ունեցան և, թեև երկար ժամանակ շարունակեցին շարժական օրացույցով առաջնորդվել, բայց դրան զուգահեռ կազմում էին իրենց օրացույցների զանազան տախտակ-աղյուսակներ՝ շարժական տոմարի և անշարժ հուլյան տոմարի կամ եգիպտական օրացույցի ամիսների և օրերի զուգադրությամբ:

Ինչ վերաբերում է արեգակնային օրացույցից լուսնաարեգակնայինին անցնելուն, ապա սա միանգամայն սխալ է: Օրացույցի պատմությունից հայանի է, որ հնում լուսնաարեգակնային օրացույցով առաջնորդվող շատ ժողովուրդներ ժամանակի ընթացքում անցել են արեգակնային օրացույցին, ինչպես, օրինակ, հույները, որոնք դասականորեն մշակված լուսնաարեգակնային օրացույց են ունեցել, հետագայում անցել են հռոմեական տոմարին, այսինքն՝ լուսնաարեգակնայինից՝ արեգակնայինին: Հայերը ինչո՞ւ պետք է բացառություն կազմեն և հետընթաց կատարեն: Այդ ո՞ր ժողովուրդը կհրաժարվի իր արեգակնային, այն էլ՝ անշարժ տոմարից և կանցնի շարժական տոմարի:

Հիշենք նաև, որ նույն աշխատության մեջ նա բավականաչափ հանդամաներ են խոսում է Հին Հայաստանում գոյություն ունեցած տոմարական գիտելիքների մասին, ծանոթ է եղել Բ. Թումանյանի և Հ. Մնացականյանի՝ գոտի-օրացույցի ուսումնասիրությանը, որի մեջ անառակելիորեն ապացուցվում է լուսնաարեգակնային օրացույցի գոյությունը Հին Հայաստանում: Մեր տոմարների ուսումնասիրությամբ զբաղված բոլոր գիտնականներն էլ, ինչպես և միջնադարյան տոմարագետները, հաստատել են, որ հին հայկական տոմարը եղել է շարժական և մեկ անհասկանալի է մնում, թե ինչպե՞ս է Ա. Գ. Աբրահամյանը հանգել այդ թյուր վարկածին: Ուշագիր կարգալուծ նրա հիշյալ հատվածը, հնարավոր է պարզել թյուրիմացության պատճառը: Նրա պատկերացման համաձայն, եթե օրացույցը արեգակնային է, ապա անպայման անշարժ (հաստատուն) է: Բայց դա սխալ պատկերացում է: Հին եգիպտացիները արեգակնային օրացույց են գործադրել մեր թվ. առաջ 4241 թվականից, բայց դա եղել է շարժական տոմար: Հին հռոմեացիները նույնպես լուսնաարեգակնային տոմարն են ունեցել, ըստ որում բավականաչափ բարդ համակարգ ունեցող այդ օրացույցում յուրաքանչյուր քառամյակի՝ լուսնային ամիսներով հաշվված օրերի թիվը կազմում էր 366 1/4 (Ա. և Բ. տարի 355 օր, Գ. տարի 378, Դ. տարի 377, ընդամենը՝ 1465:4=366 1/4): Մ. թ. ա. 46 թ. Հուլիոս կեսարը եգիպտացի մաթեմատիկոս Սոզիգենի հետ կազմեց իր արեգակնային օրացույցը դարձյալ քառամյակների համակարգով՝ երեք տարին 365-ական օրից, չորրորդ՝ նահանջ տարին, 366 օրից բաղկացած, որով քառամյակի օրերի թիվը դառնում է 1461, միջին տարեկանը՝ 365 1/4 օր: Օրացույցային այս համակարգն է, որ առաջին անգամ գործադրության մեջ

գրեցին եգիպտացիները՝ մ. թ. ա. 27 թվականից, մինչդեռ իրենք՝ հռոմեացիները, հուլյան տոմարը գործադրության մեջ դրեցին մ. թ. 8 թվականից: Կեսարի այդ տոմարն է, որ ստացավ հուլյան տոմար անվանումը, և այդ օրացույցային համակարգն է, որ այժմ գործածվում է աշխարհի մեծագույն մասում*:

Վերջապես հայկական հին և միջնադարյան օրացույցային համակարգերը նույնպես ապացուցում են, որ հին հայերը, ինչպես քրիստոնեություն ընդունելուց առաջ, այնպես էլ հետո, առաջնորդվել են շարժական տոմարով: Ինչպես վերը տեսանք, հայկական տարին պարունակում էր 365 օր, այդ օրացույցային համակարգին, մինչև Սարկավագադիր թվականի սկիզբը, նահանջ տարվա ներմուծումը խորթ է եղել: Իսկ եթե շորս տարիների ընթացքում քառորդ օրերի գումարով գոյացած մեկօրյա հավելույթը որևէ եղանակով չի ուղղվում օրացույցային հաշվումներով, ապա օրացույցային համակարգը դառնում է շարժական: Սա մի պարզ հշմարտություն է, որ մենք վերը որպես նախագիտելիք շարադրել ենք: Զարմանալիս այն է, որ Ա. Գ. Աբրահամյանը, ինչպես իր մի քանի գրքերում, այնպես էլ հիշատակված աշխատության մեջ գրում է, որ հայկական տարին ունեցել է 365 օր, «հեթանոսական հայկական տարին ունեցել է ոչ թե 12 ամիս, այլև՝ 13 ամիս, որից 12-ը երեսնական օրով, իսկ մեկը՝ հինգ օրով»¹⁸: Հետևությունը պարզ է, հայկական տարին ունեցել է միայն 365 օր, նահանջ տարի հայերը չեն ունեցել:

Այս բոլորի պարզ եզրակացությունն այն է, որ հին հայկական տոմարը, ինչպես հեթանոսական, այնպես էլ քրիստոնեական դարաշրջաններում, եղել է շարժական, ինչպես հաստատում են Գյուլոբիեի, Ալեշանի, Մ. Օրմանյանի, Գինցելի, Բ. Թումանյանի, Հ. Բաղալյանի, Լ. Սեմյոնովի և բազմաթիվ այլ հայագետ-տոմարագետների հետազոտությունները:

Հայոց Բուն թվականի (շարժական տոմարի) սկիզբը որոշելու համար կարևոր է պատասխանել հետևյալ հարցին. արդյոք հին հայերն այդ տոմարական համակարգը պատրաստի վիճակում փոխառել են որևէ այլ ժողովրդից, թե ստեղծել են ինքնուրույնաբար, օրացույցային հնագույն համակարգերի պատմական զարգացման ու կատարելագործման հիման վրա: Այս հարցի լուծումով զբաղված տոմարագետները տարբեր կարծիք-

* Հուլիոս կեսարն իր տոմարը գործադրության մեջ դրեց, բայց նրա մահվանից (մ. թ. ա. 44 թ.) հետո քրմերը խախտեցին այդ համակարգը՝ նահանջ տարին փոխադրելով 3-րդ տարին: Դրա հետևանքով առաջացած շփոթն ուղղեց Օգոստոս կայսրը՝ մ. թ. 8-րդ տարում, և այդ տարին էլ դարձավ հուլյան տոմարով հռոմեական թվականության ըսկիզբը: Միայն 532 թվականին արքա Գիոնիսիոսը սահմանեց, որ թվականությունը պետք է սկսել քրիստոսի ծննդյան տարվանից, այսինքն՝ մեր այժմյան թվականության 1 թվականից (մանրամասնություններ տե՛ս Н. Идельсон, նշված աշխ., էջ 48):

¹⁸ Նշված աշխ., էջ 108:

ներ են հայտնել. Բուն թվականը՝ ա) փոխառվել է պարսկականից, բ) փոխառվել է եգիպտականից, գ) հայերի ինքնուրույնաբար ստեղծած համակարգն է:

Քննենք այս կարծիքները:

Դյուլորիեն գտնում է, որ հայկական հին օրացույցը մուտք է գործել Իրանից, և իր այդ դրույթը հիմնավորում է հին պարսկական և հայկական օրացույցների կառուցվածքի նույնությունը: Այս նույնությունը անառարկելի է. հին հայկական օրացույցի կառուցվածքը բացարձակապես նույնանում է պարսկականի հետ: Երկու տոմարներում էլ տարին բաժանվում է 12 երեսնօրյա ամիսների, որոնց ավելանում է հայոց հավելյալ 5 օրը, պարսիկներինը՝ նույնպես: Պարսկական օրացույցում ամիսները շաբաթների չէին բաժանվում. ամսվա 30 օրերից յուրաքանչյուրն ուներ իր անունը, ինչպես և հավելյալ 5 օրը, հայերինը՝ նույնպես: Պարսիկների ներտարվա սկիզբն է եղել գարնանային գիշերահավասարի օրը, հայերինը՝ նույնպես, որ կհաստատենք ստորև: Երկու տոմարների այս բացարձակ նույնությունը իրոք ենթադրում է հին հայկական օրացույցի իրանական ծագումը, եթե չընդունենք, թե հայերն իրենց օրացույցին հասել են ինքնուրույն կերպով: Այս ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ պարսիկներն իրենց շարժական տոմարի անճշտությունն ուղղել են 120-ամյա պարբերաշրջաններով, այսպես՝ հուլյան օրացույցի համեմատությամբ տարվա 1/4 օրվա պարբերությունն, ինչպես տեսանք, 4 տարում դառնում է 1 օր, 120 տարում՝ 30 օր (120:4=30): Պարսիկները 120 տարվա պարբերաշրջանը լրացնելուց հետո մեկ հավելյալ ամիս են ավելացրել 12 ամիսների մեջ, առաջին պարբերաշրջանի լրանալուց հետո այդ հավելյալ ամիսը դրվել է տարվա առաջին ամսից՝ ֆերվերդինից հետո և կոչվել «երկրորդ ֆերվերդին», երկրորդ պարբերաշրջանից հետո երկրորդ (օրդիբեհեշտ) ամսից հետո («երկրորդ օրդիբեհեշտ») և այդպես շարունակ: Հայերի կողմից օրացույցում կատարվող այդպիսի ուղղուման մասին ոչ մի տեղեկություն չունենք: Ավելին, սկսած մեր մատենագրության սկզբնավորումից, երբ մեր Բուն տոմարն էր օգտագործվում (ամիսն արդեն յոթնօրյա շաբաթների բաժանելով), այդպիսի ուղղումը ծանոթ չի եղել ո՛չ մեր մատենագիրներին և ո՛չ էլ տոմարագետներին, և Մեծ թվականն էլ, որ նույն օրացույցային համակարգն է շարունակում, այդպիսի ուղղման ոչ մի հետք չունի: Այս տեսակետից կարևոր է նաև Խորենացու այն տեղեկությունը, ըստ որի հայերն Արտաշեսից առաջ հոգ չեն տարել տոմարի մասին, և Արտաշեսի օրոք է տոմարական կարգավորում տեղի ունեցել: Խորենացու այդ տեղեկությունը, մեր կարծիքով, պետք է հասկանալ այն մտքով, որ շարժական օրացույցի գործածությունից առաջացող 1/4 օրվա սխալը ժամանակի ընթացքում հանգեցրել էր ամիսների զգալի տեղաշարժի, հետևաբար և՛ տարվա

սկզբի առաջխաղացման հետևանքով ստեղծված եղանակների և ամիսների զգալի անհամապատասխանությունների, որոնք կարգավորելու մասին հոգ է տարել Արտաշեսը: Սրանից չի կարելի եզրակացնել, թե մենք Արտաշեսից առաջ տոմար չենք ունեցել, բայց թերևս կարելի է իբրև փաստարկ ընդունել՝ ասելու համար, որ օրացույցի մեջ ժամանակի ընթացքում կուտակված պակասները ինչ-որ ձևով ուղղելու որևէ եղանակ չի օգտագործվել: Այսպիսով, հայոց հին տոմարի նույնությունը պարսկականի հետ անուրանալի է, իսկ տարբերությունը միայն մի կետում է երևան գալիս, թեև այդ էլ հնարավոր չէ հաստատել որևէ իրական տվյալով:

Անտեսելով այդ փաստերը, Լ. Սեմյոնովը գտնում է, որ հայկական հին տոմարը եգիպտականի ուղղակի կամ միջնորդական փոխառությունն է: Նրա փաստարկները հետևյալներն են.

1. Եթե որպես ելակետ ընդունենք 428 թվականի օգոստոսի 11 = Նավասարդի 1 համապատասխանությունն իբրև երկրորդ ապոկատաստոսի զուգադիպություն, ապա տոմարի սկիզբը հասնում է մ. թ. ա. 25-րդ դարին, «երբ հայերն իբրև պետություն գոյություն չեն ունեցել»¹⁹: Այս փաստարկը ոչ մի արժեք չունի: Նախ պետություն ունենալը ժամանակաշարի վրա պարտադիր նախապայման չէ, ուստի և հայերի դեռևս պետություն չունենալն էլ չէր կարող բացառել տոմար ունենալու հնարավորությունը: Ինքը, Սեմյոնովն էլ, մոռանալով իր այս պնդումը, մի քանի էջ հետո գրում է. «Բաբելոնում աստղաբաշխությունը և նրա անհարազատ որդի աստղագիտությունը զարգացած էին XXX դարից մեր թվագրությունից առաջ: Այդ գիտությունները, ժամանակի ընթացքում թափանցում էին հայոց երկիրը, և հայերը (խաղերը) դեռևս շատ հնուց լավ ծանոթ էին թե՛ աստղաբաշխության և թե՛ աստղագիտության»²⁰:

2. Աստղագիտական հաշվումներով, ըստ Սեմյոնովի, «եթե առաջին հազարամյակում մեր թվականությունից առաջ Սոթիսի հելիոտիկ ծագումը տեղի էր ունենում հուլիսի 19-ին, ապա նույնը Հայկի համաստեղությունից համար տեղի էր ունենում օգոստոսի 11-ին»²¹: Այս դրույթը հիմնովին հերքել է Բ. Թումանյանը աստղագիտական լուրջ քննությամբ և ցույց տվել, որ «Լ. Սեմյոնովի հաշվումները սխալ են, և օգոստոսի 11-ը հելիոտիկ ծագումներով հիմնավորելը, որպես հեթանոսական ամանորի թվական, միանգամայն անհիմն»²²:

3. Հայերի զարգացման մակարդակը հնարավորություն չի տվել արեգակնային օրացույց ստեղծելու. «Հին հայոց երկրում նման տիպի տոմար

¹⁹ Լ. Սեմյոնով, նշված աշխ., էջ 23:

²⁰ Նույն տեղում, էջ 22:

²¹ Նույն տեղում, էջ 22—23:

²² ՀՄՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 6, էջ 80:

ստեղծելու պայմաններ չեն եղել»²³; Այս դրույթը հերքել է Հ. Բաղալյանը, ցույց տալով, որ Հայաստանն իր բնակլիմայական պայմաններով այնպիսին է, որ ինքնին նախապայմաններ է ստեղծում զարգացած օրացուցային համակարգ ստեղծելու համար²⁴:

Մնում է ավելացնել, որ եգիպտական և հայկական տոմարներն իրենց կառուցվածքով միանգամայն տարբեր են. թեև երկուսն էլ ունեն 365 օր պարունակող տարի (12 ամիս+5 օր), բայց եգիպտականում ընդունվել է տասնօրյա և հնգօրյա շաբաթների համակարգը, մինչդեռ հայերն ամսվա այդ կարգի որևէ բաժանում չեն ունեցել:

Այսպիսով, Լ. Սեմյոնովի բոլոր փաստարկները հերքվել են, և հայոց տոմարը եգիպտականից փոխառություն լինելու վարկածը՝ մերժվել:

Հ. Բաղալյանը, հերքելով Լ. Սեմյոնովի վարկածը, այն կարծիքն է հայտնել, որ հայերը «ունեցել են ինքնուրույն տոմար»²⁵: Այս կարծիքը մենք առավել հավանական ենք համարում՝ ընդունելով, որ պարսկական, կապադովկիական և այլ նմանատիպ օրացույցները ստեղծվել են զարգացման ընդհանուր պայմաններում ու որոշակի աստիճանում՝ Հայաստան, Իրան ու ամբողջ Փոքրասիական տարածքում:

Ինչպես ասել ենք, շարժական տոմարի սկզբնավորության ժամանակը որոշելու համար կարևորագույնը այն է, թե ո՞րն է եղել այդ տոմարի առաջին տարվա առաջին օրվա (ամանորի), մեր տոմարի համար՝ Նավասարդի 1-ի համապատասխանությունը հուլյան տոմարի ամիսների ու ամսաթվերի համակարգի զուգադրությամբ: Տեսանք նաև, որ Ղ. Ալիշանն ընդունում է երկու կարգի՝ շարժական ու հաստատուն տոմարների գոյությունը, համապատասխանաբար ընդունելով նաև երկու ամանոր՝ Նավասարդի 1, որ համապատասխանել է օգոստոսի 11-ին, և արեգի 1, որ համապատասխանել է մարտի 9-ին՝ մ. թ. 428 թվականին: Այդ համապատասխանությունը նա ընդունում է որպես նահանջից նահանջի (ապոկալիպտաստասի) համապատասխանություն և դրա հիման վրա էլ, ինչպես տեսանք, բուն թվականի առաջին շրջանի սկիզբը հասցնում մ. թ. ա. 2492 թվականին:

Հակառակ Ալիշանի այդ վարկածի, Գյուլորիեն, Գինցելը և նախասովետական շրջանի շատ հետազոտողներ մեր Բուն տոմարի տարեսկիզբը համարել են գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 20-ը: Սովետական շրջանում էլ, բոլոր հայագետները (աստղագետ-տոմարագետներ, պատմաբաններ, լեզվաբաններ և այլք) ընդունել են այդ նույնը: Ա. Գ. Աբրահամյանը, որ նույնպես տարեսկիզբը գարնանային գիշերահավասարի օրն է համարում, գտնում է, այնուամենայնիվ, որ գիշերահավասարի օրը եղել է մարտի 21-ը և ոչ՝ 20-ը. «տարվա ամանորը եղել է գարնանի գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին»²⁶: Իրրև դրա միակ հիմնավորում նա բերում է ձեռագրական մի տեղեկություն, որ հետևյալն է. «Որ իրոք, հին հայկական ամանորը եղել է մարտի 21-ին, վկայում է թանկարժեք տոմարական մի պատասիկ, որը մնացել է մատենադարանի № 1999 ձեռագրում: Այնտեղ հին հայկական ամիսները զուգադրություն մեջ են դրված հռոմեական ամիսների հետ: Այդ զուգադրի բնագիրը վերնագրված է «Ամիսը հայոց և Հռոմի հանդէպ միմեանց»

Նաւասարդի, որ է մարտի
Հոռի՝ ապրիլի
Սահմի՝ մայիս
Տրեայ՝ յունիս
Քաղոց՝ յուլիս

Մեհեկի՝ սեպտեմբեր
Արեգ՝ հոկտեմբեր
Մարեր՝ դեկտեմբեր
Մարգաց՝ յունուարի
Հրոտից՝ փետրուարի»²⁷:

Թե ինչով է այս պատասիկը «թանկարժեք», մեզ հայտնի չէ, սակայն բերված հատվածը ոչ մի արժեք չի ներկայացնում, մանավանդ տարեսկզբի օրը որոշելու տեսակետից: Տախտակում, ինչպես հեշտ է նկատել, բերված են հայոց ամսանունները և յուրաքանչյուրի դիմաց՝ համապատասխան հռոմեական անունները, այն էլ ոչ լրիվ՝ միայն տասը ամիսներինը: Այդ տախտակից երևում է, օրինակ, որ հայոց Նավասարդը՝ տարվա առաջին ամիսը, համապատասխանում է մարտ ամսվան: Բայց ասել, թե Նավասարդը հռոմեական մարտին է համապատասխանում, չի նշանակում հաստատել, թե գիշերահավասարը մարտի 21-ին է լինում: Այնպես որ դա ապացույց չէ, ոչ էլ նույնիսկ այդ հարցի համար որևէ նշանակություն ունեցող տեղեկություն: Առհասարակ զարմանալի է, որ Ա. Գ. Աբրահամյանը գիշերահավասարի օրը համարում է մարտի 21-ը, որովհետև նրա ուրիշ աշխատություններից հայտնի է, որ նա քաջատեղյակ էր Շիրակացու, Հովհաննես Իմաստասերի և մեր շատ տոմարագետ մատենագիրների աշխատություններին, որոնց մեջ գիշերահավասարի օրը մարտի 20-ն է համարվում, և ինքն էլ շատ առիթներով այդ տվյալը վկայակոչել է:

Յուրահատուկ դիրք է զբաղում Լ. Սեմյոնովը. նա որպես ամանորի օր է ընդունում գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 20-ը: Այդ ելակետն ընդունելով, նա 428 թվականի օգոստոսի 11 = Նավասարդի 1 համապատասխանության հիման վրա ուզում է որոշել, թե երբ է Նավասարդի օրը եղել:

²³ Լ. Սեմյոնով, նշված աշխ., էջ 1

²⁴ Հ. Բաղալյան, նշված աշխ., էջ 58—62:

²⁵ Նույն տեղում, էջ 62:

²⁶ Ա. Գ. Աբրահամյան, նշված աշխ., էջ 113:

²⁷ Նույն տեղում, էջ 113—114:

սարգի 1-ը համընկել մարտի 20-ին, և գտնում է, որ այդ զուգահեռաբանությունը եղել է մ. թ. ա. 460 թվականին²⁸: Այս եզրակացությունն անխուսափելիորեն թեւադրում է այն միտքը, թե այդ թվականն էլ հենց պետք է ընդունել որպես Բուն թվականի սկիզբը, սակայն հետևելով Ղ. Ալիշանին, նահանջից նահանջ է համարում 428 թվականի օգոստոսի 11-նամսարդի 1 զուգահեռաբանությունը և դրանից ելնելով էլ հայոց բուն թվականի սկզբնավորումը հանգեցնում է մ. թ. ա. 2492 թվականին: «Բազմաթիվ պատմական տվյալները,— գրում է նա,— բերում են մեզ այն եզրակացության, որ հայկական արեգակնային տոմարի, այսպես կոչված, ապոկատաստասը կայացել է 428 թվականի օգոստոսի 11-ին և որ այդ կապված է եղել Օրիոնի համաստեղության հելիակտիկ ծագման հետ, այն համաստեղության, որը նվիրված է եղել հայոց ազգի առասպելական Հայկ դուրյազի անվանը»²⁹: Այդ, այսպես կոչված, «բազմաթիվ պատմական տվյալները» այլ բան չեն, քան մեր մատենագիրների կողմից հիշատակված որոշ դեպքերի ժամանակի որոշումը հուլյան տոմարով: Այսպես, օրինակ, Բուզանդը գրում է, որ Գնելի սպանությունը օրվա հաջորդ օրը կիրակի է եղել, և Օրմանյանը տոմարական հաշվումներով ապացուցում է, որ այսպես կարող էր լինել 359 թվականին, երբ կիրակի օրը նամսարդի 1-ն է եղել և համապատասխանել է օգոստոսի 29-ին: Բայց սա ապոկատաստասը հաստատող տվյալ չէ: Մենք վերն արդեն ասել ենք, թե ո՞ր թվականի համար էլ համապատասխանության տվյալ ունենանք, կարող ենք թվարանական պարզ հաշվումներով հասնել մեր ցանկացած տարուն. այսպես՝ գիտենք, որ 353 թվականին նամսարդի 1-ը համընկել է օգոստոսի 30-ին, որի համապատասխան էլ այդ ամսաթվից ըստ բառամյակների առաջ զնալով՝ կստանանք 428 թ. օգոստոսի 11-նամսարդի 1 համապատասխանությունը, 500 թ. հուլիսի 25-նամսարդի 1, 600 թ. հուլիսի 30-նամսարդի 1 և այլն, և այլն: Այս տվյալները բոլորն էլ ստույգ են, բայց ոչ մեկն էլ չի կարող իբրև ապացույց ծառայել

այն բանի, որ ապոկատաստասը եղել է 28 թվականին: Այս խնդրում է Սեմյոնովը պարզապես հետևել է Ղ. Ալիշանին, որով և ջնջել է իր պնդումը այն մասին, որ հայոց ամսանորը եղել է մարտի 20-ին: Իրոք, ապոկատաստասը այլ բան չէ, եթե ոչ 1460-ամյա շրջանի (Հայկյան շրջանի, Սոթիսի շրջանի) ավարտումից հետո՝ նոր շրջանի սկիզբը: Եթե հայոց տոմարով ապոկատաստասն է 428 թվականը, երբ նամսարդի 1-ը համընկել է օգոստոսի 11-ին, ապա ամսանորն էլ եղել է հենց օգոստոսի 11-ին նաև 1460 տարի առաջ (մ. թ. ա. 1032 թ.) կամ հետո (1888 թ.), ինչպես ցույց է տվել Ղ. Ալիշանը: Բայց և Սեմյոնովը մի կողմից ընդունում է 428 թվականը որպես ապոկատաստասի տարի և ըստ այդմ էլ հայոց Բուն թվականի սկիզբը համարում 2492 թվականը, իսկ մյուս կողմից տարեակիզբը համարում է մարտի 20-ը և տոմարի սկզբնավորությունը հանգեցնում մ. թ. ա. 460 թվականին: Այս հակասությունից ելք գտնելու համար էլ, ահա, նա դիմում է մի այլ վարկածի. Բուն հայոց թվականն, իբր, սկզբնավորվել է 2492 թվականին, բայց գործադրության մեջ է գրվել մ. թ. ա. 460 թվականից: Սա մի վարկած է, որ ոչ պատմական որևէ հիմք ունի, ոչ գիտական հիմնավորում: Եթե որևէ ժողովուրդ ունի տոմար, ապա դա ինքնին արդեն նշանակում է, թե տվյալ տոմարը գործադրվել է իր ստեղծման օրից: Հին ժամանակներում ժողովուրդները հենց այնպես, «հանուն արվեստի» տոմար չեն ստեղծել. նրանք իրական կյանքի պահանջների թեւադրանքով անհրաժեշտաբար ստեղծել են ժամանակը շահելու միավորներ (տարի, ամիս, տարվա եղանակներ, օր և այլն), ստեղծել են իրական գործադրությանը և ոչ թե սոսկ իբրև մտավարժանքի առարկա: Եվ, վերջապես, եթե հայերը արեգակնային տոմար են ընդունել և գործադրել մ. թ. ա. 460 թվականին, երբ նամսարդի 1-ը մարտի 20-ին էր, էլ ինչպե՞ս կարող էին նահանջից նահանջ համարել 428 թվականը: Ամենապարզ հաշվով, մ. թ. ա. 460 թ. սկիզբը համարելով, նահանջից նահանջի թվականը կլինեն հուլյան 1000 թվականը, և, ինչպես ստորև կապացուցենք, մոտավորապես այդպես է եղել: Այսպիսով, Ղ. Ալիշանի վարկածներից ոչ մեկն էլ ընդունելի չէ, բացի 460 թ. (մեր ճշգրտումով՝ 457), որոշումից, ըստ որում այս դեպքում էլ նա պարզապես հիմնվում է Ղ. Ալիշանի երկու տարեակների գրույթի վրա, բայց այլ մեկնաբանություններ, որ նույնպես ընդունելի չէ: Նրա երկու գրույթները փոխադարձաբար հերքում են միմյանց:

Եվ այսպես, հերքելով Ղ. Ալիշանի սխալ գրույթները, մենք չենք ընդունում նաև Գյուլտրիեի կարծիքը՝ հայոց բուն թվականի սկիզբը Զրադաշտ մարգարեի կողմից պարսից տոմարն ստեղծելու մասին ավանդության հետ կապելը: Չենք ընդունում նաև Գինցելի նշած մ. թ. ա. 488 թվականը, թեև ընդամենը 31 տարով է տարբերվում մեր ընդունած թվականից: Բանն այն է, որ Գինցելի համար նույնպես իբրև երկուս է ըն-

²⁸ Լ. Սեմյոնովի հաշվարկն ունի մեկ քառամյակի սխալ, որի պատճառը հետևյալն է: Հին հայկական տարեմուտից՝ մարտի 20-ից մինչև օգոստոսի 11-նամսարդի 1 համապատասխանության հասնելն անցած օրերի քանակը որոշելու համար նա ներառում է նաև օգոստոսի 11-ը և ստանում 222 օր, որը բազմապատկելով 4-ով՝ ունենում է 888 տարի: Բայց դա ճիշտ չէ. օգոստոսի 11-ով սկսվում է նոր քառամյակ, որ ավարտվում է քառամյակի վերջին տարվա՝ 432 թ. օգոստոսի 9-ով (նույն 432 թ. օգոստոսի 10-նամսարդի 1-ով սկսվում է հաջորդ քառամյակը), իսկ դա նշանակում է, թե օգոստոսի 11-ը անցած օրերի թվին չի պատկանում և զրանց քանակի մեջ չպետք է մտցվի: Այս դեպքում մարտի 20-ից օգոստոսի 11-ը անցած օրերի թիվը կլինի 221, անցած տարիների քանակը (4×221)՝ 884, ուստի և՛ 428 թվականից ետ զնալով 884 տարի՝ կհասնենք մ. թ. ա. 456 թվականին (884-428=456), որին կանգրադանանք ստորև:

²⁹ Նույն տեղում, էջ 62:

դունվում պարսկական տոմարը, ըստ որում նրա ընդունած 488 թվականը հիմնվում է Մարկվարտի այն կարծիքի վրա, որ հին պարսկական տոմարի վերջին բարեփոխությունը տեղի է ունեցել Դարեհի ժամանակ, մոտավորապես մ. թ. ա. 488 թվականին³⁰:

Այս բոլորից հետո կարելի է մտածել, թե մենք պետք է ընդունենք Ղ. Ալիշանի տեսությունը, սակայն այդպես չէ: Ղ. Ալիշանի տեսությունն ըստ էության նորություն չէ: Մեր բուն տոմարի սկզբնավորությունը Հայկ նահապետի հետ կապելը երկար պատմություն ունի: Այսպես, գեոևս Անանիա Շիրակացին (VII դար) գրում է. «Բայց զամիսքդ հայոց ասացից, զի հայ ամսոցդ անուանք յառաջ քան զդնել թուականին հայոց էին: Եվ ոչ քան զայն միայն, այլ և յառաջ քան զմարդեղութիւն բանին Աստուծոյ՝ անուանեալ էին ամիսքդ այդոքիկ, և այս է պատճառն: Զի Հայկ ոմն անուն աղեղնաւոր հսկայ՝ յազգէ Յարեթի որդւոյ Նոյի, եկեալ ի Բաբելոնէ՝ տիրեաց Հայոց: Եւ բնակեալ ի Հայս և յանուն նորա կոչեցան Հայք. նոյնպէս որդոց և դստերաց իւրոց եղ անուանս. զոր առեալ հայոց ի վերայ ամսոցդ՝ վասն մեծարանաց հօրն և զաւակացն...»³¹: Ավելի որոշակի է պատմում Հովհաննէս Իմաստասերը. «Բայց արուեստիդ տու՛մարի յառաջագոյն նախ Մովսէս գրեաց երբայեցոցն հրամանաւ Աստուծոյ... Այլ յառաջ քան զՄովսէս ոչ ուրեք էր գիտութիւն արուեստիս, բայց միայն ի հայ ամսոցդ, որ էին յառաջ քան զՄովսէս, քանզի ասեն, թէ ի ձեռն հոգւոյն, որ ազդէր ի նահապետսն, Հայկն, առաջին նահապետն Հայոց, զամիսքն կարգեաց և զանուանս ուստերաց և դստերաց իւրոց ամսոցդ կոչեաց»³²: Ինչպես տեսնում ենք, Ղ. Ալիշանը պարզապես որպես հիմք է ընդունել հին հայկական առասպելաբանությունը և զանազան հիմնավորումներով ու փաստարկներով ձգտել հաստատել այդ առասպելը: Այդ փաստարկներից նրանք, որոնք նա «արտաքին վկայություններ» է անվանում, որեւէ գիտական արժեք չունեն. դրանք Եվսեբիոսի և Աֆրիկանոսի՝ աստվածաշնչական առասպելաբանության հետ կապված նույնքան առասպելական ժամանակագրությունն են:

Կարևորագույն և հիմնական փաստը, որ Ղ. Ալիշանի տեսության հաստատման համար կարող էր գիտական կովան լինել, նահանջից նա-

հանջը (ապոկատաստաք) 428 թվականին ընդունելն է: Ինչպես տեսանք, ոչ միայն Ալիշանը, այլ և մեր ժամանակի տոմարագետներն էլ 428 թվականը հայոց տոմարի համար դարագլուխ են համարում: Դրա հիմնական պատճառն այն է, որ Հովհաննէս Իմաստասերն իր տոմարի համար իբրև ելակետ է ընդունել 428 թ. Նավասարդի 1 = օգոստոսի 11 համապատասխանությունը: Ղ. Ալիշանը, Գ. Աղանյանցը, Լ. Սեմյոնովը և ուրիշներ դա բացատրում են նրանով, որ Հովհաննէս Իմաստասերը տոմարական հաշվումներով ապացուցել է, որ 428 թվականը եղել է նահանջից նահանջի տարի և մեր մատենագրության հայրերի՝ Մեսրոպի ու Սահակի հիշատակը հավերժացնելու նպատակով իր տոմարը կազմելու տարում՝ 1084 թվականին, Նավասարդի 1-ը համարել է օգոստոսի 11-ը, թեև Բուն տոմարով (մեր հին շարժական տոմարով) 1084 թ. հայոց Նավասարդի 1-ը համընկնում էր փետրվարի 29-ին: Իմանք էլ այս փաստը բացատրել են նրանով, որ Հովհաննէսը 428 թվականը հիմք է ընդունել այլ պատճառով: Նա, իբր, հին աղբյուրների տոմարագիտական հաշվումներով գտել է, որ 428 թվականին Նավասարդի 1-ը համապատասխանում էր օգոստոսի 11-ին, իսկ զարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին, և որովհետև «հին հայկական հնթանոսական տարվա ամանորը եղել է զարնան գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին»³³, ուստի և Հովհաննէսն էլ որպես ելակետ է ընդունել 428 թվականի դրությունը: Այս ենթադրությունը ճիշտ չէ, որովհետև ա) ըստ Հովհաննէսի հաշվումների 428 թվականին զարնանային գիշերահավասարի օրը եղել է մարտի 20-ը, բ) ինչպես վերը տեսանք, հայերը որպես զարնանային գիշերահավասարի կայուն օր ընդունել են մարտի 20-ը: Ինքը՝ Ա. Գ. Աբրահամյանն էլ, Հովհաննէս Իմաստասերի մատենագրության ուսումնասիրության մեջ, բոլորովին այլ բան է գրում. «Հովհաննէսն իր այս աշխատության մեջ նախ կանգ է առել զարնանային գիշերահավասարի վրա: Նա բերում է գոյություն ունեցող տարբեր տեսակետները և գտնում, որ գոյություն ունեցող տարբեր տեսակետներից ամենից ճիշտը մարտի 20-ն է, որը համապատասխանում է եգիպտացոց պեմենովթ ամսի 24-ին, երբայեցոց ավելյաց 4-ին, իսկ հայոց՝ արեգի 12-ին: ...Մարտի 20-ը զարնանային հավասարության (գիշերահավասարի.— է. Ա.) հիմք ընդունելով, այն համապատասխանեցնելով արեգի 12-ին և այդ հետևողականությամբ զուգարդելով հայկական ամսաթիվը հոտմեականին, Նավասարդի 1-ը ընկնում է օգոստոսի 11-ին»³⁴: Այս բոլորը միանգամայն ճշմարիտ է, և ցավալի է, որ հիշյալ տողերի հեղինակը՝ մոռանալով այդ ճշմարտությունը, ջնջել է դրանք՝ մի թյուր կարծիք առաջ քաշելու համար: Հովհաննէս Իմաստասերի տոմարի քննությունը թողնելով 5-րդ գլխին, այստեղ հարկ ենք համարում ասել,

³⁰ F. K. Ginzel, *նշված աշխ.*, էջ 27:

³¹ Անանիա Շիրակացի, *Տիեզերագիտություն և տոմար*, Երևան, 1940, էջ 76: Հրատարակիչը «տիրեաց հայոց», «բնակեալ ի հայս», «կոչեցան հայք» հասկացել է «տիրեց հայերին», «բնակվելով հայերի մեջ», «կոչվեցին հայեր» և համապատասխանաբար փոքրատառով է գրել Հայոց, Հայս, Հայք, որ սխալ է: Մենք մեջբերման մեջ մեծատառ ենք դարձնում, որովհետև երեք դեպքում էլ խոսքը վերաբերում է Հայաստանին («տիրեց Հայաստանին», «բնակվելով Հայաստանում», «կոչվեց Հայք»):

³² Հովհ. էջ 94:

³³ Նույն տեղում, էջ 94:

³⁴ Հովհ. էջ 94:

որ եղած կարծիքները մենք ընդունելի շեմք համարում և գտնում ենք, որ տարեսկզբի տեղափոխության համար Հովհաննեսն ունեցել է մի ուրիշ, միանգամայն օրյակալով պատճառ, որի մասին հանգամանորեն կխոսվի դարձյալ 5-րդ գլխում: Այստեղ մեզ հետաքրքրում է միայն մի հարց. ի՞նչ գիտենք, որ 428 թվականը նահանջից նահանջի տարին չի եղել և, եթե դա ճիշտ է, ապա ե՞րբ է եղել Բուն թվականի նահանջից նահանջը:

Այն փաստը, որ ինչպես մինչև V դարը, այնպես էլ դրանից հետո մինչև Հովհաննեսի կողմից կայուն տոմարի ստեղծումը հայերն առաջնորդվել են Բուն տոմարով, նշանակում է, թե այդ շարժական օրացուցային համակարգի գործադրությունն անընդհատական կերպով շարունակվել է մինչև 1084 թվականը (Փոքր թվականի սկիզբը): Այս դրույթը հիմք ընդունելով, կարող ենք որոշակի հաշվումներ կատարել՝ մեր Բուն տոմարի սկզբնավորման (նրա առաջին տարվա) ժամանակը որոշելու համար: Քանի որ Բուն թվականի առաջին տարվա նավասարդի 1-ը, ինչպես վերը ապացուցեցինք, եղել է գարնանային գիշերահավասարի օրը, այսինքն՝ մարտի 20-ը, ապա 428 թվականից պետք է դեպի ետ գնալ այնքան տարի, որքան անհրաժեշտ է մարտի 20 = նավասարդի 1 համապատասխանությունը հանգելու համար: Ուրեմն, անհրաժեշտ է թվաբանական պարզ գործողություններ կատարել՝ հետևյալ հարցերի պատասխանը գտնելու նպատակով. 1) 428 թվականին նավասարդի 1-ը համընկել է օգոստոսի 11-ին, հետագարձ հաշվով քանի՞ օր է ընկած մարտի 20-ից մինչև օգոստոսի 11-ը, 2) քանի՞ տարի էր հարկավոր այդքան օրվա առաջխաղացման համար:

Առաջին հարցի պատասխանը գտնելու համար պետք է հաշվել մարտի 24-ից մինչև օգոստոսի 11-ի օրերը՝ հետընթաց կարգով, այսպես. մարտ՝ 20 օր, փետրվար՝ 28 օր, հունվար՝ 31 օր, դեկտեմբեր՝ 31 օր, նոյեմբեր՝ 30 օր, հոկտեմբեր՝ 31 օր, սեպտեմբեր՝ 30 օր և օգոստոսի 20 օրը (11-ը բացառում ենք) = 221 օրվա:

Երկրորդ հարցի պատասխանը գտնելու համար ստացված 221 օրը պետք է բազմապատկել 4-ով, քանի որ մեկ օրվա առաջխաղացումը (մեր և հուլյան տարիների մեկօրյա տարբերությունը) ստացվում է շորս տարվա ընթացքում. $221 \times 4 = 884$:

Այսպիսով, մեր Բուն տոմարի առաջին տարվանից մինչև 428 թվականն անցել է 884 տարի: Որպեսզի ստանանք Բուն թվականի առաջին տարին, պետք է 428 թվականից ետ գնանք 884 տարի, իսկ դրա համար այդ թվից պետք է հանենք մեր թվականության 428 տարիները, որով կստանանք մեր թվականությունից առաջ 456 թվականը ($884 - 428 = 456$): Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ հաշվարկի մեջ 428 թվականն առել ենք ամբողջությամբ, մինչդեռ իրականում նախորդ շրջանին պատկանում է միայն 428 թվականի մի մասը (մինչև օգոստոսի 11-ը), ուստի

և համապատասխանաբար անհրաժեշտ է — 456 թվականից ետ գնալ մինչև — 457 թվականի մարտի 20-ը: Այսպիսով, միևնույն համապատասխանությունը (նավասարդի 1 = մարտի 20) ունեցող առաջին քառամյակը կլինի մ. թ.ա. 457—53 թթ.: Ըստ այդմ մեր Բուն թվականն սկզբնավորվել է մ. թ. ա. 457 թվականի նավասարդի 1-ով = մարտի 20-ով:

Ունենալով Բուն թվականի սկզբնավորման թիվը, կարող ենք որոշել նաև նահանջից նահանջի՝ ապոկատաստասի, այսինքն՝ 1460-ամյա շրջանը լրանալու և նոր շրջանն սկսվելու թվականները: Քանի որ մեր թվականությունից առաջ Բուն թվականից անցել է 457 տարի, ապա հայկյան շրջանը լրանալու համար մնում է 1003 տարի, ուրեմն մեր թվականությունից 1004-րդ տարին³⁵ էլ Հայկյան (Սոթիսի) նոր շրջանի առաջին տարին է, և նավասարդի 1-ը պետք է համապատասխանել մարտի 20-ին: Իրոք էլ, ըստ Բ. Թումանյանի և Հ. Բաղալյանի կազմած աղյուսակների, 1004—1007 թվականներին հայոց շարժական տոմարով նավասարդի 1-ը համընկել է մարտի 20-ին: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ այս ամբողջ հաշվումները հիմնված են մեր այն ելակետային դրույթի վրա, ըստ որի հայոց Բուն թվականի առաջին տարվա նավասարդի 1-ը համապատասխանել է գարնանային գիշերահավասարի օրվան, որը, ինչպես ընդունված է հայագետների մեծագույն մասի կողմից, եղել է մարտի 20-ին: Այս երկու ելակետային տվյալների ճշգրտությունը մենք վերնաշխատեցինք ապացուցել: Այժմ անհրաժեշտ է, սակայն, ապացուցել, որ 1004 թվականն իսկապես եղել է Հայկյան շրջանի լրանալու տարին և որ, հետևաբար, հայոց շարժական տոմարի 1461 տարին ավարտվել է հենց նույն թվականով: Այդ նպատակով կրկին դիմենք Հովհաննես Իմաստասերին: Իր ՇԼԲ (532 տարվա) աղյուսակի մեջ 532 տարիների համար նա հատուկ սյունակում որպես գիշերահավասարի կայուն օր գրել է մարտի 20-ը, իսկ իր տոմարական զանազան աշխատություններում էլ բազմիցս շեշտում է, որ գարնանամուտը և գիշերահավասարի օրը մարտի 20-ն է: Քանի որ հայկական ամառորի օրվա խնդրով զբաղված հայագետները, այդ թվում և մենք, ընդունում են, որ Բուն թվականի ելակետային ամառորը՝ նավասարդի 1-ը, եղել է գիշերահավասարի օրը, ապա Հովհաննեսի այդ տվյալները ինքնին հաստատում են մեր հաշվարկների ճշտությունը:

³⁵ Ստույգ հաշվարկը հետևյալն է. Բուն թվականն սկսվում է մ. թ. ա. 457 թ. մարտի 20 = նավասարդի 1-ով, ուրեմն 457 թվականից ունենում ենք 9 ամիս, 12 օր (ընդամենը 287 օր). 1003 թվականին մեր նավասարդի 1-ը համապատասխանել է մարտի 21-ին, հետևաբար մինչև տարվա վերջը կազմում է 9 ամիս 11 օր (ընդամենը 286 օր), և որպեսզի հայկական տարվա 365 օրը լրանա, պետք է 1004 թվականից առնենք 79 օր, այն է՝ հունվարի 31, նահանջ տարվա փետրվարի 29 և մարտի 19 օրերը $31 + 29 + 19 = 79$): Այսպիսով, 1004 թվականի մարտի 19-ով ավարտվում է հայկյան շրջանի 1460 տարին, իսկ մարտի 20 = նավասարդի 1-ով՝ սկսվում նոր շրջանը:

նր: Բայց Հովհաննեսն ունի ավելի արժեքավոր տվյալներ, որոնք ցույց են տալիս հայոց Բուն թվականի նահանջից նահանջի տարին: Իր տարբեր տոմարական աշխատությունների մեջ Հովհաննեսը խոսում է 1460-ամյա պարբերաշրջանի մասին, բացատրում, թե ինչու հայկական տոմարով այդ պարբերաշրջանը կազմում է 1461 տարի, ինչպես է մտնում այդ ավելորդ տարին Հայկյան շրջանի մեջ և հիշեցնում, որ այդ ավելորդ տարին պետք է դեն նետել՝ տոմարական հաշվումների մեջ խառնաշփոթություն չստեղծելու համար. «Գիտել արժան է, որոց կենդանի իցեն, զի որքան առնու զաւարտ ՌնԿ (1460) ամբն, լինի դաբձեալ թիւ մի յաւելուած, զոր թողուլ պատշաճ է»³⁶: Իր հրատարակված աշխատությունների մեջ դժբախտաբար Հովհաննեսն ուղղակիորեն չի ասում, թե երբ է լրացել 1460 տարին: Բայց նա ունի մի տվյալ, որը հնարավորություն է տալիս գտնելու այդ թվականը: Այսպես. մ. թ. 1117 թ. գրված «Յաղագս ամսոց Հայոց և տաւնից» աշխատության մեջ Հովհաննեսը գրել է. «Վասն զի լինի յաւելուած թիւ մի ի ժողովմանէ նահանջիցն յետ ՌնԿ (1460) ամաց, որով այլայլեալ ապականէ կանոնն... եւ եւ այժմ ամբ այդպիսի սխալման ճԺԳ (113)»³⁷: Շատ պարզ է ասված. 1460 տարվա ընթացքում հայոց թվականության մեջ ավելացած մեկ տարին հանգեցնում է տոմարական հաշվումների սխալների. այդ կարգի սխալ հաշվարկների տարիների թիվն է 113, այլ կերպ ասած՝ 1460-ամյա պարբերաշրջանից անցել է 113 տարի: Ուրեմն, 117 թվականից պետք է հանենք 113 տարի և կհասնենք նահանջից նահանջի թվականին. 1117—113=1004: Միանգամայն համընկնում է մեր որոշած թվականին:

Բացի Հովհաննես Իմաստասերից, նահանջից նահանջի մասին խոսում է նաև Հակոբ Արիմեցին, որը կազմել է Հովհաննես Իմաստասերի տոմարական աշխատությունների համառոտություն-մեկնաբանությունը Գեվորգ Ռաբունու (Երզնկացու) համար: Այդ աշխատության մեջ Հ. Արիմեցին գրում է. «Հարց. Ո՞րպէս կոխեաց հասարակածն զտարեմուտն: Պատասխանի... Գիտեա, զի տարին 345 (365) օր է և նահանջ ամն 342 (366), որ է մի օր աւելի, և աւելի օրս թիւ մի յառաջ խաղացուցանէ զհասարակածն ի քանիս ամսոյն: Արդ՝ ի յահլի ԺԳ-էն ի յաւելեաց ի հինգն հասարակածն հասաւ ՆՄԲ ամն և եկեալ նահանջն ըստ շրից շրից ամաց ի զոյգ թիւն եղև ՆՄԳ ամն առաջի ամն, որ նահանջի և սկսեալ ի նավասարդոյ մինչև ի յաւելեացն ի հինգն և կատարեաց զտարին 345 օր, 345 օր, մինչև ի շորս ամն նահանջի, որ է ՆՄԶ ամ: Եւ ավելի ամն օրն նահանջի, այլ ոչ գտեալ տեղի նահանջի ամս, որ էր ՆՄԶ ի հին (տարիս), որպէս յանցեալ ամսն տարին, վասն այն ասեմ, զի ամ

³⁶ Հովն., էջ 263:

³⁷ Նույն տեղում, էջ 281—282:

նահանջի նոր ասի և շորորդս՝ հին»³⁸: Այս հատվածում «հարցումը» վերաբերում է գիշերահավասարի օրվան, որ 1084 թվականին գուգադիպել էր Նավասարդի 21-ին, այսինքն տարեմուտից հետո էր եղել. ահա այդ բանը բացատրելու համար էլ հարց է տրվում, թե ինչպե՞ս է եղել, որ տարեմուտը գիշերահավասարից առաջ է անցել, և պատասխանի մեջ բացատրվում է դա: Մեզ համար այդ պատասխանի մեջ կարևորը նահանջից նահանջի թվականն է, որ է ՆՄԲ (452) թվականը. «ի յաւելեաց ի հինգ հասարակածն հասաւ ՆՄԲ ամն = գիշերահավասարը հավելյացի 5-ին հասալ 452 թվականին»: Այս թվականը հայոց Մեծ թվականով է հաշված, ուստի և 452-ին պետք է գումարենք 551/552, որով կստանանք հուլյան տոմարի 1003/1004 թվականները. գիշերահավասարի օրը՝ մարտի 20-ը, 1003 թվականին համապատասխանում էր հավելյաց ամսի 5-ին, իսկ ամանորը, այսինքն՝ Նավասարդի 1-ը՝ մարտի 21-ին: Հաջորդ՝ 1004 թվականին, որ նահանջ տարին է, հավելյաց 5-ը գիշերահավասարից մեկ օրով առաջ է ընկնում (մարտի 19) և Նավասարդի 1-ը համընկնում է մարտի 20-ին՝ զարնանային գիշերահավասարի օրվան: Ինչպես տեսնում ենք, Հ. Արիմեցու այս տվյալը, որ քաղված է Հովհաննես Իմաստասերի աշխատություններից, ճշգրտորեն համապատասխանում է վերը մեր կատարած հաշվումներին, ըստ որում ուղղակի կերպով շեշտվում է, որ նահանջից նահանջի տարին եղել է ՆՄԲ (452) թվականին, այսինքն՝ 552+452=1004 թվականին:

Վերջապես, կա աստղագիտական հետեւյալ փաստը, որն անառարկելիորեն հաստատում է մեր նշած՝ նահանջից նահանջի թվականը: Ինչպես ասել ենք, տարվա եղանակների սկզբի և տևողության որոշումը հիմնված է գիշերահավասարների և արևադարձերի պարբերականորեն կրկնվող հաջորդականության վրա: Տարին ունի երկու գիշերահավասար՝ զարնանային և աշնանային, և երկու արևադարձ՝ ամառային և ձմեռային: Ինքնին հասկանալի է, որ արեգակնային կայուն (անշարժ) օրացուցային համակարգում չի կարող լինել տարի՝ առանց զարնանային (կամ աշնանային) գիշերահավասարի, ինչպես և չի կարող լինել որևէ տարի, որ երկու զարնանային (կամ աշնանային) գիշերահավասար ունենա: Սակայն այդպես չի կարելի ասել շարժական տոմարի մասին: Հուլյան տոմարով 1460 տարվա պարբերաշրջանի դիմաց հայոց Բուն տոմարի 1461 տարի է լինում, հասկանալի է, որ առաջինով մեկ պարբերաշրջանի ընթացքում կունենանք 1460 զարնանային գիշերահավասար, իսկ երկրորդով՝ — նույնպես 1460, որովհետև 1461-րդ հայկական տարին նահանջ տարիների մեկական օրերի գումարով գոյացած հավելյալ տարին է: նշանակում է. հա-

³⁸ Նույն տեղում, էջ 296—297:

յոց Բուն թվականի հայկյան պարբերաշրջանի մեկ տարին գարնանային գիշերահավասար չի կարող ունենալ, և այդ մեկ տարին հենց 1461-րդ տարին է: Այսպես. հայոց 1458—1461 թվականների նավասարդի մեկը համապատասխանում է մարտի 21-ին, որ նշանակում է, թե գիշերահավասարն ընկնում է նախորդ հայկական տարվա հավելյաց 5-ին = մարտի 20-ին: Համապատասխանորեն հայոց 1460 թվականի հավելյաց 5 = մարտի 20, իսկ մարտի 21-ով սկսվում է 1461 թվականը = հուլյան 1003 թ.: Քանի որ հուլյան հաջորդ տարին՝ 1004 թվականը, նահանջ տարի է, ապա պարզ է, որ հավելյացի 5-ը կրնկնի մարտի 19-ին, նավասարդի 1-ն էլ՝ մարտի 20-ին: Ուրեմն հայոց 1461 թվականն սկսվում է հուլյան 1003 թ. մարտի 21-ով և վերջանում 1004-ի մարտի 19-ով, և մարտի 20-ը դուրս է մնում այդ տարուց, հետևաբար՝ նաև գիշերահավասարը: Արդ, մենք ունենք 552—1084 թվականների ՇԼԲ աղյուսակը և եթե գտնենք այդ աղյուսակում այն տարին, որ գիշերահավասարի օր չունի, ապա գտած կլինենք նաև հայոց Բուն թվականի 1461-րդ տարին, իսկ դրանով էլ՝ ապոկատաստասը: Բացելով Շիրակացու մատենագրության մեջ զետեղված 532 տարիների (552—1084 թթ.) աղյուսակը և ուշադրությամբ դիտելով բոլոր տարիների գիշերահավասարի օրերի հայոց տոմարով ավալները, գտնում ենք հետևյալը. 279-րդ էջում հայոց ՆՄԱ թվականի գարնանային գիշերահավասարը եղել է ավելյաց 5-ին, նավասարդի 1-ը՝ մարտի 21-ին. հաջորդ՝ ՆՄԲ թվականի գիշերահավասարն ընկնում է նավասարդի 1-ին, որ համապատասխանում է մարտի 20-ին: Հասկանալի պատճառով հայոց Մեծ թվականի ՆՄԱ = 451-րդ տարին գարնանային գիշերահավասար չունի, քանի որ այդ տարվա առաջին օրը՝ նավասարդի 1-ը, որ նաև լուսնի զատկական լրման օրն է, ինչպես պարզորոշ ցույց է տրված 280-րդ էջի համապատասխան հոռոմեական աղյուսակում, եղել է մարտի 21-ին (գիշերահավասարին հաջորդող օրը), և տարվա վերջին օրն էլ՝ ավելյաց 5-ը, համընկել է մարտի 19-ին. մարտի 20-ը (գիշերահավասարի օրը), ինչպես տեսնում ենք, դուրս է գալիս ՆՄԱ թվականից և անցնում Մեծ թվականի հաջորդ՝ ՆՄԲ (452) թվականին: Հետևությունը պարզ է. Մեծ թվականի ՆՄԱ (451)-րդ, որ է մ. թ. 1003 թ. մարտի 21-ից մինչև 1004 թ. մարտի 19-ը (ներառյալ), հայոց Բուն թվականի ավելորդ՝ 1461-րդ տարին է, իսկ 1004 թ. մարտի 20-ը՝ երկրորդ հայկյան շրջանի առաջին տարվա նավասարդի 1-ը: Թվաբանական հաշվարկը պարզ է. մ. թ. ա. 457 տարի (—457 թ. մարտի 20-ից) + 1004 տարի (մինչև 1004 թվականի մարտի 19-ը ներառյալ) հավասար է 1461 տարու: Այս հաշվարկով էլ, ինչպես տեսնում ենք, հայոց Մեծ թվականի ՆՄԲ (452-րդ) տարին նահանջից նահանջ է, իսկ սա տոմարագիտական այնպիսի ստույգ տվյալ է, որ եթե մեր բերած բոլոր նախորդ փաստերն ու փաստարկները շինենք էլ, բավական էր՝ հաստատելու համար, որ նահանջից նահանջը եղել է 1004

թվականին, ուստի և Բուն թվականի սկիզբը մ. թ. ա. 457 թ. մարտի 20-ն է:

Ամփոփելով վերը շարադրվածները, հանգում ենք հետևյալին:

1. Հայերի զարեանային գիշերահավասարի կայուն օրն է եղել մարտի 20-ը, որ և սկզբնապես հայկական օրացույցի՝ տարեմուտը՝ նավասարդի 1-ն է եղել:

2. Ժամանակի ընթացքում, յուրաքանչյուր փոփոխվում գոյացող մեկօրյա տարբերությամբ մեր շարժական և արևադարձային տարիների միջև հայոց նավասարդի 1-ը անընդհատորեն առաջ է շարժվել, և միայն 1004 թվականին՝ 1460 տարվա շրջանը (Հայկյան շրջանը) լրանալուց հետո, կրկին նավասարդի 1-ը համընկել է մարտի 20-ին:

3. Քանի որ 1460-ամյա պարբերաշրջանը լրացել է 1004 թվականին, ապա ինքնին արդեն պարզ է, որ Հայկյան շրջանի սկիզբը եղել է դրանից 1460 տարի առաջ, այն է՝ մ. թ. ա. 457 թվականին: Այս թվականն էլ մենք ընդունում ենք որպես հայոց Բուն թվականի սկիզբ, ըստ որում դա պատմականորեն նույնպես արդարացվում է այն փաստով, որ մ. թ. ա. V դարում արդեն գոյություն ունեին հայկական պետականություն՝ Երվանդունիների ստեղծած պետությունը, թեև արդեն ենթարկված քրեմեներին:

4. Մ. թ. ա. 457 թվականն ընդունելով որպես Բուն թվականի սկիզբ, գտնում ենք, որ այդ շարժական տոմարն անընդհատորեն գործադրվել է մինչև Մեծ թվականով ժամանակագրության սկիզբը, թեև այդ թվականի օրացուցային համակարգն էլ եղել է Բուն թվականինը: Դա նշանակում է, թե Մեծ թվականն էլ, ըստ էության, ուղղակի շարունակությունն է Բուն թվականի, չնայած այդ տոմարով տարիների հաջորդական թվակարգությունն սկսվում է հուլյան 552 թվականով:

Քանի որ արդեն գիտենք հայոց Բուն թվականի սկիզբը, ապա մենք կարող ենք որոշել, թե մինչև այժմ քանի Հայկյան շրջան է անցել: Բայց այս հարցին պատասխանելու համար նախ պետք է պարզենք, թե մեր նշած — 457-ը իրոք հայկական տոմարի սկզբնավորման թվակա՞նն է, թե միայն Հայկյան շրջանի սկիզբը: Բանն այն է, որ մենք կարող ենք այդ թվականից մեկ Հայկյան շրջան էլ ետ գնալ (457—1460 մ. թ. ա.), որով կհասնենք մ. թ. ա. 1917 թվականին, որեթե երկրորդ հազարամյակի ըսկզբին: Հարց է ծագում, արդյոք ճիշտ կլինե՞ր, եթե այդ թվականն էլ համարենք, թեկուզև վարկածայնորեն (հիպոթետիկ կերպով), հայկական Բուն թվականի սկիզբ: Մենք գտնում ենք, որ ճիշտ չէր լինի՝ հետևյալ պատճառով:

Վերը մենք ծանոթացանք բրոնզեդարյան գոտի-օրացույցին, որը վերագրվում է մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբներին: Քանի որ

գոտի-օրացույցի տոմարական համակարգը լուսնաարեգակնային է, ապա ինքնին հասկանալի է, որ մ. թ. ա. երկրորդ հազարամյակում էլ օրացուցային այդ համակարգն է գոյություն ունեցել: Հետևաբար հայկական արեգակնային օրացուցային համակարգը մ. թ. ա. երկրորդ հազարամյակում սկզբնավորված համարել չենք կարող:

Սրանից ինքնին հետևում է այն, որ մ. թ. ա. 457 թվականը ոչ միայն հայկյան շրջանի սկիզբն է, այլև հայոց Բուն թվականի սկիզբը: Դա նշանակում է, թե հայկական արեգակնային օրացույցի սկզբնավորումից անցել է մեկ լրիվ հայկյան շրջան, որի ավարտը եղել է 1004 թվականի մարտին, այժմ (1985 թ.) երկրորդ շրջանի 981-րդ տարին է, շրջանը կավարտվի 2464 թվականի մարտի 19-ին, և մարտի 20-ով կսկսվի 3-րդ շրջանը:

Բուն թվականի հետ անմիջականորեն առնչվող կարևորագույն խնդիրներից մեկն էլ հաստատուն և շարժական օրացույցների զուգահեռ գոյություն ու գործածությունն է: Ինչպես վերը տեսանք, Ղ. Ալիշանը գտնում է, որ հին հայերն ունեցել են օրացուցային երկու համակարգ՝ հաստատուն և շարժական: «Մեր ազգն այլ իր շարժուն քաղաքական տուժարենն դատ՝ անշարժ հաստատուն և Հին տումար մ'ունեցեր է...»³⁹: Ուրիշ հին գիտուն ազգաց պես երկու տարի ունեին, մեկն քաղաքական, մյուսն սրբազան՝ որ էր հաստատուն»: Տեսանք նաև, որ հաստատուն տարվա համար ամանորի օրն է համարում արեգի 1 = մարտի 9-ը, իսկ շարժական տարվա սկիզբը՝ նավասարդի 1 = օգոստոսի 11-ը, որոնք այլ բան չեն, եթե ոչ 428 թվականի արեգի 1-ի և նավասարդի 1-ի համապատասխանությունը հուլյան ամսաթվերին: Որ տվյալ ժողովուրդը կարող է երկու տարեսկիզբ ունենալ, անհնարին բան չէ. հայտնի է, որ հրեաներն էլ ունեին երկու տարեսկիզբ. քաղաքացիական տարվա սկիզբը՝ Քշրի ամսով ըսկրավոզ, և սրբազան տարվա սկիզբը՝ նիսան ամսով սկսվող, առաջինը ընկնում էր սեպտեմբերին, երկրորդը՝ մարտին: Հայերն էլ, ուրեմն, կարող էին երկու տարեսկիզբ ունենալ, բայց դա ոչ մի կարևորություն չունի հաստատուն և շարժական տոմարների միաժամանակյա գոյությունն ու գործածությունը հաստատու համար: Հաստատուն և շարժական տոմարները ժամանակաշարժության տարբեր համակարգեր են, որոնց հիմքը տարվա հաշվարկային օրերի քանակն է: 354 օր պարունակող տարին (լուսնային տարին), չի կարող հաստատուն լինել, որովհետև արեգակնային տարին պարունակում է 365 1/4 օր, որը չնչին տարբերություն ունի աստղագիտական ճշգրիտ արևադարձային տարուց: Չի կարող շարժական չլինել նաև լուսնաարեգակնային տոմարը, որովհետև այդ օրացուցային համակարգում լուսնային պակաս օրերը լրացվում են հավելյալ ամիս-

ներով: Վերը մենք տեսանք, որ այդ հավելյալ օրերի ներմուծումն էլ տարբեր կերպով է կատարվում (3 տարում մեկ հավելյալ ամիս, 6 տարում՝ երկու հավելյալ ամիս, 19 տարում՝ 7 հավելյալ ամիս և այլն), տեսանք նաև Կալիպոսի և Հիպարքոսի ուղղումները, մասնավորապես՝ 76-ամյա պարբերաշրջանի հաստատումը: Այս բոլոր պարբերաշրջանները հիմնված են աստղագիտական տվյալների ուսումնասիրության և դրանց մաթեմատիկական բանաձևումների վրա. օրինակ՝ Կալիպոսի 76-ամյա պարբերաշրջանը հանգում է հետևյալին. 76 արեգակնային տարին 365 պարբերաշրջանը հանգում է հետևյալին. 76 արեգակնային տարին 365 1/4 օրով = 27259 օրվա (912 ամիս Հուլյան օրացույցով), մյուս կողմից՝ հուլյան 76 տարին հավասարվում է 940 լուսնային ամիսների օրերի թվին, եթե ամիսներից 441-ը թերի են (29-ական օր ունեն), 499-ը՝ լի ամիսներ (30-ական օրով): Ինչպես տեսնում ենք, որոշակի տարիների պարբերաշրջանների որոշումը մի նպատակ ունի. լուսնային ամիսներով հաշվարկվող տարին մոտավորապես կամ ճշգրտորեն համապատասխանեցնել արեգակնային տարվա օրերի թվին տվյալ պարբերաշրջանի համար, ըստ որում, անկախ այդ համապատասխանեցման ճշգրիտ կամ մոտավոր լինելուց, բոլոր լուսնային և լուսնաարեգակնային օրացուցային համակարգերն ունեն անխուսափելիորեն հատուկ մի հատկանիշ. տվյալ պարբերաշրջանի, ասենք՝ 76 ամյա շրջանի մեջ, լուսնային կամ լուսնաարեգակնային տարին կարող է ավելի երկար կամ ավելի կարճ լինել քան արեգակնային տարին, բայց պարբերաշրջանի վերջում լուսնային և արեգակնային տարիների օրերի քանակը հավասարվում է: Այս բոլորից բխում է մի պարզ հետևություն. քանի դեռ հին Հայաստանում օգտագործվում էր լուսնային, այնուհետև՝ լուսնաարեգակնային օրացուցային համակարգ, չէր կարող գործածություն մեջ լինել հաստատուն տոմար:

Այժմ անդրադառնանք արեգակնային օրացույցին: Գիտենք, որ արեգակնային տարին ըստ հուլյան համակարգի, ունի 365 1/4 օր, ըստ որում 1/4 օրերը մեկ լրիվ օր դառնալով գումարվում են 4-րդ տարվան (նահանջ տարվան), որով և հուլյան տոմարն անճշտությունը հասցնում է նվազագույնի: Արդ, հայոց Բուն թվականի համակարգում տարին ունի 365 օր. ինքը՝ Ղ. Ալիշանն էլ դա հաստատում է և դրա համաձայն էլ բացատրում հայկական հին տոմարի կառուցվածքը: Ինքնին հասկանալի է, որ եթե նահանջ տարով քառամյակի մեկ օրյա տարբերությունը չի վերացվում, սպա օրացույցը շարժական է: Հիշենք հին եգիպտական օրացույցը, որ շարժական էր, հին պարսկականը, որ թեև 120-ամյա պարբերաշրջանի վերջում մեկ ամսվա հավելումով կուտակված օրերի տարբերությունը վերացնում էր, բայց 120-ամյակի ընթացքում շարժական էր: Հայոց Բուն թվականի այդպիսի ուղղման մասին, ինչպես վերև ասել ենք, ոչ մի տրվյալ չկա: Ավելին. միջին դարերում էլ, երբ դեռ շարունակվում էր Բուն թվականը, որե՛է այդ կարգի ուղղում գոյություն չի ունեցել: Այս հանգա-

³⁹ Ղ. Ալիշան, նշված աշխ., էջ 84—85, 88:

մանքը չի վրիպել նաև Ղ. Ալիշանի ուշադրությունից, և նա դա բացատրել է հայոց Բուն թվականի «խաթարումով»: Այսպես, հիմնվելով Մ. Խորենացու այն տեղեկություն վրա, ըստ որի Արտաշես Երկրորդը հոգ է տարել տոմարի կարգավորման մասին, նա գտնում է, որ դա պետք է հասկանալ հոռմեական (հուլյան) տոմարը գործադրության մեջ մտցնելու իմաստով: «Արտաշես կերպով մը խափանած կերևի Հայկազանց կարգադրությունը, թեև ավելի կանոնավոր տուամար մը մտցընելով, որ էր անշուշտ յուլեան տուամարը, անկողի ի Հոռվմայեցվոց. վասն զի գիտեմք ի պատմութենէ, որ առաջին ինքն եղավ Հոռվմայեցվոց հարկատու, իր ատեն կայսրն Տրոյանոս՝ զՀայաստան ինքնակալութեան գավառ սեպեց. . . այն ատենները Կապադովկացիք. . . ընդուներ էին Հոռվմայեցվոց տուամարը, ըսել է որ Արտաշիսի ըրած տուամարի կարգադրությունն այլ, ի 122 թվին Քրիստոսի, էր Հոռվմայեցվոց տուամարին համաձայնություն մը, թողլով ըստ մասին հին Հայկազանց կարգը և ժամանակաշարիությունը»⁴⁰: Ինչպես պարզ երևում է, Ղ. Ալիշանը Արտաշես Երկրորդին ժամանակակից է համարում Տրոյանոսին և Ադրիանոսին, մինչդեռ մեր պատմագիտությունը հաստատել է, որ Արտաշես Երկրորդը թագավորել է մեր թվականությունից առաջ, իսկ Տրոյանոսը կայսր է եղել մ. թ. 98—117 թթ., Ադրիանոսը՝ 117—138 թթ.:

Վերջապես, կա նաև տրամաբանական մի շատ պարզ առարկություն. եթե հայերն ունեցել են հաստատուն տոմար, ապա Խորենացու նշած տոմարական շփոթը չէր կարող առաջանալ: Իրոք, շարժական արեգակնային օրացույցը (տարին՝ 365 օր) կայունացնել՝ նշանակում է վերացնել 4 տարվա ընթացքում առաջացող մեկ օրվա տարբերությունը, այլ կերպ ասած՝ պետք է գտնել որևէ եղանակ այդ մեկ օրը 4 տարիների ընթացքում 365 օրվան ավելացնելու համար: Տեսականորեն այդ եղանակները բազմաթիվ են, բայց իրականում, օրացույցների պատմությունից հայտնի եղանակները սահմանափակ են: Արդեն ասել ենք, որ պարսիկներն այդ տարբերությունը վերացնում էին 120-ամյա շրջանի վերջում, եզիպտացիները՝ Սոթիսի շրջանի վերջում (1460 տարվա շրջանը լրանալուց հետո մեկ տարի բաց էին թողնում և դրանից հետո միայն սկսում նոր շրջանը): Այդ շարժական արեգակնային օրացույցը կայունացնելու փորձ է արել Եզիպտոսի թագավոր Պտղոմեոս Էվերգետը (մ. թ.ա. 3-րդ դար), որի հրամանագիրը գտնվել է Սուեզի ջրանցքի կառուցման ժամանակ՝ 1867 թ., Կանոպե քաղաքի հնագույն տաճարներից մեկում: Այդ հրամանագրով (հունարեն և եզիպտական հիերոգլիֆներով քարե տախտակ) կարգադրվում է 4 տարին մեկ անգամ հինգ լրացուցիչ (հավելյաց) օրերից հետո մեկ օր համարել էվերգետի տոն, որով քառամյակի մեկօրյա տարբերությունը

վերանում է⁴¹: Հուլյան օրացույցն էլ, ինչպես գիտենք, քառամյակի վերջին տարում (նահանջ տարում) մեկ օրով երկարացնում է փետրվար ամիսը: Արդ, եթե հայերն այս եղանակներից որևէ մեկով կայունացրած լինեին իրենց արեգակնային օրացույցը, ապա այլևս կարիք չէր լինի հոռմեական տոմարին անցնելու: Սակայն ավելի կարևորն է այն, որ եթե հայերը մեր թվականությունից առաջ արդեն կայուն օրացուցային համակարգ ստեղծած և այդ համակարգը գործադրության մեջ դրած լինեին, ապա դա ինքնին կնշանակեր հրաժարում շարժական տոմարից: Բայց այդ դեպքում ինչու՞ հինգերորդ դարում այդ հաստատուն տոմարի հետքն անգամ չի մնացել, և շարունակվել է շարժական Բուն թվականը: Այս բոլորն, ահա, մեզ հիմք են տալիս ասելու, որ հայերը, սկսած մեր թվականությունից առաջ 457 թվականից, օգտագործել են միայն շարժական արեգակնային օրացույց մինչև միջին դարերը, իսկ դա նշանակում է, թե զուգահեռաբար օգտագործվող հաստատուն տոմար գոյություն չի ունեցել:

Այս բացառումը, սակայն, դեռևս չի լուծում օրացուցային համակարգի և աստղագիտական տարվա միջև եղած խոր հակասությունը: Եթե օրացուցային համակարգը շարժական է, ապա, ինչպես տեսանք, տարեկիզբը 4 տարվա ընթացքում մեկ օրով առաջ է շարժվում: Արդ, հայոց Բուն թվականը շարժական էր, տարվա սկիզբն էր դարնանային գիշերահամասարի օրը՝ մարտի 20-ը, որ շորս տարվա մեկօրյա առաջխաղացուցումով՝ 120 տարի հետո կլիներ փետրվարի 19-ին (նահանջ տարում), ևս 120 տարի հետո՝ հունվարի 20-ին և այսպես շարունակ, մինչև 1460-ամյա շրջանի լրանալը, որից հետո կրկին նավասարդի 1-ը կհամընկներ մարտի 20-ին: Հասկանալի է, որ ինչպես գյուղատնտեսական աշխատանքների, այնպես էլ կրոնական տոների համար, ինչպես ճիշտ կերպով ցույց է տվել Ղ. Ալիշանը, անհրաժեշտ էր եթե ոչ բացարձակ, ապա գեթ մոտավոր ճշգրտությամբ որոշել և «կայունացնել» գոնե տարեկիզբը, որ իր հերթին մոտավոր կերպով «կկայունացներ» նաև դարնանամուտը և առհասարակ տարվա եղանակների սկիզբն ու վերջը: Մենք արդեն գիտենք, որ հայոց տարեկիզբը Բուն թվականի սկզբնավորման ժամանակ համընկել է դարնանային գիշերահամասարի օրվան՝ մարտի 20-ին: Քանի որ մեր հին օրացուցային համակարգում հայկական տարվա և արևադարձային տարվա օրերի քանակային համապատասխանություն ստեղծելու որևէ եղանակ, ինչպես վերը ցույց ենք տվել, գոյություն չի ունեցել, ապա ըստիպված ենք ընդունել, որ հայերն էլ, ուրիշ ժողովուրդների նման, տարեկիզբը ենք ընդունել, որ հայերն էլ, ուրիշ ժողովուրդների նման, տարեկիզբի, իսկ դա նշանակում է առաջին հերթին դարնանամուտի ժամա-

⁴⁰ Ղ. Ալիշան, նշված աշխ., էջ 89—90:

⁴¹ Էվերգետի արձանագրության հայերեն թարգմանությունը, ինչպես և դրա հետ կապված մանրամասնությունները տե՛ս Հ. Ս. Բաղալյան, նշված աշխ., էջ 47—49:

նակը որոշելու ինչ-որ միջոցի դիմել են, և այս դեպքում, իհարկե, որպես
ելակետ պետք է ծառայեն բնության պարբերականորեն կրկնվող և
տարվա որոշակի եղանակների սկզբին համընկնող երևույթներ: Այս եղա-
նակով տարեսկիզբը մոտավոր ճշտությամբ որոշել են հին դարերի շատ
ժողովուրդներ, որոնցից կհիշենք երկուսը:

Ինչպես վերն ասել ենք, հին եգիպտացիների տարեսկիզբը նախապես
հիմնված է եղել երեք իրադարձությունների՝ Շնիկ (Սիրիուս, Սոթիս)
աստղի նախարեգակնային ծագման, ամառային արևադարձի և հորդ անձ-
րենների հետևանքով նեղոս գետի հորդացման հետ. այդ զուգահեռա-
թյունը Մեմփիսում եգիպտական շարժական օրացույցի սկզբնավորման
ժամանակ, մ. թ. ա. 4241 թ. (Սոթիսի առաջին պարբերաշրջանի առաջին
տարվա սկզբին), եղել է, հետագարձ հաշվով, հուլյան տոմարի հուլիսի
19-ին և պահպանվել է ամբողջ 4-րդ հազարամյակում⁴²: Քանի որ եգիպ-
տական տարին 365 օր ուներ, ապա հասկանալի կերպով տարեսկիզբը
չորս տարին մեկ օրով առաջ էր անցնում, մինչդեռ հիշյալ զուգահեռա-
թյունը օրինաչափորեն կրկնվում էր պարբերական կերպով՝ արևադար-
ձային տարվա միևնույն ժամկետում: Սրա հետևանքով, բնականաբար,
անհամապատասխանություն էր ստեղծվում եգիպտական տարվա ըս-
կզբի և բնության նշված իրադարձությունների ժամանակի միջև: Այս-
պես. եթե Սոթիսի շրջանի առաջին շորս տարիներում հիշյալ զուգահեռա-
թյունը համընկնում էր տարվա առաջին ամսվա՝ Թոթի 1-ին, ապա
հաջորդ քառամյակում կհամընկնեն Թոթի 2-ին, այնուհետև՝ Թոթի 3-ին,
121-րդ տարում՝ երկրորդ ամսվա՝ Պատփի 1-ին, 241-րդ դարում՝ եր-
րորդ ամսվա՝ Աթի 1-ին և այլն: Հարց է ծագում. իսկ ինչպե՞ս էին
«ուղղում» իրենց օրացույցը հին եգիպտացիները, որոնց կենսականորեն
անհրաժեշտ էր ուղղումը, առաջին հերթին՝ նեղոսի հորդացման օրը գու-
շակելու, ապա և՛ Իլիդա աստվածուհուն նվիրված տոնախմբությունները
կատարելու համար⁴²: Տոմարագիտության պատմությունը պարզել է, որ
«ուղղումը» կատարվում էր միանգամայն բնական եղանակով և բնության
երևույթների օգնությամբ: Որպեսզի այս բնականոն եղանակը հասկա-
նալի լինի, հիշենք 365-օրյա շարժական տարի ունեցող օրացույցային
համակարգին վերաբերող հետևյալ բանաձևումը. «Տարեսկիզբը շորս տա-
րում 1 օրով առաջ է անցնում արևադարձային տարվա սկզբից»: Սրա
հակադարձ բանաձևումը կլինի հետևյալը. «արևադարձային տարվա ըս-
կիզբը շորս տարում շարժական տարվա սկզբից մեկ օրով ետ է ընկ-

նում»: Այս երկրորդ բանաձևումը ցույց է տալիս այն, ինչ-որ քիչ առաջ
ասացինք. եթե առաջին քառամյակում Շնիկի նախարեգակնային (հե-
լիակիկ) երևացումը և նեղոսի հորդացումը տեղի են ունեցել եգիպտա-
կան Թոթ ամսվա 1-ին, ապա՝ 5-րդ տարում կլինի Թոթի 2-ին, 9-րդ
տարում՝ Թոթի 3-ին և այլն: Ուրեմն, այս օրինաչափությունն իմանալով,
մենք ամեն տարի կարող ենք նախապես որոշել, թե եգիպտական շար-
ժական օրացույցի տվյալ տարում երբ են տեղի ունենալու Շնիկի առաջին
նախարեգակնային երևացումը, նեղոսի հորդացումը և «Արցունքի գիշերը»:
Եվ հին Եգիպտոսի քրմերը, որոնք ոչ միայն աստղագուշակներ և աստ-
ղագետներ էին, այլև մաթեմատիկոսներ, երկարատև դիտարկումների
շնորհիվ հասել էին արևադարձային տարվա տևողության ճշգրիտ որոշ-
մանը (365 1/4 օր), կարողանում էին ճշտորեն որոշել նեղոսի հորդաց-
ման ու «Արցունքի գիշերվա» օրը և հազորգել ժողովրդին, որպես «աստ-
վածային ներշնչումով» կատարվող գուշակություն:

Նույնպիսի բնական ճանապարհով էին որոշում զարնանամուտը
նաև հին հրեաները: Հին հրեական, այսպես կոչված «սրբազան տարվա»
առաջին ամիսն էր Նիսանը, որի 1-ը, սկզբնավորման վիճակով, համ-
ընկել է՝ հուլյան տոմարով՝ մարտյան նորալուսնին: Հրեաներն այդ օրը
որոշում էին բացարձակապես իրական տվյալների հիման վրա. Նիսանի
1-ը լինում էր այն օրը, երբ առաջին անգամ նորալուսնի մահիկը երե-
վում էր երկնակամարի վրա, արևմուտքում: Այժմ ընդունենք, որ ինչ-որ
X կետից հրեաներն սկսել են իրենց տոմարը, և այդ X-ը համարենք
մարտյան (գարնանային) նորալուսնի օրը, հետևաբար նաև Նիսանի 1-ը,
որ այդ X կետում համընկել է մարտի 21-ին: Քանի որ հրեական տարին
ունի 12 լուսնային ամիս՝ 354 օր, արևադարձային տարուց 11 (ճշգրիտը՝
11 1/4) օրով պակաս, ապա 13-րդ լուսնային ամսվա սկիզբը կամ որ
նույնն է՝ 13-րդ նորալուսինը կլինի հաջորդ տարվա մարտի 10-ին, այ-
սինքն՝ 11 օրով առաջ կանցնի նախորդ տարվանից, երրորդ տարվա ըս-
կիզբը՝ Նիսանի 1-ը, ըստ այդմ, կընկնի փետրվարի 28-ին, ապա՝ փետր-
վարի 17-ին և այդպես շարունակ: Ինչպես վերը տեսանք, հրեաներն այդ
անհամապատասխանությունն ուղղել են հավելյալ ամիսներ մուծելով ու-
րոշակի տարիների մեջ: Այդ մեկամսյա հավելումը կատարվել է դարձյալ
բնական եղանակով՝ արևադարձային տարվա հետ գոնե մոտավոր համա-
պատասխանություն ստեղծելու և ոչ միայն սրբազան տարվա, այլև քա-
ղաքացիական տարվա սկիզբը՝ Թշրի ամսվա 1-ը որոշելու համար: Այդ
ուղղումը հիմնվել է գարու հասունացման վրա. Պաղեստինի առավել շոգ
վայրերում գարին հասնում է ապրիլի կեսերից—մայիսի կեսերն ընկած
ժամանակամիջոցում, կամ այլ կերպ՝ մեր ընդունած առաջին տարվա
Նիսանից հետո՝ հրեական տարվա հաջորդ (էառ) ամսում: Հենց այս էլ
իբրև ելակետ է ծառայել հին հրեական օրացույցի «ուղղման» համար:

⁴² Մանրամասնություններ տե՛ս Իդիսոնի նշված գրքում, էջ 34—46: 2 Հին եգիպտա-
ցիները հորդառատ անձրևները համարում էին Իլիդա աստվածուհու արցունքները, որոնք
հորդացնում են նեղոսը, և երևույթների զուգահեռությունն առաջին օրվա՝ հուլիսի 19-ի
գիշերը, որ կոչում էին «Արցունքի գիշեր», տոնում էին մեծ հանդիսավորությամբ:

Այսպես, մեր ընդունած X կետում, երբ Նիսանի 1-ն ընկել է մարտի 21-ին, հաջորդ ամիսն սկսվել է ապրիլի 20-ին և գարու հասունացումն էլ տեղի է ունեցել հենց այդ ամսվա ընթացքում (ապրիլի 20—մայիսի 19), բայց երրորդ տարում, երբ Նիսանի 1-ը համապատասխանում է փետրվարի 28-ին, բնականաբար, հաջորդ ամսում՝ մարտի 30—ապրիլի 29-ի ժամանակահատվածում միայն կարող է սկսվել գարու հասունացումը, ըստ որում դա ինքնին հայտնի կլինի ոչ միայն Նիսան ամսում, այլև դրանից մեկ-երկու ամիս առաջ՝ դեկտեմբեր-հունվար ամիսներին: Եվ հին հրեաները, Նիսան ամսից երկու ամիս առաջ էլ՝ իմանալով, որ դրան հաջորդող ամսին գարին չի հասնելու, երկարացնում էին տարին 1 ամսով կամ այլ խոսքով՝ Նիսանից առաջ ներմուծում էին հավելյալ ամիսը:

Այս երկու օրինակներն էլ ցույց են տալիս, որ ունենալով շարժական արեգակնային կամ լուսնային օրացուցային համակարգ, մարդիկ կարողացել են որոշակի պարբերությամբ կրկնվող բնական երևույթների օգնությամբ բացարձակ կամ հարաբերական ճշտությամբ որոշել այն ժամանակակետը, որ օրացույցի սկզբնավորման տարում որպես տարեսկզբի պահ է ընդունվել: Իր սկզբնավորման պահով կապված լինելով այդ երևույթների հետ (բերված օրինակներում՝ Շնիկի նախարեգակնային ծագում և գարու հասունացում), այդ օրացույցների տարեսկզբին աստիճանաբար հեռանում է ելակետային պահից, որ հանգեցնում է բնական երևույթների որոշակի պահերի անմիջական կապի խզմանը: Տեղի է ունենում օրացույցի վերացարկում իր համար որպես հիմք հանդիսացած բնական երևույթներից և դառնում լոկ ժամանակաչափության համակարգ: Սա ինքնին անհրաժեշտություն է ստեղծում օրացույցը վարել ինքնուրույն կերպով, անկախ բնության երևույթներից, իսկ տվյալ ժողովրդի համար առավել կարևոր բնության երևույթների, ինչպես և կրոնական ու ժողովրդական տոների ժամանակը որոշել որևէ կարգի օժանդակ միջոցով՝ անկախ տարվա ամիսներից:

Այս բոլորից հետո անդրադառնանք հին հայկական տոմարին, որի ելակետային տարեսկզբը, ինչպես ասել ենք, եղել է գարնանամուտը (գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 20-ը): Քանի որ օրացուցային որևէ միջոցով հայերը չէին լրացնում արևադարձային տարվա բառամյակի մեկ պակաս օրը, ապա պետք է դիմեին այնպիսի մի միջոցի, ինչպիսին օգտագործում էին հրեաները, եգիպտացիները և ուրիշ հին ժողովուրդները: Հնարավոր էր, արդյոք, Հայաստանում որևէ միջոցով կանխորոշել գարնանամուտի մոտավոր ժամանակը: Այո՛, հնարավոր էր: Հայաստանը հարուստ բուսականության երկիր է, պտղաբուծության ու խաղողագործության երկիր, և պետք է ենթադրել, որ գարնանամուտի որոշումն էլ հիմնված պիտի լիներ բուսական աշխարհի տվյալների վրա: Հայ ժողովրդի սիրած բույսերից են սոսին (չինարին), ծիրա-

նին և ուռին, որոնց անունները հաճախ են հանդիպում հայ ժողովրդական երգերում: Դրանցից, ինչպես մեզ թվում է, գարնանամուտի որոշման համար առավել հարմարն է ուռենին: Մեր ժողովրդական լեզվում գոյություն ունի ուռին ջուր ընկնել⁴³ կայուն բառակապակցությունը, որ նշանակում է, թե ուռենու ավիշն արդեն հոսում է: Այդ ժամանակ ուռենու մատղաշ ոստերի կեղևը փայլուն-կանաչ է դառնում և հեշտությամբ պոկվում բնափայտից: Սովորաբար ուռենին ջուր է ընկնում գարնանամուտից 10—15 օր առաջ, և քանի որ ուռին աճում է Հայաստանի բոլոր վայրերում, ապա նրա ջուր ընկնելը կարող էր ընդունվել իբրև գարնանամուտի նախանշան: Այս տեսակետից կարևոր է բարբառներում գործածվող ուռօրհնէք բառը (բարբառային ձևերով՝ ուռօրնեք, ուռօշնէք, հոռօրնէք, Մղր. հըռօխնէք և այլն): Ժողովուրդն այդպես է անվանում եկեղեցական տոներից մեկը՝ Մաղկազարդը (Մաղաբարդը), որ նվիրված է Քրիստոսի՝ Նրուսադեմ մտնելուն: Աստվածաշնչում ասվում է, որ ժողովուրդը դիմավորեց նրան ցնծությամբ, փողոցները զարդարելով արմավենու և ձիթենու կանաչ ճյուղերով, որի պատճառով էլ տոնը կոչվում է արմավենյաց տոն: Բայց այն երկրներում, որտեղ արմավենին և ձիթենին չեն աճում, դրանց փոխարեն օրհնում են ուռենու դալար ոստերը, ուստի և տոնը անվանում են ուռենու անունով (հմմտ. ուռերեն՝ Вербная суббота «ուռենու շաբաթ», Вербное воскресенье «ուռենու կիրակի»): Ղատկին նախորդող շաբաթ և կիրակի օրերը, որպես հիշյալ տոնի օրը): Հայոց եկեղեցին ծաղկազարդը (ծաղաբարդը) տոնում է զատկին նախորդող կիրակի օրը: Մեզ համար այս դեպքում հատուկ կարեւորություն ունի այդ նույն տոնի ժողովրդական ուռօրհնէք անվանումը, որը շունի ոչ Հայկազյան բառարանը, ոչ Ստ. Մալխասյանցիները, ոչ էլ նույնիսկ Հր. Աճառյանի «Գավառականը» և Ս.Ա.մատունու «Բառ ու բանը», մինչդեռ անվանումը գործածվել ու գործածվում է շատ վայրերում: Այս հանգամանքը մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ հայերը հեթանոսական շրջանում ունեցել են ուռենիների տոն, որ ըստ էության գարնանամուտի տոնն է եղել: Քրիստոնեություն ընդունելուց հետո այդ տոնին փոխարինել է ծաղկազարդ/ծաղաբարդ կոչվող տոնը (ըստ էության՝ իր ծագմամբ դարձյալ գարնանամուտի տոն): Եկեղեցին մերժել է դրա ուռօրհնէք անվանումը որպես հեթանոսական տոնանուն, բայց ժողովուրդը

⁴³ Մեզիցիում ասում են պլվանք ջուր ընկնել: «Պլվան»-ը երկխաների խաղալիք է՝ ուռենու ոստի հանած կեղևը՝ 39—40 սմ երկարությամբ կեղևն խողովակ, որի մի ծայրը խրում են կեղևահաս ոստից կտրած փայտիկը, ապա ջուր լցնում խցանված խողովակի մեջ և կեղևահաս ոստը մտցնելով խողովակի բաց ծայրից՝ ուժգնորեն ջուրը մղում դեպի դուրս: Իրեն խցան կամ «գնդակ» ծառայող փայտիկը պայթյունով նետվում է դուրս, և ջրի շիթը ցայտում է մի քանի քայլ հեռու: Պլվան ծագում է պոլոկի>Մեզրու բարբառի պլոկի/պոլոկի բառից և ստուգաբանորեն նշանակել է պոլոկվող, պոկվելով (բնափայտից անջատվելով) դուրս եկող՝ հանվող:

պահպանել է այն, իբրև ժողովրդական անվանում: Իհարկե այս ամբողջը լուկ ենթադրություն է, և ազգագրությանն է պատկանում վճռական խոսքը՝ հաստատումը կամ հերքումը: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ գարնանամուտը կանխորոշելու համար հայերը կարող էին հրեաների նման օգտվել իրենց շրջապատող բնության՝ որոշակի ժամկետում պարբերականորեն կրկնվող ինչ-որ երևույթից, որը տեղի է ունենում գարնանամուտին: Դա ունենու «չուր ընկնելը» կլիներ, թե մի այլ բան, հետաքրքիր է իմանալ, բայց առայժմ հաստատուն տվյալներ չունենք:

Կարելի է, իհարկե, նաև երկրորդ ենթադրությունն անել: Վերը մենք տեսանք, որ հին Հայաստանում զարգացման բարձր մակարդակի էր հասել աստղագիտությունը մ. թ. ա. 2—1 հազարամյակներում, իսկ դա նշանակում է, թե նաև մաթեմատիկան, որովհետև առանց մաթեմատիկայի աստղագիտություն չի կարող զարգանալ: Արդ, հայոց Բուն թվականի ըսկիզբը, ինչպես տեսանք, 457 թվականն է (1-ին հազարամյակի կեսերը), որ իր հերթին նշանակում է, թե և՛ մաթեմատիկան, և՛ աստղագիտությունն ավելի զարգացած պիտի լինեին, հետևաբար և՛ հայ ժողովուրդը, որ ժառանգել էր նախընթաց դարաշրջանների գիտությունն ու մշակույթը, ուներ արդեն զարգացած մաթեմատիկական գիտություն, աստղագիտություն և տոմարագիտություն: Քանի որ այդ բոլորը քրմական դասի սեփականությունն էր, իսկ տոմարական հաշվումները, ինչպես և հեթանոսական տոների կատարումը վարում էին քրմերը, ապա նրանք էլ, եզրպատական քրմերի նման, կարող էին որոշել իրական գարնանամուտի օրը որոշակի հաշվումների օգնությամբ, այսինքն՝ բառամյակի 1-օրյա տարբերությունը հաշվի առնելով՝ ճիշտ կերպով կանխորոշել գարնանամուտի օրը: Ըստ էության դա մի դժվար դորժ չէ այն մարդկանց համար, ովքեր զբաղվում են աստղագիտությամբ ու ժամանակաշափուկությամբ:

Եվ այսպես՝ չունենալով ոչ մի տվյալ Բուն թվականի «ուղղման» օրացուցային միջոցների մասին, բայց ստուգապես գիտենալով, որ մինչև 17—18-րդ դարերն էլ (առանձին դեպքերում մինչև մեր օրերն էլ) անընդհատական գործադրության մեջ եղած այդ համակարգը «ուղղման» որևէ միջոց չի ունեցել, մենք ենթադրում ենք, որ տարվա եղանակների սկիզբը (մասնավորապես գարնանամուտը) ճշգրտորեն կամ մոտավորությամբ որոշելու համար հին հայերը գործադրել են ենթադրաբար ներկայացված այդ երկու միջոցներից մեկը, որոնցից մենք առավել հավանական ենք համարում երկրորդը:



Խոսելով հայոց Բուն տոմարի կառուցվածքի մասին, մենք հիշեցինք հայոց ամսանունները, ինչպես և մի քանի օրանուններ: Քանի որ Բուն տոմարն սկզբնավորվել է մ. թ. ա. V դ. կեսերում, ապա հասկանալի է, որ ամսանուններն էլ իրենց ծագմամբ ու գործածությամբ կապված են այդ ժամանակների հետ և նույնիսկ ավելի հին կարող են լինել, քան մեր արեգակնային օրացուցային համակարգի սկզբնավորումը: Սա մենք կարող ենք ընդունել որպես բացահայտ ճշմարտություն՝ ելնելով հետևյալ փաստից: Բուն հայկական տոմարը՝ մեր արեգակնային օրացուցային համակարգը, գործածության մեջ է դրվել մ. թ.ա. 457 թվականից, բայց չէ՞ որ հայերը կամ ավելի ճիշտ՝ հայկական ցեղերը, որպես հին հայաստանցիներ, ինչպես տեսանք, դրանից առաջ ունեցել են լուսնաարեգակնային, իսկ է՛լ ավելի վաղ՝ լուսնային օրացույց: Ինքնին հասկանալի է, որ օրացույցը, ինչպիսին էլ նա լինի, հիմնված է տարվա, ամիսների և ամսօրերի զանազան կարգի ստորաբաժանումների ողջ համակարգի վրա: Իսկ դա նշանակում է, թե անկախ օրացույցի բնույթից, պետք է որ տարին բաժանված լինի ամիսների, իսկ ամիսներն էլ պիտի ունենան իրենց անվանումները: Հետևաբար, մենք կարող ենք ընդունել, որ հայկական ամսանունները և օրանունները, ինչպես և արեգակնային համակարգության մոլորակների ու համաստեղությունների անունները տրվել են շատ ավելի վաղ ժամանակներում: Եթե աստղագիտական և տոմարագիտական հայեցակետով դա կարևոր է որպես փաստական վկայություն հայերի աստղագիտական ու տոմարագիտական գիտելիքների պատմական զարգացումը պարզելու համար, ապա լեզվաբանական հայեցակետով այդ անվանումները կարևոր են իրենց բառակազմական ու հնչյունաբանական առանձնահատկություններով: Իսկ այդ առանձնահատկությունները բացահայտելու համար անհրաժեշտ է ամսանունների, օրանունների, օրվա պահերի և այլ անվանումների ստուգաբանությունը: Դրանից ելնելով՝ այս հատվածը նվիրում ենք հիշյալ անվանումների ստուգաբանությանը՝ հաշվի առնելով, անշուշտ, այն ամենը, ինչ որ այդ ուղղությամբ կատարվել է մինչև այժմ⁴⁴:

Ա. ԱՄՄԱՆՈՒՆՆԵՐ

— Նավասարդ, Հոռի, Սահմի, Տրէ, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարբի, Մարգաց, Հրտոից, Աւելիաց:

Նախքան յուրաքանչյուրի մասին առանձին-առանձին խոսելը, փորձենք ընդհանուր կերպով բնութագրել դրանք բառակազմական ու ձևաբա-

⁴⁴ Մեր միջնադարյան մատենագրության մեջ գտնում ենք որոշ ամսանունների ստուգաբանություններ (օրինակ՝ հրտոից—«հուր է սոից», իբրև թե հրի ջերմությամբ այրում է օտքերը), որոնք, սակայն ժողովրդական ստուգաբանություններ են, ուստի և դրանք չենք հիշելու:

նական հատկանիշներով: Ամսանունների նույնիսկ մակերեսային դիտարկումը հնարավորություն է տալիս դրանք բաժանել երկու խմբի՝ սեռականի հոլովածնով անուններ և -ական ածանցով կերտված անուններ: Միայն երկու ամսանուն՝ նաասարդ և Արեգ դուրս են մնում հիշյալ խմբերից, և դրա վրա կանգ կառնենք այդ անունների քննության ժամանակ: Բառակազմական և ձևաբանական հիշյալ ընդհանուր բնութագրերը կարևոր նշանակություն ունեն ստուգաբանական տեսակետից, քանի որ դրանք հնարավորություն են տալիս պարզելու հոլովական հիմքերը և ածանցավոր բառերի սերող հիմքերը, իսկ դրա հիման վրա՝ նաև բառերի կամ արմատների անհնչյունափոխ ձևերը: Այսպես, օրինակ, հրոտից ամսանունը հոգնակի սեռականի ձևն է, ուրեմն հոգնակի ուղղական է հրոտ, եղակին՝ հրոտ և այլն:

Այժմ անցնենք ամսանունների առանձին-առանձին քննությանը:

նԱՎԱՅԱՐԳ.— Իրանական *navasārd բառն է, որ կազմված է nava «նոր» և sard «տարի» բաղադրիչներից և ստուգաբանորեն նշանակում է «նոր տարի, ամսանոր»: Ճիշտ ստուգաբանությունն առաջարկել է Բյոտտի-խերը (Լազարդը), և ընդունել են Հյուրշմանը, Աճառյանը և այլք⁴⁵: Նույն բառը փոխառությամբ անցել է շատ լեզուների (համտ. ասորերեն nava-sardil, թալժուղական navardi, աղվաներեն navasardul են): Ըստ այսմ, մեր առաջին ամսվա անվանումը նախապես ամսանուն չի եղել, այլ պարզապես «նոր տարի, ամսանոր» նշանակությամբ բառ, որ ժամանակի ընթացքում բռնել է ամսանվան տեղը և դուրս մղել նրան: Դրա զուգահեռը գտնում ենք վրացերենում, որ առաջին ամիսը կոչում է ախալժլիսա «նոր տարի, ամսանոր»:

ՀՈՌԻ } Այս երկու ամսանուններն էլ ոմանք (Հ. Ե. Տայեցի, Բասմաշ-
ՍԱՀՄԻ } յան և այլք) համարում են կովկասյան փոխառություն, որ
ընդունում է նաև Հր. Աճառյանը. «Հոռի ամսանունը առ-

նըված է իբր «երկրորդ ամիս», ինչպես սահմի՝ երրորդ ամիս, կովկասյան «երեք» բառից» (Արմ. 3-րդ, 114—115), իսկ Սահմի բառի տակ էլ գրում է. «Փոխառյալ է կովկասյաններից կամ խալդեերներից... մեր բառը սեռականի ձևով է, ինչպես և մյուս ամսանունները: Համտ. նաև Հոռի. «հայկական երկրորդ ամիսը», որ փոխառյալ է կովկասյան «երկու» բառից» (Արմ. 4-րդ, էջ 163): Ստ. Մալխասյանցը մերժում է այդ ստուգաբանությունը՝ հենվելով հետևյալ փաստարկների վրա. 1) վրացերենի ori «երկու» և sami «երեք» բառերը հայերենում պետք է դառնային որի,

սամի, մինչդեռ ունենք հոռի, սահմի. խախտված են հնչյունական օրենքները: 2) Հայկական ամսանունները սեռական հոլովի ձևն ունեն, ուստի և այդ անունների ուղղականն է հոռ, սահմ: 3) վրացերենում ori, sami քանակական թվականներ են, «երեքը չեն գործածվել իբրև ամիսներ նշանակող բառեր: Հայերը «երկու», «երեք» նշանակելու համար կարիք չեն ունեցել փոխառության դիմելու, քանի որ այդ բառերն իրենց լեզվում գոյություն ունեին»⁴⁶: Հերքելով հոռի < վրաց. ori և սահմի < վրաց. sami ստուգաբանությունը՝ նա իր կողմից այդ ամսանունները ստուգաբանում է այսպես. «Նկատի ունենալով, որ հայկական մյուս ամիսների նշանակությունները կապված են տարվա եղանակների և այս եղանակներում տեղի ունեցող կենցաղական երևույթների հետ՝ հավանական էմ համարում, որ հոռի ամիսը նշանակելիս է եղել Ուռի ամիս, այսինքն որթատունկի՝ այգեստանի ամիս... իսկ սահմի ամիս՝ սերմանց ամիս»⁴⁷: Միանգամայն ճիշտ գտնելով այն փաստարկները, որոնք նա բերում է Հր. Աճառյանի ընդունած ստուգաբանությունը հերքելու համար՝ մենք ընդունելի չենք համարում հոռի-ն ուռ-ի հետ, իսկ սահմի-ն՝ սերմ, սաղմ, տոհմ բառերի հետ կապելը: Արդի բարբառներում, իհարկե, գոյություն ունի՝ ուռ բառի հօտ ձևը, բայց հենց դա էլ բացառում է մ. թ. ա. V դարում այդ ձևի գոյությունը, որովհետև հօտ ձևն է առաջացել ուռ-ից, և ոչ թե հակառակը: Սահմի ամսանունն էլ բացատրելով իբրև «սերմանց ամիս», Ստ. Մալխասյանցը համարում է «նախամատենագրական մի վարիանտ հայերեն սաղմ-ի կամ սերմ-ի կամ փոխառյալ տոհմ-ի, որ իրանական լեզուներում բազմաթիվ ձևեր ունի»⁴⁸: Մենք ընդունելի չենք համարում ինչպես հոռի «ուռ, որթատունկ», այնպես էլ սահմ = սերմ, սաղմ, տոհմ ստուգաբանությունը, որովհետև (ա) սերմն և սաղմ (արտասանվել է salm) չեն կարող ունենալ սահմ տարբերակը, (բ) այդ երկու բառերն իրար հետ կապ չունեն. առաջինը ծագում է հնդեվրոպական k'er-արմատից, երկրորդը վստահելի ստուգաբանություն չունի, (գ) տոհմ բառը (իրանական փոխառություն) չէր կարող դառնալ սահմ. ճիշտ է, որ իրանական լեզուները տարբերակներ շատ ունեն, բայց դրանցից ոչ մեկում էլ նախահունչ փոխառեն s չկա, (դ) ամենակարևորն է այն, որ բնիկ հայերեն բառերում բառի միջում կամ վերջում հմ հնչյունակապակցություն չկա: Այդ հնչյունակապակցությունը, սակայն, սովորական է իրանական փոխառություններում (համտ. սահման, տոհմ, մահմուտայ «բույսի անուն է», տահմուշտ «ղափնի», շահմար «այրքայօձ, օձարքայիկ»), ուստի և պետք է ենթադրել, որ Սահմ (սեռ.

⁴⁵ Ավելի ընդարձակ տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, 1977, էջ 435—436: Այսուհետև հիշելու ենք տեքստում՝ Արմ. համառոտությամբ, հատորի և էջի նշումով, փակագծերի մեջ:

⁴⁶ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, 1945, էջ 176:

⁴⁷ Նույն տեղում, էջ 439:

⁴⁸ Նույն տեղում, էջ 176:

սահմի) ամսանունը իրանական փոխառություն է: Արդ, մեր բարբառներում ունենք սահմ բառը՝ «վախ, երկյուղ» նշանակությամբ, որից է սահմովել/սահմովիլ (բարբառներում կան նաև՝ սրհմբռկիլ, սրհմա՛ռիլ (Մեղրի. ժող. ստուգաբանությամբ՝ իբր սահմ-առիլ «առնել, վերցնել») (առնուլ), սահմիլ (Մեղրի) և այլ ձևեր): Հր. Աճառյանը՝ «հիշելով սահմբռկիլ բառը, գրում է. «բառս փոխառյալ է պրս. sahm «վախ, երկյուղ» բառեն: Ղրբ. ունի նաև արմատական ձևը սահմ «զարհուրելի, երկյուղալի», ճանապարհը շատ սահմ է»⁴⁹: Մեղրիում նույնպես գործածվում է արմատական բառը՝ սահմը ձևով⁵⁰ (հւմտ. Սահմը նուս ի=վախը գալիս է «վախենում է», մին սահմը բէն ա=մի երկյուղ բան է «սարսափելի բան է»): զրանից են կազմված նաև՝ սահմավ «1. ահազդու, 2. պատկառելի (մարդ)», սրհմալի «երկյուղալի» և այլն: Որքան մեզ հայտնի է, սահմ բառը գործածվում է նաև Գորիսի և Ղափանի շրջաններում: Այդ բառի ստուգաբանությունը հաստատում է մեր վերի ենթադրությունը, մնում է պարզել, թե դա հին շրջանի (հին իրանական) փոխառություն է, թե ոչ: Այն փաստը, որ սահմովել բայը դանազան ձևերով լայն տարածում ունի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան բարբառներում, ինչպես և արևելահայ և արևմտահայ գրականում, ինքնին ենթադրել է տալիս, որ հին հայերենում էլ եղել է, թեև մատենագրությամբ չի ավանդվել: Դրա ապացույցն է նաև այն, որ արմատական ձևը պահպանվել է սակավ բարբառներում, մինչդեռ բայը՝ գրեթե բոլորում: Եթե նոր փոխառություն լիներ, պետք էր հակառակն սպասել: Այս բոլորը նկատի ունենալով, մենք գտնում ենք, որ սահմի ամսանունը սահմ «ահ, երկյուղ» բառի սեռական հոլովն է: Սահմ բառի հին իրանական փոխառության դեմ կարելի է առարկել, ասելով՝ թե այդ բառը հին շրջանից ավանդված չէ. իրոք էլ, Բարթոլոմեի հին իրանական բառարանում այդ բառը չկա: Բայց դա թույլ առարկություն է. որ հին լեզվի բառարանն է պարունակում անխտիր բոլոր բառերը: Իրանական հին բառերի վերաբերյալ, համենայն դեպս, հայտնի է, որ շատ դեպքերում հենց հայերենն է միայն թելադրում, որ այսինչ կամ այնինչ բառը պետք է եղած լինի, ինչպես և օգնում՝ անհայտ ձևերը վերականգնելուն:

Այսպես, ուրեմն, սահմի ամսանունը փոխառյալ սահմ «վախ, սարսափ» բառի սեռական հոլովն է, ինչպես և հոռի-ն՝ *հոռ բառի: Անշուշտ տարօրինակ է, որ վախ նշանակող բառը դարձել է ամսանուն, սակայն տարօրինակությունը կվերանա, եթե հաշվի առնենք հետևյալը:

Հին Հայաստանում, ինչպես ասել ենք, աստղագիտությունը բավականին բարձր մակարդակի է հասած եղել: Փաստեր կան, որոնք հաստա-

տում են, որ հնագույն ժամանակներում հին հայաստանցիները երկնային մարմիններից շատերի պաշտամունքն են ունեցել: Արեգակի ու Լուսնի պաշտամունքը հայտնի բան է, բայց այժմ տվյալներ կան նաև ուրիշ լուսատուների մասին: Մեծամորի պեղումներով հայտնաբերած նյութերի ուսումնասիրությունները պարզել են, որ «այն լուսատուն, որին Մեծամորի բնակիչները երկրպագելիս են եղել մ. թ. 2500 տարի առաջ, եղել է Սիրիուսը»⁵¹: Ներածություն մեջ էլ մենք բերել ենք տվյալներ, որոնք ապացուցում են, որ հին հայաստանցիները իր դարաշրջանի համար բավականաչափ լավ պատկերացում են ունեցել արեգակնային համակարգության մասին: Այդ բոլորի վրա հենվելով՝ մենք իրավունք ունենք մտածելու, որ նրանք մոլորակներից յուրաքանչյուրի մասին անհրաժեշտ գիտելիքներ են ունեցել, որից ինքնին կբխի այն, որ հին հայաստանցիները կարողացել են գաղափար կազմել նաև Մարսի արբանյակների մասին: Արդ, Մարսն ունի երկու արբանյակ, որոնց հունական անվանումներն են Ֆոբոս «ահ» և Դեյմոս «երկյուղ, սարսափ»: Այս նկատի ունենալով, մենք գտնում ենք, որ Սահմ և Հոռ այդ արբանյակներին հայերի կողմից տրված անուններն են, որոնց սեռական հոլովաձևերն էլ՝ սահմի և հոռի, դարձել են ամսանուններ: Սա, իհարկե, միայն վարկած (հիպոթեզ) է, որի հաստատումը կամ ժխտումը մնում է հետագայի հնագիտական հայտնագործություններին:

ՏԻՔ. — ունի նաև տրեայ ձևը, որ Աճառյանը համարում է սեռական հոլով, բայց ճիշտ չէ. է վերջավորությունը կարծվել է ածանց և փոխարինվել -եայ ածանցով (հմտ. Բուլ և Բուեայ): Բոլոր հայագետներն էլ գտնում են, որ Տիր աստծու անունից է՝ Տիրի ամիս: Շատերը համարում են իրանական փոխառություն, որ ընդունում է նաև Հր. Աճառյանը: Մենք Տիր/Տիր աստվածանունը համարել ենք բնիկ հայկական բառ՝ բխեցնելով հնգերկրապական dei-արմատի *diur-, *dir-ձևերից (առաջինից՝ Տիր երկրորդից՝ Տիր): Ինչպես ուրիշ լեզուներին՝ հ. ե. նույն արմատից ծագած բառերը, այնպես էլ հայերենի Տիր/Տիր-ը նախապես նշանակել է ընդհանրապես աստված, բայց հետագայում, ավելի «մեծ աստվածների», հատկապես Հայկի, ապա և՛ Արամազդի պաշտամունքի հետևանքով, դարձել է գիտության ու ճարտարության աստված, ինչպես որ իուլանդացիների էլ Tiv-ը (նախապես՝ առհասարակ աստված) դարձել է պատերազմի աստված: Նրանք, որ մեր Տիր-ը և ՏԻ-ն իրանական են համարում, ելնում են այն նախապաշարումից, թե իբր ինչ որ նույնական է իրանականի հետ, փոխառյալ է: Սա իսկապես նախապաշարումն է, որից պետք է հրա-

⁵¹ «Հայրենիքի ձայն», 20.2.1980, էջ 6:

⁵² Էմիլ Բենվենիստե, օրինակ, իրանական փոխառություն է համարում հայերեն մեզ «մշուշ» բառը, որ շատ հայագետներ համարում են բնիկ հայկական (Հյուրըման, Աճառ-

⁴⁹ Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 952:

⁵⁰ ՏԵ՛ս է. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 327:

ժարվել⁵²: Մենք ցույց ենք տվել, որ ինչպես Տիր-ը, այնպես էլ Տիր-ը օրինաչափորեն ծագել են հնդեվրոպական *diur-, *dir-ից⁵³: Իբրև ընդունված կարծիքի հերքում և մեր ասածի հաստատում՝ մենք առանձնակի կարևորություն ենք տալիս Տրէ ամսանվան — է վերջավորությունը: Այդ վերջավորությունը բացատրելու համար Հր. Աճառյանը դիմում է իրանական բարբառային ձևերի օգնության՝ գրելով. «է վերջավորությունը իրանական մի գավառականի ուղղականի վերջավորությունն է, ինչպես ունինք քրիստ. սոգդ. Ե հմմտ. մարգարէ, բազէ. որ և —այ. հմմտ. կամայ ակամայ, աշկարայ են» (Արմ. 4, 436): Չենք ընդունում այս բացատրությունը, որովհետև, ինչպես ինքն է գրում, սահմի բառը «սեռականի ձևով է, ինչպես և մյուս ամսանունները» (Արմ. 4, 163), իսկ դա նշանակում է, որ Տրէ-ն ուղղականի ձև լինելու դեպքում՝ հայերենում պետք է ընդհանուր կանոնի համաձայն որպես ամսանուն սեռականի ձև՝ առէի կամ —ական ածանցով՝ Տրէական: Տիր /Տիր աստվածանունը համարելով բնիկ հայկական, մենք հնարավորություն ենք ունենում առէ ամսանունը դիտելու որպես հնագույն և հոլովման սեռականի ձևը (տիր-ե-յ > տրէ): Որ հնագույն հայերենն ունեցել է և հոլովում, հայտնի բան է (հմմտ. որովհետև, այնուհետև, արդարև, արդևք, մանավանդ՝ ի տուէ և ի գիշերի «գիշեր և ցերեկ» որի մեջ առէ սեռական-տրականի ձևն է, ինչպես և՛ գիշերի):

Ի դեպ, Հյուբշմանն իր ժամանակին՝ խոսելով Տիր աստվածանվան մասին՝ գրել է. «Ավելի շուտ Տրէ ամսանունը (սեռական հոլով) կարող էր սրա հետ (այսինքն՝ Տիր-ի հետ. — է. Ա.) կապված լինել»⁵⁴: Աճառյանը Տրէ բառի ստուգաբանության պատմության մեջ գրում է. «Հյուբշ. Տիր աստծու անունից» և նշում նույն տեղը, բայց ինչպես տեսնում ենք, Հյուբշմանը առէ-ն Տիր-ի (և մե՛ր Տիր-ի) հետ է կապում՝ համարելով սեռական հոլով:

Այսպես, ուրեմն, մենք տրէ ամսանունը համարում ենք հայկական Տիր/Տիր աստվածանվան սեռական հոլովը:

ՔԱՂՈՅ.— Հր. Աճառյանն ստուգաբանել է՝ կապելով քաղ «արու այծ» բառի հետ և բացատրել որպես քաղերի ամիս, այսինքն՝ արու այծերն էգերի հոտին խառնելու ամիս: Միանգամայն ճիշտ է այս ստուգաբանության և այլք) և դա ուղում է ապացուցել այն բանով, որ այդ բառի ի-ով բունը պահպանել են միայն իրանական լեզուները: Խախուտ հիմնավորում է. հայերենն ունի -ի-ով բազմաթիվ հիմքեր, ուստի և մէզ-ն էլ կարող էր պահպանել ի բունը: Հայերենի բնիկ բառ լինելու օգտին շատ ավելի զորեղ կովան է այն, որ նույն հնդեվրոպական արմատից ունենք նաև մուգ բառ, որը հիանալի իմաստաբանական զույգ է կազմում նույն արմատ սլավոնական МГЛА և СМУГЛЫМ «խուր» բառերի հետ:

⁵³ է. Բ. Աղայան, Բառարանական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 148—150:

⁵⁴ H. Hübschmann, Armenische Grammatik, I T., Leipzig, 1895—1897, S. 89,

թյունը, որ ապացուցվում է նաև հաջորդ ամսանվան ստուգաբանությամբ: ԱՐԱՅ.— Ընդունելի ստուգաբանություն չունի. Հր. Աճառյանը և Ստ. Մալխասյանը ոչ մի ստուգաբանություն չեն առաջարկում. Բ. Թումանյանը գրում է. «Տավանաբար այն «այր» ամսվա հայերենացումն է»⁵⁵, անկասկած հենվելով Արմատական բառարանի ստուգաբանությունների պատմության մեջ բերված՝ Խաչկոնցի ստուգաբանության վրա, ըստ որի առաց-ը կապվում է ասուր. այր, էյրու, լիգիերեն առաբ, այաբ, պարմի-բական այաբ, ասորերեն իյօր ամսանունների հետ (Արմ. 1, 298): 2. Բաղայանը բերում է Վանականի ստուգաբանությունը. «Եւ արանց ի յունել ձեան զլերինս և զբլուրս, ասեն՝ արանց է այս ճանապարհ և ոչ կանանց, արի մարդոց է արս և ոչ թուլից և վատաց»⁵⁶: Նույնպիսի բացատրություն է տալիս նաև Գր. Տաթևացին՝ սխալ բառերը ճշտելով և մասնակի, բայց տեղին փոփոխություններ կատարելով. «Ի յունել ձեան զլերինս և զբլուրս, ասեն, արանց է այս ճանապարհ և ոչ կանանց. արի մարդոց է աուրքս և ոչ թուլից և վատաց» (Արմ., 298): Այս բացատրությունների մեջ կարևոր է այն, որ երկուսն էլ կապում են այր «տղամարդ» բառի հետ: Պոլ դը Լազարդը⁵⁷ միանգամայն ճիշտ կերպով արաց համարում է հոգնակի սեռականի ձև, որի մեջ վերջավորությունն է —աց, հիմքը՝ առ—: Աճառյանն այս ստուգաբանությունը չի ընդունում և հիշում է միայն ստուգաբանությունների պատմության մեջ (Արմ. 1, 298), բայց իզուր: Ինչպես ասացինք, ամսանունների մեծագույն մասը սեռականի հոլովաձև է, ըստ որում երբքը՝ հոռի, սահմի, տրէ, եզակի թվով, իսկ չորսը՝ քաղոց, առաց, մարգաց, հրոաից, հոգնակի: Բոլոր այդ ձևերում եզակի կամ հոգնակի թիվը պայմանավորված է բնական (իրական) և տրամաբանական հիմունքով, այսպես. հոռի և սահմի եզակի են, որովհետև յուրաքանչյուրը երկնային մեկ հատ (եզակի) մարմին է, նույնպես և տրէ, որովհետև Տիր աստվածը մեկ հատ է: Հոգնակի թիվ ունեցողները նույնպես բացատրվում են տրամաբանական հիմունքով՝ քաղոց = քաղերի ամիս, մարգաց = մարգերի ամիս և այլն: Արդ, առաց ձևը հոգնակի սեռական համարելով՝ կունենանք ուղղականի առ՛ ձևը, որ, ինչպես դիտենք, այր «տղամարդ» բառի հոգնակին է: Ամսանվան մեջ, անշուշտ, չպետք է տղամարդ իմաստը տեսնել, այլ առհասարակ՝ «արու, արական սեռին պատկանող մարդ կամ կենդանի» իմաստը, ըստ որում այր արմատի առ- տարբերակը, որպես սեռող հիմք (բաղադրյալ բառերի առաջին բաղադրիչ), արտահայտում է ընդ-

⁵⁵ Բ. Բ. Թումանյան, Տոմարի պատմություն, էջ 41:

⁵⁶ 2. Բաղայան, նշված աշխ., էջ 97—98: Մեջբերումը քաղված է Լ. Խաչկոնցի հրատարակած «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացելալ» աշխատությունից, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», Երևան, 1941, էջ 160:

⁵⁷ „Gesammelte Abhandlungen“, Leipzig, 1866, S. 163.

բացատրությունը. «Մեհեկի, զի տունկը և բոյսը որպէս զմեռնալ լինին...»⁵⁹ այսինքն՝ կապում է մահ բառի հետ, իբր թե՛ «մահ եկի»: Առաջին ձևը, որ մեր օրերում էլ գործածում են մի քանի հայագետ-տոմարագետներ, դարձյալ կարելի է բացատրել Միհր աստվածանունով՝ Միհր-ի-ակ բաղադրությամբ, որի մեջ միհրի- բաղադրիչի վերջահանգ ՚ի նախահինգայերենյան բնի ձայնավորն է, իսկ -ակ-ը՝ ածանց (հմմտ. Երեւակ, լծակ, արդակ, տեսակ, գոյակ, նկանակ և այլն). ըստ այսմ՝ Մեհրի > մեհի-ակ > մեհեակ ձևն է, որի սեռական հոլովում (մեհեկի) շեշտազուրկ եա երկբարբառը օրինաչափորեն դարձել է ե(մեհեկի-): Այսպիսով, Մեհեկան ամսանունը, մեհեկի տարբերակի հետ միասին, ծագում է հին պարսկական maiθrya > *Մեհր < Մեհր-ական > մեհական նախածկից, որի մեջ երկրորդ վանկի ա ձայնավորը դարձել է ե՝ նախորդի առնմանությամբ:

ԱՐԵԳ.— Բնիկ հայերեն բառ է, որ ծագում է հնդեվրոպական *rev-ից. նույն արմատից է նաև արեւ բառը: Հնդեվրոպական W ձայնորդ-բաղաձայնը, ինչպես հայտնի է, հայերենում դառնում է վ(ւ) կամ գ (հմմտ. կով և կոզի, ար և ագ-անել, հով և հոզի, հեւ և հոզ և այլն). գրաբարում արեգ-ը «արեգակ» մոլորակը և «արև» բառային իմաստով, ըստ Հր. Աճառյանի, գործածվում է միայն բառակապակցությունների մեջ՝ Արեգ ֆաղաֆ «Արևի քաղաք» = Ἡελιοπόλις, Արեգ դուռն «արևելյան դուռ», ի յարեգ կուսէ «արևելյան կողմից» (Արմ. 1, էջ 310), որ նշանակում է, թե արեգ որպես ամսանուն էր գործածվում և սովորական իմաստով գործածությունից դուրս մղվեց՝ փոխարինվելով արեգակն բաղադրյալ բառով:

Է. Բենվենիստը՝ քննության առնելով արեգ ամսանունը, գտնում է, որ նախապես դա ունեցել է արեգի սեռականը, որի վերջավորությունն ընկել է, ինչպես առհասարակ բոլոր բառերի վերջնավանկի ձայնավորը⁶⁰. այս բացատրությունը կարելի է հավանական համարել, եթե նկատի ունենանք, որ հնդեվր. v-ն դառնում է գ մեծ մասամբ ի ձայնավորից առաջ (հմմտ. կոզի, հոզի, ոզի, այդի և այլն):

ԱՀԵԿԱՆ.— Իրանական փոխառություն է՝ պահլավերեն ahrakan ձևվից. ինչպես մեհեկան, այնպես էլ անեկան ամսանվան մեջ r-ի անկումը օրինաչափ է, ըստ որում պահլավական (նաև հին պարսկական) փոխառություններում պահլավերենի hr (հին պարսկ. θr) հնչյունակապակցությունը հայերենում դառնում է հ (հմմտ. zohr < զոհ. šahrastan > շահաստան, pahr (հին. պարսկ. paθra) > պահ, պահել, pahrāk > պահակ և այլն): Պահլավերենում ahrākan-ը կազմված է ātur (> հայերեն՝ աուր)

«կրակ, հուր» բառից: Իններորդ ամիսը նվիրված էր կրակի պաշտամունքին: Հայերենում էլ անեկան-ը տարվա իններորդ ամիսն է:

ՄԱՐԵՐԻ.— Հր. Աճառյանն ընդունում է Մարկվարտի ստուգաբանությունը՝ պահլավերեն maθyarya (հին պարսկ. *madyai-yārya «տարվա մեջ տեղը, տարեմեջ») > հայ. մարեր-ի (սեռ. հոլ. մարեր ուղղականից) «տարվա 10-րդ ամիսը»: Մեր բառի ձևը միանգամայն օրինաչափորեն ծագում է պահլավերենից, ըստ որում պահլավական ծ-ն հայերենում դառնում է ր (հմմտ. fravēd (հպրս. fravaed) > հրաւէր, frapaθak > հրապարակ, patvēd > պատուէր, patvēθak < պատուիրակ): Պահլավական ամսանվան մասին Հր. Աճառյանը տալիս է հետևյալ բացատրությունը՝ ըստ Բարթոլոմեի: Պահլավական maθyarya —, հին ձևն է «զնդ-maidaryaya» տարվա 5-րդ եղանակի աստվածությունն անունը, 2. այդ եղանակի վերջում հնգօրյա տոն»: Հին զրադաշտական տարին ուներ 6 եղանակ, որոնց յուրաքանչյուրը վերջանում էր գլուղական մի տոնով, ինչ-պարնան տոն, ամառվա կեսի տոն, հունձքի տոն ևն: Մարերին ուներ 80 օր և ձմեռային արևադարձի տոնն էր. վերջին 80-րդ օրը ընկնում էր 10-րդ ամսի 20-րդ օրը և ամառնային արևադարձի տոնի (20 հունիս) 185-րդ օրն էր» (Արմ. 3, էջ 281): Ըստ այսմ, պարթևների դարաշրջանում ձմեռային արևադարձի օր է ընդունվել ղեկտեմբերի 21-ը, որ ճշտորեն համապատասխանում է ժամանակակից աստղագիտության տվյալներին (ձմեռային արևադարձը լինում է ղեկտեմբերի 21—22-ին): Այսպիսով, իրանական տարվա եղանակի անվանումը հայերը դարձրել են իրենց 10-րդ ամսվա անունը: Վրացիները նույնպես փոխառել են այդ բառը՝ mariali ձևով և դարձրել 10-րդ ամսվա անունը:

ՄԱՐԳԱՅ.— Հր. Աճառյանն ընդունում է Մարկվարտի և Հյուրշմանի ստուգաբանությունը, ըստ որի մարգաց-ը ծագում է հին պարսկական «margazana» ամսանունից, որ գործածված է Բիսիթունի արձանագրությանց Շօշական թարգմանության մեջ (Գ. 87). նշանակում է «թուշունների թուխսի ժամանակ» (Արմ. 3, 278): Չենք ընդունում այս ստուգաբանությունը, որովհետև հայերեն մարգաց-ը հոգնակի սեռական հոլովն է, որի ուղղականը կլինի մարգ: Այս ձևով ունենք երկու բառ, երկուսն էլ իրանական փոխառություն. մարգ «խոտավետ տեղ» < պահլավերեն marg «մարգագետին» բառից և մարգ «թուշուն» < պահլավերեն marg (murγ, murv) ձևից: Այս երկրորդ բառը առանձին չի գործածվել, հանդիպում է միայն սիբամարգ և լուամարգ բաղադրյալ թուշնանուններում. սիբամարգ-ի համար Հր. Աճառյանը բերում է ավեստերեն sāeno- mərəyo, պահլ. sēn(o)-muruk, sēn-i-muruk, պահեղ. sinmuru, նոր պարսկերեն simurγ «պահուճ» բառերը, որոնց հիման վրա էլ ապացուցում է, որ հին հայկական ձևն է եղել սիբամարգ և, բերելով բարբառային սիբամարգ ձևը՝ ավելացնում է. «մեր գավառականների մեջ էլ սիբամարգը առաս-

⁵⁹ Լ. Խաչիկյան, նշված հոդվածը, 360:

⁶⁰ E. Bénévise, Arménien aregakn „sofeli“ et la formation nominal en — akn, REA, NS, № 2 (1965), p. 6—11.

պելական մի թուշուն է և ոչ թե սիրամարգ» (Արմ. 3, 219): Գտնում ենք, որ այդ նույն սինամարգ ձեն է, որ դարձել է սինեամ հավի՝ ժողովրդական ստուգաբանությունը, և գործածվում է մեր հեքիաթներում: Այստեղ կարևորն այն է, որ սիրամարգ բարդությունն իբրև պատրաստի թուշանուն է փոխառվել, հայկական կազմություն չէ, ուստի և հիմք չի կարող տալ ենթադրելու, թե մարգ «թուշուն» բառը ինչ-որ ժամանակ գործածական է եղել հայերենում:

Երկրորդ թուշանունը՝ լորամարգ/լորամարգի, ավելի ևս այդպիսի հիմք չի տալիս. ըստ Հր. Աճառյանի բացատրության, այդ բառը պետք է կազմված լինի լոր թուշանունից և մարգ «թուշուն» բառերից, սակայն լորամարգը նույն լորն է՝ «հատկապես մարգերի մեջ վաղվզող լորի պարարտ ձագ»⁶¹, հետևաբար և ավելի ճիշտ կլիներ հայերենում կազմված համարել լոր+մարգ «մարգագետին, դաշտ» բառերից, որով հեշտությունը կբացատրվեր նաև լորամարգի տարբերակը (վերջին բաղադրիչը՝ մարգ բառի սեռականը): Այսպիսով, քանի որ բացատրվում է մարգ «թրուշուն» բառի ինքնուրույն գործածությունը հայերենում, ապա մարգաց ամսանունը պետք է կապել ոչ թե դրա հետ, այլ համարել հայերենում գործածված ու գործածվող մարգ «մարգագետին» բառի սեռական հոլովը (այս մարգ բառը ենթարկվում է ի-ա հոլովման):

ՀՐՈՏԻՅ.— Ընդունված ստուգաբանության համաձայն իրանական փոխառություն է (պահլավերեն fravartikan). ըստ Աճառյանի գրվել է հրոտ և հրոտ: Այս վերջին ձեն է հարադատ պահլավականին, իսկ հրոտ-ը ձևացել է ժողովրդական ստուգաբանությունը՝ հուր բառի հետ կապվելով (իբր՝ հուր+ոտ ածանց > հրոտ). մեր միջնադարյան հեղինակներն էլ բացատրում են հուր բառով, որ թեև ճիշտ չէ ծագումնաբանական տեսակետից, բայց ապացուցում է, որ հայերի կողմից ըմբռնվել է իբրև կրակի հետ կապված բառ:

ԱՎԵԼԵԱՅ.— Աելի բառի հոգնակի սեռականն է (աելիբ, աելեաց). հաճախ գրվում է նաև յաելեաց (աշխ. հավելյաց):

Ի մի բերելով ամսանունների ստուգաբանությունները՝ հետևյալ պատկերն ենք ստանում. 13-ից 5-ը բնիկ հայկական բառեր են (տրե, քաղոց, արաց, արեգ, ավելյաց), 7-ը՝ ծագումով իրանական, որոնցից էլ 4-ը պարսկական ամսանուններ են՝ վերցված իբրև պատրաստի անուններ, 3-ը՝ սովորական բառեր, որոնք հայերը դարձրել են ամսանուններ (նաւասարդ, սահմի, մարգաց) և մեկ ամսանուն (հոռի) մնում է շատուգաբանված:

Այս բոլորից հետո մնում է որոշել մեր ամիսների համապատասխանությունը հուլյան տոմարի ամիսներին. տոմարագիտական գրականու-

թյան մեջ այդ համապատասխանությունը բերում են սովորաբար ըստ Հովհաննես Իմաստասերի անշարժ տոմարի, և դա միանգամայն հասկանալի է: Երկու անշարժ օրացույցների ամիսների համապատասխանությունը նույնպես անշարժ է, այսինքն՝ սկզբնական համապատասխանությունը մնում է անփոփոխ հետագա բոլոր տարիներում, ուստի և Իմաստասերի անշարժ տոմարի և հուլյան տոմարի ամիսների համապատասխանության իմացումը գործնական արժեք ունի, մինչդեռ շարժական օրացույցի ամիսների համապատասխանությունը անընդհատորեն փոխվում է: Եթե տվյալ կետում, ասենք, հայոց արեգ ամիսը համապատասխանում է հոկտեմբեր ամսվան, ապա որոշ ժամանակից հետո կհամապատասխանի սեպտեմբերին, այնուհետև՝ օգոստոսին և այլն, այդ պատճառով էլ յուրաքանչյուր անհրաժեշտ դեպքում պետք է որոշել որոշ թվաբանական հաշվումներով, կամ դիմել պատրաստի աղյուսակներին: Իմաստասերի տոմարի մասին մենք խոսելու ենք առանձին, ուստի և ամիսների զուգադրությունն էլ՝ հուլյան տոմարի ամիսների հետ, կտրվի այնտեղ, իսկ այժմ մեզ զբաղեցնում է մի այլ հարց. ի՞նչ համապատասխանություն է եղել բուն տոմարի ամիսների և հուլյան կայուն համակարգի ամիսների միջև այն ժամանակ, երբ գործադրության մեջ դրվեց մեր շարժական արեգականին տոմարը, իսկ դրա հիման վրա էլ պատասխանել երկու հարցի. ա) արդյոք ամսանունների ու նրանց ցույց տված ամիսների միջև բնական կամ տրամաբանական կապ գոյություն ունի, թե ոչ. բ) արդյոք ամիսների հաջորդականությունը նույնն է եղել, ինչ որ մեզ հասել է մեր հին մատենագրության մեջ եղած տվյալներով, թե փոփոխվել է:

Առաջին հարցի պատասխանը գտնելը հեշտ է. դիտենք, որ Բուն տոմարի սկզբնական տարում մեր նավասարդի 1-ը համապատասխանել է մարտի 20-ին: Պա էլ որպես երակետ ընդունելով՝ կարող ենք կազմել հետևյալ տախտակը:

1. Նաւասարդ	մարտի 20-ից ապրիլի 18
2. Հոռի	ապրիլի 19-ից մայիսի 18
3. Սահմի	մայիսի 19-ից հունիսի 17
4. Տրէ	հունիսի 18-ից հուլիսի 17
5. Քաղոց	հուլիսի 18-ից օգոստոսի 16
6. Արաց	օգոստոսի 17-ից սեպտեմբերի 15
7. Մեհեկան	սեպտեմբերի 16-ից հոկտեմբերի 15
8. Արեգ	հոկտեմբերի 16-ից նոյեմբերի 14
9. Ահեկան	նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 14
10. Մարերի	դեկտեմբերի 15-ից հունվարի 13
11. Մարգաց	հունվարի 14-ից փետրվարի 12

⁶¹ Ստ. Մալխասյանց, ՀՐԲ, 2, 1944, էջ 209:

12. Հրոտից փետրվարի 13-ից մարտի 14
13. Ավելեաց մարտի 15-ից 19

Ինչպես տեսնում ենք: մեր ամիսներն ընկնում են հուլյան համակարգի երկուական ամիսների վրա (օր. նավասարդը՝ մարտ-ապրիլ, հոռին՝ ապրիլ-մայիս և այլն), ըստ որում այդ համապատասխանությունը բավականաչափ երկար ժամանակ է տևում: Արդ, ելնելով աղյուսակում տրված համապատասխանություններից՝ քննենք՝ թե արդյոք որևէ կապ կարելի՞ է գտնել ամսանունների և վերը բերված համապատասխանությունների ցույց տված ամիսների կամ, գոնե, եղանակների միջև:

Նավասարդը, ինչպես գիտենք, նշանակում է «նոր տարի» և քանի որ մեր առաջին ամսվա անունն է, իբրև զարնանամուտի ամիս, համապատասխանում է մարտին:

Հոռի և սահմի ամիսների հավաստի ստուգաբանությունը շունենք, ուրեմն ոչինչ էլ չենք կարող ասել այդ անվանումների և համապատասխան ամիսների իրույթների (реальни) կապի մասին: Եթե Մարտի երկու արբանյակների անուններն են, պետք է մտածենք, թե ինչ-որ պաշտամունքի հետ են կապված եղել, եթե որթատունկի կամ ուռենու և սերմերի ամիս համարենք, ապա ապրիլի 19—մայիսի 18 (հոռի) և մայիսի 19—հունիսի 17 (սահմի) շատ ուշ են և՛ որթատունկի, և՛ սերմանելու համար, և, վերջապես, եթե երկրորդ, երրորդ համարենք, ապա հակասում են ամսանունների համակարգին, որովհետև թվային հաջորդականություն ցույց տվող որևէ ուրիշ ամսանուն չունենք, և վրաց. ori, saini բառերի հետ կապելը միայն ձևերի պատահական զուգադիպության վրա է հիմնված:

Տրե՛ ամսանունը Տիր աստծու անունից է, և նվիրված լինելով այդ աստծուն՝ ենթադրել է տալիս կրոնական ինչ-որ տոն:

Քաղոց և արաց ամսանունների ստուգաբանությունը հավաստի է, սակայն բերված աղյուսակում քաղոցն ընկնում է հուլիս-օգոստոս ամիսներին, արացը՝ օգոստոս-սեպտեմբերին, ըստ որում այդ ամիսը վերջանում է այն ժամանակ, երբ դեռ նոր պիտի սկսվի խաւնքը: Ժամանակի և ամսանունների համապատասխանությունը խախտված է:

Մեհեկանը նվիրված է Միհր աստծուն և նույնպես ենթադրում է պաշտամունքային կապ:

Արեզը հավանաբար նույնպես պաշտամունքի հետ է կապվում (Հին Հայաստանում գոյություն է ունեցել արևի պաշտամունքը)⁶², բայց ըստ աղյուսակի արեզը ընկնում է հոկտեմբեր-նոյեմբերին և կասկածելի է, թե արևի պաշտամունքը նշին նոյեմբերին:

⁶² Տե՛ս, օրինակ, Հ. Մնացականյան, Արեապաշտության հետքերը Հին Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ պետ. պատմական թանգարանի «Աշխատություններ», 1, 1948, էջ 68—95:

Ահեկանը կրակի պաշտամունքին է նվիրված և ժամանակային համապատասխանությունն, անշուշտ, պայմանական է:

Մարերին կապվում է ձմեռային գիշերահավասարի օրվա հետ. ըստ մեր աղյուսակի՝ համապատասխանում է դեկտեմբերի 15—հունվարի 13-ին: Վերջին օրը պարսիկների մոտ համընկել է դեկտեմբերի 21-ին, սակայն դա մեզ համար նշանակություն չունի, որովհետև հին հայերի տարին վեց եղանակի չի բաժանվել:

Մարգացը՝ հունվարի 14-ից—փետրվարի 13, չի համապատասխանում ո՛չ մարգերով զբաղվելու, ո՛չ էլ թռչունների թխսելու ժամանակին:

Հրոտիցը հին պահլավական շրջանում եղել է ավելաց ամիսը, ուստի և՛ եղանակների կամ իրույթների հետ ունեցած կապի հարցը դուրս է գալիս:

Ավելեացը նախորդի նման 30-օրյա 12 ամիսներից ավելացած 5 օրերն է ցույց տալիս և նույնպես կապ չունի եղանակների կամ բնությունների հետ:

Բոլոր ամսանունների մեջ քաղոց, արաց և մարգաց անուններն են, որ կարող են որոշակի եղանակների հետ կապված լինել, բայց ինչպես տեսանք, դրանք էլ չեն համապատասխանում իրենց նշած ժամանակին: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ Բ. Թումանյանը գրում է. «Հայկական օրացույցը եղել է շարժական, այսինքն ամիսները թափանել են տարբեր եղանակներում, և այժմ հայտնի չէ, թե անվանակոչման ժամանակ ամիսները տարվա մեջ ինչպիսի՞ դիրք են զբաղել: Սակայն պետք է նշել նաև, որ եթե նույնիսկ ցանկացած դասավորությունը տանք, ապա ամենալավ դասավորությունը կլինի, եթե «հրոտիցը» լինի հուլիսին՝ տարվա ամենաշոգ ամսին: Այդ դեպքում էլ «մարգացը» հունիսին կլինի, որը, ասենք, մի կերպ տանելի է, իսկ դեկտեմբերին կլինի «քաղոցը», որը, իհարկե, անհնար է: Այդ ասում է այն մասին, որ ամսանունների վերը բերված ստուգաբանություններում, անկասկած, պետք է թերություններ լինեն կամ թե, ինչպես հոռմեական հունվար և փետրվար ամիսների նկատմամբ է կատարվել, ժամանակի ընթացքում ամիսների տեղերը փոփոխված լինեն»⁶³: Անշուշտ ամսանունների կարգի փոփոխության վարկածը անհավանական չէ, սակայն դրա մասին դատողություն անելիս անհրաժեշտ է ամիսների հաջորդականությունը քննել որոշակի ժամանակահատվածի հետ կապելով: Վերը մենք փորձեցինք այդպես վարվել՝ քննելով ամսանունների հաջորդականությունը մեր արեգակնային տոմարի գործադրության սկզբնավորման շրջանում, սակայն ստացված արդյունքը գոհացուցիչ չէ, որից հետևում է, որ 457 թվականին, երբ սկզբնավորվեց հայոց Բուն թվականը, և դրանից հետո շատ երկար ժա-

⁶³ Բ. Թումանյան, Օրացույցի պատմություն, էջ 41:

մանակ, խախտվել էր ամիսների և նրանց ցույց տված ժամանակի (կամ երևույթի) համապատասխանությունը: Այս դեպքում, բնականաբար, ինքնին ծագում է հետևյալ հարցը. իսկ ինչու էր խախտվել: Մենք վերը որոշակի դատողությամբ արդեն պատասխանել ենք այդ հարցին. արեգակնային տոմարը սկզբնավորվել է 457 թվականին, բայց դա չի կարող նշանակել, թե ամիսներին էլ հենց այդ տարում են անուններ դրել: Դրանից առաջ, ինչպես ասել ենք, հայերն օգտագործել են (Հին Հայաստանի ուրիշ ցեղերի հետ միասին) լուսնաարեգակնային օրացույց, ուստի և ունեցել են թե՛ ամիսներ (տարին ամիսներին են բաժանել) և թե՛ դրանց անվանումները: Սա մենք ընդունում ենք որպես անառարկելի ճշմարտություն, և հետագա մեր դատողություններն ու վերլուծություններն էլ հիմնվում են դրա վրա:

Ուղղակի ամսանունների քննությանն անցնելուց առաջ անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ լուսնաարեգակնային օրացույցը շարժական արեգակնային համեմատությամբ անկատար լինելով հանդերձ, մի կետում առավելություն ունի, և դա հետևյալն է: Լուսնաարեգակնային օրացույցում որոշ պարբերականությամբ 12-ամսյա լուսնային տարվան 13-րդ ամսվա հավելումով արեգակնային ու լուսնային տարիների օրերի թիվը հավասարեցվում են: Դրա հետևանքը լինում է այն, որ տվյալ պարբերաշրջանի մեջ լուսնային տարվա սկիզբը, ինչպես և բոլոր մյուս ամիսների սկիզբը «ցատկոտում» է մերթ դեպի առաջ, մերթ դեպի ետ, բայց պարբերաշրջանի վերջում տարբերությունը վերանում է, և ամսանորն ընկնում է այն օրը, որով սկսվել էր առաջին պարբերաշրջանը: Այսպես, օրինակ, եթե վերցնենք 8-ամսյա պարբերաշրջան և ընդունենք, որ պարբերաշրջանի սկզբում տարին սկսվել է մարտի 20-ով, ապա, ինչպես ներածության մեջ բացատրել ենք, 9-րդ տարին նույնպես կսկսվի մարտի 20-ով: Արեգակնային շարժական տարին, ինչպես տեսանք, ամեն մի քառամյակի մեկօրյա առաջխաղացումով անընդհատորեն առաջ է շարժվում և մեկ ամբողջ տարվա լրանալուց հետո միայն (1460 տարուց հետո) կրկին սկսվում է սկզբնական կետից: Նշանակում է, լուսնաարեգակնային տարին հարաբերականորեն կաշուն է, ըստ որում ոչ միայն նոր շրջանի սկիզբն է համընկնում նախորդին, այլև՝ շրջանի ներսում, «ցատկոտմանը», այսինքն՝ առաջ անցնելը կամ ետ ընկնելը, 15 օրից ավելին չի լինում: Իսկ սրանից հետևում է այն, որ մենք պետք է կարողանանք գտնե մոտավոր ճշտությամբ վերականգնել լուսնաարեգակնային օրացույցի օգտագործման դարաշրջանի ամիսների հաջորդականությունն ու դրանց համապատասխանությունը իրենց ցույց տված իրություններին:

Ամսանունների և նրանց ցույց տված ժամանակի համապատասխանության համար ամենից կարևորն են քաղոցը և առաջը, որովհետև, ինչպես ցույց ենք տվել, դրանք ուղղակիորեն վերաբերում են այժմերի ու

ռիսարների խառնքին, իսկ դա տեղի է ունենում սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Դրանից ելնելով էլ՝ մենք պետք է ընդունենք, որ ամիսների անվանակոչության ժամանակ քաղոց և առաջ ամիսները համընկել են սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին: Արդ, մեր կազմած աղյուսակի մեջ մ. թ. ա. 457—454 քառամյակում քաղոց 1=հուլիսի 17-ին, արաց 1=օգոստոսի 16-ին: Որպեսզի քաղոց ամսի 1-ը համընկնի սեպտեմբերի 1-ին, պետք է ետընթաց հաշվով 46 օրով քաղոցի 1-ը տեղափոխենք (հուլիսի 17-ից 31-ը=15 օր+օգոստոսի 31 օրը=46 օր)·46×4=184 տարի: Նշանակում է, քաղոց ամսի 1-ը համընկել է սեպտեմբերի 1-ին, համապատասխանորեն՝ արաց 1=հոկտեմբերի 1-ին՝ 457 թվականից 184 տարի առաջ, այն է՝ մ. թ. ա. 641 թվականին: Այսպիսով, մ. թ. ա. 641 թ. մայիսից—638-ի մայիս քառամյակը մենք կարող ենք համարել հայոց ամիսների անվանակոչության ժամանակը և, ընդունելով այդ իրրե գործնական ելակետ, կազմել հայոց և հուլյան ամիսների համապատասխանության հետևյալ տախտակը.

Նավասարդ 1—30	մայիսի 4—հունիսի 2
Հոռի 1—30	հունիսի 3—հուլիսի 2
Սահմի 1—30	հուլիսի 3—օգոստոսի 1
Տրէ 1—30	օգոստոսի 2—օգոստոսի 31
Քաղոց 1—30	սեպտեմբերի 1—30
Արաց 1—30	հոկտեմբերի 1—30
Մեհեկան 1—30	հոկտեմբերի 31—նոյեմբերի 29
Արեգ 1—30	նոյեմբերի 30—դեկտեմբերի 29
Ահեկան 1—30	դեկտեմբերի 30—հունվարի 28
Մարերի 1—30	հունվարի 29—փետրվարի 27
Մարգաց 1—30	փետրվարի 28—մարտի 29
Հրոտից 1—30	մարտի 30—ապրիլի 28
Ավելյաց 1—5	ապրիլի 29—մայիսի 3

Այս տախտակը քննելով՝ կարող ենք հետևյալ դատողություններն անել:

1. Բացի քաղոց և առաջ ամիսներից, որոնք իրենց տեղում են, մառախաց ամիսն էլ ընկնում է մարտին և հողագործական աշխատանքների կամ թռչունների թխսելու ժամանակի հետ գոնե մոտավոր ձևով կարող է կապվել:

Շատ տարօրինակ է այն, որ տարեսկիզբն ընկնում է մայիսի սկզբներին, բայց տարօրինակությունը կվերանա, երբ նկատի ունենանք, որ Հին Հայաստանցիները տարին բաժանել են 3 եղանակի, և մայիս, հունիս, հուլիս ու օգոստոս ամիսները, Հայաստանի կլիմայական պայմանները հուլիսի ունենալով, կարող ենք միավորել մեկ եղանակի մեջ: Ըստ այսմ,

այդ եղանակը կներկայացնեն տարվա շոգ ժամանակը, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր դեկտեմբեր ամիսները՝ բարեխառն եղանակը և հունվար, փետրվար, մարտ և ապրիլ ամիսները՝ ցուրտ եղանակը: Ուսումնասիրելով գոտի-օրացույցը՝ Բ. Թումանյանը և Հ. Մնացականյանը գրում են. «Սեպտոտում, ինչպես տեսանք, երեք եղանակ են տարբերում: Այդպես է գրեթե նաև Հայկական լեռնաշխարհում: Նույնիսկ Երևանում, որն ընկած է այդ լեռնաշխարհի հյուսիսային մասում, ձմեռվա ցուրտ եղանակից հետո շատ կարճ ժամանակամիջոցից հետո սկսվում են շոգերը: Իսկ աշնանային՝ անձրևային ու հով եղանակները բավականին երկար են տևում: Այսպիսով, ամենայն հավանականությամբ, Հայկական լեռնաշխարհի օրացույցը պարունակել է ձմեռ, ամառ ու աշուն, կամ ավելի ճիշտ՝ ցուրտ, տաք և բարեխառն եղանակներ»⁶⁴: Եթե այս մոտեցումով առաջնորդվենք, ապա կտեսնենք, որ Հայաստանում, իրոք, «նորմալ» տարիներին շոգերն սկսվում են մայիսին և տևում մինչև օգոստոսի վերջը (բայց «շոգը կտրվում է» օգոստոսի երկրորդ կեսին), ուստի և տաք եղանակն իսկապես մայիս—օգոստոս ամիսներին է լինում, հետևաբար և՛ տարեսկիզբը շոգ եղանակի սկզբին համընկնելը միանգամայն բնական է:

3. Տարօրինակ կլինեն նաև արեգ ամսվա զուգադիպությունը դեկտեմբերին, եթե արեգակի պաշտամունքին նվիրված ամիսն անպայման շոգ ամիս համարելին: Սակայն պատմական տվյալներն այլ բան են ցույց տալիս: Մարեթի ամսանվան ստուգաբանության մեջ մենք արդեն տեսանք, որ դա հին դրաղաշտական տարվա 5-րդ եղանակն էր, որ վերջանում էր ձմեռային արևադարձի տոնով: Ասացինք նաև, որ վերջին օրը համապատասխանել է ձմեռային արևադարձի օրվան (դեկտեմբերի 21—22-ին), որ նշանակում է, թե հին իրանցիները տոնել են ձմեռային արևադարձի օրը որպես արեգակի ծննդյան տոն, ըստ որում այդ օրվանից ցերեկվա տևողությունն սկսում է ավելանալ, մինչև որ գարնանային գիշերահավասարի օրը ցերեկվա ու գիշերվա տևողությունը հավասարվում է: Նույնպիսի տոն գոյություն է ունեցել նաև հին Հռոմում: Հեթանոս հոմեոցիները դեկտեմբերի ձմեռային գիշերահավասարի օրը տոնել են որպես Արեգակի տոն. «Մնունդ անունին տակ դեկտեմբեր 25 թվականը նախընտրած են՝ «անհայթ Արևու ծնունդ» կոչված հեթանոսական տոնին տեղը զնելու համար. Արև՝ որ միշտ կվերածնի և կհաղթի խավարին: Այս հեթանոս տոնը կկատարվեր ձմեռվան գիշերահավասարին: Արդարև դեկտ. 25-ն սկսած՝ ցերեկը կսկսի երկարիլ: Այսպես, Քրիստոս... տեղն առավ Արևու հեթանոսական տոնին»⁶⁵: Այս փաստերը հաշվի առնելով և

եկատի ունենալով հայկական արեգ անունով ամսվա նախնական համապատասխանությունը դեկտեմբեր ամսվան, կարող ենք եզրակացնել, որ հին հայերն էլ տոնել են Արեգի ծնունդը ձմեռային արևադարձի ժամանակ: Այս փաստերը, սակայն, հիմք են տալիս ավելի ընդհանուր բնույթի եզրակացության համար. քանի որ և՛ հայերը, և՛ իրանացիները, և՛ հոմեոցիները նույն ձմեռային արևադարձը տոնել են որպես Արեգի ծնունդ, ապա կարելի է ենթադրել, որ դա շատ վաղնջական ժամանակների հնդեվրոպական ընդհանուր պաշտամունք է եղել:

4. Առանձին ուշագրություն է արժանի հրատից ամսանունը: Ինչպես տեսանք, դա իրանական փոխառություն է. այդ ստուգաբանության դեմ առարկելու որևէ հիմք չկա: Սակայն գիտենք նաև, որ մեր հին և միջնադարյան մատենագրության մեջ այդ բառը կապել են հուր բառի հետ, և սա միանգամայն հասկանալի է: Իրանականից ստացված նախնական հրատ ձևը ժողովրդական ստուգաբանությամբ կապվել է հուր բառի հետ, երկրորդ r-ի ջնջումով դարձել հրատ (սեռականը՝ հրատից) և հայացվել՝ վերախմաստավորվելով ըստ բաղադրիչների հուր+ոտ ածանց: Այդ վերախմաստավորումով էլ վաղնջական ժամանակներից դիտվել է որպես հայակաղմ բառ և բացատրվել: Միջին դարերում տրված բացատրություններում բառը կրկին վերախմաստավորվելով՝ կապվել է արդեն հուր և ոտ(ն) բառերի հետ, այսինքն՝ բացատրվել է որպես «հուր է ոտից» (ոտքերի կրակ է): Մի կողմ թողնելով միջնադարը՝ մենք առնում ենք առաջին վերախմաստավորումով հայացված կաղմությունը՝ հուր+ոտ ածանց > հրոտ, որ պետք է նշանակեր «տաքի հետ խառն», «տաքախառն», «շոգավուն», ինչպես օրինակ, արևոտ նշանակում է «արևկա, արևով լուսավորված, արև ունեցող» (հուլիս-օգոստոս ամիսների համար չի ասվի՝ սավորված, արև ունեցող) (հուլիս-օգոստոս ամիսների համար կասվի): Ըստ այսմ, հրոտից արևոտ օրեր, բայց մարտ-ապրիլի համար կասվի): Ըստ այսմ, հրոտից ամիսը (ուղղականի ձևը պետք է համարել հրոտ գոյականացած հոգնա-կին) դեռ վաղնջական ժամանակներից համարվել է որոշ չափով արդեն տաք ամիս, և ապրիլը, որին համապատասխանել է հրոտիցը, իսկապես «տաքավուն» ամիս է:

Այս բոլոր դատողություններն ի մի բերելով՝ գալիս ենք այն եզրակացության, որ եին հայկական ամսանունների (հետևաբար և ամիսների) կարգը պահպանվել է այնպես, ինչպես եղել է ամիսների անվանակոչության ժամանակ, ըստ որում այդ հաջորդականության մեջ տարվա որոշակի ժամանակների և դրանց հետ կապված երևույթների ու ամսանունների իմաստային համապատասխանությունը անմխտելի է: Դրա օգտին են խոսում նաև մեհեկան և անեկան իրանական ծագումով բառերը, որոնք համապատասխանորեն 7-րդ և 9-րդ ամիսներն են, ինչպես որ դրանք համապատասխան ամիսների շարքում, վերջապես՝ նաև ուրե եղել են նաև հին պարսկական ամիսների շարքում, վերջապես՝ նաև ուրե ամիսը, որ շորթորդն է, ինչպես պարսկականում՝ թիր ամիսը: Եվ քանի

⁶⁴ Նույն տեղում, էջ 35:

⁶⁵ P. M. Ernètti (O. S. B.), Trattati Generale di canto Gregoriano... Հայացույց հ. Արևեն Ազամյան, բաղմավեպ, 1966, № 1—3, էջ 49—50:

որ այդ համապատասխանությունը, ինչպես ցույց ենք տվել, կարող էր լինել մ. թ. ա. VII դարի կեսերից ոչ ուշ, ապա հասկանալի է, որ ամիսների հայկական անվանակոչությունն էլ տեղի է ունեցել ոչ ուշ, քան մ. թ. ա. VII դարի կեսերը: Սա, իհարկե, ժամանակային վերջին սահմանն է և չի բացառվում, որ դա ավելի վաղ տեղի ունեցած լինի, եթե հաշվի առնենք վերը՝ լուսնաարեգակնային օրացույցի հարաբերական կայունության մասին ասվածը: Սակայն կա մի գործարք փաստ, որն ապացուցում է, որ ամիսների անվանակոչությունը, կամ գոնե գոյություն ունեցած ամսանունների փոխարինումը նոր անուններով, տեղի է ունեցել հենց մ. թ. ա. VII դարում, և այդ փաստը իրանական ամսանունների փոխառությունն է: Մեր ամսանուններից նավասարդ, սանմի, մեհեկան, ահեկան, մարեբի, մարգաց, հրոտից հաստատապես իրանական փոխառություններ են՝ ամսանուններ կամ սովորական բառեր (նավասարդ, սահմի, մարգաց), որոնք հայերը ամսանուն են դարձրել: Գիտենք, որ հայ-իրանական սերտ փոխհարաբերություններն սկսվում են մ. թ. ա. VII դարում (մարական շրջանից սկսած), սակայն, իհարկե, չի կարելի կարծել, թե մինչև այդ հայերը ոչ մի հարաբերություն չեն ունեցել իրանցիների հետ: Այն փաստը, որ VI—V դարերում հայերն արդեն մշակութային սերտ փոխազդեցության մեջ էին իրանցիների հետ, այնքան, որ իրանական կրոնը արդեն հիմնականում ընդունվել էր հայերի կողմից, ենթադրել է տալիս հայկական և իրանական ցեղերի ավելի վաղ շրջանի տարածական մերձավորություն (հարևանություն) և շփումներ: Սրա ուղղակի արտահայտությունն են նաև հայերենի այն բաղմամբով իրանական փոխառությունները, որոնք թվագրվում են մ. թ. ա. VII—V դարերով, այդ թվում և՛ ամսանունները: Այս հանգամանքը նկատի ունենալով, մենք կարող ենք հանգել հետևյալ եզրակացություն. մ. թ. ա. VII դարին նախորդած շրջանում հայ-իրանական ցեղերի հարաբերությունները արդեն սկզբնավորվել էին, բայց դեռ բավականաչափ հաստատուն և շոշափելի հետևանքների չէին հանգեցրել, ուստի և մշակութային ազդեցությունն էլ, այդ թվում և լեզվական փոխազդեցությունները, դեռևս շոշափելի չի եղել: Դրանք որոշակի վարզացում են ստացել միայն VII դարում, ինչպես և ընդունված է հայագիտության մեջ, իսկ դա էլ նշանակում է, թե իրանական ծագումով ամսանունները հիմք են տալիս ընդունելու, որ մեր քննած ամսանունների համակարգը կարող էր ստեղծվել, ինչպես ասացինք, հենց մ. թ. ա. VII դարում, բայց ոչ դրանից վաղ: Որպես փաստարկ կարելի է հիշել նաև այն, որ հայ ժողովրդի կազմավորման գործընթացն էլ բուրն թափ է ստանում նույն VII դարից:

Բ. ՕՐԱՆՈՒՆՆԵՐ

Ինչպես ասել ենք, Բուն հայկական օրացույցի ամիսներն ունենին 30-ական օր, ավելացր՝ 5 օր՝ ամիսը շարաթնների չէր բաժանվում, ամսվա բոլոր օրերն ունեին իրենց անունները: Ահա այդ օրանուններն ու գրանց ստուգաբանությունը:

- | | | |
|-------------------------|---------------------|------------------|
| 1. Արեգ | 11. Երեղկան/Երեղհան | 21. Գրգուռ |
| 2. Հրանդ/Հրանտ | 12. Անի | 22. Կորդուիք |
| 3. Արամ | 13. Պարխար | 23. Մմակ |
| 4. Մարգար | 14. Վանատուր | 24. Լուսնակ |
| 5. Ահրանբ | 15. Արամազդ | 25. Յրոն (Սփիւռ) |
| 6. Մաղղեղ ⁶⁶ | 16. Մանի | 26. Նպատ |
| 7. Աստղիկ | 17. Ասակ | 27. Վահագն |
| 8. Միհր | 18. Մասիս | 28. Սիմ(Սեին) |
| 9. Չոպաբեր | 19. Անահիտ | 29. Վարագ |
| 10. Մուրց | 20. Արագած | 30. Գիշերավար |

Օրանունները ստուգաբանվում են հետևյալ ձևով.

1. Արեգ.— արեգակի անունն է. ամեն ամսվա առաջին օրը նվիրված է արևին:

2. Հրանդ/Հրանտ. Հր. Աճառյանը գրում է. «Սովորաբար հանում են հյ. հուր «կրակ» բառից... և ըստ այսմ գրում են Հրանդ(դ-ով), իբր -անդ մասնիկով (հմմտ. Եռանդ), բայց հների մոտ ավելի Հրանտ ձևն է իշխում, և մանավանդ Հրատն: Ըստ այսմ Հրանդ ձևը սարքովի ուղղագրություն է թվում»⁶⁷:

Ընդունում ենք, որ հուր բառից է կազմված, նախնական ձևն ենք համարում Հրատն, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ Հրատ մոլորակի անունը (և-ն հետագա հավելում է, որի դրափոխությամբ ստացվել են Հրանտ/Հրանդ):

3. Արամ.— Արամ անձնանունն է, որ ըստ Հր. Աճառյանի «Ետալիկների Արամն թագավորի անունից է... Արամի անունով օտարները կոչել են մեզ Արամեն, իսկ մեր երկիրը՝ Արամենիա»⁶⁸: Հայկական առասպելաբանության մեջ Արամը Հայկազանց նահապետն է:

4. Մարգար.— Սովորաբար կապում են Մարգար անվան հետ. որ առաջացել է մարգարե բառից, իսկ սա էլ իրանական փոխառություն է: Իրանական հնագույն ձևն է՝ maθra-kara «բառ. Ս. գրքի (= Ավեստայի) խոսքերը» նշանակությամբ (Արմ. 3, 276—277): «Մեր մարգարէն էլ, որ

⁶⁶ Հ. Բաղալյանը (նշված աշխ. 100, 101) և Բ. Քումանյանը (Օրացույցի պատմություն, 42) գրում են Մաղղեղ (հետևելով իրենց նշած աղբյուրներին), որ ճիշտ չէ:

⁶⁷ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, 1946, էջ 108:

⁶⁸ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, 1942, էջ 266:

զրադաշտական կրոնից փոխառյալ բառ է, նշանակում էր նախապես այն արևելյան կարգացողները, որոնք Ս. գրքերից զանազան աղոթքները կարգավով հիվանդների վրա, բժշկում էին նրանց, և կամ այդ գրվածքներից գուշակություններ էին հանում» (Արմ. 3, 276—277):

5. Ահրամֆ/Ահուամֆ (ըստ Քաջունու).— Ահ բառի հնագույն արև ձևից է (հմմտ. արհական «սարսափելի», արհաիրք են), առաջինը (արհ)՝ դրափոխությունը (րհ > հր), երկրորդը՝ րհ > ռ հնչյունափոխությամբ: Կարելի է ենթադրել, որ Մարսի արբանյակներից մեկի հնագույն անվանումն է, որ հետո փոխարինվել է սահմ անունով (տե՛ս վերը):

6. Մազդեզ.— Հին և ճշգրիտ ձևն է մազդեզն, որ պահլ. mazdesn բառն է և նշանակում է «զրադաշտական» (ծագում է Mazdaհ = Ahura-Mazdah-ից):

7. Սադիկ.— Գեղեցկություն և սիրո աստվածուհու անունն է:

8. Միհր.— Աստվածանուն:

9. Չուպրեռ.— Չուպ անհայտ բառ է. «Բազմավեպում» բացատրված է իբր «շփոթ, խառնակություն», որի հիման վրա էլ ձուպրեռը՝ «շփոթություն, խառնակություն բերող»:

10. Մուրց.— Հ. Բաղալյանը կապում է մրցել բառի հետ, որի արմատն է մուրց և համարում «մրցախաղերի օր», իսկ Ս. Երեմյանը՝ Մուրց գետի անունն է համարում: Հավանական ենք գտնում երկրորդը:

11. Երեզկան.— Կապում են Երիզա (այժմ Երզնկա) անվան հետ. Երիզայում է գտնվել Անահիտ դիցուհու գլխավոր տաճարը: Ոմանք գրում են երեզհան՝ մեկնաբանելով իբր երազահան:

12. Ահի.— Դարանաղաց գավառի Անի քաղաքի անունից. այդտեղ էր գտնվում Արամազդի գլխավոր տաճարը:

13. Պարխար.— Լեոնանուն:

14. Վանատուր.— (կա նաև Վանատ կրճատված ձևը). կազմված է Վան + տուր բաղադրիչներից՝ «հյուրընկալ» նշանակությամբ. կապում են ամանորի տոնակատարությունների հետ, երբ Հայաստանի զանազան կողմերից գալիս էին Բագավան և հյուրընկալվում ամանորի տոնակատարության օրերին:

15. Արամազդ.— Արամազդ աստծու անունից, որ ծագում է իրանական Ահուրա-Մազդայից:

16. Մանի.— Քաջունին կապում է Թորդան գյուղին մոտակա լեռան անվան հետ, Ս. Երեմյանը՝ Մանի աստվածուհու:

17. Ասակ.— Կարծում ենք, որ ասել բառից է կազմվել (աս + ակ ածանց) և նշանակել է «ասացող, գուշակող», ինչպես Մարգար-ը:

18. Մասիս.— Հայտնի լեոնանունն է:

19. Անանիա.— Ողջախոհության դիցուհու անունն է:

20. Արագած.— Արագած լեոնանունն է, որ կազմված է Արա + գած

«հյուսված, շարք, պար» բաղադրիչներից և նշանակում է Արայի պար՝ լեոնաշղթա:

21. Գրգուռ.— Լեոնանուն:

22. Կորդուիֆ— Լեոնանուն:

23. Մմակ— Անհայտ է մնում:

24. Լուսնակ.— Լուսին բառից՝ ակ ածանցով:

25. Յրոհ.— Յրոնք ձևով ունենք տեղանուն, սակայն աչքի առաջ ունենալով երկրորդ անվանումը՝ Սփիւտ, կարելի է կապել Միր կաթին (Հարգագողի ճանապարհ) անվան հետ, որպես դրա հին անվանումը (հմմտ. Վահագնի անվան հետ կապված առասպելը՝ Միր կաթինի առաջացման մասին): Երկու անվանումներն էլ նշանակում են «ցրված՝ սփռված բան»:

26. Նպատ.— Լեոնանուն:

27. Վահագն.— Աստվածանուն:

28. Սիմ/Սեին.— Լեոնանուն. Սեին հավանաբար գրչադրական ազգավաղում է):

29. Վարագ.— Լեոնանուն: Գրված է նաև վարագ, որը, եթե ճիշտ է, կարող է կապվել վարագի պաշտամունքի հետ:

30. Գիշերավար.— Մոլորակի անուն է (Արուսյակ):

Դասակարգելով երեսուն օրերի անունները՝ ստանում ենք հետևյալ պատկերը:

1. Լեոնանուններ.— 9. Պարխար, Մանի (?), Մասիս, Արագած, Գրգուռ, Կորդուիֆ, Նպատ, Սիմ, Վարագ:

2. Դիցանուններ.— 6. Մազդեզ, Աստղիկ, Միհր, Արամազդ, Անահիտ, Վահագն:

3. Երկնային մարմիններ.— 6. Արեգ, Հրատ, Ահրանք, Լուսնակ, Գիշերավար, Յրոհ/Սփիւտ:

4. Տեղանուն.— 2. Երեզկան, Անի:

5. Գետանուն.— 1. Մուրց:

Ունենք 2 անձնանուն՝ Արամ, Մարգար, որոնցից առաջինը պետք է դասել, հավանաբար, դիցանունների շարքում, երկրորդը՝ դիտել ոչ թե որպես հատուկ անուն, այլ իր նախնական իմաստով հասարակ գոյական, «գուշակություն» նշանակությամբ, որին կմիանա նաև հայակազմ Ասակ-ը: Սրանց կարող ենք միացնել նաև Վանատուր անունը, որպես իր իմաստով որոշակի երևույթի հետ կապվող անուն, որով կստանանք՝

6. Կրոնի և տոնախմբությունների հետ կապված բառեր.— 3. Մարգար, Ասակ, Վանատուր:

Առանձին են մնում Չուպրեռ և Մմակ շտուգաբանված բառերը: Ավելաց հինգ օրերը նույնպես ունեցել են իրենց անունները՝ Լուծ, Եղջերու, Փառաղնոտ, Արտախուր, Մկրաուրի: Ենթադրվում է, որ դրանք մոլորակների անվանումներ են. Լուծ—Փայլածու, Եղջերու—Արուսյակ կամ

Երևակ, Փառազնոտ—Լուսնթագ կամ Հրատ, Արտախուր—Լուսնթագ կամ Երևակ, Մկրաւորի, Հրատ: Կրկնվողները հանելով՝ ստանում ենք հետևյալ հինգ մոլորակների անունները. Փայլածու, Արուսյակ, Լուսնթագ, Երևակ, Հրատ:

Գ. ԺԱՄ ԵՎ ԺԱՄԱՆՈՒՆՆԵՐ

Հին հայերենում օր բառը նշանակել է գիշերը և ցերեկը միասին, ինչպես ռուսերենում СУТКА բառը, իսկ դրա մասերի համար ունեցել ենք տիւ և գիշեր բառերը:

Օրը բաժանվել է 24 ժամի, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր անվանումը: Տոմարագիտական աշխատությունների մեջ սովորաբար բերվում է օրվա 24 ժամանունների ցանկը, սակայն այսպես ասած, ստանդարտացված ձևերով. Այգ, Մայգ, Զօրացեալ, Ճառագայթեալ, Շառաւեղեալ, Երկրատես, Շանթակող, Հրակաթ, Հուր Փայլեալ, Թաղանթեալ, Արագոտ, Արփող, Խաւարակ, Աղջամուղջ, Մթացեալ, Շաղաւօտ, Կամաւօտ, Բաւական, Հաւթափեալ, Գիղակ, Լուսաճեմ, Առաւօտ, Լուսափայլ, Փայլածու:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան նաև տարբեր անվանումներ և նույն անվանումների տարբեր գրություններ: Այսպես, Շիրակացին ունի՝ Շանթակալ փխ. Շանթակող, Հուր քափեալ փխ. Հուր փայլեալ, Առաւար փխ. Արագոտ, Հաւթափեալ փխ. Խօթափեալ, Փայլածումն փխ. Փայլածու, իսկ նույն հատվածը մի այլ ձևազարում ունի. Այգձագեալ, Զօրացեալ, Շառաւեղ, Երկրատես, Շանթակողմ, Հրակար, Հուր կարեալ, Թաղարքափեալ, Տարափ, Տարափող, Գիշերակ, Աղջամղջակ, Բաւաղակ, Խուժակն, Դագակն, Կատաղատես, Լուսաճեմ, Խրսնձակ, Համաւօտ, Փողաճար, Հետագաւօտ, Կախաղ⁶⁹, ընդամենը 23 ժամանուն, ինչպես և գրում է Ա. Աբրահամյանը, սակայն եթե առաջին անունը՝ Այգձագեալ, բաժանենք բաղադրիչների, կստանանք երկու անուն՝ Այգ և ձագեալ, որով կունենանք 24 անուն: Միջնադարյան աղբյուրներում կան նաև որոշ անունների այլ տարբերակներ, ինչպես՝ Զայրացեալ փխ. Զօրացեալ, Շառաւեղ փխ. Շառաւիղեալ, Գիջակ փխ. Գիզակ, Լուսակն, Լուսագայլ, փխ. Լուսաճեմ: Բացի դրանից, ինչպես պարզորեն երևում է, գիշերային ժամերի երկրորդ անունների մի մասի կարգը ձեռագրում խախտվել է, որի հետևանքով, օրինակ, Լուսաճեմ-ը ընկել է 7-րդ տեղը (Հաւթափեալ-ի տեղը), Դագակ-ը՝ 5-րդ, բայց պետք է լինի 8-րդ տեղում (Գիղակ-ի տեղը), և այլն: Այս տեղափոխությունները կատարելով և մի կողմ թողնելով զբոլջագրական տարբերակները (օր. Շառաւեղեալ—Շառաւիղեալ)՝ բերում ենք ժամանունների հետևյալ ցանկը:

Ցերեկային ժամեր

- | | |
|-----------------------------------|---|
| 1. Այգ | 7. Շանթակալ, Շանթակող, Շանթակողմն |
| 2. Մայգ, Մագեալ | 8. Հրակաթ |
| 3. Զօրացեալ, Զայրացեալ | 9. Հուր փայլեալ, Հուր թափեալ, Հուր կաթեալ |
| 4. Ճառագայթեալ | 10. Թաղանթեալ, Թաղարթափեալ |
| 5. Շառաւեղեալ/Շառաւիղեալ, Շառաւեղ | 11. Արագոտ, Առաւար, Տարափ |
| 6. Երկրատես | 12. Արփող, Տարափող |

Գիշերային ժամեր

- | | |
|-------------------------|-----------------------------------|
| 1. Խաւարակ, գիշերակ | 7. Խաւթափեալ, Հաւթափեալ |
| 2. Աղջամուղջ, Աղջամղջակ | 8. Գիղակ, Գիջակ, Դագակ |
| 3. Մթացեալ, Բաւաղակ | 9. Լուսաճեմ, Լուսակ, Լուսագայլ |
| 4. Շաղաւօտ, Խուժակ | 10. Առաւօտ, Փողաճար |
| 5. Կամաւօտ, Համաւօտ | 11. Լուսափայլ, Հետաղօտ |
| 6. Բաւական, Կատաղատես | 12. Փայլածու, Փայլածումն, Կաբաւող |

Հարց է, թե այս ժամանունները հին ժամանակներից են գալիս, թե միջին դարերում են հորինվել: Այն փաստը, որ բազմաթիվ ժամեր ունեն երկու, նույնիսկ երեք անուններ, ցույց է տալիս, որ դրանք ուշ շրջանի հորինվածքներ են և ոչ թե հին ժամանակներից, ասենք՝ Բուն տոմարի սկզբնավորման ժամանակներից ժամերին տրված անվանումներ, ինչպիսիք են, օրինակ, մասանունները: Բանն այն է, որ հնուց եկող անունները՝ սերնդից սերունդ անցնելով, որպես ընդհանուր կանոն, «բյուրեղանում» են, դառնում ավանդույթյամբ սրբազործված և անձեռնմխելի, անփոփոխելի անուններ, մինչդեռ ուշ շրջանում, որևէ գիտունի հորինածին մի ուրիշ գիտուն հակադրում է իրենը, ինչպես որ այժմ էլ շատ հաճախ արվում է տերմինաշինության մեջ: Կարևոր փաստարկ է նաև այն, որ այդ անվանումներից ոչ մեկը գործածված չէ V—VI դարերի մատենագրություններից: Ավելին, այն անվանումները, որոնք որպես սովորական բառեր (ինչպիսիք են, օրինակ, այգ, շառաւեղ, հուր, զօրանալ, զայրանալ և այլն), չեն գործածվել (օր. Շանթակող, Խաւթափեալ, դագակ և այլն), նոր Հայկազեան բառարանում և Արմատականում տեղ չեն գտել, թեև առաջինը ժամ բառի տակ բերում է ժամանունների լրիվ ցանկը⁷⁰: Եվ վերջապես,

⁶⁹ Շիր., 1944, էջ 113:

⁷⁰ Նոր Բառգիրք հայկազեան լեզվի, ԵՊՀ հրատ., հ. Ա, 1979, էջ 816: ժամանունների աղբյուրը համառոտագրված է Տոմար, որի բացատրությունը հետևյալն է. «Տոմարական 81

ցերեկվա և գիշերվա 24 ժամերն անուճններով կոչելու համար անհրաժեշտ է, ամենից առաջ, ճշգրիտ ժամաշափություն, մինչդեռ մարդկութունը դրան հասել է ոչ շատ վաղ ժամանակներում: Արևի ժամացույցը (գնոմոնը) թեև շատ հին պատմություն ունի, բայց նրանով գիշերվա (ինչպես և ամպամած օրերին) ժամերը որոշել հնարավոր չէ: Ջրի ժամացույցը նույնպես թեև վաղնջական ժամանակներից է օգտագործվել, բայց բավականաչափ ստույգ չէ, իսկ ավազի ժամացույցը, ինչպես ենթադրվում է, գործադրվել է մ. թ. VIII դարից: Այս բոլորին պետք է ավելացնել, որ Հայկազյանի հեղինակներն էլ գտնում են, որ այդ անվանումները առանձին հեղինակների հորինվածքն են: Ժամն է «Բաժանումն բույեից ի ըսկրզբան տուրնջեան և գիշերոյ, յառանձին անուանս յորջորջելով ըստ կամի, զորս և մեկնաբանելն է ըստ հաճոյս վերժանողաց»⁷¹: Ավելի խիստ է արտահայտվել Ղ. Ալիշանը՝ գրելով. «Սոսկ իմաստասիրի կամ իմաստակի մի գրչով հնարված երևին այն անվանք որ հիշված են և ի բառագիրս ինչ» և պարզապես ժամույց բնական միջոցին պատշաճել ուղած (ոչ շատ հաջող)⁷²: Այսպիսով, հենվելով մեր նշած հանգամանքների վրա և հաշվի առնելով բերված կարծիքները, գտնում ենք, որ բերված ժամանունները մ. թ. VI—VII դարերի հորինվածքներ են:

Հիշյալ անվանումների մասին կարելի է ասել հետևյալը:

Յերեկվա 12 ժամանուններից 11-ը միանգամայն բացատրելի են թե՛ իրենց կազմությամբ և թե՛ իրենց իմաստով, բացի 3-րդից՝ Մայգ: Այս բառը չունեն նձԲ և Արմատականը, թվում է, թե աղավաղված ձև է: Նախնական ձևը վերականգնելու համար ուշադրության արժանի է նույն ժամի երկրորդ անվանումը՝ Մագեալ: Նկատի ունենալով, որ Մյգ-ը ցերեկվա առաջին ժամն է, որը նախորդում է արևածագին, ապա պետք է ընդունել, որ երկրորդ ժամն էլ արևածագի հետ պիտի կապվեր, որ հաստատվում է երկրորդ անվանումով (ժագեալ): Ըստ այսմ, մենք գտնում ենք, որ Մայգ-ը նախապես եղել է Մագ, և դա հաստատվում է Մագեալ տարբերակով. համարանություն օրենքով, ժամանակի ընթացքում առաջինի՝ Մյգ-ի ազդեցությամբ դարձել է Մայգ (Այգ, Մայգ), ինչպես որ, օրինակ, ժողովրդախոսակցական լեզվում ունենք սեկտեմբեր (սեպտեմբերի փոխարեն), հունվար (հունվարի փոխարեն), առաջինը հոկտեմբեր-ի, երկրորդը փե-

գրութիւնք հնոց, միջոց, և յեռնոց, ազգի ազգի տեղեկութեամբք թուրքանական, տարեկան և տօնական իրաց, և համեմատութեանց ամաց, ամսոց, շաբաթոց, ատուրց և ժամուց, բազմօրինակ ի բազում մատենան, ուր կան հետք բանից Շիրակացոյցն և յառաջագունից բան գնա. ևս առանց Սարկապ Վարդապետի, մինչև ցյետին աշխատութիւնս Յակոբայ Ղրիմեցոյ, Ղուկասու Կեղեցոյ, և Կիւրղի զպրի են» (ն. ա.):

⁷¹ Նույն տեղում:

⁷² Ղ. Ալիշան, Հին հուատք կամ հեթանոսական կրոնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ

տրվար-ի համարանությամբ: Հետևաբար Մայգ-ը կարելի է համարել Մագ-ի աղավաղված գրությունը:

Գիշերային ժամերից 7-րդն ունի խալքափեալ և հալքափեալ տարբերակները: Կարծում ենք, որ սկզբնականը և ճիշտն է խալքափեալը, որ նշանակում է «խալք թափված», այսինքն՝ պատկերավոր ձևով խալքո՞ղ է բնութագրվել գիշերվա մթությունը, և յոթներորդ ժամը համարվել է այն պահը, երբ գիշերվա խալքն սկսում է ցրվել՝ թափվել: Երկրորդը՝ հալքափեալ-ը ամենայն հավանականությամբ կապվում է հալ բառի հետ և նշում է հալերի արթնանալու պահը (հմտ. հալախոս):

Մյուս անվանումներից ուշադրություն են գրավում Շաղաւտ, Կամաւտ և Առաւտ բառերը, որոնց երկրորդ բաղադրիչն է աւտ (աւաւտ). դրա մեջ էլ, ինչպես մենք ցույց ենք տվել, արմատն է աւ⁷³:

Աւփող և Տարափող տարբերակներից երկրորդը կեղծ բառ է, որ առաջացել է պարզ սխալագրությամբ. գրիչը՝ արտագրելիս, սխալմամբ գրել է նախորդ անունը և ավելացրել դրան հաջորդող անվան (արփող) -ոլ մասը:

Գիգակ, Գիչակ, Դագակ տարբերակներից կարելի է ճիշտը համարել Գիչակ-ը (գէջ-ակ), հետևաբար և բացատրել որպես խոնավություն, թացություն ժամ (հմտ. շաղ-աւտ)՝ կապելով լուսաբացի շաղ դեմքի հետ: Մյուս երկուսը կամ դրա գրչագրական աղավաղումներն են, կամ էլ անհայտ արմատներից (գիգ-|գէչ, դագ) ածանցված բառեր:

Արագոտ, Առաւտ, Տարափ տարբերակներից երկրորդը հայտնապես Առաւտ բառի սխալագրությունն է, այն էլ՝ ոչ իր տեղում գետեղված:

Մյուս անվանումները կամ ծանոթ բայերի դերբայական ձևեր են (զօրացեալ-զօրանալ, ճառագայթեալ-ճառագայթել են) կամ սովորական բառերից կազմված բաղադրյալ (ածանցավոր կամ բարդ) բառեր, որոնք իրրև բառեր բացատրելի են (օր. Շանթակալ, Հրակաթ, Խաւարակ, Լուսակ են):

Ժամանունների բաժանումը երկու խմբի՝ ցերեկային և գիշերային, ինքնին հաստատում է, որ ցերեկն ու գիշերը հավասար ժամերի են բաժանվել: Սա տոմարագիտությանը հայտնի բան է, ուստի և մնում է պարզել, թե օրվա ո՞ր ժամից է սկսվել ցերեկվա առաջին ժամը, և ո՞ր ժամից՝ գիշերվանը: Քանի որ օրը երկու հավասար մասերի է բաժանվել, ապա, հասկանալի կերպով, իբրև ելակետ են ընդունվել զարնանային և աշնանային գիշերահավասարների օրերը: Արդ, զարնանային գիշերահավասարի օրը արևածագը լինում է ժ. 6.37-ին, մայրամուտը՝ 18.40-ին, ցերեկվա տևողությունը՝ 12 ժ. 03 րոպե, աշնանային գիշերահավասարի օրը՝ արևածագը 7.21-ին, մայրամուտը 19.20-ին, ցերեկվա տևողությունը 11 ժ. 59

⁷³ Է. Բ. Աղայան, Բառարանական և ստուգարանական հետազոտություններ, Եր., 19:

րուպե (այս բոլորը՝ ժամանակակից աստղագիտական տվյալներ են, քաղված 1984 թ. օրացույցից):

Եթե ցերեկային և գիշերային ժամերի անունները ղետեղենք արևածագին նախորդող ժամից (այգ ժամից) մինչ հաջորդ այգը, ապա կտեսնենք, որ ժամանունների հաջորդականությունը պայմանավորված է օրվա տարբեր ժամանակների լուսավորվածությունն աստիճանով, ըստ որում ցերեկային ժամերն սկսվում են լույսը բացվելու ժամով, որին հաջորդում է արևածագը և տևում մինչև մայրամուտը, իսկ գիշերային ժամերը՝ արևամուտից մինչև այգը: Ընդունված է, որ հայերն օրվա սկիզբը համարել են այգը, այսինքն՝ լույսը բացվելու պահը: Բ. Քումանյանը դա բացատրում և հիմնավորում է այսպես. «Հայկական օրացույցը արեգակնային օրացույց է և իր կառուցվածքային սկզբունքով նման է հին եգիպտական օրացույցին: Հայտնի է, որ եգիպտացիները ոչ միայն տարվա, այլև օրվա սկիզբը կապում էին արևածագի հետ: Սովորաբար օրվա սկիզբը արևամուտի հետ են կապել այն ժողովուրդները, որոնք ղեկավարվել են լուսնային օրացույցով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հին և միջնադարյան Հայաստանում օրվա սկիզբը համարվել է առավոտյան արևածագը»⁷⁴: Ընդունելով այս բացատրությունը՝ մենք գտնում ենք, որ օրվա սկիզբ է համարվել արևածագին նախորդող ժամը, ըստ որում այգը՝ ցերեկային առաջին ժամը, նախորդում է Մայգին, այսինքն արևի ծագման պահին: Պետք է նկատի ունենալ, որ այգ-ը, իբրև սովորական բառ էլ, նշանակում է լուսանալու պահը, արշալույսը, որ նախորդում է արևածագին: Իսկ սա նշանակում է, թե հայերի համար ցերեկվա սկիզբն է եղել առավոտյան ժ. 5.30-ը և տևել է մինչև 17.30, որից հետո սկսվում են գիշերային ժամերը: Գիշերային առաջին ժամն է մայրամուտն սկսվելու պահից մինչև ավարտը՝ 17.30-ից մինչև 18.30-ը, որին հաջորդում է աղջամուղջը:

Հայ տոմարագիտական գրականության մեջ ընդունվում է, որ հայերը հնում ժամը բաժանել են 2 կամ 5, ապա՝ 30 մասի: Ժամը 60 մասի, իսկ դրանցից յուրաքանչյուրն էլ իր հերթին դարձյալ 60-ական մասի բաժանումը սկիզբ է առնում միջին դարերում, իսկ ընդհանրական գործածություն ստանում՝ վերջին մի քանի դարերում, դուրս մղելով նախկին (2, 5 կամ 30 մասերի) բաժանումները: Միջնադարյան աղբյուրներում գործածվում են աստիճան, մաս և մանրամասն տերմինները, որոնք համապատասխանում են այժմյան աստիճան, րուպե և վայրկյաճ տերմիններին:

Գ. ՊԱՀ ԵՎ ՊԱՀԱՆՈՒՄՆԵՐ

Ինչպես ուրիշ ժողովուրդները, այնպես էլ հայերը հնագույն ժամանակներում, ժամերի բաժանելուն անցնելուց առաջ, սովորաբար օրը բաժանել են պահերի: Ինչպես ժամերը, այնպես էլ պահերը եղել են ցերեկային և գիշերային: Ցերեկը և գիշերը ունեցել են երեքական պահ՝ յուրաքանչյուրը շորսժամյա տեղում լայն կամ շորսական պահ՝ երեքական ժամով: Հայ մատենագրության մեջ կան տվյալներ օրվա պահերի մասին, բայց չի պահպանվել պահերի և դրանց մասերի ամբողջական ցանկը: Պատճառն, անշուշտ, այն է, որ օրը ժամերի բաժանելուն անցնելուց հետո, դրանք դուրս են եկել գործածությունից, և միայն առանձին մատենագիրների գործերում այս կամ այն առիթով հիշատակվել են տարբեր պահերի անվանումները: Տարբեր աղբյուրներից քաղելով պահերի անվանումները՝ Ղ. Ալիշանը գրում է. պահերի «որոշ բաժանում և անուններն նշանակված չեն, մանավանդ որ շատ նման կամ մոտ նշանակությամբ բառեր՝ շփոթություն պատճառն. իբր կարծյոք կամ հավանելի համարիմք...»⁷⁵, և բերում է հետևյալ ցանկը:

Ցերեկային պահեր և դրանց մասերը.

Ա պահ.—Արշալույս, Այգ և Լուսաղէմ, Աղօթարան

Բ պահ.—Առաւօտ, Արևոյ ծայրք

Գ պահ.—Երեկոյ, Արևմուտք

Գիշերային պահեր և դրանց մասերը

Ա պահ.—Խաղաղական, Յայգ, Աղօտք գիշերոյ

Բ պահ.—Գիշեր, Հասարակ կամ Խոր գիշեր

Գ. պահ.—Հաւախօս

Ինչպես տեսնում ենք, ո՛չ պահերի անուններն են լրիվ և ո՛չ էլ դրանց մասերի. ցերեկվա համար ունենք շորս պահ, գիշերվա համար՝ երեք: Հայտնի չէ նաև, յուրաքանչյուր շաբթում բերված անունները նույնանիշ պահանուններ են, թե մեկը պահանուն, մյուսները՝ մասեր. եթե ընդունենք, որ մասերի անուններ են, ապա պակասները շատ են: Մի խոսքով, պահանունների և դրանց մասերի անվանումների տվյալ ցանկը խիստ պակասավոր է, ուստի և անհրաժեշտ է մատենագրական աղբյուրների, մասնավորապես տոմարական-տոմարագիտական չճարապարակված ձեռագրերի մանրակրկիտ հետազոտություն՝ պահանունների և դրանց մասերի անվանումների ցանկը լրացնելու և ճշգրտելու համար:

Ե. ՄՈՂՈՐԱԿՆԵՐԻ ԵՎ ԿԵՆԳԱՆԱԿԵՐՊՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

Հին Հայաստանում, ինչպես վերը տեսանք, աստղագիտությունը դարգացման բարձր մակարդակի էր հասել, իսկ դա նշանակում է, թե հին

⁷⁴ Բ. Ե. Քումանյան, *Նշված աշխ.*, էջ 46:

⁷⁵ Ղ. Ալիշան, *Հին հաւատք...*, էջ 145:

Հայաստանցիները բավականաչափ հարուստ գիտելիքներ են ունեցել երկնային մարմինների մասին և հասկանալի է, որ իրենց ճանաչած երկնային մարմիններին անվանումներ են տվել: Սեանի ավազանում գտնված՝ արեգակնային համակարգության մոդելը, որը թվագրվում է մ. թ. ա. X—IX դարերով, ներկայացնում է երկրակենտրոն համակարգը՝ երկիրը և 7 մոլորակները (ներառյալ արեգակը): Արդ, հինգերորդ և հետագա դարերի մատենագրության մեջ ավանդված՝ արեգակնային համակարգության վերաբերող հայկական անվանումներն էլ, ուրեմն, խոր հնադարից են գալիս և կարևոր են ոչ միայն աստղագիտական, այլև լեզվաբանական տեսակետից:

Այդ անվանումներն են.

Արեգ (Արեգակն)	Հրատ—Մարս
Երկիր	Արուեսակ, Գիշերավար, Լուսաբեր/Այգաբեր,
Լուսին	Այգաստղ (Լուսաստղ)—Վեներա
Լուսնթագ—Յուպիտեր	Երևակ—Սատուռն
	Փայլածու—Մերկուրի

Այս անվանումների ծագումն ու կազմությունն, ընդհանուր առմամբ, հայտնի են, բայց և այնպես, անհրաժեշտ ենք համարում առանձնապես կանգ առնել երկուսի վրա:

Լուսնթագ.— Հին և միջնադարյան մատենագրության մեջ բնութագրվում և բացատրվում է որպես «լուսակիր, լուսափայլ, լուսանշույլ» կամ «լուսնի թագ, լուսնին իբրև թագ զարդարող». առաջին դեպքում կապվում է լույս բառի հետ, երկրորդ դեպքում՝ լուսին-ի: Կարծում ենք, որ առաջին բացատրությունն է ճիշտ և բառի լուսն- բաղադրիչը համարում ենք լուսն «1. սպիտակ, սպիտակափայլ, սպիտակափառ, 2. աչքի սպիտակ փառ, белмо» բառը: Ըստ այսմ բառը, կազմության համաձայն, նշանակել է «լուսափայլ թագ»:

Գիշերավար.— Այս մոլորակը բազմաթիվ անվանումներ ունի, որոնք երկու խմբի են բաժանվում՝ 1. երեկոյան կամ գիշերվա հետ կապված անուններ (գիշերավար, Երեկոյան աստղ) և 2. առավոտի հետ կապված անուններ (Լուսաբեր, Այգաբեր, Այգաստղ, Լուսաստղ, Աստղ առաւօտու): Ընդհանուր անվանում է (գիշերվա կամ առավոտվա հետ չկապված) Արուսյակը, որ իրանական փոխառություն է (հմմտ. պահլ. arūs «սպիտակ»): Անունների երկու խմբերը բացատրվում են նրանով, որ Արուսյակը երեկոյան երկնակամարում ամենից շուտ երևացող «աստղն» է, իսկ առավոտյան էլ՝ բոլոր աստղերի մայր մտնելուց հետո դեռևս երևացող «աստղը»: Խոր հնադարում կարծել են, թե դրանք երկու տարբեր աստղեր են, և տարբեր անուններով էլ կոչել են: Գիշերավար, Լուսաբեր, Այգաբեր,

Լուսաստղ, Այգաստղ անվանումներից վերջին երկուսի ներքին ձևը բաղադրիչների հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական կապակցությունն է (Լուսոյ աստղ, Այգու աստղ), առաջին երեքինը՝ ուղիղ խնդիր-դերբայ կապակցությունը (գիշեր վարող, լույս բերող, այգ բերող): Լուսաբեր և Այգաբեր անվանումները թելադրում են, որ Գիշերավարն էլ պետք է նշանակած լիներ «գիշեր բերող»: Այդ իմաստը համարելով նախնականը, մենք գտնում ենք, որ երկրորդ բաղադրիչն է -աւօր ածանցի -աւօր տարբերակը. հայտնի է, որ -աւօր ածանցը ծագում է հ. ե. *bher- «բերել» արմատի օ-ով ձայնդարձից (*bhor), ըստ որում, բառասկզբի bh-ն դարձել է բառամիջում՝ ձայնավորից առաջ (լույս-ա-նի որ>լուսաւօր, նախապես՝ «Լուսաբեր» նշանակությամբ. հմմտ. լատիներեն lucifer): Կարծում ենք, որ գիշերավար բառի երկրորդ բաղադրիչն էլ հ. ե. նույն արմատի ստորին ձայնդարձի *bhլ՝ ձևից ծագած -աւօրն է: Այս ստուգաբանությանը հակասում է այն փաստը, որ հին մատենագրության մեջ գրվել է գիշերավար (վ փոխանակ ւ-ի), սակայն դրան կարելի է հետևյալ բացատրությունը տալ: Հինգերորդ դարում, երբ հայոց գրերն ստեղծվեցին, այդ բառի կազմության ժամանակից անցել էր առնվազն հազար տարի. նախնական -աւօր ածանցը դուրս էր եկել գործածությունից, մինչդեռ -վար բաղադրական հիմքը (վար-ել բայի արմատը) շատ կենսունակ էր (հմմտ. կառավար, ձիավար են), ուստի և այդ հնավանդ մեկ բառում էլ -աւօր բաղադրիչը կապեցին վար-ի հետ, ինչպես որ մենք էլ այժմ սովորաբար հասկանում ենք գիշեր-ա-վար—«գիշերը վարող»: Մեր վարկածը թելադրվում է Այգաբեր, Լուսաբեր անուններով և բացատրում է Գիշերավար բառը բառի հնագույն իմաստը:

Ընդհանուր առմամբ քննելով արեգակնային համակարգության մարմինների անվանումները, կարելի է հետևյալ ընդհանուր գծերով բնութագրել դրանք:

Բոլոր անվանումները, բացի Արուսյակ-ից, հայակազմ բառեր են: Սա ինքնին թելադրում է այն միտքը, որ մոլորակների անվանակոչությունը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ իրանական ազդեցությունը դեռևս ուժեղ չէր, այսինքն՝ մեր թ. ա. IX—VII դարերում: Այդ է ապացուցում նաև Լուսնթագ անվանումը, որի առաջին բաղադրիչի ու ձայնավորը շեշտափոխական հերթագայության չի ենթարկվել. դա պետք է համարել հնագույն իրողություն, որովհետև V դարից ավանդված լուսն-ով կազմված բաղադրություններում ունենք լսն- սերող հիմքը (օր. լսնանալ, լսնագոյն են): Վերջապես դրան իբրև ապացույց կարելի է բերել նաև Գիշերավար-ը, եթե մեր բացատրությունն ընդունելի համարվի:

Սակայն, եթե այդ բացատրությունն ընդունելի էլ չհամարվի, այնուամենայնիվ, Արուսյակ մոլորակի երկու անվանումները՝ Գիշերավար և Լուսաբեր, ինքնին հզոր կովան են՝ հաստատելու համար, որ, իրոք,

մուրրակների հայկական անվանումները խոր հնադարից են գալիս: Բանն այն է, որ Արուսյակ մուրրակի երկու անվանումները ուղղակի արտահայտությունն են այդ մուրրակի մասին մարդկանց ունեցած պատկերացման: Հայտնի է, որ Արուսյակը երեկոյան երկնակամարում ամենից շուտ երևացող «աստղն» է և առավոտյան էլ՝ ամենից ուշ աներևութացողը. հնադարյան մարդը, որ օրվա բոլորովին տարբեր պահերին երկնակամարում տեսնում էր պայծառորեն երևացող աստղը, կարծել է, թե դրանք տարբեր աստղեր են և համապատասխանորեն էլ տարբեր անուններ է տվել. երեկոյան երևացողը կոչել է Գիշերավար, այսինքն՝ գիշեր բերող, իսկ լուսաբացին երևացողը՝ Լուսաբեր, այսինքն՝ լույս բերող: Միայն այն ժամանակ, երբ հասել են այն գիտակցության, որ այդ «երկու աստղերը» իրականում մեկն են, երկու հակառիշ անվանումների փոխարեն տվել են մեկ ընդհանուր անվանում՝ Արուսյակ: Եվ քանի որ դա ավելի ուշ է տեղի ունեցել, քան երկու անունով կոչելը, ապա հասկանալի է, որ Գիշերավար և Լուսաբեր անվանումները շատ ավելի հին են, քան Արուսյակը: Եվ որովհետև, ինչպես ցույց ենք տվել, այդ անվանումը, իբրև իրանական փոխառություն, կարող էր հայերենի մեջ մտնել մ. թ. ա. VI—VII դարերում, ապա հասկանալի է, որ Գիշերավար և Լուսաբեր անվանումներն էլ մ. թ. ա. VII դարից էլ ավելի հին են: Սա էլ, իր հերթին, նշանակում է, թե մուրրակների անվանակոչումներն, առհասարակ, մ. թ. ա. VI դարից շուտ են տեղի ունեցել, նախապես բոլորն էլ՝ հայկական անվանումներ, իհարկե, հայերեն բառերի այն ժամանակվա (նախահինհայերենյան) ձևերով, որոնք ժամանակի ընթացքում տեղի ունեցած ձևափոխություններով հասել են մեզ ավանդած հինհայերենյան ձևերին:

Կարևոր է նշել նաև այն փաստը, որ մուրրակների հին հայկական անվանումները դիցարանական անուններ չեն, ինչպես հունա-հռոմեական և իրանական անվանումներն են (հմմտ. Լուսնիկա-Ցուպիտեր, պարսկ. Որմիզդ, Հրատ, Մարս—պարսկ. Բահրամ են), այլ սովորական բառեր, որոնք ներկայացնում, բնութագրում են մուրրակները որևէ օբյեկտիվ հատկանիշով (փայլածու «փայլ բերող» տվող», երևակ «երևացող», Հրատ (հուր- և ատ ածանց) «կրակոտ, հրոտ» և այլն): Սա նշանակում է, թե մուրրակների հինհայկական անվանումներն անկախ են ուրիշ ժողովուրդների, մասնավորապես հույների և հին իրանացիների անվանումներից, միանգամայն ինքնուրույն են և ցույց են տալիս, որ հին հայերն ինքնուրույն կերպով են հասել մուրրակների ճանաչմանն ու դրանց անվանակոչությանը:

Վերը, ավելյաց օրերի անվանումները քննելիս, տեսանք, որ դրանք գործածվել են նաև որպես մուրրակների անուններ: Ղ. Ալիշանը՝ բերելով դրանք մեր հիշածներին զուգահեռ, գտնում է, որ հենց դրանք են հնա-

գույնները, իսկ Երևակ, Արուսյակ, Փայլածու և այլն՝ նոր: Իր տեղում մենք ասել ենք, որ Լուծ, Եղջերու, Արտախուր և այլն, գործածվել են փոխաբերաբար և համեմատաբար ուշ շրջանում (6—7-րդ դարերից հետո) և, բացի դրանից, այդ գործածությունների մեջ էլ շատ անորոշ են (լուծ գործածվել է և՛ Փայլածուի և՛ Երևակի համար, Արտախուր՝ Լուսնիկա կամ Երևակի համար և այլն): Հետևաբար, դրանք մուրրակների հին անվանումները և նույնիսկ բուն աստղագիտական անվանումներն էլ չի կարելի համարել:

Մուրրակների անվանումներից բացի, հնության տեսակետից կարևոր են նաև կենդանաշրջանի համաստեղության անվանումները, որոնք հետևյալներն են.

- | | |
|-------------------|--------------|
| 1. Խոյ | 7. Կշիռ |
| 2. Ցուլ | 8. Կարիճ |
| 3. Երկաւոր/Եկաւոր | 9. Աղեղնաւոր |
| 4. Խեցզետին | 10. Այծեղջիր |
| 5. Առիւծ | 11. Զրհոս |
| 6. Կոյս | 12. Զուկն |

Այս անվանումները պահպանվել են մինչև այժմ էլ և գործածվում են աստղագիտական գրականության մեջ: Բացառություն է կազմում միայն Երկաւոր-ը, որը փոխարինվել է Երկվորյակներ նույնանիշով: Միջին դարերում ավելի սովորական է եկաւոր սխալ ձևը՝ Ե-ի անկումով: Այդ անկումը կամ սղումը հնչյունական պատմական փոփոխության որևէ օրենքի դրսևորումը չէ, այլ իմաստի մթագնման հետևանք. Երկաւոր, ինչպես և Երկաւորեակ, Երկաւորի բառերը գրաբարի համար էլ արդեն իրենց ձևով հնացած էին և փոխարինվել էին Երկուոր, Երկուորեակ, Երկուորի բառերով. Երկաւոր ձևը հին մատենագրության մեջ հազվադեպ գործածություն ունի, և այն էլ՝ մեծ մասամբ աստղագիտական-տոմարագիտական գրվածքներում: Սովորական գործածությունից դուրս գալով՝ իմաստն էլ մոռացվել է, որի հետևանքով էլ ժողովրդական ստուգաբանությամբ Երկ-«երկու» բաղադրիչը դարձել է եկ- կապվելով Եկաւոր, Եկուոր «եկվոր» բառի հետ: Իրականում Երկաւոր բառը, որ հնագույն (նախահինհայերենյան) շրջանի բաղադրություն է, կազմված Երկու «երկու» արմատից -աւոր/-ուր ածանցից, և բուն նշանակությունն է «զույգ», ապա՝ «զույգ ծնվածներից յուրաքանչյուրը, երկվորյակ»: Մեր բացատրության համար կարող է որպես ասպացույց ծառայել այն, որ Զրհոս-ի փոխարեն էլ միջնադարում հաճախ գործածվել են Զրահեղ, Զրաթափ «ջուր թափող», որովհետև Զրհոս-ը, ըստ երևույթին, չի գիտակցվել իբրև «ջուր հոսեցնող» թափող:

Կարին անվանման փոխարեն հին մատենագրության մեջ, տոմարագիտական գրվածքներում, գործածվել է կար «կարիճ», օրինակ՝ Շիրակա-

ցին գրում է. «Թ. Յաղագս կորին: Ութերորդ կենդանատեսակ է կորն. հաստատուն, տուն հրատի...»⁷⁶, թեև իր ուրիշ գրվածքներում գործածում է կարիճ անվանումը: Ըստ Հ. Աճառյանի (Արմ. 2, 643—644), այդ անվանումը սովորական կար «ծուռ, շեղ» բառն է, որ տարույի պատճառով գործածվել է «կարիճ» իմաստով՝ կորածն պոչը խորհրդանշելով: Հ. Աճառյանը, իբրև առանձին բառահոգված դնելով **Կար**, իբրև մատենագրական աղբյուր հիշում է միայն Շիրակացու գրվածքը և փակագծում գրում. «բայց այս մասերը հետին հավելված են թվում»: Դժվար է համաձայնել այս ենթադրության հետ, որովհետև **Կար** «կարիճ» անվանումը գործածված է Շիրակացու մի շարք գործերի մեջ, բայց որում, նույնիսկ միևնույն գրվածքի մեջ էլ մերթ գործածվել է **Կարին**, մերթ՝ **Կար**: Այսպես, օրինակ, «Անանիայի Համարողի վասն ընթացից Արեգական՝ բոս կենդանատեսակացն և է գօտեացն, զոր կատարէ ի տունչեան յաւուրս ՅԿԾ և ժամս Գ» գրվածքում կարդում ենք. «Մտանէ Արեգակն ի կարիճն...», իսկ հետո՝ «իգական սոցա մնացուածքն՝ ցուլն, խեցգետին, կուսանակն, կորն, այծեղջիրն, ձկունքն» և հաջորդ նախադասության մեջ՝ «իսկ զուգաթիւքն սոցա են հաստատունք՝ ցուլն և առիժն, կարիճն, ջրահեղն»⁷⁷: Այս փաստերի հիման վրա մենք ենթադրում ենք, որ Շիրակացու ժամանակ այն միջավայրում, որտեղ նա ապրել և գործել է, կարին բառի փոխարեն խոսակցական լեզվում գործածական է եղել **կար**, և թեև ինքը՝ Շիրակացին իր գրվածքներում գրական ավանդույթամբ սովորաբար գրել է **կարին**, բայց երբեմն էլ խոսակցական լեզվի բառն է թափանցել տեքստի մեջ, իբրև ավելի կենսունակ ու հարազատ բառ:

Քննության առնելով կենդանաշրջանի համաստեղությունների (կենդանակերպների) անվանումները՝ հանգում ենք հետևյալ ընդհանուր եզրակացություններին:

1. Տասներկու անվանումներից 8-ը բնիկ հայերեն բառեր են կամ դրանցից կազմված բաղադրություններ (ցուլ, երկ-ա-ւոր, խեց-գետին, առիժ, կարիճ⁷⁸, այծ-եղջիր, ջր-հոս, ձուկն), կշիռ ասուրական (ասորեստանյան) փոխառություն է, խոյ, կոյս, աղեղն ստուգաբանված շեն (ծագումը հայտնի չէ), շկա ոչ մի իրանական, ասորական կամ հունական փոխառություն: Սրանից ինքնին բխում է այն, որ կենդանակերպների անվանակոչությունը տեղի է ունեցել իրանական աղբյուրությունների սկզբնավորումից առաջ, այսինքն՝ նախքան մ. թ. VII դարը: Այս եզրակացություն

հետևությունն ապացուցվում է մեր քննած մյուս, առանձնապես ամիսներին, անվանումների համակարգի քննության արդյունքներով: Ինչպես վերը տեսանք, 12 անվանումներից (չհաշվելով ավելաց-ը) 7-ը իրանական են՝ պատրաստի ամսանուններ կամ սովորական բառեր, որոնք ամսանուն են դարձել, մինչդեռ նույնքան համաստեղությունների անվանումներից և ոչ մեկը իրանական փոխառություն չէ, իսկ դա նշանակում է, թե այդ անվանումները տրվել են իրանական փոխառությունների ներթափանցումից առաջ:

2. Երբ տարբեր ժողովուրդների լեզուներով կենդանակերպներին տրված անունները համեմատում ենք միմյանց հետ, ապա տեսնում ենք, որ դրանք ճշտորեն համապատասխանում են միմյանց՝ իրենց բառային իմաստներով, օրինակ հայերեն խոյ, հունարեն κριός, լատիներեն aries, ռուսերեն овен, հայ. ցուլ, հուն. ταύρος, լատ. taurus, ռուս. телец, հայ. երկաւոր, հուն. διδυρος, լատ. gemini, ռուս. близнецы, այդպես և՛ մյուսները: Կարելի էր կարծել, թե բոլորի աղբյուրը հունարենն է, սակայն դա ճիշտ կլիներ լատիներենի և նոր եվրոպական լեզուների նկատմամբ: Ինչ վերաբերում է հայերենին, հին (նաև միջին և նոր) պարսկերենին, ապա հունարեն անվանումների թարգմանությունը համարել չի կարելի, ապա հունարեն անվանումների թարգմանությունը համարել և ուրիշ հին լեզուների համար ենթադրել մի ավելի հին աղբյուր, այսինքն՝ ընդունել, որ մի ավելի հին ժողովրդի անվանումների թարգմանությունն են միմյանցից անկախ: Այս հարցի որոշակի պատասխանը գտնում ենք Անանիա Շիրակացու «Յաղագս կենդանատեսակաց» գրվածքում: «Խումբ աստեղատանցդ, — գրում է Շիրակացին, — որ անուանեալ կոչին կենդանատեսակք, եթե յորո՞ց, և զինչ իւրաքանչիւր պատճառք անուանցդ՝ գործ աւելի համարիմ պատմել, բայց վասն զի ոչ այլազգ զորոշմունս նոցա կարեմ առնել, և զայստարարութիւնս հարկաւորիմ զնոյն անուանս յիշել՝ զոր յետ Քաղ-գեացուցն կոչեն Յոյնք, Հայք, Պարսք»⁷⁹: Ինչպես տեսնում ենք, Շիրակացին պարզորոշ կերպով ասում է, թե նախ քաղղեացիներն են անվանակոչել կենդանաշրջանի համաստեղությունները, որոնցից հետո միայն հույները, հայերը, պարսիկները, և դա միանգամայն ճիշտ է: Այսպես. աստղագիտության պատմությունն ուսումնասիրող շատ աստղագետներ (Կ. Ֆլամարիոն, Ա. Բերրի, Ու. Օլկոտ, Վ. Ռաստվսկայա և այլք)՝ հենվելով որոշակի տվյալների վրա, այն եզրակացությունն են հանգել, որ «համաստեղություններին կենդանիների անուններ տալու հայերնիքը հավանաբար եղել է Փոքր Ասիան և Հայաստանը»⁸⁰: Նույն կարծիքն են պաշտպանում նաև Բ. Թումանյանն ու Հ. Մնացականյանը⁸¹: Հ. Բաղալյանը հիշում է

⁷⁶ Եր., էջ 329:

⁷⁷ Նույն տեղում, էջ 316, 330:

⁷⁸ Հ. Աճառյանը գտնում է, որ կարին փոքրասիական փոխառություն է: Մենք ստուգաբանել ենք իբրև հնգվորական ծագումով բառ և վստահ ենք մեր ստուգաբանության ստուգությանը:

⁷⁹ Եր., էջ 323:

⁸⁰ Հ. Ս. Բաղալյան, նշված աշխ., էջ 61:

⁸¹ Բ. Թումանյան, Հ. Մնացականյան, նշված աշխ., էջ 13—18:

նաև հետևյալը. «Չափազանց հետաքրքրական է այն փաստը, որ եգիպտացիների հնագույն հուշարձանների վրա հայտնաբերված կենդանակերպի տասներկու նշանների հիման վրա համոզվել են, որ աստղերի մասին իրենց ունեցած տեղեկությունները քաղել են քաղղեացիներից»⁸²: Ի դեպ, Ղ. Ալիշանն էլ, քննություն անելով հին հայկական հեթանոսական կրոնը և հատկապես երկնային լուսատուների պաշտամունքը⁸³, գտնում է, որ դա քաղղեական ազդեցության հետևանք է, այլ կերպ ասած, ընդունում է, որ իրենց աստղագիտական պատկերացումներով ու գիտելիքներով հայերն անմիջականորեն կապված են եղել քաղղեացիների հետ: Ի մի բերելով այս ամենը, գտնում ենք, որ կենդանաշրջանի 12 համաստեղությունների անվանումները գալիս են քաղղեացիներից (աքքաղներից) և այդ անվանումներն են, որ թարգմանվել են հայերեն, հունարեն, հին պարսկերեն և այլ լեզուներով:

3. Տասներկու անվանումներից մեկը՝ երկուոր-ը, ինչպես վերը ցույց ենք տվել, նախահինհայերենյան շրջանի բաղադրություն է, որը հին հայերենում վերափոխվել է և ստացել երկուորի՝ ձևը, որ նշանակում է «1. զույգ, 2. երկվորյակ, 3. ամորձիք»: Սա նույնպես կարևոր փաստ է 12 կենդանակերպների անվանակոչության վաղնջականությունը հաստատելու համար:

Այս բոլորը մեզ հիմք են տալիս ընդունելու, որ կենդանաշրջանի (Ձողիակոսի) 12 համաստեղությունների անվանակոչությունը տեղի է ունեցել նախքան մ. թ. ա. VII դարը, հավանաբար առաջին հազարամյակի սկզբներում, եթե ոչ ավելի վաղ:

2. ԶԱՏԻԿ ԵՎ ԶԱՏԿԱՑԱՆԿԵՐ. ԱՆԴՐԵԱՍԻ ԶԱՏԿԱՑԱՆԿԸ

Զատիկը քրիստոնեական եկեղեցու զխավոր տոներից մեկն է, որ նվիրված է Քրիստոսի «չարչարանքների», «խաչելի թյան» ու «հարություն» հիշատակին: Այդ մասին Աստվածաշնչում պատմվում է հետևյալը. «Եւ խօսեցաւ տէր ընդ Մովսիսի և ընդ Ահարոնի յերկրին Եգիպտացոց, և ասէ. Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին եղիցի ձեզ յամիսս տարույ: Խօսեաց ընդ ամենայն ժողովրեդան որդոցն Իսրայելի և ասացես. Ի տասներորդում ամսեանս այսորիկ առցեն իւրեանց իւրաքանչիւր ոչխար ըստ տունս ազգաց իւրեանց... և եղիցի ձեզ պահել մինչև ի շորս և ի տասն արուր ամսոյս այսորիկ և զենցեն զնա ամենայն բազմութիւն ժողովրդեան որդոցն Իսրայելի ընդ երեկս... Եւ եղիցի ձեզ արիւնդ այդ ի յիշատակ, և տօնեցէք զդա՝ տօն տեառն յազգս ձեր. օրէն յաւիտեական տօնեցէք զդա» (Ելք, ԺԲ, 1—3, 6, 14) և ասպա՝ «Յառաջնում ամսեանն ի տասն և ի շորս օրն ամսոյն ի մեջ երեկորեացն Զատիկ տեառն» (Ղևտական, ԻԳ, 5): Այսպիսով, Աստվածաշնչում արդեն սահմանված է ոչ միայն զատիկ տոնը, այլև այդ տոնի օրը՝ առաջին ամսվա 14-րդ օրը: Հայտնի է, սակայն, որ զարնանային այդ տոնը շատ ավելի հին ժամանակներից է գալիս: Դեռևս մ. թ. ա. III—II հազարամյակներում Արաբիայի քոչվոր հրեաները տոնել են զարնանամուտի տոնը. դա ըստ էության աստծուն զոհաբերութեամբ ողորկելու տոն էր անասնապահութեամբ զբաղվող վաշկատուն ցեղերի համար՝ անասունների ծինն սկսվելու օրերին: Հետագայում, նստակյաց երկրագործության անցնելով՝ հրեաներն այդ տոնակատարությունը շարունակեցին՝ վերափոխադրելով այն և դարձնելով հնձի սկսվելուն նվիրված տոն: Դա, ըստ բովանդակության, մեռնող և հարություն առնող բնության պաշտամունքն էր, որ տարբեր հին ժողովուրդներ մարմնավորել են համապատասխան աստվածությունների կերպարներով (Ադոնիս, Օզիրիս, Դիոնիս, Արա Գեղեցիկ և այլն): Այդ տոնի նախնական բովանդակությունն է արտահայտում հրեական pesach (պեսախ) «Զատիկ» բառը (հայերեն պասեք կամ պասքայ, որ փոխառվել է հունարենի միջնորդությամբ), որի նախնական նշանակությունն է եղել «զթություն՝ աղերսելու զոհ»: Մ. թ. ա. VII դարում կրկին վերափոխադրվելով այդ տոնը՝ հրեաներն այն կապեցին Եգիպտոսից դուրս գալու պատմական իրադարձության հետ և տոնի սահմանումն էլ

⁸² Չ. Ս. Բաղալյան, էջ 62:

⁸³ Ղ. Ալիշան, Հին հատար..., էջ 80—83:

նեցող ժողովուրդներին՝ զատկի օրը (իսկ դա նշանակում էր նաև Նիսանի 1-ը և 14-ը) որոշելու համար դիմել հրեական լուսնաարեգակնային տոմարին: Այս նպատակին էլ, ահա, ծառայում էին 19-ամյա, 76-ամյա և 95-ամյա աղյուսակները: Աղյուսակներին էությունը բացատրելու համար իբրև օրինակ անենք մի կամայական տարեթիվ՝ 300 և գտնենք զատկի օրը հոռմեական (հուլյան) և հայկական տոմարներով: Օգտվելով Բ. Քումանյանի կազմած աղյուսակից¹, իմանում ենք, որ 300 թվականին մարտյան նորալուսինը եղել է մարտի 8-ին, որից բխում է Նիսանի 1 = մարտի 9-ը համապատասխանությունը, քանի որ հրեաների նորալուսինը, ինչպես վերը բացատրել ենք, իրական նորալուսինի 2-րդ օրն է: Սակայն իրականում հրեաների Նիսանի 1-ը 300 թվականին եղել է ոչ թե մարտի 9-ը, այլ 10-ը, որ բացատրվում է հետևյալ ձևով: Հրեաների օրն սկսվում էր երեկոյան ժ. 18-ին. քանի որ նորալուսինը երկնակամարում երևում է իրիկնապահին (ժ. 18-ից հետո), ապա հրեական օրվա 18-րդ ժամն ընկնում է հաջորդ օրվան՝ մարտի 10-ին, ուստի և Նիսանի 1-ն էլ համապատասխանում է այդ օրվան. մարտի 10-ից (ժ. 18-ից) առաջ գնալով 14 օր, կստանանք մարտի 23-ի ժ. 18-ից մինչև մարտի 24-ի ժ. 18-ը: Ուրեմն, հրեական Նիսանի 14-ը (լիալուսինը) 300 թվականին համընկել է հուլյան տոմարի մարտի 24-ին, որ հաստատվում է նաև Գինցելի զատկի տոների աղյուսակով²: Այժմ որոշենք զատկի օրը հայկական շարժական օրացույցով. 300 թվականին մեր Նավասարդի 1-ը եղել է սեպտեմբերի 12-ին, որից ետ գնալով մինչև մարտը, կունենանք մեհեկանի 1 = մարտի 11 համապատասխանությունը, որ նշանակում է, թե մարտի 24-ն էլ եղել է մեհեկանի 14-ը: Հետևաբար, զատիկը 300 թվականին եղել է հրեական Նիսանի 14-ին, հուլյան մարտի 24-ին և հայոց մեհեկանի 14-ին: Ինչպես տեսնում ենք, թե՛ հայկական և թե՛ հուլյան տոմարով զատկի օրը գտնելու համար որպես ելակետ ընդունվել են հրեական Նիսանի 1 և Նիսանի 14 ամսաթվերը, և հենց տարբեր տարիների այդ ամսաթվերի՝ զանազան ժողովուրդների ամիսներին ու ամսաթվերին համապատասխանությունն էլ գտնելու համար կազմվել են 19-ամյա (76-ամյա, 95-ամյա) աղյուսակները, այնքան ժամանակ, քանի դեռ քրիստոնեական եկեղեցին զատիկը տոնել է հրեաների հետ միասին: Սակայն 325 թվականին քրիստոնեական եկեղեցիների Նիկիայի տիեզերական ժողովը որոշում ընդունեց բաժանվել հրեաներից և զատիկը տոնել այնպիսի օր, որը շհամընկնի հրեական զատկի օրվան: Հրեաներից զատորոշվելու և զատիկը ուրիշ օր տոնելու պատճառն այն էր, որ հրեաները, ինչպես տե-

անք, զատկի տոնը կապում էին Եգիպտոսից դուրս գալու հետ և դա էլ վերագրում էին իրենց Եհովա աստծուն, մինչդեռ քրիստոնեական եկեղեցին կապեց Հիսուս Քրիստոսի հարություն անելու հետ: Հրեաները Եգիպտոսից ազատագրվելու օրը համարում էին Նիսանի 14-ը (ըստ Աստվածաշնչի՝ շաբաթ օր) և զատկի օրն էին սահմանել հենց այդ ամսաթիվը, անկախ այն բանից, թե շաբաթվա որ օրն է լինում. եթե Նիսանի 14-ը տվյալ տարում շաբաթ օրն էր ընկնում, ապա դա զատկի ճշգրիտ օրն էր, որ և տոնում էին, իսկ եթե որևէ ուրիշ օրի էր զուգահեռվում, ասենք՝ ուրբաթ, ապա այդ օրը շաբաթ էին անվանում և զատիկ անում: Քրիստոնեական եկեղեցու համար դա ընդունելի չէր. Աստվածաշնչում պատմվում է, որ Քրիստոսը հարություն է առել Նիսանի 14-ին, շաբաթ լույս կիրակի օրվա գիշերը³, իսկ դա նշանակում է, թե զատկի օրը պետք է անպայման կիրակի լիներ: Սա որպես ելակետ ընդունելով՝ Նիկիայի ժողովը որոշում ընդունեց զատիկը տոնել՝

1. Գարնանային գիշերահավասարից հետո,
2. Գարնանային գիշերահավասարին հաջորդող լիալուսնից հետո, որ սովորաբար կոչում են զատկական կամ ավագ լրում:
3. Ավագ լրումին հաջորդող կիրակի օրը. եթե ավագ լրումն ընկնում է կիրակի օր, ապա զատիկը փոխադրվում է հաջորդ կիրակի օրը:

Գարնանային գիշերահավասարի կայուն օր համարվեց մարտի 21-ը: Սովորաբար ասվում է, թե այդ օրը սահմանվել է Նիկիայի ժողովի կողմից⁴, սակայն Ն. Իդելսոնն այդ մասին գրում է հետևյալը. «Ավանդաբար 325 թվականի Նիկիական ժողովին վերագրվող որոշմամբ (որը, սակայն, այդ ժողովում առհասարակ կայացված չի եղել) որպես գարնանային գիշերահավասարի օր է սահմանվել մարտի 21-ը՝ հուլյան տոմարով⁵: Փակագծում գրվածը միանգամայն ճիշտ է. գիշերահավասարի օր Նիկիայի ժողովում չի սահմանվել, և այն, որ մարտի 21-ն ընդունվել է որպես գիշերահավասարի կայուն օր, պայմանավորվել է բոլորովին այլ հանգամանքով, որի մասին կխոսենք ստորև:

Նիկիայի տիեզերական ժողովի որոշումը, այժմյան տերմինաբանությամբ արտահայտված, իրագործվեց կամ իրականացվեց Անդրեաս Բյու-

1 Բ. Ս. Քումանյան, Տոմարի պատմություն, էջ 217:

2 Տե՛ս Գինցելի նշված աշխատության 3-րդ հատորը, էջ 411 (նույնը նաև՝ Հ. Ս. Բաղալյան, Օրացույցի պատմություն, էջ 436):

3 «Շաբաթ օրուայ երեկոյան, երբ միաշաբաթ լուսանում էր, Մարիամ Մազզադե-ապցին և միւս Մարիամը եկան գերեզմանը տեսնելու: Եւ ահա մեծ երկրաշարժ եղաւ, որովհետեւ Տիրոջ հրեշտակը երկնքից իջնելով՝ մօտեցաւ, զոնից վճիռ մի կողմ գլորեց ու նստեց նրա վրայ: Նրա տեսքը փայլակի նման էր, ու նրա զգեստը՝ սպիտակ, ինչպէս ձիւնը: ...Հրեշտակը խօսեց ու կանանց ասաց. «Դուք մի վախենաք, դիտեմ որ փնտում էր Յիսուսին, որ խաշուեց. այստեղ չէ նա, քանի որ յարութիւն առաւ» (Աւետարան ըստ Մատթէոսի, ԻԸ, 1-6):

4 Բ. Ս. Քումանյան, նշված աշխ., էջ 24: Հ. Ս. Բաղալյան, նշված աշխ., էջ 162:

5 Н. Иделсон, նշված աշխ., էջ 77:

դանդաջու կողմից, որը կազմեց երկուհարյուրամյա զատկացույց, ինչպես ինքն է գրում՝ անտիոքյան թվականության 401—600 (= մ. թ. 353—552) թվականների համար: Այդ աշխատության բնագիրը չի պահպանվել, և մեզ հասած հայերեն թարգմանությունը, այդ նկատառումով, մեծ արժեք է ստանում, որպես Անդրեասի հիշյալ աշխատության տեքստը ներկայացնող միակ վավերական թարգմանություն, այն էլ՝ V դարի առաջին կեսում կատարված, և դրանով իսկ ձեռք բերում սկզբնաղբյուրի նշանակություն:

Անդրեաս Բյուզանդացին, որ հաճախ անվանվում է Անդրեաս իմաստասեր, իսկ երբեմն էլ՝ մեծարվում «սուրբ» կամ «մեծ» հորոհրջումով, ինչպես հայ հին մատենագրության, այնպես էլ XIX—XX դարերի հայագիտական գրականության մեջ հայտնի է որպես տոմարագիտական և իմաստասիրական աշխատությունների հեղինակ: Ինչպես ցույց են տալիս հայագետները, նրա աշխատություններից օգտվել են հայ տոմարագիրները, կազմել նրա աշխատությունների մեկնություններ և այլն: Հաստատվել է նաև, որ հայերը նրա տոնացույցն օգտագործել են, իսկ որ ավելի կարևոր է՝ նրա այդ աշխատության վրա են հիմնված եղել նաև հայկական Մեծ թվականին իբրև հիմք ծառայած տոմարական հաշվումները: Աստղագետ և տոմարագետ պրոֆ. Բ. Ե. Քումանյանը 1965 թ. ցույց տվեց⁶, որ Անդրեասի 200-ամյա աղյուսակներն են ընկած եղել հայկական տոմարական հաշվումների հիմքում: Միևնույն ժամանակ նա

ցույց է տվել, որ հետագայում հայ տոմարագետները իբրև հիմք են ընդունել 428 թ. ամսաբեր, որ համապատասխանում էր օգոստոսի 11-ին: Այս բոլորը և շատ ուրիշ տվյալներ վկայում են, որ Անդրեաս Բյուզանդացին հայ իրականության մեջ լավ ճանաչված տոմարագետի համարվ է ունեցել և իր աշխատություններով որոշակի դեր է կատարել հայ տոմարագիտական մտքի զարգացման պատմության մեջ: Վերջապես դա է ապացուցում նաև այն, որ նույն հեղինակի 200-ամյա տոնացույցը ոչ միայն օգտագործվել է հայերի կողմից, այլև թարգմանվել է հայերեն մեր դարիցիցի սկզբնավորման իսկ շրջանում, հինգերորդ դարի առաջին քառորդում:

Անդրեասի այդ աշխատանքի հայերեն թարգմանությունը պահպանվել է Մատենադարանի № 1973 ձեռագրում, մի փոքրիկ հատված էլ՝ № 1999-ում: Առաջին ձեռագրի հիման վրա «Անդրէաս մեծի վասն պասեքին յետ և յառաջ խաղալոյ և վասն դրութեան երկերիւրեկին» խորագրով ամբողջ հատվածը առաջին անգամ հրատարակել է Ա. Գ. Աբրահամյանը՝ «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում» գիտական աշխատությունների ժողովածուի № 4-ում (1967): Հրատարակումն ունի ընդարձակ առաջաբան և ռուսերեն ամփոփում: Առաջաբանի մեջ հրատարակողը հանգամանորեն խոսում է Անդրեասի «Պասեքի» կազմության հետ կապված զանազան խնդիրների, տոմարագիտական մի շարք հարցերի, հայերեն թարգմանությամբ մեզ հասած Անդրեասի աշխատությունների մասին, ներկայացնում դրանց համառոտ բնութագրությունն ու այն ձեռագրերի հակիրճ նկարագրությունը, որոնց մեջ պահպանվել են դրանք: Այդ ձեռագրերից, բնականաբար, առանձին ուշադրության առարկա է դարձել № 1973-ը, որից և առել է հրատարակվող տեքստը: Նույն առաջաբանի մեջ հեղինակը փորձում է որոշել, թե երբ է Անդրեասի այդ աշխատությունը հայերեն թարգմանվել: Հենվելով թարգմանության մեջ հուլյան տոմարի կամ եգիպտական տոմարի ամիսների հետ հայկական շարժական ամիսների ղուգադրությունների վրա, նա գտնում է, որ թարգմանությունը պետք է կատարված լինի մ. թ. IV դարում, սակայն հաշվի առնելով նաև տեքստի մեջ եղած ընդմիջարկությունը, հանդում է հետևյալ եզրակացություն. «Եթե մենք նույնիսկ ժխտելու լինենք քննարկվող բնագրի հայերեն թարգմանված լինելու փաստը IV դարում, այն ղեպքում անվիճելի կլինի, որ ներկա տոմարական տեքստը թարգմանվել է V դարի սկզբներում և, կարելի է ասել, որ այն Մաշտոցյան նվիրական դպրոցի առաջին թարգմանություններից մեկն է»⁸:

⁷ Ա. Գ. Աբրահամյան, Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում», 1967, № 4, էջ 58—82:

⁸ Նույն տեղում, էջ 73—74:

⁶ Բ. Ե. Քումանյան, Հայոց մեծ և փոքր թվականների տարեկզբի հարցի շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1965, № 6, էջ 79—85: Ինչպես Բ. Ե. Քումանյանի այս և ուրիշ աշխատություններում, այնպես էլ տոմարագիտության հարցերով զբաղվող մեր մյուս գիտնականների աշխատություններում բնորոշվում է, որ 353 թ. հայոց նավասարգի 1-ը համապատասխանել է օգոստոսի 29-ին, իսկ 428 թ.՝ օգոստոսի 11-ին: Բանասիրական գիտությունների թեկնածու է. Պիլագյանը մեզ ցույց տվեց Բ. Քումանյանի և Կ. Ղազարյանի «Հայոց և հռոմեական տոմարների զուգակցությունը 8—552 թթ. համար» աղյուսակը («Բաները Երևանի համալսարանի», 1977, № 3, էջ 39—62), որի մեջ 353 թ. նավասարգի 1-ը համապատասխանում է օգոստոսի 30-ին: Քանի որ 428 թվականի օգոստոսի 11—նավասարգի 1 համապատասխանությունը ստույգ է և ոչ մի կասկած չի հարուցում, ապա պետք է վերանայլի մինչև այժմ ընդունված կարծիքը 353 թ. նավասարգի 1—օգոստոսի 29 համապատասխանության մասին: Իբրև ապացույց այն բանի, որ իսկապես 353 թ. օգոստոսի 30-ն է համապատասխանել նավասարգի 1-ին, կարելի է բերել հետևյալ տվյալները: Հայոց մեծ թվականի համար ընդունվել է նավասարգի 1—հուլիսի 11 համապատասխանությունը՝ 552 թ. համար (ավելի ստույգ՝ 552—555 թթ.). հուլիսի

$11 + 50 \left(\frac{552 - 352}{4} = 50 \text{ նահանջ տարի} \right)$ ստանում ենք օգոստոսի 30: 353-ին զումարած 1460 = 1813 թ., իսկ այդ թվականին իբրև նավասարգի 1-ը համընկել է օգոստոսի 30-ին: Ուրախ ենք, որ պրոֆ. Բ. Ե. Քումանյանն ինքն է ճշտումը կատարել. դա ճշմարտության հետամուտ գիտնականի զովելի վարքագիծն է, որից շատերը սովորելու բան ունեն:

Անդրեասի աշխատության հայերեն թարգմանությանն անդրադարձել ենք նաև մենք, մեր «Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին» աշխատության մեջ⁹, թարգմանության ժամանակը պարզելու նպատակով: Բնականաբար, այդ խնդրի քննության համար մենք հիմք ենք ընդունել Ա. Աբրահամյանի հրատարակած տեքստը, բայց, ինչպես գրել ենք 129—130 էջերի տողատակի ծանոթագրության մեջ, նկատի ունենալով այդ տեքստից իր՝ Ա. Աբրահամյանի աշխատություններում բերված հատվածի և հրատարակված տեքստի անհամապատասխանությունները, ստիպված ենք եղել դիմել ձեռագրին՝ պարզելու համար, թե ո՞րն է ճշգրիտը՝ Ա. Աբրահամյանի մեջբերումը, թե՞ հրատարակվածը՝ ձեռագրի համեմատությամբ: Ձեռագրի համեմատությունը տպագրվածի հետ պարզեց, որ հրատարակված տեքստի մեջ սպրդել են բազմաթիվ վրիպումներ, որոնց մի մասը լեզվական տեսակետից կարևոր նշանակություն ունի: Այս հանգամանքը մեզ թելադրեց ամբողջությամբ և բացարձակ ճշգրտությամբ արտագրել № 1973 ձեռագրի 251ա—255բ էջերը՝ ունենալու համար տեքստի ստույգ պատճենը: Միևնույն ժամանակ մենք ծանոթացանք № 1999 ձեռագրի «Խոսք Անդրէասի իմաստասիրի վասն զատկաց» հատվածին: Երկու ձեռագրերի թեթևակի համեմատությունից իսկ մեր մեջ ծագեցին որոշ մտքեր, որոնց ճշտման ու հաստատման համար անհրաժեշտ էր հատուկ ուսումնասիրություն կատարել, բայց քանի որ դա անմիջականորեն չէր կապվում մեր հիշյալ աշխատության բովանդակության հետ, ուստի և ժամանակավորապես հետաձգեցինք այդ նպատակի իրագործումը: Ունենալով ձեռագրերի ճշգրիտ արտագրությունը, ապա և ստանալով դրանց լուսապատճենները¹⁰, ձեռնարկեցինք մեր նպատակադրած հետազոտությանը, որի արդյունքները, երկու ձեռագրերի համապատասխան հատվածների քննական տեքստի հետ, հրատարակեցինք համալսարանի «Բանբերի» 1979 թ. № 2-ում¹¹:

Ինչպես ասվեց, Անդրեասի աշխատության հայերեն թարգմանությունը պահպանվել է Մատենադարանի երկու ձեռագրերում:

⁹ Է. Բ. Աղայան, Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Եր., 1977, էջ 122—145:

¹⁰ Ձեռագրերի մեզ հետաքրքրող էջերի լուսապատճենները սիրալիք կերպով մեզ տրամադրեց Մատենադարանի փոխնսօրեն Բ. Չուգասզյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

¹¹ Է. Բ. Աղայան, Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը և նրա հայերեն թարգմանությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, № 2, էջ 122—139: Հսկառակ մեր ջանքերի, բնագրի այդ տպագրությունն էլ սխալաշատ է դուրս եկել, որ և մեզ հարկադրել է վրիպակների ցանկ կազմել և հրատարակել «Բանբերի» նույն թվականի № 3-ում:

1. Ձեռագիր № 1973. Ժողովածու է. մեզ հետաքրքրող հատվածը գրավում է 251ա—255բ էջերը. հատվածը վերնագրված է. «Անդրէասայ մեծի վասն սրբոյ պասեքին յետ և յառաջ խաղալոյ և վասն գրութեան երկերիւրեկին»: Ժողովածուն ընդօրինակվել է Հովհաննես և Գրիգոր գրիչների կողմից. ընդօրինակությունն ավարտվել է 1342 թ.: Ժողովածուի թերթերի թիվն է՝ 327, թուղթը՝ 17,5×17,2, տեքստը՝ միասյուն, բոլորգիր, էջում 21—27 տող: Մեզ հետաքրքրող հատվածը կազմում է 136 տող: Այս ձեռագրի տեքստը կոչում ենք A տարբերակ:

2. Ձեռագիր № 1999. նույնպես ժողովածու է, ընդօրինակվել է XIII դարում, ընդօրինակողներն են՝ Գրիգոր (°), Ստեփաննոս, Կարապետ: Թերթերի թիվն է՝ 277, թուղթը՝ 15,5×12, միասյուն, երկաթագիր, էջում՝ 20—21 տող: Մեզ հետաքրքրող հատվածի վերնագիրն է. «Խոսք Անդրէասի իմաստասիրի վասն զատկաց»: Գրավում է էջ 18ա-ից (15 տող) մինչև էջ 20ա (2 տող), ընդամենը՝ 80 տող: Անվանում ենք B տարբերակ:

Ուսումնասիրությունը և երկու ձեռագրերի համեմատությունը դուրացնելու նպատակով № 1973 ձեռագրի տեքստը բաժանել ենք երեք հատվածների:

Երկու ձեռագրերի համեմատությունը ցույց տվեց, որ 1999 ձեռագրի «Խոսք Անդրէասի իմաստասիրի վասն զատկաց»-ը ներկայացնում է A տարբերակի երկրորդ հատվածի մասը, բացի առաջին 11 տողերից և վերջին՝ երրորդ հատվածից, ըստ որում այս հատվածն էլ ներկայացնում է հեղինակի (Անդրեասի) հիշատակագրությունը և 17 կանոններից մեկի (Գ-ի) ազատ վերապատումը: Այս ձեռագրի համապատասխան տեղերը ստորև ներկայացված տեքստում բերվել են աչ կողմի սյունակում: Երկու տարբերակների համեմատությունը պարզորեն ցույց է տալիս, որ երկուսն էլ ծագում են մեկ Նախնական աղբյուրից, թեև ձեռագրերը արտագրվել են տարբեր ժամանակներում և, ամենայն հավանականությամբ, ոչ միևնույն ձեռագրից: Ամենից հավանականն է այն, որ մեկ նախավոր օրինակից կազմվել են երկու տարբերակներ, ապա դրանցից կատարված ընդօրինակություններից էլ արտագրվել մեզ հետաքրքրող երկու ձեռագրերը: Նախնական աղբյուրի նույնականությունն ապացուցվում է երկու տարբերակների զուգադրված հատվածների նույնականությամբ, բացի B տարբերակի 1—11 տողերից, որի մասին խոսք կլինի ստորև:

Չնայած զուգադրվող հատվածների ընդհանուր առմամբ նույնական լինելուն, կան նաև որոշ տարբերություններ, որոնք քննության կառնվեն իր տեղում: Այստեղ կարևոր է ասել, որ B տարբերակը հնարավորություն է տալիս ուղղելու A տարբերակի որոշ հատվածներ: Այդ ուղղումները նշված են հրատարակվող տեքստի ծանոթագրություններում:

է ընկնում հուլյան տոմարով սահմանված կայուն գիշերահավասարի օրվանից՝ մարտի 21-ից. թվաբանական պարզ հաշվարկը հետևյալն է.

$$\begin{aligned} & \text{հուլյան տարվա } 365,25 \text{ օրը} \times 400 = 146100 \text{ օրվա} \\ & \text{արևադարձ. տարվա } 365,2422 + 400 = 146096,88 \text{ օր} \end{aligned}$$

տարբերությունը 3,12 օր

Ըստ այսմ, եթե 353 թվականին գարնանային գիշերահավասարը եղել է մարտի 21-ին, ապա՝ 753 թվականին փրականում եղել է 3,12 օր առաջ ընդունված կայուն օրվանից՝ մարտի 21-ից, 1153 թվականին՝ 6,24 օրով առաջ, 1553 թվականին՝ 9,36 օրով, այսինքն՝ փրական գիշերահավասարը համընկել է մարտի 11-ին, թեև ընդունված կայուն օրը եղել է մարտի 21-ը: Այսպիսով, եկեղեցու կողմից ընդունված օրվա և իրական գիշերահավասարի անհամապատասխանությունը հասել է 10 օրվա: Այդ անհամապատասխանությունը վերացնելու համար, Հռոմի պապ Գրիգոր XIII 1582 թվականին հրամանագրել է գործադրություն մեջ դնել բժիշկ և աստղագետ Ալոլիո կրիստոֆի կազմած տոմարի նախագիծը, և 10-օրյա սխալը վերացնելու համար 1582 թ. հոկտեմբերի 4-ից հետո հոկտեմբերի 5-ի փոխարեն համարել հոկտեմբերի 15-ը:

Քանի որ մարտի 21-ը որպես գարնանային գիշերահավասարի կայուն օր ընդունելը գալիս է Անդրեաս Բյուզանդացու զատկացանկից, ապա պետք է պարզել, թե ինչու Անդրեասը հենց այդ օրն ընդունեց իբրև այդպիսին և ոչ թե, ասենք, մարտի 20-ը կամ 22-ը: Այդ հարցին պատասխանելու բանալին գտնում ենք է. Դյուլորիեի հետազոտության մեջ. «Հայ հեղինակների վկայության համաձայն, Անդրեասի 200-ամյա տոմարի հիմքում ընկած է իննետասներյակը, իսկ 36-րդ էջի տախտակի զատկական ամսաթվերի ժամանակագրական հաջորդականությունը ցույց տվեց, որ այդ տոմարը (կանոնը) համաձայնեցվել է ալեքսանդրյան տոմարի տարեկան փոփոխությունների հետ: Այս փաստն ինքնին արդեն իր մեջ բովանդակում է հաշվելու մեթոդի նույնության գաղափարը: Մյուս նույնական մոմենտն է 19-ամյա պարբերաշրջանի նույն տարվա օգտագործումը՝ 12-րդ տարին Անատոլիոսի տոմարի համար 277 թվականին և Անդրեասի տոմարի համար՝ 353 թվականին: Քիչ հետո մենք կտեսնենք, որ էլիաս (=էաս—է. Ա.) Ալեքսանդրացու 500-ամյա տոմարը, 200 տարի հետո, սկսվեց նույնպես 12-րդ տարով: 277 թվականից մինչև 353 թվականն ընկած ժամանակամիջոցն ընդգրկում է 19-ամյա շրջանի վերջին 8 տարին, 3 լրիվ պարբերաշրջան և 5-րդ շրջանի առաջին 11 տարիները: Այդ տախտակը վկայում է այն ջանագիր ուշադրության մասին, որով անընդհատաբար պահպանվում էր ալեքսանդրյան իննետասներյակը ինչպես արևելքում, այնպես էլ Արևմուտքում՝

գրիգորյան ռեֆորմից հասնելով դարերի խորքը, ընդհուպ մինչև Անատոլիոսի կանոնի հաստատումը, ինչպես այդ մասին վկայում են մեզ հասած զատկական տոմարները:

Արդեն ասվեց, որ այդ պարբերաշրջանի կայունությունը բացատրվում է նրանով, որ սկզբից եթե նա զուգակցվել է ալեքսանդրյան քաղաքացիական թվականության հետ, որպես մեծ զատկական պարբերաշրջանի վերցված, որն իբրև բաժանարար ունի 532 տարվա շրջանը, իսկ դրա մեջ՝ իննետասներյակն ու արեգակնային շրջանը... եթե այժմ մենք վերագտնանք էջ 36-ի տախտակին, ապա կտեսնենք, որ մյուս կողմից, Թեոֆիլը, ս. Կյուրեղը, Դիոնիսիոս կրտսերը, Բեդը, Իսիդոր Սևիլցին և ս. արքա Ֆելիքս սկսել են փրենց զատկական տոմարը 19-ամյա պարբերաշրջանի ոչ թե 12-րդ, այլ 1-ին տարուց: Այս սկզբնական տարբերությունը սովորական և էմբոլիսմիկ (13-ամյա) տարիների ամբողջ ընթացքի մեջ ոչ մի ուրիշ տարբերություն առաջ չի բերել, քանի որ, ինչ էլ որ լինի ելման կետը, բավական է 19-ով հաշվելը՝ տարիները նույն համակարգային շարքին վերածելու համար: ...Այս ելման կետերը, մեկը 19-ամյա պարբերաշրջանի 1-ին տարվանից, մյուսը՝ 12-րդ տարվանից, իրենց հիմքում նույնական, ընտրվել են՝ յուրաքանչյուրը հատուկ նկատառումներով: Թեոֆիլը, ս. Կյուրեղը, Դիոնիսիոս կրտսերը, Բեդը, Իսիդոր Սևիլցին և ս. արքա Ֆելիքս իննետասներյակի սկզբն են վերցրել և հաջորդականությունը հաշվել համաձայն տարիների հերթական և ուղղակի տեղին, որոնցից նա բաղկացած է իր ամբողջություն մեջ, որպես լուսնաարեգակնային պարբերաշրջան: Մյուսները՝ Անատոլիոսը, Անդրեասը և էլիասը՝ համաձայն այն կարգի, որով հաշվվում էր լուսնային ամիսների շարքը: Առաջին լուսնային ամիսը, այսինքն առաջին զատկական լուսինն ընկնում էր մարտի 22-ին, որպես մերձավորագույնը դարնանային գիշերահավասարին՝ նիկիական ժողովի կողմից սահմանված 21-ին: Լուսնի լրումը հարմարեցվեց ապրիլի 4-ին: Հենց այդ ելման կետն են ակնարկում Հովհաննես Սարկավագը, Հակոբ Ղրիմեցին, Անահուրը և Կիրակոսը, պատմելով, որ 500-ամյա տոմարն ստեղծելու համար Ալեքսանդրիայում հավաքված գիտնականները՝ էլիասի նախագահությամբ, որպես հիմք են ընդունել ապրիլի 4-ը: Իսկապես էլ, հենց 19-ամյա շրջանի 12-րդ տարվա զատկական ժամանակն էր համընկնում քրիստոնեական դարաշրջանի 562 թ. զատկին»¹³:

Այս բացատրության մեջ, ինչպես տեսնում ենք, Դյուլորիեն էլ ընդունում է, որ մարտի 21-ն իբրև գարնանային գիշերահավասարի կայուն օր, սահմանվել է նիկիական ժողովի կողմից: Սակայն մենք վերը համաձայնեցինք ն. Իդելսոնի այն կարծիքին, ըստ որի նիկիայի ժողովը

¹³ Dulourier, նշված աշխ., էջ 68—71:

այդպիսի որոշում չի կայացրել, այլ պարզապես որոշել է, որ զատկական կիրակին պետք է հաջորդի լիալուսնի օրվան, իսկ դա էլ՝ գիշերահավասարի օրվան: Հաշվի առնելով հենց Դյուլորիեից բերված քաղվածքի տվյալները և մանավանդ Անդրեասի տեքստում պարունակվող մի շատ կարևոր տվյալ, մենք գտնում ենք, որ մարտի 21-ը որպես գիշերահավասարի կայուն օր ընդունելը տոմարական պարզ զուգահեռություն հետևանք է: Այդ զուգահեռությունն առաջացել է հետևյալ կերպ:

Անատոլիոսի զատկացանկը վերջացել է 352 թվականի զատկով. դա ինքնին նշանակում է, թե Նիկիայի ժողովից հետո շարունակել են զատկի տոները որոշել Անատոլիոսի աղյուսակներով՝ առաջնորդվելով ժողովի այն որոշումով, որ զատիկը պետք է լինի գիշերահավասարից հետո, ավագ լրումին հաջորդող կիրակի օրը: Ինչպես Դյուլորիեն ցույց է տալիս, Անատոլիոսի 76-ամյա զատկացանկը, որ ավարտվում էր 352 թվականով, հիմնված էր տասնիններյակների համակարգի վրա, ըստ որում 352 թվականն այդ պարբերաշրջանի 11-րդ տարին էր: Արդ, ինչպես ասում է Դյուլորիեն, 353 թվականին, այսինքն՝ տասնիններյակի 12-րդ տարում, զատիկը պետք է լիներ ապրիլի 4-ին, իսկ դա նշանակում է, թե հրեաների Նիսանի 1-ն էլ պետք է լիներ մարտի 22-ին, և Դյուլորիեն ինքն էլ գրում է, թե «առաջին զատկական լուսինը (այսինքն՝ Նորալուսինը.— է. Ա.) ընկնում էր մարտի 22-ին: Դա միանգամայն ճիշտ է, եթե հիշենք, որ հրեաների նորալուսինը (Նիսանի 1-ը) և հին հույների նեոմենիան իրական լուսնային ամսվա 2-ին էր լինում: Ըստ այսմ, 353 թվականին զատկական նորալուսինը եղել է մարտի 21-ին, լուսնի 15-րդ օրը, այսինքն՝ զատկական կամ ավագ լրումը՝ ապրիլի 4-ին, և որովհետև ապրիլի 4-ը կիրակի է եղել, զատիկը փոխադրվել է հաջորդ կիրակի օրը՝ ապրիլի 11-ը: Այսպիսով, թե՛ մեր և թե՛ Դյուլորիեի հաշվումները համընկնում են այն կետում, որ 353 թվականին լուսնի ավագ լրումը եղել է ապրիլի 4-ին, իրական նորալուսինը՝ մարտի 21-ին:

Այժմ անցնենք գիշերահավասարի օրվան. օգտվելով Ն. Իդելսոնի կազմած աղյուսակներից, մենք թվաբանական համապատասխան հաշվումներով գտանք, որ 353 թվականին գարնանային գիշերահավասարը եղել է նույնպես մարտի 21-ին, այլ կերպ ասած, այդ թվականին գիշերահավասարը և նորալուսինը եղել են միևնույն օրը: Արդ, եթե մենք կարողացանք հաշվումներ կատարելով հանգել այդ եզրակացություն, ապա Անդրեաս Բյուզանդացին, որ աստղագետ էր, տոմարագետ ու փիլիսոփա, շատ ավելի լավ կարող էր այդպիսի հաշվումներ կատարել և իմանալ այդ: Եվ փոքր, նա ոչ միայն իմացել, այլ և գրել է այդ մասին հետևյալը. «Նւ արդ՝ հասարակած տուրնջեան և գիշերոյ սկիզբն է տարւոյն և ամսեանն առաջին, քանզի ամիսն առաջին անտի առնու սկիզբն = եւ արդ՝ ցերեկվա և գիշերվա հավասարվելը (իմա՝ գիշերահավասարը.—

է. Ա.) սկիզբն է տարվա և առաջին ամսվա, որովհետև առաջին ամիսը նրանով է սկսվում»: Շատ պարզ է ասված. հրեաների սրբազան օրացույցով տարվա առաջին ամիսն է Նիսանը, իսկ Նիսանի 1-ը՝ և՛ այդ ամսվա, և՛ տարվա առաջին օրը:

Եվ քանի որ գիշերահավասարը («հասարակած տուրնջեան և գիշերոյ») համընկնում է տարվա և դրա առաջին ամսվա առաջին օրվան, ապա դա էլ Անդրեասը դարձրել է իր 200-ամյա զատկացանկի կայուն գիշերահավասարի օրը՝ բոլոր տարիների համար: Այդ էլ, ահա, ընդունվեց Անդրեասի զատկացանկից օգտվող եկեղեցիների, իսկ հետագայում՝ առհասարակ բրիտանական եկեղեցիների կողմից՝ արևելքում և արևմուտքում, ինչպես ասում է Դյուլորիեն:

Այս բոլորը նկատի առնելով՝ մենք բացահայտում ենք թարգմանությունների հատվածների՝ «Ներածություն» և «Բացատրականի» միջև եղած հակասությունը: Առաջին հատվածում, որ անառարկելիորեն Անդրեասի գրածն է, գիշերահավասարի օրն է համարվում մարտի 21-ը, մինչդեռ երկրորդ հատվածում՝ Բացատրականում, ասվում է, թե գիշերահավասարը լինում է եգիպտական Պեմենովթ ամսի 24-ին, որին համապատասխանում է հուլյան տոմարի մարտի 20-ը: Հասկանալի է, որ մարտի 21-ը 20-ով փոխարինելը հայ եկեղեցիի գործն է, ըստ որում հայ տոմարագիտության մեջ իբրև զարեանային գիշերահավասարի կայուն օր, ինչպես վերև ապացուցել ենք, ընդունված է եղել մարտի 20-ը:

2. Անդրեասի կազմած տոնացույցը օգտագործվել է շատ ժողովուրդների կողմից. այն տողերում, որտեղ զուգահեռվում են եգիպտացիների և անտիոքացիների ամսանունները, չկա ուրիշ ոչ մի ժողովրդի ամսանուն, բացի հայկականից. ըստ որում B տարբերակում եգիպտացիների և անտիոքացիների ամսանունները փոխարինվել են հունական և հռոմեական ամսանուններով, հետևյալ ձևով. «ցուցան է զորբքտասան լուսնի ըստ ատուրց ամսոց դստրիոսի կամ քսանթիկոսի յունաց, և հոռմայեցոց մարտի կամ ապրիլի, և հայերէն մեհեկանի կամ արեգ»: Այստեղ կարևոր է այն, որ A տարբերակի այսինքն-ը փոխարինվել է պարզապես «և հայերեն»-ով, որ ցույց է տալիս, թե դա ոչ թե Անդրեասի զուգահեռությունն է, այլ հայ թարգմանիչ-հեղինակի (մեր արդի տերմինով՝ հեղինակացի) բացատրությունը կամ «թարգմանությունը» հունական և հռոմեական ամսանունների: Անդրեասը, ինչպես գրում է «Նախաբանում», տոնացույցը կազմել է անտիոքացիների 401—600 թվականների համար. քանի որ հենց այդտեղ նա խոստովանում է, որ իր համար որպես ելակետ է ընդունում անտիոքյան տոմարը, ապա միանգամայն արդարանում է անտիոքյան ամսանվան հիշատակությունը, ինչպես նաև հունական, եգիպտական և հռոմեական ամսանունների հիշատակությունը, որպես իր ժամանակի առավել ծանոթ և մանավանդ, կայուն (անշարժ) օրացուցա-

յին համակարգերի ամասնուններ: Իսկ հայկական ամասնուններն ինչու պիտի հիշատակեր: Այս բոլորը թույլ են տալիս եզրակացնելու, որ հայկական ամասնունների միջատակութունը («այսինքն»-ով կամ առանց դրան) պատկանում է հայ բարգամնիչ գրչին:

3. A տարբերակում ասվում է, թե «Քրիստոս ի ԴԺ-աներորդում աուր ամսոյն առաջնոյ շարշարեցաւ, յայտ է՝ յետ հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ արեգ ամսեան»։ այստեղ շատ պարզ կերպով շեշտվում է, որ գարնանային գիշերահամասարը լինում է հայոց արեգ ամսին՝ «յետ հասարակելոյ տուրնջեան և գիշերոյ արեգ ամսեան»։ Ինչպես արդեն ասվեց, Անդրեասն իբրև գիշերահամասարի կայուն օր էր ընդունել մարտի 21-ը: 353 թվականին, երբ նա կազմում էր իր զատկացույցը, հոռմեական մարտի 21-ին համապատասխանում էր հայոց շարժական տոմարի մեհեկանի 24-ը, իսկ հայերի ընդունած գիշերահամասարի կայուն օրվան՝ մարտի 20-ին՝ մեհեկանի 23-ը: Գիշերահամասարի օրը՝ մարտի 20-ը՝ իբրև հայերի ընդունած կայուն օր, կարող էր համընկնել արեգի որևէ օրվա հետ սկսած 384—387 թվականներից, երբ մարտի 20-ին համապատասխանում էր հայոց արեգ ամսի 1-ը: Նշանակում է, այդ տղերք չէին կարող գրված լինել 384 թ. առաջ, որից հետևում է նաև, թե դրանք Անդրեասին չեն պատկանում:

4. Նույն հատվածին անմիջապես հետևում է տարվա առաջին ամսվա որոշումը՝ ըստ հրեական տոմարի. «Եւ քանզի սկիզբն ամենայն տարւոյ ի ԺԹ՝ մարտի ամսոյ լինի, այսինքն է մեհեկանի, յայտ է, թէ նա է ամիսն առաջին»։ Այս «Առաջին ամիս» կոչվածը հրեական եկեղեցական տոների համար ընդունված «Սրբազան տարվա» առաջին՝ Նիսան ամիսն է¹⁴, որ սկսվում էր գարնանային նորալուսնի առաջին օրով: Նիսանի 14-րդ օրը «Քրիստոսի շարշարանաց օրն» է, որը անպայման պետք է հաջորդեր գարնանային գիշերահամասարի օրվան, չհաշված առանձին բացառությունները, երբ «շարշարանաց օրը» համընկնում էր հենց գիշերահամասարի օրվան՝ մարտի 21-ին (այդ դեպքում զատիկը լինում էր մարտի 22-ին, եթե դա կիրակի օր էր): Ըստ այսմ, եթե Նիսանի 1-ը համընկնում էր մարտի 19-ին, ինչպես ասվում է երկու տարբերակներում, ապա 14-րդ օրը կլիներ ապրիլի 1-ը, որից երկու օր հետո էլ, այսինքն՝ ապրիլի 3-ին, զատիկը: Արդ՝ Անդրեասի զատկացույցի առաջին տարին, այն է՝ 353 թ., ինչպես տեսանք, նորալուսինը եղել է մարտի 21-ին, հետևաբար և՛ Նիսանի 1 = մարտի 21, Նիսանի 14 = ապրիլի 3: Անդրեասը, որ կազմում էր 200 տարիների զատկացանկ, չէր կարող այդպիսի սխալ թույլ տալ և գրել, թե Նիսանի 1-ը լինում է մարտի 19-ին, որով «շարշարա-

նաց օրը» կլիներ ապրիլի 1-ին, իսկ զատիկը՝ ապրիլի 4-ի կիրակի օրը, այն դեպքում, երբ 353 թ. զատիկը եղել է ապրիլի 11-ին (լուսնի լրմամբ՝ ապրիլի 4-ին), որ կիրակի է եղել, ուստի և շարշարանաց շաբաթն սկսվել է ապրիլի 5-ից (երկուշաբթի օրվանից), իսկ զատիկը եղել է լուսնի լրման հաջորդ կիրակի օրը՝ ապրիլի 11-ին): Պարզ է, որ երկու տարբերակներում էլ այս հատվածը՝ տարվա առաջին օրվա մասին, Անդրեասին չի պատկանում, այլ հայ բարգամնիչ-հեղինակին:

5. Անդրեասի «Ներածականի» մեջ խոսվում է զատկական օրը որոշելու մասին և շեշտվում, որ այդ հարցում հրեաներին չպետք է հետևել, ոչ էլ հերձվածողներին: Երկրորդ հատվածում («Բացատրականում») A տարբերակի մեջ երկարորեն կրկին խոսվում է հրեաների մասին, բացատրվում, որ հրեաները ճիշտ չհաշվելու հետևանքով երբեմն տարեկան երկու անգամ են զատիկ անում, ըստ որում «շարշարանաց օրը» ըստ փրենց հաշվի ի՞նչ օր էլ որ լինի՝ շաբաթ են կոչում և տոնում: Այս հատվածի մեծագույն մասը կրկնությունն ու պարզաբանումն է առաջին հատվածում («Ներածություն» մեջ) սեղմ կերպով շարադրվածի. Բայց ոչ միայն այդ: Այս նույն հատվածի՝ «Բացատրականի» մեջ իսկ տարբեր ձևերով կրկնվում է նույն միտքը: Երկրորդ տարբերակը շատ ավելի սեղմ է. այդ բոլոր բացատրությունների փոխարեն B տարբերակում պարզապես ասվում է, թե հրեաները, ինչ օրվա էլ համընկնի լուսնի 14-ը, շաբաթ են կոչում, թեկուզ և հինգշաբթի կամ ուրբաթ լինի: Այս նախադասությունների նույնությունը երկու տարբերակներում ցույց է տալիս երկրորդ տարբերակի անմիջական աղբյուրը, այն է՝ հայերեն թարգմանություն նախնական օրինակը, որից ծագում են թե՛ A և թե՛ B տարբերակները:

6. Ուշագրավ է «Ներածություն» և «Բացատրականի» նույնական մտքի համեմատությունը: «Ներածականում» կարդում ենք. «Եւ թէպէտ և այսպէս ամի ամի առնեմք զլիշատակ շարշարանաց Փրկչին մերոյ, սակայն ուրանան հերձուածողք ամենայն զծնունդ նորա, որ եղև ի յօգնականութիւն և փրկութիւն ամենայն հեթանոսաց»։ Այստեղ ինչպես տեսնում ենք, հեղինակը ընդհանուր կերպով խոսում է հերձվածողների մասին, մինչդեռ երկրորդ հատվածում՝ «Բացատրականում» կարդում ենք. «Արդ մի՞ ոք յառաջ քան զշաբաթն լուծցէ զպահքն զի մի՛ ապականեսցէ զխորհուրդն և զնիցէ այլ կիրակէ, փոխանակ այնր, որ արժանն է, որպէս պաւղիանոսքն ժպրհեցան առնել»։ Երկրորդ տարբերակն ունի. «Արդ մի՞ քք ժպրհեալ փոխեսցէ զպարն որպէս ապողինարոսքն և դիցէ այլ կիրակէ փոխանակ այնր, որ արժանն է»։ Երկու տարբերակները, ընդհանուր կերպով համընկնելով միմյանց հետ, տարբերվում են հիմնականում աղանդների անվանումներով, առաջինը գրում է «պաւղիանոսքն», երկրորդը՝ «ապողինարոսքն»։ Այստեղ, ինչպես ասվում է, «Ներածություն»

¹⁴ «Սրբազան տարվա» մասին տե՛ս Հ. Ս. Բաղդյան, Օրացույցի պատմություն, էջ 189—190:

փակագծերը բացվել են, և ընդհանրապես հերձվածողները փոխարինվել են շատ որոշակի աղանդների անվանումներով (պապոլիանոսը և ապոլիոնարոսը): Հինգերորդ դարի համար, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները, պավլիկյանները, որ Ա տարբերակի մեջ կոչվում են պապոլիանոսը, դեռևս առանձին ուշադրության չէին արժանացել: Նրանց աշխուժացումը տեղի է ունենում հաջորդ դարերում¹⁵: Ինչ վերաբերում է «ապոլիոնարոսքին», ապա այդ աղանդը, թեև հայ իրականության մեջ առանձնապես մեծ տարածում չի գտել (ավելի ճիշտ՝ ձուլվել է մերթ ևստորականության, մերթ պավլիկյանների հետ), բայց V դարում որոշ արտահայտություն ունեցել է: Այդ մասին որոշակի տեղեկություններ տալիս են օտար աղբյուրները: Այսպես, Ն. Ադոնցը իր «Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների» աշխատության մեջ, խոսելով Եփեսոսի ժողովում նեստորականության և նեստորի դատապարտության մասին և պատմելով հայ եկեղեցու եպիսկոպոսների՝ Կոստանդինուպոլսի եպիսկոպոս Պրոկղին ուղարկած «Թղթի» մասին, բերում է Կարթագենի սարկավազ կիրեռատուսի աշխատության մի հատվածը, որի մեջ կարդում ենք. «Այնուհետև առթից օգտվելով ելան Հայաստանից քանի մի վանականներ, Ապոլիոնարի հետևորդ, երկու թե երեք հոգի (ինչպես հաղորդում է Հովհաննես Անտիոքացին իր նամակում) և առնելով իրենց հետ քաղվածներ, ինչպես իրենք էին հավատացնում, Թեոդոր Մամուեստացուց և կամ այլ սրբազան հայրերից, որոնք այս ժամանակ որպես հիշեցինք, գրել էին Ապոլիոնարի դեմ, և մտնելով թագավորանիստ քաղաքը և շատերի ունկնդրությունը ապականելով իրենց նենգությունը խոտվեցին ամեն ինչ: Ապա շրջելով ամբողջ Արևելքի քաղաքները և բոլոր մենաստանները պահանջում էին, որ դատապարտվեին այդ քաղվածները իրենց հեղինակների հետ միասին, հանդիմանելով, որ նրանք գրված են նեստորական ոգով. «Թե նեստորը արդարացի է դատապարտված, թող դատապարտվին և սրանք, պնդում էին նրանք, իրենց հեղինակներով»¹⁶: Մենք այս ընդարձակ մեջբերումը կատարեցինք, ցույց տալու համար, որ իրոք հինգերորդ դարի Հայաստանում ապոլիոնարյանները ճանաչված աղանդ են եղել: Հիշենք, որ նեստորականության մասին հիշատակում է նաև Կորյունը¹⁷, իսկ Ղազար Փարպեցին, թվարկելով դանազան աղանդների հիմնադիրներին կամ պարագլուխներին, անվանապես հիշատակում է

Ապոլիոնարու Լաուդիկացուն, բայց ոչ Պաուլիանոսյաններին¹⁸, այսինքն՝ պավլիկյաններին: Սա մեզ թույլ է տալիս ասելու, թե հինգերորդ դարում, մանավանդ նրա առաջին կեսում, պավլիկյանները դեռևս Հայաստանում լայն գործունեություն չէին ծավալել, ուստի և դեռևս չէին էլ ճանաչվել որպես առանձին աղանդի ներկայացուցիչներ, մինչդեռ ապոլիոնարյաններն այդպիսի ճանաչում ունեին¹⁹: Սրանից կարելի է հանգել այն եզրակացության, թե առաջին տարբերակում էլ նախապես եղել է ապոլիոնարյաններ (ապոլիոնարոսք), բայց հետագայի ընդօրինակությունների ընթացքում փոխարինվել է ավելի տարածված պավլիկյանների աղանդի անվանումով. սրա համար իրրև ապացույց կարելի էր հիշել նաև Շիրակացու զատկական ճառի այն տողերը, որոնց մեջ երկու անգամ հիշատակվում են պավլիկյանները, իսկ ապոլիոնարյանները՝ ոչ մի անգամ: Ինչ էլ որ լինի, մի բան պարզ է և անուրանալի. երկու տարբերակներում էլ ընդհանրապես աղանդավորներ որակումը փոխարինվել է Հայաստանում իր ժամանակին ճանաչված աղանդավորների անվանումներով: Այս բոլորը խոսում են այն մասին, որ V դարի առաջին կեսում Հայաստանում տարածված աղանդների հիշատակումը բխել է այն ժամանակվա եկեղեցական պայքարի ոգուց, ուստի և «Բացատրականի» մեջ հիշատակված ապոլիոնարյանների (նաև պավլիկյանների, եթե մեր եթարությունը ընդունելի չլինի) հիշատակումը, ուղղակի արտացոլումն էր տիրող իրադրության: Սա էլ նշանակում է, թե «Բացատրականի» հիշյալ հատվածն ամբողջությամբ պայմանավորված է հայկական իրականությամբ, ուստի և չէր կարող Անդրեասի գրածը լինել:

7. Առաջին տարբերակը, խոսելով դարձյալ հրեաների մասին, բացատրում է, թե ինչու՞ նրանք զատիկ են անում անկախ այն բանից, թե կիրակի կամ շաբաթ է, թե ոչ, և գրում. «Եւ որք զայս այսպէս առնեն, թէ յուրբաթու կամ ի կիրակէի պատահեսցի աւուրն պահոց նոցա, քանզի նաւասարդի ամսեան ուրեմն դիպի, զի մի՛ կերակուրքն ի տալթոյ ապականեսցին, քանզի շաբաթ արն ի միջի դիպի, զինչ արն և դիպեսցի, շաբաթ անուն անուանեն և յայտու զանցանեն զարինաւքն և ուրախութեամբ պահեն ի շաբաթուն, յորում դիպեցաւ զատիկ, զի մի՛ տրտմեցուսցեն զորովայնս իւրեանց»: Երկրորդ տարբերակը այդ բոլորի փոխարեն ունի միայն. «Եւ անցանեն զարինաւքն և ուրախութեամբ առնեն զատիկ»: Այստեղ նույնպես Ա տարբերակը տեղայնացրել է մուծելով (կամ, եթե ամբողջ հատվածն իրենն է, ապա՝ գրելով պարզա-

¹⁵ Պավլիկյանների մասին տե՛ս Ստ. Տ. Մելիք-Յալաչյան, Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953:

¹⁶ Պրոֆ. Ն. Ադոնց, Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների, Վիեննա, 1925, էջ 18—19:

¹⁷ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 86, 87:

¹⁸ Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատության մ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխասյան, Տփղիս, 1904, էջ 192:

¹⁹ Նեստորականության մասին տե՛ս Ն. Տեր-Միհասյան, Նեստորականությունը Հայաստանում, «Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երևան, 1971, էջ 33—393:

Մարտի 19-ին նորալուսին լինելու դեպքում զատիկը կարող է լինել ապրիլի 3—ապրիլի 9 օրերից որևէ մեկում: Այս օրերը թելադրվում են շարժարանաց օրվա (որ նույնն է՝ լուսնի 14-րդ օրվա) շարաթվա տարբեր օրերին լինելով: Այսպես, եթե նորալուսինը մարտի 19-ին է և, հետևաբար, լուսնի 14-րդ օրն էլ (այսինքն՝ նիսանի 14-ը) = ապրիլի 1-ը՝ ուրբաթ օր, ապա զատիկը կլինի ապրիլի 3-ի կիրակի օրը. եթե հինգշաբթի լինի, զատիկը կլինի ապրիլի 4-ին (կիրակի օրը), կիրակի օր լինելու դեպքում՝ հաջորդ կիրակին, այսինքն՝ ապրիլի 8-ին և այլն: Այս ելակետն ունենալով, Գինցելի զատկացույցից դուրս ենք բերել 384—455 թթ. ընթացքում ապրիլի 3—ապրիլի 8 օրերից որևէ մեկին զուգահեռաբար զատկի տոների տարիները: Ըստ այդ զատկացույցի, 384—455 թթ. ընթացքում այդ օրերին զատիկ է եղել 18 տարբեր տարիներում. սակայն այդ թիվն էլ խիստ կրճատվում է, երբ պարզում ենք, որ դրանց մեծագույն մասում նորալուսինը մարտի 19-ին չի եղել: Այսպես, օրինակ, ըստ այդ զատկացույցի, 427 թվականին զատիկը եղել է ապրիլի 3-ին. բայց նորալուսինը եղել է ոչ թե մարտի 19-ին, այլ՝ 14-ին: Ըստ այդմ, «շարժարանաց օրը» (լուսնի 14-րդ օրը) համընկել է մարտի 27-ի կիրակի օրվան, որի պատճառով էլ զատիկը անցել է հաջորդ կիրակի օրվան, որ է ապրիլի 3-ը: Այդպես էլ՝ 429 թվականին նորալուսինը եղել է մարտի 21-ին, զատիկը՝ ապրիլի 5-ին և այլն: Հասկանալի է, որ այս բոլոր թվականները որևէ բան չեն կարող ասել, քանի որ նորալուսնի օրը մարտի 19-ը չէ: Այս եղանակով հիշյալ 18 թվականներից հանելով այն տարիները, որոնց մարտյան նորալուսինը ամսի 19-ին չի եղել, ունենում ենք միայն երկու թվական, այն է՝ 421 և 440, որոնց գարնանային նորալուսինը եղել է մարտի 19-ին: 421 թվականին շարժարանաց օրը (լուսնի 14-ը) համընկել է ուրբաթ օրվան, ուստի և զատիկը եղել է ապրիլի 3-ին (կիրակի օր), իսկ 440-ին՝ 14-րդ օրը եղել է երկուշաբթի օր, ուստի և զատիկը եղել է ապրիլի 7-ին: Այս հաշվումները ցույց են տալիս, որ «սկիզբն ամենայն տարույ յԺԹ մարտի ամսույ լինի» սահմանումը կարող էր գրվել 421 կամ 440 թվականին: Մենք այս երկու թվականներից 421-ն ենք ընդունում փրբե Անդրեասի աշխատության թարգմանության և այդ հավելումի տարին, հետևյալ նկատումներով: 1) Հայ գրերի ստեղծումից հետո Մեսրոպը և, մանավանդ, կաթողիկոս Սահակը, պետք է հոգ տանեին Անդրեասի 200-ամյա տոնացույցը հայերեն ունենալու կամ դրա հիման վրա ինքնուրույն զատկացանկ կազմելու մասին, ուստի և՛ այլ թարգմանությունների հետ միաժամանակ, իրենց աշակերտներից մեկին հանձնարարեցին թարգմանել Անդրեասի աշխատությունը: 2) Ինչպես հայտնի է, հայոց տոմարի (Մեծ և Փոքր թվականների) համար որպես հիմք է ծառայել 428 թ. նավասարդի 1 = օգոստոսի 11 համապատասխանությունը. այլ կերպ ասած, 428

թվականը դիտվում է որպես հայոց տոմարի յուրահատուկ սկիզբ: Թե ինչու հենց այդ թիվն է ընդունվել, տոմարագետների մեջ միասնական էարժիք դեռևս չի ստեղծվել, բայց և այնպես, 428 թվականն իբրև սկիզբ, կասկած չի հարուցում մեր տոմարագետների ու տոմարագիտության պատմաբանների մեջ: Իսկ սա նշանակում է, թե մինչև այդ արդեն պետք է թարգմանված լինի Անդրեասի աշխատությունը, որի վրա էլ հիմնվել է այդ թվականից սկզբնավորված տոմարը: Կարծում ենք, որ այս երկու կովանները բավական են, որպեսզի ապացուցված համարենք, որ Անդրեասի սույն աշխատությունը թարգմանվել է 421 թվականին:

10. A Տարբերակի առաջին 12 տողերը՝ և B տարբերակի համապատասխան հատվածը (1—9 տողեր) գրեթե ամբողջապես տարբեր են: Որ A տարբերակի այս հատվածը հայ հեղինակի հավելումն է և համապատասխանում է իր ժամանակին, արդեն ապացուցեցինք: Երկրորդ տարբերակի այդ տողերն էլ, ինչպես ցույց է տալիս դրանց վերլուծությունը, համապատասխանում է մի այլ ժամանակի: Դրա մեջ ունենք երկու կարևոր տոմարական տվյալներ: Դրանցից մեկն է ՂԵ (95), որ իննետասներկյակի (լուսնի 19-ամյա պարբերաշրջանի) հինգ շրջանն է²⁰: Ավելի կարևոր է մյուս տոմարական տվյալը, որ վերաբերում է հինգհարյուրակին: Բերված հատվածում ասվում է, որ Ծ-ից հետո կրկնվում են նույն շաբաթները. իրոք, ինչպես հայտնի է, հայերի տոմարական հաշվումների մեջ Ծ-եակը (500-եակ) 532 տարիների պարբերաշրջանն է, իսկ յուրաքանչյուր այդպիսի պարբերաշրջանում զատկի տոները կրկնվում են անփոփոխ կերպով: Այս պարբերաշրջանը կոչվում է էասյան պարբերաշրջան, ըստ որում դրա հայտնագործողը էաս Ալեքսանդրացին է: Սակայն էասը այդ պարբերաշրջանը հայտնագործել է վեցերորդ դարում: «Այդ ժամանակաշրջանում տոմարական և հատկապես զատկի տոնի ժամանակը որոշելու կապակցությամբ առաջացած խառնաշփոթությունից ազատվելու և ընդհանրապես տոմարը կարգավորելու ուղղությամբ զբաղվել է աստղագետ և տոմարագետ էաս Ալեքսանդրացին: Նրա ղեկավարությամբ 651 թ. հրավիրվել է քրիստոնեությունը ընդունած երկրներից 36 դիտուն տոմարագետների խորհրդակցություն, որտեղ բնականորեն այդ հարցը, հաստատել են էաս Ալեքսանդրացու հայտնագործությունը, որ զատկի տոները հերթականությամբ, տարվա նույն օրերում կրկնվում են յուրաքանչյուր 532 տարին մեկ անգամ»²¹: Հայերը, ընդունելով էասյան պարբերաշրջանը, այն կոչել են Ծ-եակ (հինգհար-

²⁰ Հայտնի է, որ Անդրեասի տոնացույցի կազմությունից առաջ սովորաբար կաղմալիս են եղել 76 և 95-ամյա զատկացանկեր: Կարելի է կարծել, որ թարգմանության ժամանակ գործածության մեջ է եղել ինչ-որ այդպիսի տոնացույց (հավանաբար Աշտիշատի մոզոփ ընդունածը՝ 352 թվականից):

²¹ Հ. Ս. Բաղալյան, նշված աշխ., էջ 163:

խաղաղասութեամբ նա այդպէս էլ ասում է («հասարակած տուրնջեան և գիշերոյ սկիզբն է տարւոյն և ամսեանն առաջնոյ»)։ Անանիա Շիրակացին էլ որոշակիորեն գրում է այդ մասին հետևյալը. «Եւ մի՛ փոխեսցուք զսահման հարցն, և մի ընկալցուք զշորեքտասան լուսնի ի հինգ ապրիլի, այդ զկարգեալն ի սրբոց հարցն. և մի՛ դիցուք այդ լրումն գլուխ բոլորի. բայց զհրամայեալն ի Տեառնէ զշորեքտասան նիսան և զայդոց ազգաց որ նմայն հանդիպին։ Բայց էսասանք, որ զՊ նիսան կարգեցին գլուխ բոլորի, և ոչ աղարտեցին զառաջինն. բայց զի տոմարն Անդրեասեան երկերիւր ամացն, յերիսն նիսան սպառեցաւ, և սկիզբն հինգերիւրեակին ի երեք նիսան եղև։ Վասն այնորիկ իսկ եզ ի գլուխ բոլորին»²⁴։ Ամեն ինչ շատ պարզ է ասված. Շիրակացին իբրև ելակետ է ընդունում նիսանի 14-ը, որ է ապրիլի 3-ը ըստ Անդրեասի զատկացանկի վերջին տարվան (552 թ. համար), և մերժում է ապրիլի 5-ը, միևնույն ժամանակ բացատրելով էսայան պարբերաշրջանի համար որպէս հիմք ծառայած թիվը, որը դարձյալ հենվում է, ըստ իր բացատրութեան, Անդրեասի արդեն սպառված տոնացույցի վրա։ Իսկ սա էլ ցույց է տալիս ոչ միայն իր՝ Շիրակացու և էսայանների ընդունած ելակետային ամսաթիվը՝ ըստ Անդրեասի, այլև հենց իր՝ Անդրեասի համար որպէս ելակետային ընդունված ամսաթիվը (նիսանի 14 = ապրիլ 3), ինչ որ մենք վերը ցույց ենք տալի։

4. Առաջին և երրորդ հատվածների լեզվի ու ոճի համեմատութիւնը երկրորդ հատվածի լեզվի ու ոճի հետ ցույց է տալիս, որ առաջին երկուսը գրված են բավականաչափ հարթ, առանց ավելորդութիւնների ու անտեղի կրկնութիւնների, մինչդեռ A տարբերակի երկրորդ հատվածը («Բացատրականը») գերծ չէ անտեղի կրկնութիւններից, իսկ երբեմն էլ ավելորդաբանութիւններից և լեզվական անհարթութիւններից։ Սա մենք համարում ենք թարգմանութեան հաջորդական ընդօրինակութիւնների ժամանակ կատարված հավելումների, ինչպէս և առանձին բացթողումների ու աղավաղումների հետևանք։

Այս բոլորը մեզ հիմք են տալիս ապացուցված համարելու, որ երկրորդ հատվածը («Բացատրականը») մեծազույն մասով հայ թարգմանչի բացատրագիրն է և նրա հեղինակութիւնը։ Հայ թարգմանչի իսկապէս կարող էր այդ բացատրութիւնները բերել հենց իր ժամանակի ելակետային ամսաթիվերը նկատի ունենալով և դրանով իսկ գործնականորեն օգնել հայ օգտագործողներին։ Սրանով էլ վերջնականապէս որոշվում է Անդրեասի սույն աշխատութեան թարգմանութեան ժամանակը, այն է՝ 421 թվականը։ Համենայն դեպս, այդ հատվածի սկզբում տրված ամսաթիվերը բացառապէս այդ ժամանակին են համընկնում։ Սրան կարելի է

առարկել միայն մեկ փաստարկով. ինչպէս երկրորդ հատվածում («Բացատրականում»), այնպէս էլ երրորդում («Նախաբանում») հայկական մեհեկանը զուգահըժում է եզրիպտական պեմենովթի, անտիոքյան դուստրոսի և հոմեական մարտի, իսկ արեզը՝ ապրիլի հետ։ Թարգմանութեան ժամանակի համար այդ զուգահըժութիւնը ճիշտ չէ։ 421 թվականին, և առհասարակ 384 թվականից հետո, դարնանային գիշերահամարը հայոց մեհեկանին չի եղել։ Սրանից պետք է եզրակացնել, որ «Բացատրականի» առաջին տողերի պեմենովթ 24 = դուստրոս 20 = մարտի 20 = մեհեկան (առանց ամսաթվի) զուգահըժութիւնը նույնպէս թարգմանչի հավելումն է, բայց թարգմանչին այս դեպքում իբրև ելակետ է ընդունել Անդրեասի տոնացույցի սկզբի՝ 353 թվականի վիճակը։ «Նախաբանում» էլ «ի մարտի, այսինքն՝ մեհեկանի, և մերթ յապրիլի, որ է արեգ» զուգահըժութիւնների մեջ հայկական ամսանունները ավելացվել են թարգմանչի կողմից և, բնականաբար, Անդրեասի նշած մարտ և ապրիլ ամիսներին մեհեկան և արեգ ամիսների զուգահըժութիւնը համապատասխանում է դարձյալ 353 թվականի դրութեան։ Իսկ սա նշանակում է, թե այդ զուգահըժութիւնները չեն կարող թարգմանութեան ժամանակը որոշելու հիմք ծառայել։

Ամփոփելով վերը շարադրվածները, հանգում ենք հետևյալին։ Անդրեաս Բյուզանդացու սույն աշխատութիւնը, որ երկուհարյուրամյա տոնացույցի առաջարանը կամ ներածութիւնն է, հայերեն է թարգմանվել 421 թվականին։ Աշխատութեան երկու հատվածները, որոնք մենք պայմանականորեն անվանեցինք «Բացատրական» և «Նախաբան», պահպանվել են երկու տարբերակներով՝ ընդարձակ (A) և համառոտ (B)։ Երկրորդ տարբերակը շունի «Ներածականը», ինչպէս և՛ 17 կանոնները։ Բացատրականի երկու տարբերակների համեմատութիւնը ցույց է տալիս, որ բացարձակապէս նույնական հատվածների հետ միասին կան նաև միմյանցից բոլորովին տարբերվող հատվածներ։ Առավել կարևոր են A տարբերակի 1—15 և B տարբերակի 1—12 տողերը. դրանցից յուրաքանչյուրը ցույց է տալիս իր ժամանակը, A տարբերակինը՝ 421 թ., B տարբերակինը՝ VI դարի վերջերից ոչ շուտ։ Այս հատվածում, սակայն, B տարբերակն ունի A տարբերակի հետ բառացիորեն համընկնող հետևյալ նախադասութիւնը. «Եւ քանզի սկիզբն ամենայն տարւոյ յԹ՝ մարտի ամսոյ լինի, այսինքն՝ մեհեկանի, յայտ է, եթէ նա է ամիսն առաջին»։ Մենք արդեն ասացինք, որ այս տվյալը չի համապատասխանում Անդրեասի ժամանակին, ինչպէս և՛ այն ժամանակին, երբ գրվում էր B տարբերակի այդ հատվածը (1—12 տողերը)։ Մենք դա համարում ենք մեխանիկական ընդօրինակութիւն երկու տարբերակների նախօրինակից։ Երկու տարբերակների այս առաջին հատվածները, չհամարելով Անդրեասի գրածը, շարունակութիւնից անջատել ենք փակագծերով։

²⁴ Նույն տեղում։

սպառվեց (ավարտին հասավ) Անդրեասի 200-ամյակը և 9 կամ 10 տարի շփոթություն տիրեց եկեղեցական տոների որոշման մեջ, մինչև որ 361 թ. էասյան շրջանն ընդունվեց և կազմվեց 532-ամյա տոմարը: Այս միահամուռ վկայությունը՝ Անդրեասի 200-ամյակի վերջանալուց հետո խառնաշփոթություն ստեղծվելու մասին, բավականին հզոր կովան է, ընդունելու համար, որ հայերն, իրոք, օգտագործել են այդ երկուհարյուրամյա դատկացանկը: Բայց երբվանի՞ց Մեր հին և միջնադարյան մատենագրության մեջ այդ մասին ուղղակի տվյալ չկա. տոմարագիրներն ու պատմագիրները խոսում են միայն Անդրեասի 200-ամյակի վերջանալու մասին, բայց սկիզբը սովորաբար չեն նշում, թեև դա ինքնին հայտնի է՝ ավարտի տարվանից հանած երկուհարյուր (552—200)=352, ուրեմն՝ 200-ամյակն սկսվում է 353 թվականով: Նույնիսկ Շիրակացին, որ հանգամանորեն բացատրում է, թե ինչու էասը և նրան հետևողներն իբրև 553 թ. դատկական լրման օր ընդունեցին ապրիլի 4-ը՝ կապելով դա Անդրեասի 200-ամյակի հետ, ոչ մի խոսք չի ասում նրա սկզբի մասին, մանավանդ այն մասին, թե երբվանից են հայերն օգտագործել այն: Բայց այս հանգամանքն էլ բավական է, որ մեր առաջադրած հարցն առհասարակ մեջտեղից դուրս գա: Իսկապես, եթե հայտնի է, որ հայերն օգտագործել են Անդրեասի երկուհարյուրյակը, հայտնի է նաև, որ այդ տոնացույցի սկիզբն է 353 թվականը, ապա էլ ո՞ր թվականից պետք է գործադրության մեջ դրած լինեին, եթե ոչ 353-ից: Սա այնքան տրամաբանական եզրակացություն է, որ կասկածի տակ առնելն, անգամ, անտրամաբանական է թվում: Սրան ավելանում է նաև մի տվյալ, որ շատ է կրկնվել մեր մատենագրության մեջ: Անանիա Շիրակացին իր «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության մեջ ՀԲ (72-րդ) հարցին («Զի՞նչ է՝ կալ մինչև յ՛Ռ ամն Յուստիանոսի կայսեր և յի՛Գ Խոսրովա Պարսից») պատասխանում է այսպես. «Վասն զի աստ եղև լրումն Մ. ամի կարգացն Անդրէասայ, Ը. ազգաց: Եւ անտի այսր է թուական մեր այլուստ, զի ալեքսանդրացիք և Իոհոն յետ Մ.—եկին (=երկերիւրեկին.—է. Ա.) կարգեցին զթուականն հոռմեացոցն: Զի նորա ամքն յետ Անտիոքայ շինելոյն են: Այն չէ: Դարձեալ տոնական կանոնքն Անդրէասի զոր եղ նա Մ. ամի լինքեն է առաջ Ը. ազգաց աստ կատարեցան»²⁵: Ինչպես տեսնում ենք, Շիրակացին ասում է, թե Անդրեասը «տոնական կանոնները», այսինքն՝ իր 200-ամյա տոնացույցը, դրել է (=սահմանել, հաստատել է) ութ «ազգերի» համար. թե որոնք են այդ ազգերը, Շիրակացին չի գրում, սակայն «զի ալեքսանդրացիք և Իոհոն յետ Մ.—եկին կարգեցին զթուականն հոռմեացոցն» արտահայտությունը ցույց է տալիս, որ մինչև 553 թվականը (=200-ամյակի ավարտը) թե՛ ալեքսան-

դրացիները և թե՛ բյուզանդացիներն առաջնորդվել են Անդրեասի դատկացանկով: Նույնպես և «և անտի այսր է թուական մեր այլուստ» արտահայտությունը ցույց է տալիս, որ մենք էլ, այսինքն՝ հայերս էլ, օգտագործել ենք այդ տոնացույցը, բայց դրա ավարտից հետո բաժանվել ենք ալեքսանդրացիներից ու հոռմեացիներից: Բայց սա վերաբերում է Անդրեասի դատկացանկի ավարտման և դրան հաջորդող շրջանին, իսկ սկզբը ո՞ւր: Հայերը 353 թվականից են օգտագործել այն, թե հետո: Շիրակացուց մեջբերված պատասխանից ոչինչ չի իմացվում: Եվ, այնուամենայնիվ, այդ «ութ ազգաց» արտահայտությունը շատ վճռական դեր խաղաց Անդրեասի դատկացանկը հայերի կողմից հենց սկզբից գործադրության մեջ դրված լինելը կասկածից վեր հայտարարելու համար: Բանն այն է, որ, Շիրակացուց հետո, Հովհաննես Իմաստասերն իր «Խառնախորանի» մեջ, զանազան տոմարական համակարգերով առաջնորդվող ժողովուրդների ամիսները զուգադրելով՝ թվում է եզրպատկան տոմարական խմբի 7 ժողովուրդ (եգիպտացիներ, եթովպացիներ, աթենացիներ, բյութանացիներ, կապադովկացիներ, վրացիներ, աղվաններ), որից և եզրակացնում են. եթե թվարկված յոթին ավելացնենք նաև հայերին, կստանանք ութ, այսինքն՝ հենց այն «ութ ազգերը», որոնց մասին խոսում է Շիրակացին: Վերջապես, Վանականն էլ տալիս է հետևյալ տեղեկությունը. «Անդրէաս՝ եղբայր Մանգնոսի եպիսկոպոսի, միաբանութիւն արար ութն ազգաց լրմանց իննևտասներեկաց և կարգեաց զերկերիւրեակն»²⁶: Այս տողերի մեջ, ինչպես պարզորոշ հասկացվում է, Վանականը ութ ազգերի մասին է խոսում, և սա, կարծես, հաստատում է Շիրակացու գրածը և տալիս դրա մեկնաբանությունը: Նույն Վանականը, սակայն, հայտնում է նաև հետևյալ տեղեկությունը. «Նոյնպէս զանազան է մուտ տարեմտից և անուն ամսոցդ. զերբայեցոց և Մակարայեցոց տարեմուտն ի միատին է, միով ավուրը զկնի հասարակածին, իսկ հայոց ընդմիջել ամարանն է, և ութ ազգաց՝ եգիպտացոց, եթովպացոց, աթենացոց, բիւթանացոց, կապադովկացոց, վրաց և աղուանից՝ չորս օրով զկնի հայոցն է, իսկ Յունացն և Ասորոցն ընդ միջել աշնան յեղենակին է, և Հոռոմոցն՝ յետ մտանելոյ ձմերան»²⁷: Այստեղ խոսքը տարբեր տոմարներով առաջնորդվող ժողովուրդների ամանորի մասին է, և Վանականը եգիպտական օրացուցային համակարգով առաջնորդվող ժողովուրդների մասին խոսելով՝ գրում է. «ութ ազգաց», բայց թվարկում միայն յոթը: Որ այդ «ութ ազգերի» շարքում չպետք է դասել հայերին, անառարկելիորեն ապացուցվում է հենց Վանականի գրածով, ըստ որում նա հայերին առանձնացնում է թե՛ եգիպտական խմբից, և թե՛

²⁶ Լ. Խաչիկյան, Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետ ասացեալ, «Մատենագրարանի գիտական նյութերի ժողովածու», № 1, Երևան, 1941, 163—164:

²⁷ Նույն տեղում, էջ 159:

²⁵ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 86—87:

հույներին, հոռոմեացիներին և այլն: Ի դեպ, Հովհաննես Իմաստասերը, որի «նստնախորանի» եգիպտական խմբի յոթ «ազգերը» նկատի ունենալով՝ ենթադրում են, թե ութերորդն էլ հայերը պետք է լինեին, մի այլ տեղ շատ որոշակիորեն գրում է. «Զուգաւորութիւն է (7) ազգաց՝ եգիպտացոց, Եթովպացոց, Աթենացոց, Բիւթանացոց, Կապուդկացոց, վրաց և աղուանից՝ այսպէս արա»²⁸: Ինչպես տեսնում ենք, Իմաստասերը 7 «ազգերի» մասին է խոսում, և քանի որ Վանականն էլ նույն յոթ «ազգերին» է հիշում, ապա «ութ ազգացը» պետք է արտագրողներին սխալը համարել, ըստ որում արտագրողներից մեկը «խմբագրել է» և յոթն-ը դարձրել ութն հետևյալ պատճառով: Վանականից մեջբերված երկու հատվածներից առաջինում խոսվում է «ութն ազգաց» մասին, որոնց լուսնի լրումների «միարանութիւն է արել» Անդրեասը, արտագրողը՝ նկատի ունենալով այս ութ-ը, երկրորդ հատվածի յոթն էլ դարձրել է ութ, չնկատելով, որ թվարկվում են միայն «յոթ» ազգեր, և, մանավանդ, չհասկանալով, որ երկրորդը ոչ մի կապ չունի Անդրեասի և նրա կազմած զատկացանկի հետ:

Շարադրվածից հեշտ է եզրակացնել, որ հիշյալ անորոշ և հակասական տեղեկությունները ոչ թե օգնում են խնդրի լուծմանը, այլ ավելի բարդացնում, ուստի և ավելի դժուրին է ընդունել, որ Անդրեասի տոնացույցը հայերն օգտագործել են հենց սկզբից ևեթ՝ 353 թվականից և դրանով էլ հարցը փակել: Ցավոք այդպես են վարվել ոչ միայն տոմարագետները, այլև բանասեր-պատմաբանները, մասնավորապես Ա. Գ. Աբրահամյանը: Գտնելով Անդրեասի տոնացույցի ներածութայն թարգմանությունը, նա հրատարակեց այն՝ ընդարձակ ներածականով: Այդ ներածականում էլ, ահա, նա գրում է. «Անդրեասը, ինչպես պարզված է, առաջնորդվել է Դիոդորեոսի էրայով, որը հիմնված է եղել եգիպտական անշարժ տոմարի վրա: Ըստ այդ տոմարական հաշվումների, եգիպտական ամսնորը՝ Թոթ առաջին ամսի 1-ը, համապատասխանել է օգոստոսի 29-ին: Այդ նույն ամսի 29-ին է համապատասխանել եգիպտական տոմարով առաջնորդվող վեց այլ ժողովուրդների ամսնորերը՝ եթովպացոց մաքարամը, աթենացոց մենեթոնը, բյութանացոց դեսոսը, կապադովկացոց արտանան, վրաց ախթելին, աղվանից նավասարդոնը: Հայկական տոմարը ևս պատկանել է եգիպտական խմբին, և նրա ամսնորը՝ նավասարդ ամսի 1-ը, համապատասխանել է օգոստոսի 29-ին: Դժվար է ասել, թե եգիպտական տոմարական խմբի մեջ մտնող այս ժողովուրդների զուգավորությունը՝ այսինքն նրանց ամսնորերը հոռոմեական տոմարով օգոստոսի 29-ին, երբ է սկսել, մի բան միայն անվիճելի է, որ Անդրեասի աղյուսակները կազմված էին այս ըս-

կրգրունքով: Ի տարբերություն վերև թվարկված բոլոր ժողովուրդների, հայերը ընդունելով Անդրեասի աղյուսակները, միակ ժողովուրդն են, որ չեն հետևել եգիպտական անշարժ տոմարին, բաժանվել են նրանցից և շարունակել գործ ածել շարժական տոմարը»²⁹: Ամեն ինչ պարզ է ասված. եգիպտական տոմարական խումբն են կազմել՝ եգիպտացիները, եթովպացիները, աթենացիները, բյութանացիները, կապադովկացիները, վրացիները, աղվանները և հայերը. ահավասիկ Շիրակացու և Վանականի ութ ազգերը: Իսկ եթե այդպես է, ապա պարզ է, որ հայերն էլ, մյուս յոթ ազգերի հետ, սկզբից և եթ գործադրել են Անդրեասի աղյուսակները: Ուրիշ կերպ չի էլ կարելի մտածել, որովհետև Անդրեասը իբր թե կազմել էր հենց այդ ութ ազգերի զատկացանկը: Այս տրամաբանական հետևությունից ելնելով՝ Ա. Գ. Աբրահամյանը փորձում էր նույնիսկ ապացուցել, որ Անդրեասի զատկացանկի թարգմանությունը կատարվել է IV դարում: Մենք այդ թարգմանության ժամանակի մասին վերը խոսել ենք, ուստի և այստեղ այլևս դրան չենք անդրադառնա, և կզբաղվենք միայն մեր առաջադրած հարցի պատասխանը գտնելով: Բայց դրա համար անհրաժեշտ է նախ պատասխանել հետևյալ հարցերին:

1. Ծի՞շտ է արդյոք, որ վրացիները, աղվանները և հայերը (ժամանակավորապես) մտել են եգիպտական տոմարական խմբի մեջ: Ո՞չ, ճիշտ չէ՞, եթե մենք նկատի ունենք շորորոգ դարը, այսինքն՝ Անդրեասի տոնացույցի ստեղծման ժամանակը: Վրացական տոմարի ուսումնասիրությունամբ զբաղված վրացագետները ցույց են տվել, որ IV—VI դարերում վրացիներն օգտագործել են Անդրեասի տոնացույցը՝ հայերի միջնորդությամբ: Մեզ զբաղեցնող հարցի սպառիչ պատասխանը գրտնում ենք Պ. Մուրադյանի մի ուսումնասիրության մեջ³⁰, որ նվիրված է հայ-վրացական մշակութային կապերին: Այդ ուսումնասիրության մեջ նա հատկապես քննության է առնում հայկական և վրացական օրացուցային համակարգերի առնչության հարցը և հենվելով հանգուցյալ ակ. Կ. Կեկելիձեի հետազոտությունների վրա՝ ցույց տալիս, որ վրացական օրացուցային համակարգը նույնական է եղել հայկականի հետ: Առանձնապես ուշադրով է Կ. Կեկելիձեի աշխատությունից բերված հետևյալ քաղվածքը. «552 թվականին ընդունած զատկական սիստեմը, հայ-վրացական մշակութային-եկեղեցական միության կապակցությամբ, պետք է ընդունված լիներ նաև Քարթլում, և այն տեղի կունենար ոչ միայն մինչև 609 թվականը, երբ հայ-վրացական (եկեղեցական) բա-

²⁹ Ա. Գ. Աբրահամյան, Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում» ժողովածու, № 4, 1967, էջ 70—71 (ընդգծումները մերն են.—է. Ա.):

³⁰ Պ. Մուրադյան, Հայ-վրացական գրական մշակութային փոխհարաբերությունների պատմությունից, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1964, № 10, էջ 55—68:

ժանրում կատարվեց, այլ նրանից հետո էլ՝ գրեթե մի ամբողջ դար, որովհետև փաստորեն մշակութային-եկեղեցական միությունը նրանց միջև շարունակվում էր մինչև ութերորդ դարի կեսը»³¹։ Եթե սրան ավելացնենք նաև այն փաստը, որ վրացիները մինչև ութերորդ դարի կեսն օգտագործել են հայկականին նման շարժական տոմարական համակարգ և, ինչպես շեշտում է նույն Կեկելիձեն, միայն դրանից հետո են «ձեռք քաշել հայկական սիստեմից և ստեղծել իրենց սեփական դատական «Քրոնիկոնը» կամ 532 տարվա պարբերաշրջանը»³², ապա պարզ կլինի, որ վրացիները մինչև VIII դարի կեսը շեն հետևել եզրիպտական օրացուցային համակարգին, հետևաբար և շեն էլ պատկանել այսպես կոչված եզրիպտական խմբին։ Սակայն VIII դարի կեսից հետո էլ, թեև վրացիներն ընդունել են եզրիպտական (ալեքսանդրյան) օրացուցային համակարգը, տարեմուտի օրով եզրիպտական խմբին շեն պատկանել, բայց Կեկելիձեի, մինչև IX դարի առաջին քառորդը վրացական ամանորը՝ Ախալժլիսա ամսվա 1-ը, համապատասխանել է օգոստոսի 6-ին, իսկ դարի առաջին քառորդից սկսած՝ մարտի 1-ին³³։ Ինչպես տեսնում ենք, մինչև IX դարը վրացական տոմարը եզրիպտական խմբին չի պատկանել, և Ա. Աբրահամյանի վերը բերված կարծիքը պատմական իրականություն չի համապատասխանում։ Ցավով պետք է շեշտել, որ տոմարի պատմությունը զբաղված մարդիկ հաշվի չեն նստել ո՛չ պատմության, և ո՛չ էլ պատմական ժամանակագրության հետ։ Այս տեսակետից առավել հատկանշական է հետևյալ փաստը. Ս. Բաղալյանն իր «Օրացույցի պատմություն» գրքում, խոսելով վրացական օրացույցի մասին և բերելով Կ. Կեկելիձեի այն կարծիքները, որոնց մասին խոսեցիք, գրում է հետևյալը. «Համաձայն Կ. Կեկելիձեի, վրացիները IX դարի առաջին քառորդում նոր տարին՝ Ախալժլիսայի 1-ը տեղափոխել են մարտի 1-ը։ Մեր կարծիքով ավելի հավանական է, որ վրացական նոր տարին սկսվել է ոչ թե օգոստոսի 6-ին, այլ՝ 29-ին, որը համապատասխանում է Հովհաննես Սարկավազի «Խառնախորանում» բերված յոթ աղզի տարեմուտին»³⁴։ Բայց կարծիքն ի՞նչ գործ ունի այստեղ. Կեկելիձեի գրածը (ախալժլիսայի 1 = օգոստոսի 6) վերաբերում է IX դարի առաջին քառորդին և զրան նախորդած ժամանակներին, իսկ Հովհաննես Սարկավազը (Իմաստասերը) XI—XII դարերի գործիչ է (մահացել է 1129 թվականին) և «Խառնախորանում» էլ բնականաբար բերել է տարբեր տոմարների գուգագրությունը իր ժամանակի համար, որի լավագույն ապացույցն է հայոց ամիսների գուգագրությունը ուրիշ ժողովուրդների ամիսների հետ՝ իր

կազմած տոմարի համաձայն (հմմտ. էջ 175, օգոստոսի սյունակում՝ «Հայոց նաւասարդ ամիս առաջին և տարեմուտ Սարկավազին»)։ Տասնմեկերորդ դարին վերաբերող և այդ դարի հեղինակի գրածի հիման վրա կարծիք հայտնել IX և նախորդ դարերի մասին՝ կասկածի ենթարկելով վրացագետի հետազոտությունների արդյունքը, անվաղն ժամանակագրական տվյալների անտեսում է։ Ի դեպ, Վանական վարդապետն էլ վերը բերած մեջբերման մեջ գրում է, թե վրացիների, ինչպես և եզրիպտական խմբի մյուս ժողովուրդների, տարեմուտը հայոց ամանորից չորս օր հետո է լինում, իսկ հայոց ամանորն էլ՝ «ընդ միջել ամարան» (ամառվա կեսին)։ Այս գուգագրությունը, սակայն, ոչ մի տվյալի չի համապատասխանում. եթե նկատի է առնվել Հովհաննեսի տոմարը, ապա հայոց ամանորը օգոստոսի 11-ն է, ուստի և եզրիպտական խմբին էլ՝ 4 օր հետո, օգոստոսի 15-ին, որ ճիշտ է։ Եթե հայոց ամանորի համար նկատի է առնվել շարժական տոմարը, ապա Վանականի ժամանակ (XIII դար) ամանորը չէր կարող լինել ո՛չ ամառվա կեսին, ո՛չ էլ, առհասարակ, ամառվա որևէ օրը, որովհետև 1201-ից մինչև 1320 թվականը նավասարդի 1-ը համընկել է հունվար ամսվա օրերից որևէ մեկին (հերթականորեն 31-ից մինչև 1-ը՝ յուրաքանչյուր քառամյակում)։ Սացույց է տալիս, որ մենք մեր մատենագիրների տեղեկությունները հալած յուրի տեղ չպետք է ընդունենք։ Ինչ վերաբերում է վրացական տոմարի պատմությանը, ապա այդտեղ էլ մեր առաջնորդը պիտի լինեն մասնագետների հետազոտությունները։ Տվյալ դեպքում այդ հետազոտությունները ապացուցել են, որ վրացական օրացուցային համակարգը, գոնե մինչև IX դարը, եզրիպտական տոմարական խմբին չի պատկանել։

Աղվանական տոմարի մասին գոյություն ունեցող պատկերացումները հիմնված են հայ տոմարագիրների տեղեկությունների վրա։ Ըստ այդ տեղեկությունների, աղվանական օրացույցը պատկանել է եզրիպտական խմբին. բայց երբվանի՞ց։ Առհասարակ որոշակիորեն հայտնի չէ, թե աղվանական տոմարը ո՞ր դարում է սկզբնավորվել։ Թուամանյանը գրում է հետևյալը. «Մատենագրարանի № 2180 ձեռագրում (թերթ 265 բ) նշված է, որ ալեքսանդրյան տոմարական խմբի ժողովուրդների թվականը գտնելու համար հայոց թվականին պետք է գումարել 96։ Եթե դա ճիշտ է, ապա աղվանները ևս, պատկանելով տոմարական այդ խմբին, ստացվում է, որ նրանք իրենց տարեթվերը հաշվել են մեր թվականությունից 456 թվականից (552—96)»³⁵։ Թուամանյանը գիտնականին հատուկ վերապահությունը է մոտենում այդ տվյալին, բայց նույնիսկ այդ վերապահությունը անտեսելու և 456 թվականն իբրև աղվանական թվականություն սկիզբ համարելու դեպքում էլ մեզ համար միանգամ

³¹ Նույն տեղում, էջ 57։

³² Նույն տեղում։

³³ Նույն տեղում։

³⁴ Լ. Ս. Բաղալյան, նշված աշխ., էջ 174։

³⁵ Թ. Թուամանյան, Տոմարի պատմություն, էջ 190։

մայն գոհացուցիչ եզրակացութեան կհանգենք. ազվանները եզիպտական անշարժ տոմարն օգտագործել են և եզիպտական տոմարական խմբի մեջ են մտել 456 թվականից, ուրեմն Անդրեասի զատկացանկի ստեղծումից (353 թ.) մինչև 456 թվականը եզիպտական խմբին շեն պատկանել: Սակայն 96 տարին, որ պետք է հանվի հայոց թվականից, ոչ այլ ինչ է, եթե ոչ 95-ամյա զատկացանկ, որ սկսվել է 456/457-ով և ավարտվել է 551/552-ով: Ուրեմն ազվանները առհասարակ շեն օգտագործել Անդրեասի 200-ամյակը: Սա ճիշտ եզրակացություն է և համապատասխանում է այն փաստին, որ Անդրեասի 200-ամյակի կազմության ժամանակ ազվանները դեռևս քրիստոնեություն չէին ընդունել:

Եթե վրացական ու ազվանական տոմարները, գոնե չորրորդ դարում, եզիպտական խմբին շեն պատկանել, ապա հայկականի մասին առհասարակ խոսք լինել չի կարող: Գիտենք, որ բուն հայկական թվականը շարժական օրացույց էր, մեծ թվականը՝ նույնպես, ուստի և եզիպտական անշարժ օրացույցային համակարգին չէր կարող պատկանել: Իսկ Հովհաննես Իմաստասերի տոմարով էլ ամանորը (Նավասարդի 1-ը) օգոստոսի 11-ն էր, որ տարբեր է եզիպտականից: Ա. Արրահամյանի այն սկզբումը, թի իր հայերը նույնպես մտել են եզիպտական խմբի մեջ, մի պարզ թվորիմացություն է, որ բխում է 353 թվականի հայոց Նավասարդի 1 = օգոստոսի 29 սխալ զուգադրությունից: Մենք արդեն ասել ենք, որ այդ վրիպումը Բ. Թումանյանը հենց ինքն էլ ուղղել է, սակայն Ա. Արրահամյանը հենվելով Բ. Թումանյանի հողվածի վրա և տողատակի ծանոթության մեջ էլ վկայակոչելով այն, բոլորովին սխալ հետևություն է հանգում: Բանն այն է, որ հայոց տոմարը ինչպես IV, այնպես էլ հետագա դարերում, շարժական օրացույցային համակարգ էր ներկայացնում, որի դեպքում ամանորն էլ շարժական է և չորս տարին մեկ օր առաջ շարժվելով՝ «թափառում» և ընկնում է տարվա բոլոր օրերին: Այնպես որ, եթե նույնիսկ 353 թվականին հայոց Նավասարդի 1-ը օգոստոսի 29-ին համապատասխանած լիներ, դարձյալ չէր կարելի ասել, թե հայկական տոմարը պատկանել է եզիպտական խմբին, հենց այն պարզ պատճառով, որ եզիպտական տոմարական համակարգը արեղակնային անշարժ օրացույց էր, իսկ հայերինը՝ շարժական:

2. Ինչ են նշանակում Հովհաննեսի «է ազգաց»-ը և Վանականի «ուր ազգաց»-ը՝ երկրորդ մեքենումն մեջ: Հովհաննեսի «Եսանախորանում» աջ էջը ներկայացնում է ձախ էջի 19 սյունակներին համապատասխանող ամիսներն ու ամսաթվերը՝ տարբեր ժողովուրդների օրացույցային համակարգերով. եզիպտական խմբում, բացի եզիպտացիներից, հիշվում են եթովպացիները, ասթենացիները, բյութանացիները, կապադովկացիները, վրացիները, ազվանները (ընդամենը՝ 7): Նույն 7 ժողովուրդներին է հիշում նաև «Պատմեն տոմարի» աշխատության մեջ «Զուգադրություն է

ազգաց՝ Եզիպտացուց, Եթովպացուց, Աթենացուց, Կապադովկացուց, Վրաց և Աղուանից այսպէս արա»³⁶:

Ինքնին հասկանալի է, որ ոչ «Եսանախորանի» մեջ հիշված յոթ ազգերը, ոչ էլ այս հատվածի 7-ը, որ նույն ազգերն է թվարկում, ոչ մի կապ չունի Անդրեասի զատկացանկի. ինչպես և Շիրակացու «ուր ազգերի» հետ: Նույնն է նաև Վանականի գրածը տարեմուտի մասին, որտեղ թվարկում է յոթ ժողովուրդի անուն, թեև ասում է «ուր ազգաց». այդ սխալագրությունը առաջացած «ուր» ոչ մի կապ չունի Անդրեասի զատկացանկը օգտագործած ժողովուրդների հետ, այլ իր մի այլ տեղեկություն հետ, որի մեջ խոսվում է դարձյալ «ուր ազգերի» մասին: Ինչպես Հովհաննեսը, այնպես էլ Վանականը լուր թվարկում են եզիպտական տոմարական համակարգով առաջնորդող յոթ ժողովուրդների անունները. ճիշտ է այդ թվարկումը, թե ոչ, մեզ համար ոչ մի նշանակություն չունի, կարևորը մեզ համար այն է, որ երկու հեղինակների ասածները շեն վերաբերում այն բանին, թե ովքեր են օգտագործել Անդրեասի տոնացույցը, և ոչնչով չեն կարող օգնել այդ խնդրի լուսաբանությանը:

3. Ու՛մ համար է կազմել Անդրեասն իր երկուհարյուրամյակը.— ինչպես արդեն ասել ենք, Շիրակացու «ուր ազգաց»-ը և Վանականից մեջ բերված առաջին հատվածի «ուր ազգաց»-ը մեկնաբանվում են որպես ուղղակի տվյալ այն մասին, որ Անդրեասն իր երկուհարյուրակը կազմել է ութ ժողովուրդների համար, որոնցից մեկն էլ հայերն են: Այս վարկածը ինքնին թելադրում է պարզել, թե ում համար է կազմել Անդրեասն իր զատկացանկը: Հասկանալի է, որ դրա համար մենք առաջին հերթին իրեն իսկ՝ Անդրեասին պետք է դիմենք, և ոչ թե հետագայի հեղինակների տեղեկություններին, իսկ Անդրեասը ահա թե ինչ է ասում. «Արդ՝ քանզի տուշութիւն եկեղեցւոյ այսպէս ուսուցանէ պահել ամի ամի դարն բաղարջակերաց, ...և վարդապետութիւն Տեան մերոյ տարածեցաւ կալաւ դաշխարճ ամենայն, վասն այսորիկ երկերիւր ամի միանգամայն համարեցայ ըստ թուոյն Անտիոքացւոց ի շորեճարիւրողէ առաջներողէ ամէն մինչև յամն վեցճարիւրերորդ այնոցիկ, որ կացցեն աշխարհի, կազմեցի ես՝ Անդրէաս, հղբայր Մազնոսի եպիսկոպոսի...»³⁷: Առաջադրված հարցի սպառիչ պատասխանը տվել է 200-ամյա աղյուսակների հեղինակը՝ Անդրեաս Բյուզանդացին, ըստ որում հնարավոր չէ մտքով անգամ անցկացնել, թե բերված հատվածում թարգմանչի կամ հետագայի արտագրողների ընդմիջարկություն կա, որովհետև որոշակիորեն ասված է՝ «...նրանց համար, ովքեր կան (բառացի՝ կլինեն) աշխարհում, կազմեցի ես՝ Մազնոսի եղբայր Անդրեասը...»:

³⁶ Հովհ., էջ 216:

³⁷ Տե՛ս սույն գլխին կցված թարգմանության տեքստում:

Իսկ եթե այդպես է, ապա ոչ մի հիմք չունի «ուժ ազգերի» առասպելը: Անդրեասը կազմել է իր զատկացանկը ողջ քրիստոնեական աշխարհի համար և դրա պատմական հիմունքն էլ հայտնի է: Չատկի տոնակատարության օրվա մասին որոշում ընդունել էր քրիստոնեական եկեղեցիների տիեզերածողովը, ուստի և Անդրեասն էլ կազմում էր իր 200-ամյա զատկացանկը՝ բոլոր քրիստոնյաների համար: Ինքնին հարց է ծագում, եթե Նիկիայի տիեզերածողովը որոշում էր ընդունել զատկի տոնի մասին, ապա Ի՞նչ կարիք կար դրանից հետո ինչ-որ աղյուսակներ կազմելու, բավական չէ՞ր, արդյոք, այդ որոշումից ելնելով՝ ամեն տարի որոշել գիշերահավասարի օրվան հաջորդող լիալուսնի օրը (զատկական կամ ավագ լրումը) և դրա հիման վրա էլ՝ զատկի օրը (ավագ լրումին անմիջապես հաջորդող կիրակի օրը): Կարելի էր, բայց դա կապված էր բավականին բարդ հաշվումների հետ: Նույնիսկ գիտությունների, մասնավանդ աստղագիտության զարգացման արդի մակարդակում էլ լուսնի փուլերի, նորալուսնի ու լիալուսնի օրերի և առհասարակ, լուսնի հասակի (լուսնային ամսվա օրերի) որոշումը բավականին բարդ հաշվումներ են պահանջում, ըստ որում այդ հաշվումների հիմքում էլ ընկած է իննետասներյակը, այսինքն՝ լուսնային 19 տարիների պարբերաշրջանը: Հնում, ինչպես վերն ասել ենք, արդեն առաջնորդվում էին 19-ամյա պարբերաշրջանի աղյուսակներով (իննետասներյակ-ներով), որոնք, Կալիպոսի ուղղումով, փոխարինվեցին 76-ամյա, իսկ շորթորդ-հինգերորդ դարերում՝ նաև 95-ամյա աղյուսակներով. այս երկուսն էլ, ինչպես հեշտությամբ կարելի է իմանալ, համապատասխանորեն 4 և 5 տասնիննամյակների ամբողջություն են: Անդրեասի 200-ամյակն էլ, ըստ էության, այդպիսի իննետասներյակների մի ամբողջություն է, որ բովանդակում է երկու լրիվ 95-ամյակ կամ այլ կերպ՝ 10 իննետասներյակ և 10 տարի, որից ութը՝ Անատոլիոսի աղյուսակների շարունակությունը (իննետասներյակի 12—19-րդ տարիները՝ 353—60 (ներառյալ) թվականներ) և 2-ը՝ նոր իննետասներյակի առաջին երկու տարիները (551 և 552 թթ.):

Առաջադրված հարցերին տրված մեր պատասխաններից ու պարզաբանումներից բխում է մեկ եզրակացություն. Անդրեաս Բյուզանդացին կազմել է իր 200-ամյա աղյուսակները ողջ քրիստոնեական աշխարհի համար, ուստի անհիմն է այն ենթադրությունը, թե իբր այդ աղյուսակները կազմվել են «ուր ազգերի» եգիպտական խմբի 7 ազգերի և հայերի համար:

Այս եզրակացությունը, սակայն, պահանջում է պարզել, թե ինչ են նշանակում Շիրակացուց և Վանականից բերված քաղվածքները, հատկապես նրանց մեջ գործածված «ուժ ազգաց» արտահայտությունը: Շիրակացին վերը բերված հատվածում ասում է, որ Հուստինիանոս կայսեր զահակալության 34-րդ տարում և պարսից խոսքով թագավորի՝ 24-րդ

տարում լրացավ («եղև լրումն») 260-ամյակը «կարգացն Անդրիասայ Ը ազգաց»: Դրանից հետո մեր թվականը «այլուտտ» է: Սա ինքնին նշանակում է, թե 552 թվականին ավարտված 200-ամյակը հայերի կողմից օգտագործվել է, իսկ դրանից հետո հայերն այլ թվական են ունեցել: Սակայն, ժխտելով այդ («Այն չէ»), շարունակության մեջ հետևյալ պատասխանն է տրվում. «Տոնական կանոնքն Անդրեասի, զոր եղ նա ինքննէ առաջ Ը ազգաց, աստ կատարեցան». այստեղ էլ, ըստ էության, նույն բանն է ասվում՝ ավարտվեցին ուր ազգերի տոնական կանոնները, որոնք դրել (= սահմանել) է Անդրեասը: Ի՞նչ ուժ ազգեր են: Շիրակացին ոչինչ չի ասում, սակայն այդ ամբողջ հատվածի բովանդակությունը պարզաբանում է Վանական Վարդապետը, վերը բերված իր մեկ նախադասությունում. «Անդրեաս՝ եղբայր Մանգնոսի եպիսկոպոսի, միաբանություն արար ութն ազգաց լրմանց իննետասներեկաց և կարգեաց զերկերիւրեակն»: Այս նախադասության «միաբանություն արար»-ը հնարավորություն է տալիս լուսաբանելու «ուժ ազգերի» առասպելը: Դրաբարում միաբանությունը առնել հարադրավոր բայը նշանակում է. 1. Միաբանեցնել, համերաշխ դարձնել, համաձայնության բերել, 2. Համապատասխանություն ստեղծել, միմյանց համաձայն՝ համապատասխան դարձնել, զուգակցել, զուգադրել: Նշանակում է, ըստ Վանականի, Անդրեասը զուգակցել, համապատասխանեցրել է ուժ ազգերի իննետասներյակների լրումները: Իսկ Ի՞նչ է իննետասներյակների լրումների համապատասխանեցումը, զուգակցումը կամ միաբանությունը. տարբեր ժողովուրդների տոմարներով տասներեք տարիների (իննետասներյակի) զատկական լրումների որոշումն ու դրանց զուգադրական աղյուսակների կազմումը, իսկ դրա հիման վրա էլ՝ զատկի և մյուս տոների օրերի սահմանումը և դրանց տախտակների կազմումը: Մեր ասածը պարզ դարձնելու նպատակով բերենք մեկ օրինակ: Շիրակացու մատենագրության մեջ որպես նրան պատկանող աշխատություն³⁸ հրատարակված տեքստում կարդում ենք. «Զուգադրություն ժԲ ազգաց այսպես արա... լրումն ժԲ ազգաց այսպես արա, կալ զլրումն հոռոմին, թէ յայրելն է, է ի վերայ աժ՝ եգիպտացուց է և իւրոցն: Դարձյալ կալ զլրումն հոռոմին, ժ ի վերայ աժ՝ երբայցեոց է, արաբացուց և մակեդոնացուց: Դարձեալ կալ զհոռոմին, Դ ի վերայ աժ և զամսանահանջն Ե երթ, որ ի խոնարհ մնայ,

³⁸ Դա, իսկապես, աշխատություն չէ, այլ զանազան նյութերի ծաղկաբաղ: Իրեն վերնագիր գրված է «Անանիայի Շիրակացու Որչափութիւն Ե-եկի», բայց Ե. եպիսկոպոսը բերում է ընդամենը 4 տող. այնուհետև հակիրճ տեղեկություններ են տրվում լուսնի ժամերի, ընթացքի, օրվա ժամերի, տարբեր տոմարներով լրումների զուգավորությունը և այլն: Հավանական է, որ մի մասը քաղված է հենց Շիրակացու գործերից, բայց կան նաև այլ հեղինակներից քաղված հատվածներ:

լրումն է հայոց»³⁹։ Այստեղ 12 ժողովուրդների տոմարներով, որոնք շորս կարգի են բաժանված (հոռոմ, եգիպտական, եբրայական և հայկական), զուգավորություն է արվում լուսնի զատկական լրումը գտնելու համար, ըստ որում արվում են այն կանոնները, որոնց օգնությամբ պետք է գտնել։ Սա էլ, ահա, լրումների միաբանության առնել-ն է, որի համանիշն է զուգադասության առնել-ը։ Եթե այդ կանոնների համաձայն որոշենք, օրինակ, 19 տարիների լրումները թվարկված ժողովուրդների տոմարներով և դա արտահայտենք տախտակներով, կունենանք 12 ազգերի լրումների աղյուսակը։ Այժմ կրկին վերադառնանք Շիրակացուն։ Տոնական այն կանոնները, որոնք նա դրեց (կարգեց, սահմանեց) «ուր ազգերի համար...», — գրում է նա։ Ուրեմն Շիրակացին էլ, որ ժամանակով շատ ավելի մոտ է Անդրեասին, նույն բանն է ասում, ինչ որ Վանականը։ Եզրակացությունը միանգամայն պարզ է։ Շիրակացու և Վանականի «ուր ազգերը» այն ժողովուրդներն են, որոնց տոմարները զուգադասելով՝ կազմել է իր զատկացանկը, իսկ դա էլ, իր հերթին, նշանակում է, թե Անդրեասը կազմել է իր իննետասներյակը բոլոր Բրիտանյա ժողովուրդների համար՝ զուգադասելով ուր ժողովուրդների տոմարները, այսինքն՝ իր աղյուսակների մեջ ընդգրկելով ուր ժողովրդի տոմարական համակարգ։ Ըստ այսմ, այդ աղյուսակները եղել են ընդհանրական ուղեցույց տախտակներ, որոնց հիման վրա մյուս ժողովուրդներն էլ կարող էին կազմել իրենցը։

Այս բոլորից հետո մնում է պարզել, թե որոնք են այդ ժողովուրդները։ Անդրեասի՝ մեզ հասած թարգմանության մեջ հիշատակվում են հետևյալ ժողովուրդների ամսանունները. եգիպտացիների, անտիոքացիների, հոռոմացիների և հայերի։ Վերը մենք ապացուցեցինք, որ հայկական ամսանունները թարգմանչի հավելումներն են, ուրեմն մնում են երեք տոմարական համակարգեր. հոռոմեական, եգիպտական և անտիոքյան։ Այս երեք համակարգերով առաջնորդվում էին 9 ժողովուրդներ (հոռոմեական—1, անտիոքյան—3, հույներ, ասորիներ, անտիոքացիներ, եգիպտական—5, եգիպտացիներ, եթովպացիներ, ավենացիներ, բյուրանացիներ, կապադովկացիներ), բայց այդ ցանկից պետք է հանել հույներին, ուստի և մնում է ութ ժողովուրդ։ Որ իսկապես միաբանության բերված ժողովուրդներին պետք է հաշվել առանձին-առանձին և ոչ թե յուրաքանչյուր տոմարական խմբի մեջ մտնողներին համարել մեկ միավոր (այդ դեպքում Անդրեասի ցանկում կունենայինք 3 միավոր և ոչ ութ), հեշտությամբ ապացուցվում է Շիրակացու և Հովհաննեսի տոմարական աղյուսակների տվյալներով։ Շիրակացին իր Հայտնության ճառում՝ որոշելով հայտնության օրը տարբեր ժողովուրդների տոմար-

ներով, թվարկում է. «Առաջին Յայտնութիւն ասորւոց... Իններորդ Յայտնութիւն ըստ հայոց...»⁴⁰, ընդամենը ինը ժողովուրդ, որոնցից, սակայն, հոռոմեացիները, հույները, ասորիները 1 խումբ են կազմում, եգիպտացիները, եթովպացիները, մակեդոնացիները՝ մեկ խումբ, արաբացիները և հայերը առանձին-առանձին՝ մեկական, ուրեմն՝ 4 տոմարական խումբ։ Հովհաննես Իմաստասերի «Նառնախորանում» էլ թվարկվում է 15 ժողովրդի անուն, և հետագայի մեր տոմարագետներն ու պատմիչները սովորաբար գրում են, թե Հովհաննեսը «միաբանություն արար 15 ազգաց», թեև այդ ազգերը խմբավորված են վեց տոմարական խմբում։ Այս բոլորի հիման վրա մենք գտնում ենք, որ Անդրեասի հիշած երեք տոմարական համակարգերը ներկայացնում են այն «ուր ազգերին», որոնց մասին խոսում են Շիրակացին ու Վանականը։ Կարևոր հանգամանք է այն, որ հիշյալ երեք խմբերի տոմարներն էլ ներկայացնում էին անշարժ օրացուցային համակարգ։ Ասվածներից կարելի է հետևյալ եզրակացություններին հանգել։

Ա) Անդրեասը իր 200-ամյա աղյուսակները կազմել է՝ ընդգրկելով ութ ազգերի, որոնց տոմարները կազմում էին երեք տոմարական խումբ՝ մեկ օրացուցային համակարգով, այն է՝ արեգակնային անշարժ օրացուցային համակարգով (տարին պարունակում էր 365 1/4 օր, 4 տարին՝ 1461 օր)։ Միևնույն օրացուցային համակարգի երեք տոմարական խմբերի բաժանվելը պայմանավորված էր ամանորը տարվա տարբեր պահերին լինելով (հոռոմեականը՝ հունվարին, եգիպտականը՝ օգոստոսին, ասորականը՝ հոկտեմբերին), ինչպես և՛ նահանջ տարվա հերթական կարգով (հոռոմեականը և ասորականը՝ 4-րդ, եգիպտականը՝ 3-րդ)։

Բ) Անդրեասի 200-ամյակը, ինչպես հեղինակը գրել է, ամբողջ քրիստոնյա աշխարհի համար է կազմվել՝ անշարժ օրացուցային համակարգի հիման վրա, որպես ընդհանրական ուղեցույց, բայց դա չի նշանակում, թե բոլոր քրիստոնյա ժողովուրդներն իսկապես գործածել են այդ տոնացույցը. հայտնի է, օրինակ, որ ալեքսանդրիացիները, հույները և հոռոմեացիները ստեղծել են իրենց սեփական զատկացանկերը։

Գ) Հայերը, ինչպես և բազմաթիվ ուրիշ ժողովուրդներ, որոնք առաջնորդվում էին տարբեր կարգի (լուսնային, լուսնաարեգակնային, արեգակնային) շարժական օրացուցային համակարգերով, Անդրեասի 200-ամյակն օգտագործելու համար, այդ ընդհանրական ուղեցույցի տվյալները (հայտնության օր, զատկի օր և այլն) պետք է հարմարեցնեին իրենց օրացուցային համակարգին, այսինքն՝ հիշյալ 3 խմբերից որևէ մեկի և իրենց տոմարի զուգադասությամբ կազմեին տոնական աղյուսակները։

³⁹ Եր., էջ 301։

⁴⁰ Նույն տեղում, էջ 290։

Այս վերջին կետն արդեն ինքնին ցույց է տալիս, որ հայերը, եթե օգտագործելու էլ լինեին Անդրեասի 200-ամյա աղյուսակները, պետք է դրանք հայկական տոմարին համաձայնեցնեին, իսկ դա նշանակում է, թե ըստ էության նոր տոնացույց կազմեին՝ որևէ անշարժ տոմարի և հայկական շարժական տոմարի գույքագրությամբ, մոտավորապես այնպիսին, ինչպիսին կազմել է Աթանասը՝ 532 տարիների համար: Եթե նկատի ունենանք նաև, որ զատկի օրը շարժական է և «թափառում է» 35 օրերի միջև (մարտի 22-ից — ապրիլի 25-ը), ապա շարժական տոմարի համար անհրաժեշտ է բավականին բարդ հաշվումներ կատարել: Այս տեսակետից շատ ուշագրավ է հետևյալը: Խոսելով տարբեր տոմարներով հայտնություն օրվա որոշման մասին՝ Շիրակացին հերթականորեն թվարկում է ութ ժողովուրդների հայտնություն օրը (օրինակ՝ «Յայտնություն ըստ երբայնցսցն Տիֆեթ՝ ամսոյ, որ օր ԻԱ է միշտ») և ապա ավելացնում. «Իններորդ Յայտնություն ըստ հայոց փոփոխմամբ է ըստ շորից շորից ամաց եւ եթէ դիտւո՞րդ գիտելի է, և կամ ընդէ՞ր ոչ առկայացեալ ըստ այլոց ազգաց, չիրւում տեղոջ պատմեցից ըստ կարգի տոմարին»⁴¹: Այս մեջբերումը շատ պերճախոս է հետևյալ պատճառով. հայ տոմարագետը հայտնություն նվիրված ճառի մեջ թվարկում է ութ ժողովուրդների այդ տոնի օրը իրենց տոմարներով, որ հայ ունկնդրին կամ ընթերցողին բոլորովին էլ անհրաժեշտ չէ, իսկ հայոց տոմարով այդ նույն օրը չի նշում և ասում է, թե այդ օրը հայոց տոմարով գտնելու մասին կպատմի իր տեղում՝ տոմարի կարգի (կանոնների) բացատրություն մեջ: Սակայն որքան էլ դա առաջին հայացքից տարօրինակ թվա, Շիրակացին այլ կերպ վարվել չէր կարող, որովհետև հայոց տոմարով հայտնություն օրը, ինչպես ինքն է ասում, «փոփոխմամբ է» ու կարող էր տրվել համապատասխան ցուցակով և ոչ թե մի պարզ կանոնով: Եթե այդպես է հայտնություն տոնը իմանալու համար, իսկ այդ օրը կայուն օր է (հունվարի 6), ապա է՛լ ավելի մեծ բարդություն էր ներկայացնում զատկի օրվա որոշումը, և հենց այդ է պատճառը, որ հարկադրված էին տասնինն տարիների լուսնի ավագ լրումների, իսկ դրանց հիման վրա էլ՝ զատկի օրերի հատուկ աղյուսակներ կազմել թե՛ անշարժ և թե՛ շարժական տոմար ունեցող ժողովուրդների համար: Այժմ, եթե նկատի ունենանք, որ Անդրեասի 200-ամյա աղյուսակները կազմվել էին անշարժ օրացույց ունեցող ութ ժողովուրդի տոմարներով, ապա պարզ կլինի, որ հայերը, թեև կուզեին և այդ երկուստեքայնի հիման վրա, պետք է կազմեին նոր աղյուսակներ՝ իրենց տոմարին համարեցրած: Վերջապես, կար մի հանգամանք ևս, որը հարկադրում էր հայերին իրենց սեփական զատկացանկը կազմել. դա գիշերահամարի օրվա տարբերությունն էր: Ինչ-

պես տեսանք, Անդրեասի տոնացույցով իբրև գիշերահամարի օր էր սահմանված մարտի 21-ը, մինչդեռ հայերի գիշերահամարի օրն էր մարտի 20-ը, որ նաև հայկական ամսնորի օրն էր: Դա հայերի համար բազում դարերի պատմությամբ սրբագործված օր էր, և ինչպես կտեսնենք ստորև, այդպիսին է եղել մինչև XVII դարը: Եվ քանի որ գիշերահամարը առաջնակարգ նշանակություն ունի զատկի օրվա որոշման համար, ապա պարզ է, որ հայկական գիշերահամարի օրը նույնպես թելադրում էր վերափոխել Անդրեասի աղյուսակները: Այս բոլորը, մեր կարծիքով, բավականաչափ հաստատուն կովաններ են, որոնք թույլ են տալիս ապացուցված համարելու, որ հայերը, ինչպես և շարժական օրացույցային համակարգ ունեցող շատ ուրիշ ժողովուրդներ, չէին կարող ուղղակիորեն գործադրություն մեջ դնել Անդրեասի 200-ամյա աղյուսակները: Իսկ սա էլ, բնականաբար, թելադրում է այն միտքը, որ այդ աղյուսակներով առաջնորդվելու համար դրանք պետք է վերափոխեին, հարմարեցնեին իրենց տոմարներին կամ դրանց հիման վրա կազմեին իրենց համար սեփական զատկացանկեր: Քանի որ այս դեպքում վերափոխելն էլ ըստ էության նորը կազմելուն հավասար էր, ուստի և հայերը պետք է իրենց համար կազմեին սեփական զատկացանկ՝ Անդրեասի 200-ամյա աղյուսակների հիման վրա կամ անկախ դրանից: Չէ՞ որ հույներն ու ալեքսանդրացիներն էլ կազմել էին իրենց 76-ամյա աղյուսակները:

Ելնելով այդ վարկածից, այժմ փորձենք պարզել, թե ինչպիսի աղյուսակներ կազմեցին հայերը, պատմական ինչպիսի հանգամանքներում և ինչ տվյալներով կարող ենք հիմնավորել առաջադրված հարցի պատասխանը:

Պատմությունից գիտենք, որ շորթորդ դարի կեսերում հայ Արշակունիները, մասնավորապես Արշակ թագավորը, հիմնականում հունամետաղաբանականություն էին վարում: Հայտնի է, որ հենց նույն Արշակն էր, որ ներսես Պարթևին հանձնեց հայոց կաթողիկոսությունը՝ 352 թվականին: Արդ, Փավստոս Բյուզանդացին պատմում է, որ ներսեսը կաթողիկոսական աթոռին նստելով, զգալիորեն բարեխալեց եկեղեցական գործերը, եղավ Բյուզանդիայում, որտեղից վերադառնալուց հետո գումարեց եկեղեցական ժողով: Եկեղեցական ժողովը, ինչպես հայտնի է, տեղի է ունեցել 356 թվականին, Աշտիշատում, որից ինքնին հայտնի է դառնում, որ ներսեսը Բյուզանդիայում է եղել 352 թվականից (աթոռակալության սկզբից) մինչև 356 թվականներ միջոցին: Այդ ժամանակամիջոցն էլ, սակայն, կարող ենք կրճատել. ներսեսը աթոռակալեց 352 թվականին և, հասկանալի է, որ նա կաթողիկոսական աթոռը գրավելուն պես չէր գնա Բյուզանդիա, այլ գոնե մեկ տարի կժամանե տարի գրությունը, խորամուկս վլիներ իր անելիքների մեջ և հետո միայն կդիմեր դեպի Բյուզանդիա: նույնպես և՛ Բյու-

⁴¹ նույն տեղում, էջ 290:

զանդիայից վերադառնալուն պես չէր հրավիրի եկեղեցական ժողով: Ժամանակ էր հարկավոր, որպեսզի նախապատրաստեր այդ ժողովը, քննության առնվող հարցերն ու ընդունվելիք որոշումները ուսումնասիրեր, նաև խորհրդակցեր բարձրաստիճան հոգևորականների հետ և այլն, և այլն: Այս նկատառումներն, ահա, թույլ են տալիս նշված թվականներից հանել 352-ը և 355-ը, որով և նրա ուղևորությունը կրկին 353—355 թվականների միջոցին, այսինքն՝ հենց այն ժամանակամիջոցին, երբ Անդրեասը նոր էր կազմել իր 200-ամյա աղյուսակները: Քանի որ, ինչպես տեսանք, Անդրեասի այդ զատկացանկը ժամանակագրորեն շարունակությունն էր Անատոլիոսի զատկացանկի, իսկ հայերը օգտագործել են Անատոլիոսի զատկացանկը որպես հիմք՝ իրենցը կազմելու համար, ապա ինքնին հասկանալի է, որ հենց Անդրեասի հետ միաժամանակ պետք է հայերն էլ կազմեին նոր զատկացանկ, և որովհետև հենց այդ տարիներին հայոց կաթողիկոս ներսեսը գտնվում էր Բյուզանդիայում, ապա, ի թիվս այլ գործերի, նա պետք է հոգ տաներ նաև զատկացույց կազմելու մասին: Եվ շատ հավանական է, որ նա իր հետ Բյուզանդիա տարած մարդկանցից տոմարագրիտությունը քաջատեղյակ մեկին հանձնարարեց զատկացույց կազմել, թեկուզ և Անդրեասի աղյուսակների հիման վրա: Եվ որովհետև հայերը մինչև այդ գործածել էին այնքանազրբյան 76-ամյա աղյուսակներ, ապա շարունակելով ավանդույթը, նոր զատկացանկն էլ կազմեցին 76 տարիների համար: Այս վերջին 76-ամյա զատկացանկ կազմելու մասին ենթադրությունը բխում է այն փաստից, որ հայերն ուրիշ կետերում էլ հավատարիմ են մնացել ավանդույթներին: Գրանցից առաջինը, ինչպես վերն ապացուցել ենք, գիշերահավասարի օրվա անխախտ պահպանումն է. Անդրեասի կազմած աղյուսակների համաձայն, ամբողջ քրիստոնեական աշխարհը որպես վարնանային գիշերահավասարի օր ընդունեց մարտի 21-ը, ըստ որում այդ օրն ընդունեցին նաև այն ժողովուրդները, որոնք ոչ թե Անդրեասի զատկացանկն էին օգտագործում, այլ իրենց սեփականը: Հայերն այս դեպքում առանձնացան ողջ քրիստոնեական աշխարհից՝ իրենց դարավոր ավանդույթը շխախտելու համար և այդ ավանդույթը պահպանվեց նաև հետագայում, ընդհուպ մինչև XVII դարի սկիզբները, մասամբ նաև այլևի ուշ: Գիշերահավասարի օրվա այս տարբերությունը պահանջում էր նիկիայի ժողովի որոշման մասնակի խմբագրություն կամ ճշգրտում հետևյալ կետում: Ինչպես տեսանք, նիկիայի ժողովի որոշման համաձայն զատկական լրումը պետք է հաջորդեր գիշերահավասարի օրվան, իսկ զատկական կիրակին էլ՝ զատկական լրումին: Այս կանոնների համաձայն գիշերահավասարի օրվան (մարտի 21-ին) մեծավորագույն զատկական օրը կարող է լինել մարտի 22-ը, եթե այդ լիալուսինը լինի մարտի

21-ին, և հաջորդ օրը՝ մարտի 22-ը՝ կիրակի: Եթե լիալուսնի այդ օրը (մարտի 21-ը) լիներ կիրակի օր, ապա զատիկը կլիներ հաջորդ կիրակի օրը: Վերջապես, նիկիայի ժողովի որոշման մեջ կար ևս մի վերապահություն. եթե զատկական լիալուսնի օրը կիրակի է, ապա զատիկը փոխադրվում է հաջորդ կիրակի օրվան: Վերը մենք տեսանք, որ Անդրեասի երկուհարյուրամյակի առաջին տարում՝ 353 թվականին, զատկական լրումը եղել է ապրիլի 4-ին, կիրակի օրը, որի պատճառով էլ զատիկը փոխադրվել է հաջորդ կիրակի օրվան՝ ապրիլի 11-ին: Եթե այս կանոնների լույսի տակ փորձենք որոշել հայոց գիշերահավասարի մերձավորագույն զատկի օրը, ապա կստանանք մարտի 21-ը: Իսկապես, եթե լիալուսինը լինի գիշերահավասարի օրը և այդ օրն էլ լինի շաբաթ, ապա կիրակի օրը, որ հաջորդում է և՛ գիշերահավասարին, և՛ լիալուսնին, կլիներ զատկի օր: Բայց դա կհակասեր նիկիայի ժողովի որոշմանը, որի համաձայն, ինչպես տեսանք, մարտի 21-ը զատկական օր լինել չէր կարող: Հասկանալի է, որ հայերը՝ անփոփոխ պահելով իրենց գիշերահավասարի օրը, որ մեկ օրով առաջ էր Անդրեասի աղյուսակով սահմանվածից, պետք է գտնեին ինչ-որ սահմանափակում կամ վերապահություն, և գտան: Ինչպես ասվեց, նիկիայի ժողովի որոշման համաձայն, եթե լուսնի զատկական լրումը կիրակի օրվան է զուգադիպում, զատիկը փոխադրվում է հաջորդ կիրակի օրը. հայերը նույնպիսի սահմանափակում մտցրին նաև շաբաթ օրվա համար: Այդ մասին որոշակիորեն ասվում է Անդրեասի տեքստի հայերեն թարգմանության այն հատվածում, որ մենք համարեցինք հայ թարգմանչի հավելում. «Եթե դիպեցի օրն (շաբաթ) շրեքտասաներորդին լուսնի, անցանէ, դի երթիցէ հասցէ ի միւս շաբաթ»: Նույնն է գրում նաև Շիրակացին. «Եթե դիպեցի շրեքտասան օրն լուսնի ի շաբաթուն, անցանէ ասորք միով, դի մի տօնեցի ընդ հրէին. եւ փոխանակեսցէ կիրակի սուտ ընդ ճըշմարիտ կիրակէին»⁴²: Երկու մեջբերումներում էլ պարզ կերպով ասվում է, թե լիալուսինը շաբաթ լինելու դեպքում բաց է թողնվում մեկ օր, այսինքն՝ կիրակին, հասնում մյուս կիրակիին: Սա ըստ էության հակասում էր նիկիայի ժողովի ընդունված սահմանափակումին (զատիկը մեկ շաբաթով հետաձգվում է, եթե լիալուսինը զուգադիպում է կիրակի օրվան), և այս հակասությունը ցայտուն կերպով արտահայտվել է Անդրեասի հայ թարգմանչի բացատրականում: Ասելով, թե եթե լուսնի լրումը շաբաթ օրվան զուգադիպի, պետք է անցնել մյուս շաբաթվան, գրում է նաև հետևյալը. «Ձի թէ դիպեցի շրեքտասաներորդն ի շաբաթու, յառաջագույն պահէ յերկուշաբաթոյն մինչև ի շաբաթն և ունի

⁴² Նույն տեղում, էջ 297:

զկարգն կատարեալ—որովհետեւ եթէ 14-րդը զուգահիւսի շաբաթին—(շաբաթ օրվան), նախապէս պահում է երկուշաբթիից մինչև շաբաթ օրը և կարգը կատարած է լինում: Սա միանգամայն համապատասխան է Նիկիայի ժողովի կողմից ընդունված սահմանափակման. եթէ լիալուսնի օրը զուգահիւսում է կիրակի օրվա, զատիկը մեկ շաբաթով հետաձգվում է, իսկ եթէ շաբաթ օրվա է զուգահիւսում, ապա հաջորդ օրը (կիրակի օրը) զատիկ է և շարժարանաց օրերն սկսվում են հենց այդ կիրակիին նախորդած երկուշաբթի օրվանից: Բայց նախորդ երկու մեջբերումներում այլ բան է ասվում. եթէ լիալուսնի օրը զուգահիւսի շաբաթ օրվա, ապա պետք է անցնել հաջորդ շաբաթվան: Սա բացահայտորեն շեղում է Նիկիայի ժողովի սահմանափակումից, և այդ շեղումը հայերը թույլ են տվել միայն մեկ նպատակով, բացառել մարտի 21-ին զատիկ անելու հնարավորությունը: Մենք այդ փոքրիկ փաստի մասին այսպէս մանրամասնորեն խոսեցինք՝ ցույց տալու համար, որ հայերը՝ իրենց ավանդույթը շխախտելու և մարտի 20-ը որպէս գիշերահավասարի օր պահպանելու նպատակով, գիտակցաբար Նիկիայի ժողովի ընդունած սահմանափակումին մի սահմանափակում ևս ավելացրել են շաբաթ օրվա մասին, իսկ սրանից ելնելով էլ՝ ասելու, որ հայերը պետք է վերակազմէին Անդրեասի աղյուսակները կամ բոլորովին նորը կազմէին ինքնուրույնաբար, ըստ որում պետք է կազմէին՝ անխախտ պահելով իրենց ավանդույթները:

Շարադրվածը մեզ բերում է հետևյալ եզրակացություն. ներսես կաթողիկոսը Բյուզանդիայում եղած ժամանակ, այլ գործերի հետ, զբաղվեց նաև զատակացանկի կազմության գործով և կազմել տվեց (գուցե և ինքը կազմեց) 76-ամյա տոնացույց՝ 353—428 թվականների համար: Այդ տոնացույցը, որ հաստատվեց 356 թ. կայացած Աշտիշատի ժողովում և գործադրության մեջ դրվեց, պայմանականորեն կոչում ենք ներսեսյան տոնացույց:

Այժմ դառնանք այն հարցին, թե հայ մատենագրության մեջ որեւէ տեղեկություն չկա՞ արդյոք, որը հաստատեր մեր վարկածը: Վերը մենք նշեցինք, որ ներսեսի գործունեության, ինչպէս և Աշտիշատի ժողովի մասին խոսում է Փաւստոս Բյուզանդացին: Ահա թե ինչ է պատմում նա. «Եւ ինքն (ներսէս կաթողիկոսն Հայոց.—է. Ա.) երթեալ հասանէր ի կողմանս Տարօն գաւառին, և ժողովէր առ ինքն զամենայն եպիսկոպոսունս Հայոց աշխարհին: Ժողովեցան ի գելուն Աշտիշատ, ուր զառաջինն եկեղեցին էր շինեալ... Շինեաց սոյնպէս, կարգեաց կազմեաց և հաստատեաց, բազում և այլ սղորմութիւնս ուսուցանէր աշխարհի. բազում կարգս կանոնաց հայրենիս կարգեաց... Եւ եղև խաղաղութիւն և նորոգութիւն յաւուրս նորա ամենայն եկեղեցեաց. և յաճախէր շուք պատուի ամենայն եպիս-

կոպոսացն ընդ ամենայն տեղիս Հայոց Մեծաց: Եւ յուսաւորութիւն կարգի եկեղեցւոյ ամենապայծառ ծաղկեաց ամենամեծ լիութեամբ, կարգեցին կարգ կարողիկէ եկեղեցեաց ամենայն վայելչութեամբ, և բազմացան կարգ սրբութեան պաշտամանցն և պաշտօնէից յանախորհիւն»⁴³: Այստեղ որոշակիորեն խոսվում է բազմաթիվ կանոնակարգեր կարգելու, այդ թվում և «սուրբ պաշտամունքներին», այսինքն՝ պաշտամունքային արարողությունների ու ծիսակատարությունների կարգը սահմանելու մասին: Այս հատվածի վրա հատուկ ուշադրություն է դարձրել պատմաբան Ա. Աբրահամյանը, որ բերել է նույն հատվածի «կարգեցան կարգք կաթողիկէ եկեղեցւոյս... և բազմացան կարգք սրբութեան պաշտամանցն» տողերը և գրել. «Մեր կարծիքով, Փաւստոսի այս ակնարկը կարող է տողերը և գրել. «Մեր կարծիքով, Փաւստոսի այս ակնարկը կարող է վերաբերել նաև տոմարական խնդիրներին՝ տոների ժամանակը սահմանելուն: Քրիստոնյա Հայաստանի համար այդ անհրաժեշտ էր, եթէ նկատելու: Քրիստոնյա Հայաստանի համար այդ անհրաժեշտ էր, եթէ նկատելու: Անդրէասի տոմարն ընդունված էր քրիստոնյա աշխարհում, դրա հետ անշուշտ ծանոթ էր ներսես կաթողիկոսը, որը եղել էր Բյուզանդիայում և, ըստ հորենացու վկայության, «զբարեկարգութիւնն զոր ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքին», ցանկանում էր այն քաղաքացիություն տալ Հայաստանում»⁴⁴: Միանգամայն ընդունելի ենք համարում այս մեկնաբանությունը: Փաւստոսը խոսում է կրոնական պաշտամունքային արարողությունների ու դրանց կարգերի մասին՝ ասելով. «բազմացան կարգք սրբութեան պաշտամանցն». «կարգք սրբութեան պաշտամանցն»-ը սուրբ պաշտամունքների, այսինքն՝ պաշտամունքային ողջ արարողությունների ամբողջությունն էր, որ ներատամունքային ողջ արարողությունների ամբողջությունն էր, տոնակատում է կրոնական տոները, դրանց ժամանակի սահմանումը, տոնակատարության հետ կապված ծեսերը և այլն: Իսկ սա նշանակում է, թե Փաւստոսի վկայությամբ, ներսեսը կարգել ու սահմանել է, Աշտիշատի ժողովում էլ հաստատել կրոնական տոների կարգը և, ինչպէս մենք ենթադրում ենք, նաև իր հետ բերած զատակացանկը: Դա, անշուշտ, որևէ (կարծում ենք՝ հոռոմեական) կայուն տոմարով կազմված աղյուսակ էր՝ հայոց շարժական տոմարի ամիսների ու ամսաթվերի զուգահրոթյամբ և, իհարկե, հունարեն լեզվով (հայոց գիրը դեռևս չէր ստեղծվել, իսկ ներսեսը հունագետ էր և հունասեր): Այն բանից հետո, երբ Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց հայոց գիրը և Սահակ Պարթևի հետ հիմնադրեց Մաշտոցն ստեղծեց հայոց գիրը և Սահակ Պարթևի հետ հիմնադրեց Մաշտոցն ստեղծեց հայոց գիրը և Սահակ Պարթևի հետ հիմնադրեց Մաշտոցն ստեղծեց հայոց գիրը, անհրաժեշտ եղավ, ի թիվս բազմաթիվ գրքերի, հայեհայտի դարձնել նաև տոմար-զատակացույց և, բնականաբար, Սահակի և

⁴³ Փաւստոսի Բյուզանդացու պատմութիւն Հայոց, Քիֆլիս, 1912, էջ 115, 117, 119 (ընդգծումները մերն են.—է. Ա.):

⁴⁴ Ա. Գ. Աբրահամյան, Հայոց գիր և գրություն, Երևան, 1978, էջ 103—104:

Մեսրոպի ընտրութիւնը կանգ առավ Անդրեասի աշխատութեան վրա, որովհետեւ շրջակա ժողովուրդները, մասնավորապէս ասորական և բյուզանդական եկեղեցիները, այդ տոնացույցն էին օգտագործում: Աշխատութեան ներածութիւնը, ինչպէս տեսանք, թարգմանվել է 421 թվականին, և որովհետեւ գործածութեան մեջ եղած ներսեսյան զատկացանկն էլ արդեն մոտեցել էր ավարտին, ապա, հասկանալի կերպով, վաղօրոք արդեն պետք է նախապատրաստեին նոր զատկացանկ: Եվ փաստերը հաստատում են, որ 421 թվականով միայն սկսվել է գործը և շարունակվել մինչև ավարտը: Ի՞նչ էր ներկայացնում իրենից Անդրեասի աշխատութիւնը. ներածութիւնը, որ վերաբերում է զատկի տոնի և դրա օրը որոշելու «Տիմոնքներին», հասել է մեզ հայերեն թարգմանութեամբ: Ներածութիւնն ավարտվում է 17 կանոններով՝ 1) Բիսեքիստոնի օրվա որոշումը, 2) անտիոքյան 401-ից մինչև 600 թվականն ընկած ժամանակամիջոցը (200 տարի), 3) հայտնութեան օրը, 4) նահանջ ամիսը ո՞ր տարում է լինում, 5) պատի յոթ շաբաթների սկիզբը, 6) 40 օրյա պատերի սկիզբը, 7) լուսնի լրումի ամիսը (մա՞րտ, թե ապրիլ), 8) ամսի քանիսին է զատկական լրումը, 9) ցերեկվա կամ գիշերվա ո՞ր ժամին է լրումը, 10) ո՞ր ժամից է սկսվում լրումը, 11) շաբաթվա ո՞ր օրն է, 12) որ օրն է զատիկը, 13) ամսի քանիսին է լինում սուրբ կիրակին, 14) որ ամսին է ավարտվում պենտակոստեն, 15) ամսի քանիսին է ավարտվում պենտակոստեն, 16) Մովսեսի յոթներջակը 7 տարվա է համապատասխանում, 17) յոթ անգամ յոթներջակը հօբելյան է կոչվում: Ինչպէս տեսնում ենք, սրանք ոչ թե բուն կանոններն են, այլ դրանց թվարկումը:

Այնուհետև. ներածութեան վերջում Անդրեասը գրում է, թե «կազմեցի և դրոշմեցի առանձինն զբնաւ զմի մի ամ երկերիսն ամի եւթն և տասն կանոն, որովք զամենայն համարն բովանդակեցի յերկերիս կարգ և զզատիկն մեկնեցի զմի մի կարգ առ մի մի տարի»: Նշանակում է, թվարկված կանոնները ոչ այլ ինչ են, եթե ոչ 200 տարիներից յուրաքանչյուր տարվա տվյալները (շարութեան օրը, ավագ լրման ամիսը, ամսաթիվը, շաբաթվա օրը և այլն) և, իհարկե, զատկի օրը, իրի մասին հատկապէս շեշտում է: Ուրեմն, աշխատութեան հիմնական մասը հենց այդ աղյուսակներն են եղել, որոնք բաղկացած են եղել 17 սյունակից, ինչպէս այդ ապացուցվում է Շիրակացու աղյուսակներով, որոնց մասին կխոսենք ստորև:

Վերջապէս, հայտնի է, որ այդ աղյուսակներից բացի եղել են նաև բոլորականը: Մեզ հասած ձեռագրերում պահպանվել է Անդրեասի տոմարագիտական և աստղագիտական բոլորականների մի մասը, եթե ոչ բոլորը: Մատենադարանի № 1973 ձեռագրում Ա. Աբրահամյանը գտել է այդ բոլորականները, որոնցից մեկի տակ գծագրողը գրել է. «Այս բոլորքս, որ

են ԴԺ. ան (—14), յԱնդրէասէն են հանած» (Թ. 65ա): Ձեռագիրը տիեզերագիտական և տոմարագիտական ժողովածու է, կազմվել է Հովհաննես Երզնկացու և Գրիգոր գրչի կողմից. ձեռագիրն ընդօրինակութիւն է, որ ավարտվել է 1342 թվականին: Տոմարական բոլոր-ները (կամ բոլորականները) շրջանակներ են, որոնց ներսում ներգծված են աստիճանաբար փոքրացող շրջանակներ: Այստեղ արտատպված բոլոր-ում, օրինակ, ներգծված շրջանակներից հինգը շառավիղներով բաժանված են 19-ական վանդակի կամ «խորանի», ինչպէս կոչվել են դրանք միջնադարյան տոմարագիտական գրականութեան մեջ: Բոլորակը, ինչպէս պարզվում է, իննետասներջակ է, որի մեջ տրված են ամիսներ, ամսաթվեր, վերադիրներ և այլն:

Այս բոլորից անխուսափելիորեն բխում է մեկ հետևություն: Անդրեասի աշխատութիւնը բաղկացած է եղել երեք մասից. ա) ներածութիւնից, բ) Ընդհանուր տոմարական բոլորականներից և գ) Երկուհարյուրամյա 17 սյունականոց աղյուսակներից. համենայն դեպս այդ երեքի մասին մենք հաստատ զիտենք, ըստ որում առաջին մասի և բոլորականների մի մասի (եթե ոչ բոլորի) հայերեն թարգմանութիւնը հասել է մեզ, իսկ աղյուսակների մասին գրել է ինքը՝ Անդրեասը, ներածութեան վերջում: Ի դեպ, աշխատութեան բովանդակութեան այս բնութագրութիւնը ևս կարող է իր հերթին որպէս փաստարկ ծառայել մեր այն պընդումի, որ հայերը չէին կարող այդ աղյուսակները գործադրել. օտար լեզվով (հունարեն կամ ասորերեն) գրված մի աշխատութիւն, որի աղյուսակներում հայկական տոմարը չէր ընդգրկված, ինչպէ՞ս պիտի օգտագործեին և ինչո՞ւ: Ավելի հարմար չէ՞ր դրա հիման վրա կազմել սեփական տոմարով մի զատկացանկ, թեկուզ և դարձյալ օտար լեզվով ու համեմատաբար կարճ ժամանակամիջոցի համար:

Եվ այսպէս, գրերի գլուտից հետո թարգմանվեց Անդրեասի աշխատութիւնը, կազմվեց 17 կանոնների համապատասխան աղյուսակը 428-ից—552 թվականների համար մայրենի լեզվով և զուգադրվեց Անդրեասի աղյուսակներին, ինչպէս որ, օրինակ, Շիրակացուն վերագրված 532 տարիների զատկացանկը, որը կազմվել է հոռմեական և հայկական տոմարներով յուրաքանչյուրի համար, ըստ տպագրվածի, 19-ական սյունակից բաղկացած աղյուսակով, որոնք զուգադրված են իրար հետ: Ըստ այսմ, Անդրեասի զատկացանկի հայկական տարբերակն ընդգրկում էր 124 տարի, սկսվում էր 428 թվականի օգոստոսի 11-ով (առաջին զատիկը՝ 429 թ. ապրիլի 7 = արեգի 12-ին) և վերջանում 552 թ. հուլիսի 10-ով (վերջին զատիկը՝ 552 թ. մարտի 31 = մեհականի 24-ին): Այդ տարբերակը գործադրվեց 428 թվականից սկսած, այսինքն՝ ներսեսյան 76-ամյակի ավարտից հետո: Նույն 428 թվականին վերջ տրվեց

հայկական պետականությունը և նույն թվականին էլ ավտոտարի-արվեց Սահակ Պարթևը. միևնույն տարում վերացվեցին երկու դինաստիաներ՝ հայ Արշակունիների թագավորական դինաստիան և Պարթևների կաթողիկոսական «դինաստիան»: Հայոց կաթողիկոսական ավտոնոմիայից Սուրմակ ասորին, որ թշնամի էր Սահակին և առհասարակ Պարթևներին ու նրանց հունամետ կողմնորոշմանը: Եվ քանի որ Սահակը 76-ամյա աղյուսակների սպառվելուց առաջ արդեն հոգ էր տարել Անդրեասի աշխատությունը թարգմանելու և նրա զատկական աղյուսակը հայերենի զուգադրությամբ վերակազմելու մասին, ապա Սուրմակն այդ պատրաստի տոնացույցը գործադրության մեջ դրեց, որպես Անդրեասի զատկացանկ, որով միաժամանակ երկու նպատակ էր հետապնդում. ա) գործածություն մեջ դնել Անդրեասի տոնացույցը, որով առաջնորդվում էր ասորական եկեղեցին, և դրանով իսկ հայ եկեղեցու մեջ ուժեղացնել ասորամետ կողմնորոշումը, բ) ուժեղացնել հակապարթևական հոսանքը հայ եկեղեցում և իբրև դրա արտահայտություններից մեկը՝ ներսևսյան տոնացույցը մոռացնել՝ նորը գործածության մեջ դնելով:

Քանի որ, ինչպես տեսանք, դա ոչ թե Անդրեասի 200-ամյակն էր, այլ դրա հիման վրա (դրա վերափոխումով) կազմված հայկական տոնացույց, որի հեղինակը հայտնի չէ, ապա հնարավոր ենք գտնում այդ էլ պայմանականորեն անվանել անանուն զատկացանկ, որ ընդգրկում էր 428—552 թվականների ժամանակաշրջանը (124 տարի): Ըստ այսմ, մինչև Աթանասի 532-ամյա զատկացանկը (մինչև 562 թ.) հայերն ունեցել են 2 տոնացույց.

1. ներսևսյան 76-ամյա զատկացանկը 352—428 թթ. համար,
2. Անանուն զատկացանկը (Անդրեասի ցանկերը՝ վերափոխած և հայկական անշարժ տոմարին համաձայնեցրած)՝ 428—552 թթ. համար:

* * *

Որպես այս գլխի հավելված այստեղ դետեղում ենք Անդրեասի աշխատության ներածական մասի մեզ հասած հայերեն թարգմանությունը:

Ստորև բերված տեքստի A տարբերակում կատարել ենք որոշ սրբագրություններ՝ մեծ մասամբ B տարբերակի հիման վրա. այդ սրբագրություններն անխախտ նշված են տողատակի ծանոթագրություններում: Բացի դրանից, կատարել ենք ուղղագրական հետևյալ միջամտությունները: 1) Ձեռագրում բառավերջի յ տառը, որ ընդօրինակության ժամանակ արդեն չէր կարգացվում, երբեմն բաց է թողնված, երբեմն դրված. քանի որ դա միայն ուղղագրական անմիօրինակություն է և ոչինչ չի ասում իր ժամանակի արտասանության մասին, որը առանց այդ էլ

հայտնի է լեզվի պատմաբաններին, ուստի և բոլոր դեպքերում վերականգնել ենք վերջահանգ յ-ն՝ առանց տողատակի ծանոթագրության: 2) Ի-ով հանդուր բառերի սեռական—տրականը նույնպես գրություն երկվություն է ցուցաբերում, երբեմն կանոնավոր ուղղագրությամբ՝ Լ-ով, երբեմն առանց դրան. ամենուրեք ընդունել ենք Լ-ով գրությունը, իբրև գրաբարի կանոնական ուղղագրություն: 3) Օր և մի քանի այլ բառեր, ինչպես և գործիականի —օ՛վ վերջավորությունը, գրված են մերթ ալ, մերթ՝ օ. դրանք անփոփոխ ենք թողել, արտացոլելով ձևագրի ուղղագրությունը հարազատորեն:

ԱՆՎՐԷԱՍԱՅ ՄԵՍԻ ՎԱՍԵ ՍՐԲՈՅՆ ՊԱՍԵՔԻՆ ՅԵՏ ԵՎ ՅԱՌԱՋ ԽԱՂԱՅՈՑ
ԵՎ ՎԱՍԵ ԴՐՈՒԹԵԱՆ ԵՐԿԵՐԻՐԵԿԻՆ

1

Քանզի բազումք յասորոց աներկիղ յամառութեամբ կարծեցին, եթէ յԹժ-աներորդում ամսեան պարտ իցէ առնել զզատիկն բազարչակերաց, զոր
5 Աստուած կանխաւ ի ձեռն Մովսէսի պատուիրեաց որդուցն Իսրայելի, որպէս և գրեալ է, թէ՛ ասաց Տէր ցՄովսէս և ցԱհարոն չերկրին եղիպտոսոց, Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց. առաջին լիցի ձեզ ամենայն ամսոց տարոյն: Ասացիք յամենայն ժողովուրդորդուցն Իսրայելի ի Թ-երորդում ատուր յամենայն յայսմիկ առցն իւրաքանչիւր դառն ըստ երդ և եղիցի պահել զզուշացեալ նոցա մինչև ի տասն և ի չորրորդ ամսոյն, քանզի և
10 յայնմ ատուր փրկեցան ազգն և ցեղք նոցա՝ նշանակեալ արեամբն ի վերայ սեմոց դրանց նոցա՝ ի հնազանդութիւն և ի ծառայութիւնն փարաւոնի:

Եւ քանզի կանխազէտ գիտութեանն աստուծոյ յայտնի էր փրկութիւնն, որ լինելոց էր ամենայն ազգաց մարդկան ի ձեռն Միածնի որդոյն դառինն
15 Աստուծոյ, ասացաւ նոցա յառաջագոյն, քան զբազում ազգս, մինչ չև շարշարեալ էր Տերն՝ եթէ զատիկ Տեառն է: Վասն այնորիկ առնէին ամի ամի զարն արինակաւ և նմանութեամբ, քանզի հանդերձեալ էր դառն ճըշմարիտ զենուլ փոխանակ կենաց աշխարհի, զի եղիցի զատիկ ճշմարիտ յեկեղեցոջ Աստուծոյ:

20 Արդ՝ քանզի զարինակն և զնմանութիւնն յառաջումն ամսեանն հրամայէր առնել, չէր իշխանութիւն եկեղեցոյ յԹժ-աներորդ ամսեանն առնել՝ զզատիկս զայս: Որպէս և զի Առաքեալ գրեալ է, եթէ՛ Առաջինքն անցին և ամենայն ինչ վերստին նորոգեցաւ Քրիստոսիս եւ որպէս մարդարէն ասէ, թէ՛ որպէս դառն ի սպանդ վարեցաւ: Վկայ է Յովհաննէս յաղաղակէն թէ՛
25 Ահաւասիկ գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի: Եւ Առաքեալ յետ յարութեանն ասէր, թէ՛ Ձատիկ մեր Քրիստոս է, որ զենան: Եւ վասն այսո-

- | | |
|-------------------|------------------|
| 1. Տպ. Անդրէաս | 13. » զիտութեան |
| 4. » ամսեանն | 13. » յատնի |
| 6. » յերկիրն | 14 » մինչ... էր |
| 9. » նորա | 20. Տպ. ամսեան |
| 12. » սեմոյ | 25. » առաքեալ(ն) |
| 12. » ծառայութիւն | 26. » Քրիստոս էր |

րիկ չէ մեզ պարտ և պատշաճ ժամապահ լինել՝ թէ յորժամ հրէայքն տունի-
 ցին զգատիկն և ուտիցեն զբաղարչն, զի ի նմին ժամանակաւ և մեր արաս-
 ցաք, զի ճշմարիտ դառն Աստուծոյ մինչդեռ աւուր կայր, զենաւ առաջի
 31 ամենայն մարդկան և քարոզեցաւ մահ նորամիկնէն կերեալ էր Բարայկոյի
 զբաղարչն և զգառն յերեկոյնի աւուրն, և անդի ժողովրդեանն բիրտք բիրք
 գառանց կոտորեցաւ, իսկ աստ՝ մի գառն, ամենայն Աստուած ի ձեռս
 մարդկեղէն մարմնոյն, զոր զգեցաւ և կատարեաց զկամս հար իւրոյ: Եւ
 35 յայնմ հետէ մինչև ցայտօր ժամանակի բան խալին հրէից գայթակղու-
 թիւն է, այլ մեզ կոչեցելոցս իմաստութիւն է, որ առ նոսայն յիմարութիւն
 է: Եւ վասն այսորիկ Փրկիչն մեր ոչ բաղարչ և եղևոյն, և ոչ միս գառն ու-
 սուցանէ մեզ ուտել, այլ ասէ. Յորժամ վերացի ի նոցանէ փեսայն, յայն-
 ժամ ի պահս մտցեն: Եւ արդ՝ այսուհետև ամի ամի զնոյն տրամութիւն,
 զոր զգեցան առաքելքն, պահովք զգեցցոր և մեր և ի յայտնութեան
 40 Միածնի ուրախ լիցեալ՝ հաղորդելով մարմնոյ և արեան ճշմարիտ դառնին,
 որ է հացն երկնաւոր:

Եւ արդ՝ ի հարկէ ամի ամի առնէ եկեղեցի զգատիկ բաղարչակերացն,
 զի հաստատեալ կացցէ յիշատակ այնր, որ շարշարեցաւ և յարեան ի մե-
 45 սելոց: Եւ թէպէտ և այսպէս ամի ամի առնեմք զիշատակ շարշարեաց
 Փրկիչն մերոյ, սակայն ուրանան հերձուածողք ամենայն զձեռն յոյն նորա,
 որ եղև ի յազնականութիւն և փրկութիւն ամենայն հեթանոսաց: Զի թէ շէր
 շարշարեալ, բազումք ուրանային զձեռն յոյն նորա, վասն այնորիկ հարկ է
 մեծաւ փութով ամի ամի յամենանն առաջնում առնել զգատիկն: Այլ հրէայք,
 50 քանզի յամենայնի միտք կտրացեալ են, նոյնպէս և յայսմ գայթակղեցին:
 Եւ, վասն այսորիկ ասաց Աստուած մարգարէին, թէ՛ Միշտ մղորեալ են
 սրտիւր և նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ: Եւ զի յայսմ ևս իբրև յա-
 մենայնի վրիպեցան հրէայքն, ընկալան առանց հակառակութեան զվկայու-
 55 թիւն: Զի յառաջ բան զբազում աղզս մինչ ըն շարշարեալ էր Քրիստոս,
 հրէայք զերեցան յերկրէն իրենանց ի Բարելուն և փոխանակ նոցա եկին բա-
 բելացիք և բնակեցան յերկրին նոցա ի Պաղեստինէ և կոչեցան շամրոտա-
 ցիք: Եւ ընկալան ի հրէից տուլութեամբ, թէ՛ երբ և յորում ժամանակի
 պարտ իցէ առնել զգատիկն և ըստ նմին կարգի, որպէս ընկալան ի նոցանէ,
 պահեն շամրոտացիք մինչև ցայտօր ժամանակի՝ առնել զգատիկն յետ հա-
 սարակելոյ տուրնջան և զիշերոյ: Եւ շամրոտացիք, զոր ընկալան ի նոցա-
 60 նէն, պահեն, և հրէայք, զոր ուսուցին, յայն ոչ կացին: Եւ վկայութիւն այսու-
 րիկ յայտ յանդիման էր և ի գիրս թագաւորացն Կրէատասնի, յորում պատմէ
 զճառս շամրոտացոցն:

Եւ արդ՝ հասարակած տուրնջան և զիշերոյ սկիզբն է տարւոյն և ամսեանն
 65 առաջնոյ, քանզի ամիսն առաջին անտի առնու սկիզբն: Զի ի սկզբանէ
 արարածոց ոչ եթէ նախ սերմն ինչ իրիք էր, այլ զրեալ է, թէ՛ Բխեաց եր-
 կիր զբոյս խոտոյ և զամենայն ծառ պտղաբեր: Եւ այս ստեղծաւ մարդն

- 34. » յայնմ հետէ
- 34. » գայթակղութիւն
- 36. Ա այսորիկ
- 39. Տպ. գրնացն
- 43. » շարշարեցաւ
- 45. » ձեռնոյն
- 46. Ա զի թ էր
- 49. Տպ. գայթակղեցին

- 51. Ա նորայ
- 51. Տպ. յայսմ
- 54. Ա նոցայ
- 54. » նոքայ
- 55. Տպ. շամրոտացիք
- 54. » տուրնջան
- 54. » շարմատացիք
- 63. » հասարակաց

և հաստատեցան անասունք և զնոսնք, զի առժամայն իբրև լինիցին, գտցին
 70 առաջի նոցա հոռնք տատրաստականք առ ի դարման կերակրոյ նոցա, որ-
 պէս և այժմ ամենայն ինչ որ ծնանի զարուբիւսամբն և առաջնորդութեամբն
 Աստուծոյ, գտանէ կաթն ի ստինս մար իւրոյ պատրաստական:

2

[Արդ՝ սկիզբն հասարակելոյ տու-
 րնջան և զիշերոյ ըստ թուոյ
 5 Եզրեացոցն ի Բ և ի Գ ամսոյն
 լինի, որ անուանեալ կոչի պեմե-
 նովթ, որ զայ կչով ըստ թուոյն
 Անտիոքացոց ի Բ-երորդում զիս-
 տրոս ամսոյն, այսինքն՝ ի մեհե-
 կանի, և քանզի Քրիստոս ի ԳԺ-
 10 աներորդում աւուր ամսոյն առաջ-
 նոյ շարշարեցաւ, յայտ է՝ յետ
 հասարակելոյ տուրնջան և զիշե-
 րոյ արեգ ամսեան, և ոչ այս
 վրիպեալ է ի մէնչ, թեև այժմ ի
 մեր ամս և յաւուրս յարեգ ամսեան
 15 բազում անգամ արարին հրէայք
 զգատիկն: Եւ քանզի սկիզբն ա-
 մենայն տարւոյն յԺԺ-երորդին
 մարտի ամսոյ լինի, այսինքն է
 մեհեհկանի, յայտ է, թէ նա է ամի-
 20 սըն առաջին]: Արդ՝ եկեղեցի
 Քրիստոսի, յորժամ զիսկեցի ԳԺ-
 աներորդ լուսնոյ յԺԺ-երորդէն
 մարտի [մինչև ի Ժն ապրիլի] և
 25 անդրէն ի մուտս կատարեցին
 ԹԺ-անամտեալ թիւրն լուսնոյն,
 միտ ևս այլ ամիս յաւելումք ի վե-
 րայ ԹԺ-ան ամսոյն, որ անուանեալ
 կոչի նհանջեալ, զի այն ամբ, քան-
 30 զի պակաս դտանին թիւր ընթա-
 ցից լուսնոյ քան զթիւ ընթացից
 արեգականն, յայսպէս կազմեցաւ,
 զի նհանջեալ ամսաւր լիցի, որ-
 պէս զի երթիցէ հասցէ ի թիւր ըն-
 թացից լուսնոյ թուոյ ընթացից ա-

[Կանոն գատկաց շուրջ եկեալ
 զանձամբ բարեգակ զԺԺ ամառ
 ցուցանէ զշորեքտասան լուսնի
 ըստ արուրց ամսոց զստրիտսի
 կամ քանթիկոսի լուսնաց և հոռ-
 մայնցոց մարտի կամ ապրիլի և
 հայերէն մեհեհկանի կամ արեգ.
 յետ (?) Ծ ըստ նոցուն արուրցն
 շարաթու զիսկեցի: Բայց Ղն ամն
 նոյն թիւն վերստին զանձամբ ե-
 կեալ, և է սկիզբն ինն և Ժ-երբե-
 կիս:

Եւ քանզի սկիզբն ամենայն տար-
 ւոյ ի ԺԺ\մարտի ամսոյ լինի,
 այսինքն՝ մեհեհկանի, յայտ է, եթէ
 նա է ամիսն առաջին]:

Արդ՝ եկեղեցի Քրիստոսի յոր-
 ժամ զիսկի ի շորեքտասան լուս-
 նին, որ է ի մարտի ի ԺԺ մինչև
 ի Ժն ապրիլի, այսինքն՝ արեգ,
 զշարաթն զայն պահէ և առնէ զա-
 տիկ: Իսկ հրէայքն, յորում

- 66. » նախասերմն
- 67. » մարդ
- 6. Ա Անդիոքացոց
- 6. Տպ. ի Բ-երորդ
- 7. » շիք ի նախդիք
- 8-9. » ԳԺ-աներորդ
- 14. Ա ամս կն

- 17. Տպ. երորդի
- 18. » այսինքն՝ ի
- 23. Ա և տպ. շիք մինչև ի Ժն ապ-
 րիլի
- 26. Տպ. միտ և
- 29. » թիւ

35 րեզականն: Զի եթէ այս այսպէս ոչ լինէր, դիպէին երբէք երկու զատիկը ի միում ամի, որպէս զի և հրէայքն, զի թէպէտ կարի բաշ նհանջն զամիսն, բազում անգամ առնեն երկու զատիկս ի միում ամի, քանզի ոչ համարին ստոյգ յով ու ժ-երորդէ մարտի||ամսոյ և յետս, այլ սխալ ամեն զհամարն: Զի թէ ոչ լինէին ամիսքն նահանջիս և յետ կատարելոյ տասն և երկուց ամսոցն պահել և առնէին զզատիկն բազարչակերացն, այլ ձգեն ամեն զմեզ նհանջ ամիսքն, զի միշտ յետ հասարակելոյ տարնջեան և զիշերոյ արասցուր զզատիկն, քանզի նորօք հասանեմք յամիսն առաջին արմտեաց: Եւ զսոյն պարտ և պատշաճ է յաւելուլ ի հարկէ, զի հրէայք բազում տանս առնեն, յորում աւուր և զիսկեցի զատիկն յաւուրս շարթուն: Եարթ կոչին զարն, թէպէտ և և-շարթի իցէ, զի մի փոխեցեն՝ զարն առնուն, շարթ անուանեն: Եւ որք զայս այսպէս առնեն, թէ յորթաթու կամ ի կիրակի պատահեսցի արն պահոց նոցա, քանզի նաւասարդի ամսեամբ ուրեմն զիպի, զի մի կերակուրքն ի տալթոյ ասպկանեցին: Քանզի շարթ արն ի միջի զիպի՝ զինչ ար և զիպեցի, շարթ անուն անուանեն և այսու զանցանեն զարինարն և ուրթաթուամբ պահեն ի շարթուն, յորում ոչ զիպեցա զատիկ, զի մի տրտմեցուցեն զորովայնս իրեանց: Եւ վասն այսորիկ ոչ երբեք առնեն թոմ յորթաթու կամ ի կիրակի: Եւ զի զիտասցես, թէ այս այսպէս

աւուր դիպիցի, առնեն զզատիկն և զարն շարթ կոչեն, թէպէտ և և-շարթ և ուրթաթու իցէ, շարթ կոչեն:

Եւ անցանեն զարինարն և ուրթաթուամբ առնեն զատիկ:

Վասն այսորիկ ոչ երբէք ոչ առնեն թոմ յորթաթու կամ ի կիրակի:

Եւ զի յերեկորայ ժամու յործամ զբազարչն ուտեն, յորում լուսանայ արն պահոց, է-երորդ ամսանն, թուեն աւուրս ճճԲ և ապա պահեն: Եւ թէ պատահէ||թին յաւուրս յայն զոր վերագոյն ասացաք, յաւելուն և պակասեցուցանեն այլ ևս ժժ աւուր:

39. Տպ. նհանջին

40. » երու

41. » ստոյգ

43. Ա սղալ

34. Տպ. նհանջեայք

42. » ամսոյն

44. » բազարչակիրացն

52. Տպ. յամիս

64. » զիպի

68. » զանց առնեն

69. ուրթաթուամբն

74. Ա յորթաթու ի կիրակի

Տպ. յորթաթու ի կիրակիին: Ուղղում ենք ըստ B-ի:

է, յործամ ուտանիցես զկանոնսն, միտ դիջիր, զի յերեկ ժամոցն, յորում զբազարչն ուտեն, մինչև յառաւտոն, յորում լուսանայ արն պահոց է-երորդ ամսանն, թուեն աւուրս ճճԲ և ապա պահեն: Եւ եթէ պատահեսցէ թին յաւուրսն յայնոսիկ||զոր վերագոյնն ասացաք, յաւելուն և պակասեցուցանեն, զի յերեկորոյ անտի աւուրս վերջին պահոցն ճճԲ աւուր ամեն մինչև յարն բազարչակերաց և նհանջն կուրթաթուամբ առանց հանհարոյ, քանզի ոչ ըստ կարգի առնեն, զի վաղեն զայլ ևս զինն ու ժ աւուր: Եւ երբ զինչ և անկանիցի ի միտս նոցա, նոյնպէս, որպէս զիարդ կամինն, առնեն և անցանեն զօրինօքն: Եւ արդ նայ յեա՝ ընդ բազումս, որք ընդ արէնազանցսն կամին առնել զզատիկն, թէ յարծանի՝ ինչ առնիցեն: Զի յործամ կամին, բարողն շարթ, թէպէտ և շից շարթ: Այլ և երեկեցի աստուծոյ ոչ գիտէ փոխեալ կիրակէ ընդ կիրակէի, և ոչ շարթ ընդ շարթաթու, և վասն այսորիկ յորում աւուր զիպեցի շորեթասաներորդն զատիկ, եթէ կիրակի զիպեցի, միս շարթ անցանէ, և եթէ երկշարթաթու զիպեցի, պահեն շարթն ուղջոյն, զի երթիցէ հասցէ և լցցէ զիորհորդն և ի շարթաթու շարթաթուսն պահեսցէ, վասն այսորիկ իակ և պասքա կոչի, որ թարգմանի շարթաթանք Փրկչին մերոյ: Եւ վասն այսորիկ ամի ամի զա՛յն միայն շարթն կարևոր պահէ, զի մի՛ զուգեսցէ այլ շարթ ընդ նմա պատուով, որպեսզի կացցէ շարթն՝ շարթ, և ոչ որպէս

Այլ եկեղեցի Աստուծոյ ոչ փոխէ, այլ յորում զիպեցի շորեթասան լուսին, եթէ ի կիրակէ դիպի, մնչև ցմիս կիրակէն. և եթէ յայլ աւուրս՝ մինչև ցիրակէն պահելով, կատարեմք զպասեցն:

77. Ա յերեկուն. ուղղում ենք ըստ B-ի:

93. Տպ. կամին

95. » ընդարէնազանցսն

96. Ա առնեն

104. զատիկ. ուղղում ենք ըստ B-ի

(հմտ. Ծիր. «լինչ աւուր շարթուն. զիպեցի շորեթասան լուսին»): Վիր. մատ., 297):

108. Տպ. լցցի

112. Տպ. Փրկչի

Հրէայքն առնեն շաբաթ փոխանա-
կեալ և զողօնի, այլ զի յետ ճշմա-
րիտ շաբաթուն և կեալ արն մեծ
120 յարութեան, որպէսզի, յորժամ եթէ
զիպեցի օրն՝ ԳԺ-աներորդին ըստ
լուանի, անցանէ, զի երթիցէ հաս-
ցէ ի միտ շաբաթ, քանզի չէ
125 մարթ, եթէ առանց շաբաթու առ-
նիցէ զօրն և ոչ ինչ զանդազի և
երկմալ տոնել զՁ արն աւելի, այլ
պահէ, քանզի յուսացեալ վստահ
է, թէ ի շաբաթուն հասանէ յարն
130 շարշարանաց և ի կիրակէն յարու-
թեան:

Ըստ նմին նմանութեան իմաց,
զոր ասեմս: Զի թէ զիպեցի ԳԺ-
աներորդն ի շաբաթուն, յառաջա-
135 զոյն պահէ յերկշաբաթոյն մինչև
ի շաբաթն և ունի զկարգն կա-
տարեալ:

Արդ՝ մի՞ որ յառաջ քան զշա-
բաթն լուծցէ զպահքն, զի մի՞ ա-
պականեացէ զխորհուրդն և զնիցէ
140 այլ կիրակէ, փոխանակ այնոր, որ
արժանն է, որպէս պապիանոսքն
ժպրհեցան առնել: Եւ մի՞ յուտրն
կիրակէի որ պահեսցէ, թէպէտ և
145 շորեքտասաներորդն իսկ ի նմա
զիպեցի, քանզի չէ իշխանութիւն
և կեղեցւոյ, որ ի ծագաց մինչև ի
ծագս երկրի, եթէ ոչ մատուցէ
պատարագ յուտրն կիրակէի: Ապա
150 թէ ոմանք կամիցին հակառա-
կել ընդ զէմ այսոցիկ, զոր ասա-
ցաքս, գայտ ասացուր, թէ՛ մեր
չունիմք այսպիսի սովորութիւն և
ոչ և կեղեցին Քրիստոսի:

Արդ՝ քանզի սուշութիւն և կեղեց-
ւոյ, այսպէս ուսուցանէ պահել
ամի ամի զարն բաղարջակերաց,
և զի մերթ զիպի ԳԺ-աներորդն

- 113. » շաբաթն
- 120. » շաբաթու
- 122. » շորեքտասաներորդի
- 123. » երթիցէ
- 125. » և Ա մարդ

Արդ մի որ ժպրհեալ փոխեցէ
զարն որպէս ապոզինարոսքն և
զիցէ այլ կիրակէ փոխանակ
այնոր, որ արժանն է: Եւ մի յարն
կիրակէի որ պահեսցէ, թէպէտ և
չորեքտասան ի նմա զիպեցի,
քանզի չէ իշխանութիւն և կեղեց-
ւոյ՝ ընդ ոչորտս երկրի, եթէ ոչ
մատուցէ պատարագ յուտր կի-
րակէի:

- 127-8. » չիք այլ պահել
- 134. » ի շաբաթու
- 129. շաբաթու
- 134. » ի շաբաթու
- 139-40. » ապականեացէ.
- 4. Տպ. զորեքտասաներորդն

5 [լուանի] ի մարտի, այսինքն՝ ի
մեհեկանի, և մերթ յապրիլի, այ-
սինքն՝ յարեգ ամսեան, և շին աւ-
ղեակք բազումք թուոց, մանաւանդ
10 Տեառն մերոյ տարածեցաւ կալաւ
զաշխարհ ամենայն, վասն այսո-
րիկ երկերիւր ամի միանգամայն
համարեցայ ըստ թուոյն Անտիո-
քացւոց ի շորեքհարիւրորդէ ա-
15 ռաջներորդէ ամէն մինչև յամն
վեցհարիւրորդ այնոցիկ, որ կաց-
ցեն յաշխարհի, կազմեցի ևս՝ Ան-
դրէաս, եղբայր Մագնոսի եպիս-
կոպոսի, և զորշմեցի առանձինն
20 զքնաւ, զմի մի ամ երկերիւր ամի
յեթն և ի Ժ կանոն, որովք զա-
մենայն համարն բովանդակեցի
յերկերիւր կարգ և զզատիկն մեկ-
նեցի զմի մի կարգս առ մի մի
25 տարի:
Շուաջին կանոնն՝ զարն, որ ի
միոջէ ի Գ ամսն նուաճեցուցանէ,
որ կոչի բիսէրխատոնն, որ լինի
յառաջ քան զՁ ամսամտին մար-
տի, և եթէ յորում ատուր շաբա-
թուն զիպի:
Բ. կանոնն ցուցանէ, թէ քանի
ըստ թուոյ ամացն Անտիոքացւոց
լինի ն-երորդէ և ի միոյ մինչև
35 ցմ-ն:
Գ. կանոնն ցուցանէ, թէ ամի ա-
մի էԺ-երորդն մարտի և ե-երորդն
ապրիլի և Զ-երորդն յունուարի,
յորում լինի արն յայտնութեան
40 Տեառն մերոյ, ի Ժ-երորդ ամսե-
աննմար Գիպի:
Դ. կանոնն ցուցանէ, թէ յորում
ամի է ամիոն նահանջեալ:

Արդ՝ զի կեղեցի ուսուցանէ
պահել զարն բաղարջակերաց և
է զի մերթ զիպի շորեքտասան
լուանն ի մարտի, այսինքն՝ մե-
հեկանի, և մերթ յապրիլի, որ է
արեգ, և շին տեղեակ բազումք
թուոց և վարդապետութեան Տեառն
մերոյ, վասն այսորիկ Մ ամ հա-
մարեցայ միանգամայն ըստ թուոյն
Անտիոքացւոց, ի ն-երորդէ ա-
ռաջներորդէ մինչև յամս ԶԺ-երորդի,
ևս՝ Անդրէաս, եղբայր Մագնոսի
եպիսկոպոսի. կազմեցի և զորշմե-
ցի առանձինն զքնաւ մի մի ամի
Ժէ կանոն և երկերիւր կարգ և
զզատիկն մեկնեցի զմի մի կարգ
առ մի մի տարի:

- 5-6 » այսինքն՝ մեհեկանի
- 6. » ցապրիլի
- 6. » շիք և
- 7-8. » տեղեակ
- 8. » և Ա բազում. ուղղում
ենք ըստ B-ի:
- 11. Տպ. աշխարհ

- 14. Տպ. շորեքհարիւրերորդէ
- 16. » վեցհարիւրերորդ
- 18. A Մանկեսոսի, B Մանգոսի
- 19. Տպ. առանձին
- 27. » և թիւ ամ (!)
- 28. » բիսէրխատոն

- 45 Ե. կանոնն ցուցանէ, թէ յորում ամսեան լինի սկիզբն եւթն շաբաթոցն պահոց:
- Զ. կանոնն ցուցանէ, թէ ի քանիս ամսոյն սկիզբն աուրք պահոցրն Խ-երորդաց:
- 50 Է. կանոնն ցուցանէ, թէ յորում ամսեան Դժ լուսնոյ է:
- Ը. կանոնն ցուցանէ, թէ ի քանիս նորուն ամսոյ դիպիցի ժԳ:
- 55 Թ. կանոնն ցուցանէ, թէ յորում ժամու՝ ի ժամուցն տարնչեան կամ գիշերոյ դիպիցի Դժ-անկերորդն:
- Փ. կանոնն ցուցանէ, թէ յորում ժամու առնու սկիզբն Դժ:
- 60 ԺԱ. կանոնն ցուցանէ, թէ յորում աուր յաուրց շաբաթուն է:
- ժԲ. կանոնն ցուցանէ, թէ յորում աուր է մեծ օրն զատկաց:
- ժԳ. կանոնն ցուցանէ, թէ ի քանիս ամսոյն լինի կիրակէն սուրբ:
- 65 ժԴ. կանոնն ցուցանէ, թէ յորում ամսեան առնու կատարումն պենդակոստէին:
- ժԵ. կանոնն ցուցանէ, թէ ի քանիս ամսեան կատարի պենտակոստն:
- 70 ժԶ. կանոնն ցուցանէ, թէ յէամ պատշաճի է-երրեակն ըստ Մովսէսի գրոցն:
- 75 ժԷ. կանոնն ցուցանէ՝ զէ-ից է-եակս կոչի յորելեան, որ է Մ-նեակք ամաց, որ լինի թողութիւն գիւղից ծառայից և պարտուց:

45-6. » շաբաթուցն
52-3. » թէ քանիս
64-5. Տպ. թէ քանի
69-70. » թէ քանի
76 » հիսունեակք

Յերկերիւրեկին յԳ կանոնին ցուցանէ սուրբ Անգրէաս, եթէ ամի ամի ութ ու ժ-երորդն մարտի և է-երորդն ապրիլի և վեցերորդն յունուարի, յորում լինի արն||յայտնութեան Տեառն մերոյ, ի ժ-երորդում ամսեանն ի մի ար դիպին:

ԱԹԱՆԱՍ ԵՎ ՇԻՐԱԿԱՅԻ, ՀԱՅՈՅ ՄԵՆ ԹՎԱԿԱՆ

Հայոց տոմարի պատմութեան մեջ ընդունված տեսակետի համաձայն, Անդրեասի տոմարի անմիջական շարունակութիւնը կազմող հինգհարյուրյակը (532-ամյա պարբերաշրջանը), որի առաջին զատիկն է 553 թվականինը, կազմել է Անանիա Շիրակացին: Սա մոտ է պատմական ճշմարտութեանը այնքանով, որքանով որ Շիրակացու հրատարակված մատենագրութեան մեջ, ինչպես և նույնի զանազան գրչադրերում, ՇԼԲ աղյուսակն սկսվում է 552/533 թվականներով: Սակայն, ինչպես ցույց են տալիս մեր մատենագրական աղբյուրները և հենց իր իսկ՝ Շիրակացու ուղղակի վկայութիւնը, հրատարակված այդ աղյուսակի սկիզբը հետագայի խմբագրութիւններով է հասցվել 352/353 թվականներին:

Անդրեասի 200-ամյակի ավարտվելով, ինչպես վկայում են մեր միջնադարյան մատենագիրներն ու տոմարագետները, խառնաշփոթ վիճակ է ստեղծվել կրօնական տոների, մասնավորապես զատիկի օրվա որոշման մեջ: Ինքը Շիրակացին այդ մասին հետևյալն է գրում. «Ապա ի սպառեւ Անգրէասեան տոմարին ամացն երկերիւրոց յաուրս Յուստիանոսի թագաւորի, եղև բազում խնդիր հմտագոյն իմաստասիրաց՝ վասն ոչ բերելոյ ճշգրտիւ զկարգ իննետասն բոլորակին, որ իննսուն և հինգ ամով բովանդակէր զեղանակ շրջագայութեան. նոյն յոլովից թուեցաւ դժոխին, զի բազում ամոք ըստ աուրց բոլորակին շտողէր զլինի բեսեքիստոնն. վասն որոյ եղեալ քննութիւն յԱղեքսանդրեայ, որ է մայրաքաղաք ամենայն իմաստասիրութեանց, գտաւ անտարակուսելի արինակ ՇԼԲ ամաց շրջաբերութեանն, որ ստուգիւ ցուցանէ զաուրս շորեքտասան պասեքին: Արդ ոչ եթէ նորաձեւելովս ինչ աղարտեցին զվաղնչոցն գրոշմեալ կանոն, այդ ճշգրտիւ զնոյն շորեքտասան յիննետասան յիննետասան թուոյ գրոշմեցին յարմարական ռճով»¹: Այս նույնը տարբեր ձևերով կրկնում են հետագայի մեր պատմիչներն ու տոմարագիրները (Մխ. Այրիվանեցի, Ասողիկ, Հովհ. Իմաստասեր, Կիրակոս Գանձակեցի և այլք), բոլորն էլ հաստատելով որ 552-ից հետո մինչև 561 թվակա-

¹ Շիր., էջ 295:

նը խառնաշփոթություն է տիրել, ըստ որում այդ նույն ժամանակամիջոցը ոմանք համարում են 9, իսկ ոմանք էլ՝ 10 տարի: Նույն ժամանակամիջոցը 9 կամ 10 տարի համարելը բացատրվում է հետևյալ ձևով: Նրանք, որ խառնաշփոթության տարիների թիվը որոշում են թվականների պարզ տարրերով (561—552), բնականաբար համարում են 9 տարի, իսկ նրանք, որ հայոց շարժական տարիների և հուլյան տոմարի դատկական տարիների հարաբերակցությամբ են հաշվարկում, համարում են 10 տարի՝ հետևյալ եղանակով: Անդրեասի տոնացույցի վերջին դատիկը 552 թվականի դատիկն է, իսկ 552 թվականի հուլիսի 11-ով սկսվում է հայոց Մեծ թվականի առաջին տարին. խառնաշփոթության վերջին թվականն է 561-ը, իսկ նոր (էսայան) շրջանի առաջին դատիկն է 562 թվականի դատիկը (այսինքն 9-ին), որ հայոց Մեծ թվականի 10-րդ տարվա մարտի 5-ին է ընկել: Ավելի կարճ՝ 9 տարի է ստացվում հուլյան թվականների տարրերով (561—552), 10 տարի՝ հայոց Մեծ թվականի տարիների հաշվով:

Իննամյա (տասնամյա) խառնաշփոթությունից հետո՝ 561 թվականին, Ալեքսանդրիայում հրավիրվում է գիտնականների ժողով՝ էսա Ալեքսանդրացու գլխավորությամբ: Ժողովին մասնակցում են տարբեր երկրների անվանի գիտնականներ:

Շիրակացին² թվարկում է գրանցից հրեա Փեննահեդին, Գաբրիել ասորուն, արաբ Հոհանին, Աբդիև ևթովպացուն, Աբդի Մակեդոնացուն, հույն Եվդոզիին, Գիզան հոռոմեացուն: Վանական վարդապետը և Կիրակոս Գանձակեցին³ հիշում են նաև Ադդե Գամրացուն, որից հայերը սովորել-լուրացրել են էսայան պարբերաշրջանը: Այդ մասին Վանականը գրում է. «Նոքա ընդ Հրեայան դատիկ առնեն... Իսկ մեր ի միւս կիրակէն տամբ և վերծանիմք, քանզի յետ ութ ամի իմաստասիրացն ապա երեւիցաւ եղծումն իրացն և Հայք յԱդդէ գամրացի իմաստասիրէ՝ յառաջ առեալ էին զուղղորդն և յայն ժամ ընդ Պարսից իշխանութեամբ գոլով՝ շանկան յեղծումն նոցա. և էր այն ի տասն թուականին Հայոց»⁴:

Վերը բերված ավյալները, ինչպես և մեր բազմաթիվ պատմիչների գրեթե նույնական տեղեկությունները, հնարավորություն են տալիս հետևյալ ձևով ներկայացնել 552 թվականին հաջորդած տարիների վիճակը: Անդրեասի տոնացույցը վերջանալուց հետո մինչև 561 թվականը դատկական օրվա որոշման որևէ ընդհանուր տոնացույց չի ստեղծվել. տարբեր եկեղեցիներ զանազան ձևերով են որոշել դատկի օրը, որը և

խառնաշփոթ վիճակ էր ստեղծել: 561 թվականին Ալեքսանդրիայում հրավիրվեց ժամանակի գիտնականների ժողով, որին մասնակցում էին տարբեր երկրների 36 գիտուններ: Ժողովը գլխավորում էր էսա Ալեքսանդրացին, որին էլ պատկանում է 532-ամյա պարբերաշրջանի գլուխը: էսան ապացուցեց, որ 532 տարվա շրջանը լրանալուց հետո սկսվում է դատկական (ավագ) լրումների և դատկի օրվա կրկնությունը՝ նույն ամսաթվերին և շաբաթվա նույն օրերում: Օրինակ. ընդունենք, որ 532 տարվա շրջանն սկսում ենք 552 թվականով, երբ դատիկը եղել է մարտի 31-ին, նույնը կլինի նաև 1084 թվականին (նոր 532-ամյակի առաջին տարում): Ինչպես վերն ասել ենք, էսայան պարբերաշրջանի հիմքում ընկած է մետոնի ցիկլը (Լուսնի 19-ամյա պարբերաշրջանը), որը բազմապատկելով 28-ով (= շաբաթվա օրերի կրկնության պարբերաշրջանը, որ կոչվել է Արեգակի փոքր շրջան), ստացվում է 532 տարի: Մեր տոմարագիրները և պատմիչները, սակայն, խոսելով էսայան և էսայանների մասին, չեն բավականանում էսայան գովելով, այլ անմիջապես հիշատակում են Իրիոնի անունը և նրան նզովքի արժանի համարում: Այսպես, օրինակ, Շիրակացին գրում է. «Ապտանօր ասէ եղեալ զԻրոն վարդապետ ի դրանն արքունի ի քաղաքին Կոստանդնուպոլսի, որ ազգականութեամբ ատար և ոչ քաղաքացի, զոր ոմանք և աղեքսանդրացի իսկ զու ասացին: Զսա զշարեալ ասէ ընդ ժողովս իմաստասիրացն որ յԱլեքսանդրիա, իբր քամահանս իւր վարկանել զոչ անդր կոչեցեալ, հակառակ ճշմարտութեանն մաքառի, խոտէ զկարգեալն ի նոցանէ: Նոյնպէս և զառաջնոց եղեալսն զոգցես իբրև տղէտս աստուածային գրոց և ամենայն ժամանակագրաց, նոյնպէս և տոմար. և փոխէ գիտնականներեակն լուսնի ի վեցէն ապրեղի և փոխանակ կարգէ հինգ ապրեղի, և ղնէ զնա զլուս բոլորի... Իրոն թէպէտ ըիւր անգամ կարծէ ճարտարանալ, սակայն ոչ վերծանի ի նզովից»⁵: Այս ոգով դատապարտում են Իրիոնին նաև հետագայի մեր բոլոր այն տոմարագետներն ու պատմիչները, որոնք խոսում են էսայան պարբերաշրջանի մասին: Ինքնին հարց է ծագում. այդ ի՞նչ սրբապղծություն էր կատարել Իրիոնը և ի՞նչ տոմարական համակարգ էր հակադրել էսայանին, որ այդպես դատապարտվում էր հայերի և, առհասարակ, ոչ քաղկեդոնականների կողմից, մինչդեռ Բյուզանդիայի և Հռոմի եկեղեցիներն ընդունել էին նրա դատկացանկը: Հարցի քննությամբ պարզվում է հետևյալը:

Անդրեասի 200-ամյա դատկացանկը ժամանակագրորեն շարունակությունն էր Անատոլիոսի դատկացանկի, ըստ որում 200-ամյակի առաջին տարին տասնիններյակի 12-րդ տարին էր: Ըստ այսմ, 200 տարվա առաջին 8 տարիները շարունակությունն էին նախորդ տասնիններյակի,

² Նույն տեղում, էջ 29:

³ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 42—43:

⁴ Վանական վարդապետ, Յազգա տարեմտին, էջ 164:

⁵ Շիր., էջ 296—297:

ապա՝ 10 լրիվ տասնիներյակ՝ 190 տարի, և նոր տասնիներյակի առաջին 2 տարիները: Հետևաբար, Անդրեասի տոնացույցը վերջանում էր տասնիներյակի 2-րդ տարով, 552 թվականի զատկով: Սրանով էլ բացատրվում է այն, թե ինչու մինչև 561 թվականը՝ ամբողջ 9 տարի, հանդուրժեցին խառնաշփոթ վիճակը և միայն 561-ին հրավիրեցին Ալեքսանդրյան ժողովը. քանի որ 551 թվականը տասնիներյակի 1-ին տարին էր, ապա 12-րդ տարին համընկնում էր 562 թվականին, ուստի և 561-ին հրավիրելով ժողովը, կարելի էր կրկին ընդունել Անդրեասի 200-ամյակը՝ սկսելով 562-ից (12-րդ տարվանից): Ժողովն, ըստ էության, պետք է հաստատեր նոր 200-ամյա տոնացույց՝ Անդրեասի կազմածին համապատասխան և 562 թվականից էլ գործողության մեջ դնել: Սակայն ժողովը բոլորովին այլ եզրակացություն հանգեց. էաս Ալեքսանդրացին ապացուցեց, որ 532 տարին՝ լուսնային 19-ամյակի և արեգակնային փոքր շրջանի (28-ամյակի) արտադրյալը, ներկայացնում է լուսնի ավագ լրումների, զատկական ամսաթվերի և շաբաթվա օրերի կրկնության կայուն պարբերաշրջան, հետևաբար և նպատակահարմար է կազմել 532 տարիների տոնացույց, որը հետագայում էլ կարող է գործադրվել միայն տարեթվերի փոփոխությամբ: Էասյան այս պարբերաշրջանն ընդունելով, ժողովին մնում էր որոշել, թե ո՞ր թվականից պետք է սկսել նոր պարբերաշրջանը: Քանի որ առաջիկա՝ 562 թվականը տասնիներյակի 12-րդ տարին էր և համընկնում էր Անդրեասի երկուհարյուրամյակի առաջին տարվան, ապա բնական է, որ ժողովը պետք է սկզբնավորվող հինգհարյուրյակի առաջին տարին համարեր հենց լուսնային 19-ամյա պարբերաշրջանի 12-րդ տարին: Դա միանգամայն բանական էր, որովհետև համընկնում էր Անդրեասի 200-ամյակի առաջին տարվան և հնարավորություն էր տալիս արդեն պատրաստի տոնացույցը պարբերաբար կրկնել 2 անգամ ($200 \times 2 = 400$ տարի), ապա 3-րդ կրկնությունը հասցնել մինչև 132-րդ տարվա վերջը:

Ստորև մենք կտեսնենք, որ իրականում հենց այդպես էլ վարվել են, ըստ որում հայոց հինգհարյուրյակն էլ սկսվել է 562 թվականի լրումով և զատկական օրով: Այստեղ, սակայն, առաջիմ մեր խնդիրն է պարզել էասյան և Իրիոնյան համակարգերի տարբերությունը: Ընդունելով, որ էասյան պարբերաշրջանն սկսվում էր 562 թվականով, որն ընդունվել է որպես տասնիներյակի 12-րդ տարի, հանգում ենք հետևյալ երկհետային դրույթին. էասյան պարբերաշրջանի առաջին տարվա լրումը համապատասխանում էր Անդրեասի 200-ամյակի առաջին տարվա ամսաթվերին: Ըստ այդմ, 562 թվականի համար էասյանները ավագ լրման օրն էին համարել ապրիլի 4-ը, ինչպես որ եղել էր 353 թվականին, բայց 353-ին ապրիլի 4-ը կիրակի օր էր եղել, ուստի և զատկը տեղափոխվել էր հաջորդ կիրակի օրը՝ ապրիլի 11-ին, մինչդեռ 562 թվականի

ապրիլի 4-ը եղել է երեքշաբթի, ուստի և զատկն էլ կատարվել է անմիջապես հաջորդող կիրակի օրը՝ ապրիլի 9-ին: Այս երկհետային տվյալով էլ, ահա, առաջնորդվել են էասյանները, առանձնապես հայերը, որոնք անովագն 2 էասյան պարբերաշրջանի տոնացույցները կազմել են նույն երկհետային տվյալների հիման վրա:

Ինչպես պատմում են մեր տոմարագետներն ու պատմիչները՝ Ալեքսանդրիայի ժողովի մասնակիցներից մեկը՝ հունական իմաստասեր Նյոպոսը, ժողովի հինգհարյուրյակի օրինակը բերում և ներկայացնում է Իրիոնին, սա քննում և սխալ է դուրս բերում էասի հաշվումները, ապա ինքը կազմում է իր տոնացույցը, որի երկհետային տվյալը մեկ օրով տարբերվում է էասյան երկհետային տվյալից (հինգհարյուրյակի առաջին տարվա ավագ լրումը՝ ապրիլի 4-ին): Այդ տարբերության մասին տեղեկություն պարունակող, մեզ ծանոթ ամենահին աղբյուրը Շիրակացու «Զատկի ճառն է», որի մեջ կարդում ենք. «Մի՛ փոխեսցուք զչորեքտասան լուսնի ի հինգ ապրիլի, այդ զկարգեալն ի սրբոց հարցն». և մի դիցուք այդ լրումն գլուխ բոլորի, բայց զհրամայեալն ի Տեսունէ զչորեքտասան նիսան և զայդոց ազգաց որ նմայն հանդիպին: Բայց էասանք որ զԳ նիսան կարգեցին գլուխ բոլորի, և ոչ աղարտեցին զառաջինն. բայց զի տոմարն Անդրեասեան երկերիս ամացն յերիսն նիսան սպառեցաւ. և սկիզբն հինգհարիւրեկին ի երեք նիսան եղև. վասն այնորիկ եղ ի գլուխ բոլորի»⁶: Բերված հատվածում խոսվում է լուսնի ավագ լրման (զչորեքտասան լուսնի) մասին և արգելվում ապրիլի 5-ն իբրև այդ լրման օր ընդունելը, ապա բացատրվում, թե ինչու հինգհարյուրյակի ըսկզբում (առաջին տարում) իբրև ավագ լրման օր է ընդունվել նիսանի 3-ը, որ և էասյանները գրել են բոլորի գլուխը, այսինքն՝ ՇԼԲ բոլորակի (հինգհարյուրյակի) սկիզբը, որպես «զչորեքտասան նիսան» (որպես նիսանի 14): Մենք վերը բացատրել ենք արդեն, որ հրեական նիսան ամսվա 1-ը գարնանային (զատկան) լուսնային ամսվա առաջին օրն է, որ համապատասխանում է լուսնի աստղագիտորեն իրական ամսվա 2-ին. ըստ այդմ, նիսանի 3 = ապրիլի 4-ին, նիսանի 14-րդ օրը՝ լուսնի 15-րդ օրվան: Արդ, ինչպես տեսանք, էասյան հինգհարյուրյակի առաջին տարում ավագ լրումը (= լուսնային ամսվա 15-րդ օրը և հրեական նիսան ամսվա 14-րդ օրը) եղել է ապրիլի 4-ին, և Շիրակացին պաշտպանելով այդ երկհետային տվյալը, ասում է՝ «լուսնի 14-րդ օրը ապրիլի 5-ը չհամարե՛ք»: Հետագայի մեր պատմիչներն ու տոմարագետներն էլ տարբեր ձևերով ու մեկնություններով կրկնում են այդ նույնը⁷: Ինքնին

⁶ Շիր., էջ 299:

⁷ Հմմտ. օրինակ, Վահական Վարդապետ, հշված աշխ., էջ 164, Կիրակոս Գանձակցի, Պատմութիւն Հայոց, 1961, էջ 43 և այլն:

հարց է ծագում. ի՞նչ հաշվումներով է առաջնորդվել Իրիոնը, որ հինգ-հարյուրյակի առաջին տարվա ավագ լրումը փոխադրել է ապրիլի 5-ը: Պատասխանը շատ պարզ է. Անդրեասի 200-ամյակի վերջին տարին՝ 552 թվականը տասնիններյակի 2-րդ տարին էր, հետևաբար և 562 թվականը՝ 12-րդ տարին: Նոր տոնացույց կազմելու համար կարելի էր երկու մոտեցում ունենալ. ա) իբրև ելակետ ընդունել 19-երյակի 12-րդ տարվա տվյալները, բայց 551 թ. «ղնել բոլորակի գլուխը», որպես և՛ հինգ-հարյուրյակի, և տասնիններյակի առաջին տարի ու հաշվումները կատարել այս վերջինին համապատասխան, բ) ընդունել 19-երյակի 12-րդ տարվա տվյալները, և որպես հինգհարյուրյակի ու տասնիններյակի առաջին տարի համարելով՝ հաշվումները կատարել 12-րդ տարվա համաձայն: Առաջին դեպքում տարվա վերագրերը կլինի 0, իսկ երկրորդ դեպքում՝ 1: Ահա և մեկօրյա տարբերությունը: Ըստ այսմ, եթե ապրիլի 4-ը համարում ենք ավագ լրման օր՝ 0 վերագրելով, ապա 1 վերագրելով՝ կհանգենք ապրիլի 5-ին և որովհետև ավագ լրման օրը հրեական Նիսան ամսի 14-ն է, որ համապատասխանում է ապրիլի 4-ին՝ ըստ առաջին մոտեցման, ապա՝ լրումը ապրիլի 5-ը տեղափոխելու դեպքում Նիսանի 14-ն էլ կփոխարինվի 15-ով, իսկ Նիսանի 15-ը հրեական նորալուսնից (= իրական նորալուսնի 2-րդ օրվանից) հաշվելով, կհանգենք լուսնային ամսվա 16-ին: Այս է, ահա, որ մեր տոմարագետներն ու պատմիչները գրում են, թե Իրիոնը լրումը դնում է 15-ին և 16-ին, դրանով իսկ աղարտելով սուրբ հայրերի կողմից սահմանված կարգը:

Եվ այսպես, հայերն ընդունեցին էասյան պարբերաշրջանը:

Մեր տոմարի պատմությանը զբաղված հայագետները սովորաբար Անդրեասի 200-ամյակի վերջանալու և դրան հաջորդող իննամյա (տասնամյա) խառնաշփոթության մասին պատմելով՝ անմիջապես անցնում են Հայոց Մեծ թվականին, որին համապատասխանող հինգհարյուրյակն էլ՝ ՇԼԲ բոլորը կամ բոլորակը (Շ-եակը = հինգհարիւրեակը, սեռականը՝ Շ-եկի = հինգերիւրեկի) վերագրում են Անանիա Շիրակացուն: Սակայն վերջինս VII դարի գիտնական է և իր տոնացանկը կազմել է 675/676 թվականներից ոչ շուտ. ուրեմն 561 թվականից (էասյան պարբերաշրջանն ընդունելու տարվանից) մինչև 676 թվականը 115 տարվա ժամանակամիջոց է ընկած, իսկ ի՞նչ տոնացույցով են առաջնորդվել հայերը այդ ժամանակամիջոցում: Բարեբախտաբար մեր պատմիչ-ժամանակագիրներն այդ մասին տալիս են վստահելի տեղեկություններ, որոնք, սակայն, անտեսել են մեր տոմարների պատմությանը զբաղվող սովետահայ գիտնականներից շատերը: Այսպես, Հովհան Մամիկոնյանը, թվարկելով Գլախ վանքի առաջնորդներին, գրում է. «Աթանաս՝ ամս Ժ: Սա էր ի ժամանակս Մովսեսի Հայոց Կաթողիկոսի, որ զթուականն զրեաց. զի

նա էր տեղեակ տոմարի ամենայն ազգաց»⁸: Նույն բանն է պատմում նաև Մխիթար Այրիվանեցին. «ՇԾԳ (553) լցաւ Մ. եակն (200-եակն) Անդրէասայ ի մարտի Իէ (25) և յապրիլի ի Գ (4) չկարացին գնալ, զի Թ լրմունք ի մէջ էր. և ապա խափանեցան: Եւ իմաստունքն ժամանակին կարգեցին թուական Հայոց, Սրբոյն Մովսէսի կաթողիկոսին հրամանաւ Տարանացին Աթանաս Գլախայվանեցի արար տօմար Հայոց»⁹: Աթանասի մասին խոսում է նաև Կիրակոս Գանձակեցին. «Ապա հայրապետն Մովսէս ժողովեաց զիմաստունան, որ էին ի ժամանակին, յորս էր և Աթանաս ի վանաց սուրբ Կարապետին»¹⁰: Ամփոփելով մեջբերված տեղեկությունները Աթանաս տոմարագետի մասին, հանգում ենք հետևյալ եզրակացութեան: Ալեքսանդրիայում 561 թ. կայացած ժողովից հետո հայերն ընդունեցին էասյան պարբերաշրջանը և 584 թվականին, Գլինի 3-րդ եկեղեցական ժողովում հաստատեցին Աթանաս Տարոնացու (Գլախավանեցու) տոնացույցը: Սա պատմական ճշմարտություն է և պետք չէ ուրանալ՝ ամեն ինչ մեկ ուրիշ, թեկուզ և ավելի խոշոր տոմարագետի վերագրելու համար: Այս ճշմարտությունը, սակայն, ինքնին առաջադրում է մի նոր հարց. Ինչպիսի՞ տոնացույց էր կազմել Աթանասը և ո՞ր թվականից մինչև ո՞րը:

Դատելով այն տեղեկություններից, որոնք հաղորդում են մեր տոմարագիրներն ու պատմիչները, կարելի է ընդունել, որ Աթանասը կազմել է էասյան մեկ լրիվ պարբերաշրջանի (532 տարվա) զատկացանկը: Այսպես, վանական վարդապետը գրում է. «Քանզի լիտ ութ ամի իմաստասիրացն, ապա երեկեցաւ եղծումն իրացն և Հայք յԱղդէէ Գամրացի իմաստասիրէ՝ յառաջ առեալ էին զուղղորդն և յայն ժամ ընդ պարսից տիրապետութեամբ գոլով՝ շանկան չեղծումն նոցա: Եւ էր այն ի տասն թուականին Հայոց»¹¹: Վերը ասացինք արդեն, որ Կիրակոս Գանձակեցին էլ է տալիս այս Աղդէ Գամրացու անունը՝ Ալեքսանդրիայի ժողովի մասնակիցների թվում: Եթե այդպես է, ապա կարող ենք հետևյալ դատողություններ ձևել. ժողովի մասնակիցներն իրենց հետ տարան 532 տարիների տոնացույցի պատճենը. մենք վերը տեսանք, որ այդպիսի պատճենի մեկ օրինակը Նլոգոսը տարել և հանձնել էր Իրիոնին, որը և քննե-

⁸ Պատմութիւն Տարօնոյ զոր թարգմանեաց Զենոր Ասորի, Վենետիկ, 1832, էջ 68, հմտ. Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Աշխատութեամբ և առաջաբանով պատմական գիտությունների թեկնածու Աշ. Աբրահամյանի, Երևան, 1941, էջ 147: Հրատարակիչն Աթանաս անունն իջեցրել է առգատակ՝ ձեռագրական տարբերակների մեջ, որովհետև իր հրատարակած ձեռագրում այդ անունը չի եղել: Այս հրատարակության խիստ բացասական գնահատությունը տես՝ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, 5, Գ, Երևան, 1946, էջ 550:

⁹ Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն ժամանակագրական, Պետերբուրգ, 1867, էջ 63:

¹⁰ Նույն աեղում, էջ 164:

¹¹ Նույն աեղում, էջ 164:

լով այն, սխալ էր համարել: Ուրեմն Ադրէ Գամրեցին ևս մի այդպիսի օրինակ պետք է բերած լիներ: Եվ քանի որ Աթանասը Ադրեից էր սովորել (կամ հայերն, առհասարակ, սովորել էին), ապա նրանց սովորածը այլ բան չէր կարող լինել, քան էասյան հինգհարյուրյակը, որի հիման վրա էլ պետք է կազմեին իրենցը՝ հայոց շարժական տոմարին հարմարեցրած: Մեր տոմարագիրներն ու պատմիչները խոսում են էասի կատարածի մասին, ճշգրիտ համարում ՇԼԲ բոլորակը (հինգհարյուրյակը), վկայում են Մովսես Եղվարդեցու օրոք Դվինում կայացած ժողովի և ընդունված տոմարի մասին, ըստ որում մի քանիսը հիշատակում են Աթանասին, մյուսները՝ ոչ, բայց ոչ մեկն էլ չի ասում, թե այդ տոմարը եղել է հինգհարյուրյակ: Բայց եթե հաշվի առնենք այն փաստը, որ բոլոր այդ հեղինակներն էլ վկայում են, որ Աթանասը կազմել է իր տոնացույց-զատկացանկը էասյան հինգհարյուրյակը Ալեքսանդրիայի ժողովում ընդունվելուց հետո և դրա հետևողությամբ, ապա մենք կարող ենք ընդունել, որ Աթանասի կազմածը եղել է ՇԼԲ բոլորակ՝ 562—1094 թթ. համար (առաջին զատիկը՝ 562 թ., վերջինը՝ 1093 թ., ընդամենը 532 զատիկ և 532 հայկական տարի՝ 562 թ. հուլիսի 9-ից մինչև 1093 թ. փետրվարի 26-ը ներառյալ): Որոշակի ճշգրտում է թնլադրում և մեր այս ենթադրությունը հաստատում Մ. Չամչյանի հանդամանակից քննությունը, որի հիմնական արդյունքները բերում ենք այստեղ:

Իր «Պատմութիւն Հայոց» աշխատության Բ հատորում (գիրք Գ, գլ. Խ) խոսելով Մովսես Եղվարդեցու և տոմարի նորոգության մասին, Մ. Չամչյանը գրում է. «վախճանեցաւ կաթողիկոսն Յովհաննէս, կացեալ ի հայրապետութեան ամս ժէ(17) և ամիսս ինչ: Եւ նստաւ ի տեղի նորա տէր Մովսէս երկրորդ՝ Արագածոտն գաւառէ ի գեղջէ Եղիվարդայ, այր մեծիմաստ: Սա յառաջագոյն իսկ փոյթ ունելով վասն նորոգութեան տումարին, իրրև նստաւ կաթողիկոսս, գուն գործեաց ի կատար հասուցանել զայն գործ. վասնորոյ ժողով արարեալ յեպիսկոպոսաց և յիմաստուն արանց ի Դուին, բազում քննութեամբ կարգեալ ուղղեաց զտումարն Հայոց՝ ըստ տանելոյ ժամանակին, նորոգ սկսանելով զըջջանն: Եւ այս եղև ի 551 թուականին Քրիստոսի, յառաջնում ամի կաթողիկոսութեան նորին Մովսեսի: Եւ այնուհետև սկսան Հայք այնու տումարաւ վարիլ, և զթուականն ամացն անտի շափել, որ և կոչի թուական հայոց. և սկիզբն առնէ ի 552 թուականէն Քրիստոսի»¹²: Այս ընդհանուր տեղեկությունը կրկին անդրադառնում է Գ գրքի ժանտոմարիչների մեջ՝ «ի վերայ նորոգութեան տումարին հայոց ի ձեռն Մովսեսի կաթողիկոսի և ի վերայ ամաց կաթողիկոսութեան նորայ» ընդարձակ հատվածով (էջ 509—516): Այս հատվածում՝ շեշտելով, որ «բազում խառնաշփոթ բանք կան

ի գիրս Հայոց ի վերայ այսր» բերում է մատենագրության մեջ եղած հակասական տեղեկությունները և դրանց քննությամբ ձգտում գտնելու հետևյալ հարցերի ճշգրիտ պատասխանները:

1. Տոմարի նորոգության պատճառը,
2. Այդ նորոգության տարեթիվը,
3. Քանի տարի է ավտոակալել Մովսեսը որպես կաթողիկոս:

Առաջին հարցի պատասխանն այն է, ինչ որ հաղորդում են մեր մատենագիրները. Անդրեասի 200-ամյակի սպառվելուց հետո խառնաշփոթ վիճակ ստեղծվեց, որից դուրս գալու համար հրավիրվեց Ալեքսանդրիայի ժողովը և ընդունվեց հինգհարյուրյակը (ՇԼԲ բոլորակը):

Երկրորդ հարցի պատասխանի համար հեղինակը բազմաթիվ մեջբերումներ է կատարում մեր մատենագիրներից և դրանց խոր ու բազմակողմանի քննությամբ հանգում այն եզրակացության, որ տոմարի նորոգությունը տեղի է ունեցել 551 թվականին, ըստ որում հայոց թվականության (հայոց Մեծ թվականի) առաջին տարին է 552-ը: Այստեղ Մ. Չամչյանը մի արժեքավոր կարծիք էլ է հայտնում: Ընդունելով, որ տոմարի նորոգությունը տեղի է ունեցել Մովսեսի ավտոակալելու առաջին տարում՝ 551 թվականին, նա անդրադառնում է այն հարցին, թե ինչու մեր մատենագիրները տոմարի նորոգության թվականն են համարում հայոց տոմարի (Մեծ թվականի) 10-րդ (կամ 9-րդ) տարին, այսինքն՝ 561/562 թթ. և պատասխանում է այսպես. «Իսկ թէ Յովհաննէս կաթողիկոս և Վարդան դնեն ի տասներորդ ամի Մովսեսի, զայն պարտ է իմանալ վասն այլոց իրիք նորոգութեան և կարգի, զոր արարին յառավել հաստատութիւն տոմարին. ըստ որոյ աւանդի ի բանս սարկաւազ վարդապետի, և ի գիրս Սամուելի, և այլոց, ևս և ի վերջ գրոցն Առաքելի. գլ. Ե. թէ ի տասներորդ ամի թուականին հայոց՝ (զոր տասներորդ ամ Մովսեսի դնեն դոքա) կարգեցաւ հինգհարիւրեակն. և ուղղեցաւ զատիկն: Ուրեմն տասն ամօք յառաջ քան զայն ուղղութիւն՝ եղեալ էր թուականն հայոց յառաջնում ամի կաթողիկոսութեան Մովսեսի. ուստի և Սամուէլ երեց զառաջին ամ կաթողիկոսութեան Մովսեսի դնէ յամի տեսուն ՇԾԱ (551) որ է ուղիղ և համաձայն մերումս»¹²:

Երրորդ հարցի ստույգ պատասխանը գտնելու համար Մ. Չամչյանը տարբեր մատենագիրների հակասական տեղեկությունների և պատմական դեպքերի հայտնի տարեթիվերի համադրական քննությամբ հանգում է այն եզրակացության, որ Մովսեսը կաթողիկոս է եղել 43 տարի (551—593):

Մ. Չամչյանի այս հետազոտությունը, որ զետեղվել է ժանտոմարիչությունների բաժնում, առաջադրված խնդիրների լուրջ, բազմակողմանի և անկողմնակալ քննություն է, որ առավել ևս արժեքավորվում է մեզ ան-

¹² Միխայիլ Չամչյանց, Պատմություն, Երևան, 1984, էջ 256:

¹³ Նույն տեղում, էջ 512:

Հայտ աղբյուրների տվյալների հաշվառմամբ, ըստ որում հեղինակն այդ աղբյուրները կոչում է «անժամոթ պատմություն» ընդհանուր անվանումով: Մեզ համար այդ քննության եզրակացություններից առավել կարևորն այն է, որ, ինչպես ապացուցում է հեղինակը, հայոց տոմարի նորոգությունը տեղի է ունեցել 551 թվականին, ուղղումը կամ ճշգրտումը՝ 661/662 թվականին, և այդ ուղղումով ստեղծվել է հինգհարյուրամյա զատկացանկը՝ 562—1083 թվականների համար: Մենք պաշտպանում ենք այդ կարծիքը՝ հետևյալ դատողությամբ. 552 թվականի զատկով վերջացավ Անդրեասի տոնացույցի 200-ամյա շրջանը, և զատկական օրվա որոշման մեջ խառնաշփոթություն տիրեց մինչև 561 թվականը: Խառնաշփոթությունը, սակայն չի նշանակում, թե 9 տարի զատկի տոնը չկատարեցին, այլ միայն այն, որ տարբեր ժողովուրդներ, որոնք մինչև այդ օգտագործում էին Անդրեասի տոնացույցը, դրա ավարտումից հետո շունեին այլևս միասնական աղյուսակ, և յուրաքանչյուրը զատկի օրը որոշում էր ինքնուրույնաբար, որը և հանդեցնում էր շփոթության, այսինքն՝ մի ժողովուրդ զատկը տոնում էր, ասենք թե, ապրիլի 3-ին, մյուսը՝ 10-ին (հաջորդ կիրակի օր) և այլն: Բայց սա նշանակում է, թե ամեն մի եկեղեցի իր համար կազմել էր ինչ-որ զատկացանկ և մինչև 561 թվականն առաջնորդվում էր իր զատկացանկով, որ և շփոթ էր ըստեղծել զատկական օրվա տոնակատարության մեջ: Վերը բերեցինք Շիրակացու գրածն այն մասին, որ այդ ժամանակ զատկի տոնը որոշելու համար գործադրում էին ինստունհինգյակներ («...ինստուն և հինգ ամով բովանդակ էր զեղանակ շրջագայութեան»): Հասկանալի է, որ հայերն էլ ստեղծել էին իրենց 95-ամյա զատկացանկը, և դրա կազմողն էր Աթանաս Տարոնացին:

Մենք սկզբունքորեն ընդունում ենք Մ. Չամչյանի ուսումնասիրության արդյունքները, բացի Մովսես Եղվարդեցի կաթողիկոսի աթոռակալության թվականներից: Մեր պատմիչներն ու տոմարագիրները, ինչպես ապացուցում է հենց ինքը՝ Չամչյանը, հակասական տեղեկություններ են տալիս, ըստ որում շատերը խառնում են կաթողիկոսների անունները, մասնավորապես՝ Դվինի երկու ժողովները միացնում ու դարձնում են մեկ ժողով, և որովհետև թե՛ տոմարի և թե՛ եկեղեցու պատմության համար առավել կարևորն է եղել Մովսես Եղվարդեցու հրավիրած՝ Դվինի 3-րդ ժողովը 584 թվականին, ապա այդ ժողովը նույնացնելով նախորդի հետ՝ դարձյալ Մովսեսին են վերագրում՝ մեխանիկորեն առաջ տանելով նրա աթոռակալության տարիները: Այս շփոթը բարեբախտաբար այժմ արդեն վերացել է: Մաղաթիա Օրմանյանը, որ հայոց եկեղեցու պատմության, հայկական տոմարների և, մանավանդ, ժամանակագրության լավագույն մասնագետն է եղել, հետևյալ ձևով է ներկայացնում հայոց Մեծ թվականը և հինգհարյուրյակը կարգելու պատմությունը.

«Ստույգ է, որ շփոթը ծագեցավ ներսեսի օրով, ուստի ինը տարիներու առժամյա կարգադրությունն ալ՝ զոր Կիրակոս Հովհաննեսի կուտա և Անեցին Մովսեսի, պետք է ներսեսի վերագրել, և այս կերպով թերևս արդարանա Ասողիկի գրածը, որ ուղղությունը ներսեսի կուտա: Բայց ներսեսի վերագրվելիք ուղղությունը՝ առժամյա կարգադրություն կրնա ըլլալ, և ոչ թե հինգհարյուրյակի հաստատուն ուղղությունը, որ 561-ին հորինեցավ ներսեսի մահեն ետքը... Ի հրմանեն մեծին Մովսէսի (իմա՝ Մովսես Եղվարդեցու.— է. Ա.), քերթողը և գիտունը արվեստին գումարվեցան Դվնա հայրապետանոցը, զոր կրնանք իբր Դվնա Գ ժողով ընդունիլ և 584 թվականին նշանակել: Հայոց գիտուններուն զլիսավորն էր Աթանաս Տարոնացի, Գլակա ս. Կարապետի մայրավանքին առաջնորդը, որ էր տեղեկ տոմարի ամենայն աղգաց (Սամ. 8) և առաջնորդեց բոլոր հաշվական գործողությանց: Ժողովին կողմէ նախադասվեցավ էասի ցուցակը... Մեզի չէ հասած գրված մը, որ ցուցներ, թե ինչպիսի կազմություն ուներ այդ առթիվ պատրաստված կամ նորոգված տոմարը... Տոմարի նորոգութենեն զատ նոր թվականի խնդիր մըն ալ կա, որ հայոց թիվ կամ հայոց թվական անունով ճանաչված է, և որուն սկիզբը կնկատվի 552 տարին: Շիտակը խոսելով այդ թվականը Հայոց թիվ կոչելու բնավ պատճառ կամ առիթ չկա, 552 տարին հայոց համար ոչ նշանավոր դիպված մը կա, և ոչ ալ նկատողության արժանի պարագա մը. թերևս Հայոց թիվ ըսվելու արժանի ըլլար հայոց ընդհանուր լուսավորության կամ կուսավորչի թվականը, զոր անգամ մը հիշած է Ասողիկ (ԱՍՈ. 84): Իսկ 552 տարին պարզապես Անդրեասյան երկերյուրյակին լրման տարին է, որ հայոց հետ մասնաւոր աննշանություն չունի: Երբ հայեր էասյան նոր շրջանը սկսան գործածել, ուղեցին դայն Անդրեասյանի հետ կապել, և նոր շրջանը անոր ավարտումեն սկսան հաշվել, զոր Կիրակոս կզգացնե յառաջ վառեալ գառուստն Անդրէասի բացատրությամբ (Կիր. 25): Ահա այս նոր շրջանին տարիներն են, որ Հայոց թիվ անունը առած են»¹⁴: Մենք այս ընդարձակ քաղվածքը բերեցինք, որովհետև զաորոշ շփոթ ճշգրտում է Չամչյանի գրածը, և մանավանդ հաստատում մեր տեսությունը հայոց թվականը կարգելու և էասյան պարբերաշրջանի հայկական տարբերակը հաստատելու մասին: Այնուամենայնիվ, երկու կետում մենք համաձայն չենք Օրմանյանի հետ:

1. Մեր մատենագիրները հայոց թվականի ընդունումը կապում են երեք կաթողիկոսների անունների հետ՝ ներսես Բաղրևանդացու (Աշտարակեցու), Հովհաննես Գաբրիելյանի և Մովսես Եղվարդեցու, քանի որ, ինչպես ընդունվել է մեր պատմագրության մեջ, 548—557 թվականներին

¹⁴ Մաղաթիա աղ. Օրմանյան, Աղգագատում 1, Կ. Պոլիս, 1912, § 372, էջ 536 և § 384, 385, էջ 572—573:

լիսի 11-ից, որին համապատասխանում էր մեր շարժական տարվա նա-
վասարդի 1-ը:

Ալեքսանդրիայի 561 թվականի ժողովից հետո Աթանասը՝ Աղղե
Գամրացուց ստանալով էասյան 532-ամյակի օրինակը (կամ պարզա-
պես սովորելով դրա կազմութեան սկզբունքները), վերակազմեց իր տո-
նացույցը՝ դարձնելով ՇԼԲ բոլորակ (500-ամյա տոնացույց):

Որպես լրացուցիչ, բայց ոչ երկրորդական փաստարկ կարելի է հի-
շել Կիրակոս Գանձակեցու պատմածը. «Ապա հայրապետն Մովսես ժո-
ղովեաց զիմաստունսն, որ էին ի ժամանակին, յորս էր և Աթանաս ի
վանաց սուրբ Կարապետին, և կարգեցին թուական հայոց, որով ուղղե-
ցեն զզատիկ տեանն այլովքն հանդերձ: Բայց ոչ կարացեալ կալ ի ճըշ-
մարտութեան անսխալ դամս ինն: Իսկ ի տասներորդ թուականի հայոց,
էասոմն Աղեքսանդրացի...»¹⁸ և այլն: Գրեթե նույնն է պատմում նաև
Ս. Անեցին, որ տալիս է հետևյալ թվականները. ՇՄԳ (553)—200-յակի
ավարտը, որից հետո «կարգեցաւ թուականս հայոց» և ՇԿԲ (562)—«ի
սմին ամի եղաւ Ե-եակն»¹⁹: Մ. Չամչյանը հիշյալ հատվածում բերում է
երկու «անձանոթ պատմությունից» քաղվածքներ, որոնք նույնպես հաս-
տատում են այդ: Վերջապես՝ Հովհաննես Իմաստասերն էլ գրում է. «Ան-
տի (իմա՝ Քրիստոսի ծննդից.—է. Ա.) մինչև ի հայ թուականին դիր՝ ՇՄԳ
(553)», և ապա՝ «ինն ամաւ զկնի հինգհարիւրակն եղաւ, ի ծննդնէն՝
յետ ՇԿԲ (562) ամաց»²⁰, սակայն քիչ հետո էլ գրում է. «Ի տասն թուա-
կանին եղաւ հինգհարիւրեակն», որից հետևում է, որ «դիր հայ թուա-
կանին»-ը պետք է լինի 551-ին, քանի որ Հովհաննեսը, ինչպես Ս. Անե-
ցին, թվականները բերում է ըստ հայկական քրիստոնեական թվականի:

Եվ այսպես, 552 թվականով սկզբնավորվում է հայոց Մեծ թվականը
և սկսվում տարիների հաջորդական թվագրությունը, իսկ 562 թվակա-
նին կազմվում է հինգհարյուրյակը (ՇԼԲ բոլորակը)՝ Աթանասի կողմից:
Այդ հինգհարյուրյակն էր, որ հաստատվեց Դվինի 3-րդ ժողովում: Նույն
աղբյուրների և Մ. Չամչյանի քննության վրա հիմնվելով՝ Հ. Աճառյանն
էլ այդ միտքն է պաշտպանում՝ իր «Հայոց անձնանունների բառարա-
նում»։ «Աթանաս Տարօնեցի, վանահայր Գլախ վանուց, հաջորդ Բար-
դուղիմեոսի, տոմարագետ: Մովսես Բ եղվարդեցի կաթողիկոսի հրամա-
նով, Դվինի 3-րդ ժողովում նորոգեց հայոց թվականը 584 թվականին»²¹:
Այստեղ «նորոգեց հայոց թվականը» արտահայտությունն ինքնին թելադ-
րում է հայոց թվականի («Մեծ թվականի») գոյությունը Դվինի 3-րդ

ժողովից առաջ, և քանի որ հայոց թվականի սկիզբն է 552 թ. հուլիսի
11-ը (Մեծ թվականի առաջին տարի), ապա հասկանալի է, որ Հ. Աճառ-
յանն էլ ընդունում է Մ. Չամչյանի կարծիքը՝ 551-ին կազմված և 552-ից
սկսվող տոմար-տոնացույցի մասին, որ մենք էլ պաշտպանում ենք:

Ընդունելով, որ 552 թվականից գործադրվել է հայոց նոր տոմար-
տոնացույց (Շիրակացու վկայություն համաձայն՝ 95-ամյա զատկացանկ),
որը նորոգվել և ուղղվել է ըստ էասյան շրջանի և դարձվել հինգհարյուր-
յակ կամ ՇԼԲ բոլորակ, որի հեղինակն էլ եղել է տոմարագետ Աթանասը,
մենք ինքնին արդեն կասկածի տակ ենք առնում այն կարծիքը, որ ըն-
դունված է հայոց տոմարների պատմության մեջ՝ սովետական շրջանում,
և մինչև այժմ գիտվել է որպես անառարկելի ճշմարտություն: Այդ կար-
ծիքի համաձայն տոմարի պատմությունից ջնջվում է Աթանասի անունը,
և ամեն ինչ վերագրվում Անանիա Շիրակացուն, ըստ որում այս վերջի-
նին է վերագրվում և՛ հայոց Մեծ թվականի ստեղծումը, և՛ հինգհարյուր-
յակի կազմումը, այն էլ՝ 552—1084 թթ. (մեկ 532-ամյա) շրջանի հա-
մար: Այդ վարկածն անառարկելի ճշմարտություն համարելով՝ Շիրակա-
ցու մատենագրությունը հրատարակող Ա. Գ. Աբրահամյանը տպագրեց
այդ ժողովածուի մեջ ՇԼԲ մի աղյուսակ, որի հեղինակն իբր թե Շիրա-
կացին է և դրանով իսկ «օրինականացրեց» վարկածը: Դրանից հետո
մեր մաթեմատիկոս-տոմարագետները (բացի Լ. Սեմյոնովից) հավա-
տացին այդ վարկածին և իրենց աշխատությունների մեջ պաշտպանեցին
այն՝ ավելի ամրապնդելով ստեղծված թյուրիմացությունը: Այժմ, որ-
պեսզի կարողանանք երևան հանել և վերականգնել ճշմարտությունը,
մենք պետք է հանգամանորեն քննության առնենք հրատարակված ՇԼԲ
աղյուսակը և որոշենք նրա պատկանելությունը:

«Շիրակացու մատենագրությունը» գրքի մեջ հրատարակված ՇԼԲ
աղյուսակին նախորդում է հրատարակողի հետևյալ ներածական խոս-
քը. «Շիրակացու «ՇԼԲ բոլորակի» ներկա աշխատությունը հայտնաբեր-
ված է մեր Մատենադարանի № 2679 ձեռագրում, որն ունի 971 թվի
գրություն: Նա ընդօրինակված է Շիրակացու աշխատությունների շար-
քում: Հիմք վերցնելով այդ պատասխանի տեքստը, այլ ձեռագրերում պահ-
ված «ՇԼԲ բոլորակների» օգնությամբ մենք աշխատեցինք վերականգնել
Շիրակացու ամբողջական տեքստը: Աղյուսակի վերջից մենք քսանը
Շիրակացու ամբողջական տեքստը, որովհետև նա, մեր կար-
ույթ տարիների հատվածը բաց ենք թողնում, որովհետև նա, մեր կար-
ույթ տարիների հատվածը բաց ենք թողնում, որովհետև նա, մեր կար-
ույթ տարիների հատվածը բաց ենք թողնում»²²: Ինչպես պարզորոշ ասված է,
հայտնաբերված «ՇԼԲ բոլորակի» ներկա աշխատությունը լուրջ պատա-
ռիկ է, որին սկզբից և վերջից հավելումներ ու կրճատումներ կատա-
րելով՝ հրատարակիչը «վերականգնել» է ՇԼԲ բոլորակը՝ սկսելով 552

¹⁸ Նույն տեղում, էջ 331—33:

¹⁹ Սամուէլի Բաբանայի Անեցույ շառքումը ի գրոց պատմութեան..., Վաղարշա-
պատ, 1893, էջ 74—75:

²⁰ Հովհ., էջ 131—132, 133:

²¹ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 68:

²² Շիր., էջ 262:

Թվականից (553 թ. դատկից): Նույն աշխատության ուսումնասիրության բաժնի 4-րդ գլխում, որ վերնագրված է «Տոմարական աշխատություններ», այդ պատահիկի մասին Ա. Գ. Աբրահամյանը հետևյալն է գրում. «ՀՄՍՀ Մատեն. № 2679 (Գևորգյան № 102) նշանավոր գրչագիրը մեզ հնարավորություն է տալիս Շիրակացու տոմարի մասին խոսել ավելի կոնկրետ ձևով: Այդ գրչագրում պահվել է ՇԼԲ-ի աղյուսակի փոքրիկ պատահիկը, որի Շիրակացուն պատկանելը, մեր կարծիքով, անկասկած է»։ Շիրակացու անունը նշված է այդ գրչագրի պարունակած Շիրակացու աշխատության բոլորի վերնագրում: Հավանական է այդպիսի վերնագիր եղել է նաև ՇԼԲ աղյուսակի սկզբում, բայց նա անգամահատվել է՝ թերթերի թափվելու պատճառով: Այժմ աղյուսակից մնացել է ն2Գ (484) թվականից հետո եղող տեքստը մինչև վերջ»²³: Ամեն ինչ պարզ է ասված. 971 թվականի գրչագրում հանդիպել է ՇԼԲ բոլորակի մի անանուն պատահիկ, որը պարունակում է ընդամենը 49 տարիների աղյուսակ (532-ամյակի մոտ 1/11 մասը), որ և հրատարակիչը համարել է Շիրակացունը և լրացրել ողջ 532-ամյակը՝ սկսած 552/3 թվականներից: Ինքնին հարց է առաջանում. որտեղի՞ց գիտենք, որ Շիրակացին կազմել է «ՇԼԲ բոլորակ», որպեսզի իրավունք ունենանք այդ պատահիկը համարելու Շիրակացու աղյուսակի մաս և դրա հիման վրա էլ վերականգնենք ամբողջ 532 տարիների նրա աղյուսակը: Այս խնդրի քննությանն Ա. Աբրահամյանը նվիրել է հիշյալ գլխի 5-րդ հատվածը, որի մեջ նա այն եզրակացությունն է հանգում, որ Շիրակացին է հեղինակը ոչ միայն «ՇԼԲ բոլորակի», այլև հայկական թվագրության, այլ կերպ ասած՝ Շիրակացին է հիմնադիրը հայկական Մեծ թվականի: Այս եզրակացության հիմքն է Կողենի տեղեկությունը, որ նա քաղում է Մատենադարանի № 1999 ձեռագրից. «Արդ վասն զի յարաց ամսոյ յն հանդիպեցաւ զնել զգիր թուականութեան հայոց ազգիս ի ձեռն Անանիայի Շիրակացոյ ի Ժերոզ ամի աթոռակալութեան տեառն Յովհաննիսի կաթողիկոսի, որ ԻԳ թիւ հայրապետացն ի սրբոյն Գրիգորէ: Եւ Իէ ամէն Յուստինիանոսի կայսեր, ի հիմնարկութեան մեծ եկեղեցոյն սրբոյն Սոփեայ, եւ ի ԻԲ ամին Խոսրովու պարսից արքային»²⁴: Այս մեջբերումից եզրակացնում է. «Կողենի խոսքը, մեր կարծիքով, Շիրակացու ՇԼԲ աղյուսակի մասին է, իսկ «Գիր թուականութեան հայոց» — հայոց թվականի՝ վեր ածված ՇԼԲ աղյուսակների»²⁵: Վերը մենք տեսանք, որ մեր պատմիչները տարբերում

են հայոց Մեծ թվականի սկիզբը հինգհարյուրյակի սկզբից. առաջինը, նրանց գրածների համաձայն, եղել է 552 թվականին, իսկ երկրորդը՝ 10-րդ տարում՝ 562 թ.: Կարևոր ենք համարում շեշտել, որ բոլոր այն հեղինակները, որոնք խոսում են հայոց Մեծ թվականի սկզբնավորման մասին, չեն հիշում Շիրակացու անունը, ըստ որում այդ անունը չի հիշվում նաև Հովհաննես Կողենի նույն հատվածում, որը բերված է Մ. Չամչյանի գրքում: Ահավասիկ այդ հատվածը. «Արդ՝ վասն զի յարաց ամսոյ է հանդիպեցաւ զնել զգիր թուականութեան հայոց ազգիս ի Ժերոզ ամի աթոռակալութեան տեառն Յովհաննիսի կաթողիկոսի, որ ԻԳ թիւ էր հայրապետացն ի սրբոյն Գրիգորէ, և ԻԵ ամի Յուստինիանոսի կայսեր ի հիմնարկութեան մեծի եկեղեցոյն սրբոյն Սոփիայի, և ԻԵ ամի Խոսրովու պարսից արքային»²⁶: Այս հատվածը, ինչպես ցույց է տալիս ամենամակերեսային համեմատությունը, նույնն է Ա. Աբրահամյանի մեջ բերած հատվածի հետ, մի կարևոր տարբերությամբ միայն. այստեղ չկա «ի ձեռն Անանիայի Շիրակացոյ» կապակցությունը: Հասկանալի է, որ մենք ստույգ ենք համարում գրչագրական այս տարբերակը, իսկ № 1999 ձեռագրի մեջ եղած «ի ձեռն Անանիայի Շիրակացոյ»-ը՝ արտագրողի հավելումը: Եվ, իրոք, 552 թվականին չէր կարող դրվել հայոց թվականությունը (տարիների հաջորդական հաշվարկը կամ թվագրությունը՝ «գիր թուականութեան»-ը) Անանիա Շիրակացու կողմից (ի ձեռն Անանիայի Շիրակացոյ), որովհետև նա ղեռ չէր ծնվել:

Վերջապես, Անանիա Շիրակացուն ՇԼԲ-ի հեղինակ համարելու կարևորագույն փաստարկներից մեկն էլ մեր մատենագիրների տված տեղեկություններն են: «Միջնադարյան գրեթե բոլոր հայ պատմագիրները և մատենագիրները, սկսած Հովհաննես Դրասխանակերտցուց, VII դարի պատմական ղեպե՞րի մասին խոսելիս հիշում են Անաստաս կաթողիկոսի պատվերով Շիրակացու կողմից հայոց անշարժ տոմար կազմելու մասին»²⁷: Այնուհետև նա բերում է Դրասխանակերտցու և Ասողիկի վկայություններն այդ մասին:

Որպեսզի կարողանանք գնահատել Ա. Գ. Աբրահամյանի՝ մեր մատենագիրների տեղեկությունների հիման վրա կառուցած տեսությունը, և ճշգրտել Շիրակացու կատարածը, մենք պետք է պարզենք հետևյալը: Ի՞նչ են ասում մեր պատմիչներն ու տոմարագիրները հայոց տոմարի մասին 552—1084 թվականների ժամանակահատվածը նկատի ունենալով: Հիմնվելով թե՛ մեր և թե՛ Ա. Գ. Աբրահամյանի, այլև Մ. Չամչյանի կողմից մեջ բերված մատենագրական տեղեկությունների վրա և ընդհանրացնելով դրանք, տեսնում ենք, որ այդ բոլոր տեղեկությունները վերաբերում են հետևյալ փաստերին:

²³ Նույն տեղում, էջ 107—108:

²⁴ Նույն տեղում, էջ 109:

²⁵ Նույն տեղում, էջ 109: Մեր մատենագրական աղբյուրներում, ինչպես և ձեռագրերում, հանդիպում են դիր բուականին կամ դիր բուականութեան և գիր բուականին կամ գիր բուականութեան գրությունները՝ հայոց Մեծ թվականը կարգելու՝ զնելու իմաստով: Պարզ է, որ հիշան է դիր թուականին, այսինքն՝ թուականութեան գրումը՝ զնելու:

²⁶ Մ. Չամչյան, Պատմություն, էջ 509:

²⁷ Շիր., էջ 104:

1. Անդրևասի 200-ամյակը սպառնում է 552 թվականին, և որովհետև դեռևս միասնական տոնացույց չէր ստեղծվել, կազմվեցին տարբեր աղյուսակներ, որոնք և շփոթ առաջ բերեցին զատկի տոնակատարություն մեջ:

2. Հայերը Դվինի 2-րդ ժողովում սկզբնավորեցին հայոց թվականությունը, որ սկսվում էր 552 թ. հուլիսի 11 = նավասարդի 1-ով: Միևնույն ժողովում կազմեցին նաև զատկացանկ, հավանաբար 95-ամյակ, որով առաջնորդվեցին մինչև 561 թվականը (մինչև Ալեքսանդրիայի ժողովը):

3. Ալեքսանդրիայի ժողովն ընդունեց էասյան պարբերաշրջանը 561 թվականին. հայերն ընդունեցին էասյան հինգհարյուրյակը և ոչ թե Իրիոնիքը, և կազմեցին իրենց հինգհարյուրյակը էասյան համակարգով՝ «ի տասն թուականին հայոց», ինչպես գրում են մեր մատենագիրներից շատերը: Այդ հինգհարյուրյակը հաստատվեց Դվինի 3-րդ ժողովում՝ 584 թ.:

4. Բոլորը, ովքեր խոսում են տոմարի մասին, շեշտում են, որ Անաստաս կաթողիկոսը հանձնարարել է Անանիա Շիրակացուն կազմել անշարժ տոմար, ավելի ճիշտ՝ շարժական տոմարով կազմված և գործածվող հինգհարյուրյակը փոխարինել անշարժ տոմարով: Շիրակացին կատարեց այդ հանձնարարությունը և ներկայացրեց Անաստաս կաթողիկոսին, որը մտադիր էր եկեղեցական ժողովով հաստատել այդ «հրաշագան» Քրոնիկոնը, բայց մահացավ՝ նախքան ժողով հրավիրելը և ինչպես գրում է Կ. Գանձակեցին՝ «Անփոյթ եղեալ իրն զկնի եկեղոցն, այլ առաջին կարգան վարէին. — հետո եկածները (այսինքն՝ Անաստասի հաջորդները) առուշադրության մատենելով գործը՝ էլ նախկին կարգով վարեցին»²⁸:

Այս բոլորին հակառակ և նույնիսկ իր գրածին հակասելով՝ Ա. Գ. Աբրահամյանը գրում է. «Շիրակացու ՇԼԲ աղյուսակ կազմելու փաստը միանգամայն տրամաբանական է, եթե ի նկատի ունենանք, որ Շիրակացին պատվեր է ստացել Անաստաս կաթողիկոսից կազմել տոմար և այդ տոմարը պիտի հասկանալի լիներ բոլորին. նա ուղեցույց պիտի հանդիսանար՝ գտնելու տվյալ տարվա զատիկը, բարեկենդանն և տոմարական հաշիվները: Իսկ այդ հնարավոր էր միայն նման աղյուսակով»²⁹: Այս բոլորն ընդհանուր առմամբ ճիշտ է՝ բայց կարևոր է մի փաստ. մոռանալով՝ որ ընդամենը երկու էջ դրանից առաջ գրել է, թե Շիրակացին պատվեր է ստացել անշարժ տոմար կազմելու, այստեղ դեն է նետում անշարժ բառը, և այնպես ներկայացնում, թե իբր Շիրակացուն պատվիրվել է պարզապես տոմար կազմել: Սա, իհարկե, անհրաժեշտ էր, որպեսզի մի կողմ թողնելով անշարժ տոմարի խնդիրը՝ մի պատահական տոնացույցի պատարիկ վերագրի Շիրակացուն և «վերականգնի» 532 տարիների աղյուսակը:

²⁸ Կ. Գանձակեցի, նշված աշխ., էջ 62:

²⁹ Շիր., էջ 106 (ընդգծումը մերն է.— է. Ա.):

Մատենադարանի № 971 ձեռագրի մասին դադափար կազմելու նպատակով մենք հանգամանորեն ուսումնասիրեցինք այն՝ մեզ տրամադրված բերրոպատճենի հիման վրա³⁰: Այդ պատասխան ընդամենը չորս էջ է, որից 2 և կես էջը՝ հուլյան տոմարով մասն է, մեկ և կեսը՝ հայկական: Հուլյան մասն սկսվում է ՆՁԴ (484) թվականով և ավարտվում ՇՄ (550)-ով, ընդամենը՝ 67 տարի, հայկականն սկսվում է ՇԺԱ (511) թվականով, ավարտվում ՇՄ (550)-ով, ընդամենը՝ 40 տարի: Տարիների այս անհամապատասխանությունն, իհարկե, առանձին կարևորություն չունի, որովհետև նախորդող թերթերը չկան, ուստի և սկիզբը չի համընկնում: Ամենից կարևոր փաստն այն է, որ այդ պատասխանի հայկական մասը շարժական տոմարով է կազմված: Դրա լավագույն ապացույցը հետևյալն է. Հայտնություն տոնը կայուն օր ունի՝ հունվարի 6-ը, և աղյուսակի հուլյան տոմարի մասի այդ տոնին հատկացված երկու սյունակներում բոլոր տարիների դիմաց գրված է. «յն. 2», այսինքն՝ հունվարի 6: Հայկական մասում այդ ամիս-ամսաթվին համապատասխանող ամիս-ամսաթվերը փոփոխվում են ըստ քառամյակների, այսպես՝ ՇԺԱ (511) և ՇԺԲ (512) թթ. մարգաց է (7), հաջորդ 4 տարիներին (ՇԺԳ—ՇԺԶ)՝ մարգաց Ը (8) և այդպես մինչև վերջ: Հասկանալի է, որ Ա. Աբրահամյանի՝ այդ պատասխանի հիման վրա «վերականգնած» (ավելի ճիշտ է՝ կազմած) և Շիրակացու մատենագրության մեջ հրատարակած ՇԼԲ աղյուսակի հայկական մասն էլ շարժական պետք է լիներ և է: Իսկ դա նշանակում է, թե այդ շարժական տոմարը Շիրակացունը լինել չի կարող, որովհետև, ինչպես Ա. Գ. Աբրահամյանն է գրում, «Միջնադարյան գրեթե բոլոր հայ պատմիչները և մատենագիրները, սկսած Հովհաննես Դրասխանակերտցուց... հիշում են Անաստաս կաթողիկոսի պատվերով Շիրակացու կողմից հայոց անշարժ տոմար կազմելու մասին»³¹:

Այն մասին, որ Շիրակացուն վերագրված ՇԼԲ աղյուսակը Շիրակացունը չէ, գրել է Լ. Սեմյոնովը 1947 թվականին՝ «Շիրակացու մատենագրությունը» գրքին նվիրված գրախոսականում. «552-ից սկսած նոր հայկական դարադրուս ընդունելու և 532-ամյա շրջանի առաջին ցուցակ կազմելու հետ Ան. Շիրակացին ոչ մի առնչություն ունենալ չէր կարող», որովհետև «այդ բոլոր աշխատանքները կատարվեցին մինչև VI դարի վերջը, երբ Ան. Շիրակացին դեռ ծնված չէր»³²: Միանգամայն ճիշտ է այս կարծիքը, և շատ ցավալի է, որ մեր տոմարի պատմությունը զբաղ

³⁰ Մեր խնդրանքով բերրոպատճենը մեզ է տրամադրել ավագ գիտ. աշխատող Արտ. Մաթևոսյանը, որին մեր խորին շնորհակալություն ենք հայտնում:

³¹ Շիր., էջ 104 (ընդգծումը մերն է.— է. Ա.):

³² Պրոֆ. դոկտոր Ա. Աբրահամյան, «Անանիա Շիրակացու մատենագրությունը», գրախոսական, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ., 1947, № 3, էջ 98:

վողները անտեսել են այն՝ նպաստելով սխալի արմատացմանն ու տարածվելուն: Անխուսափելիորեն հարց է ծագում. իսկ ի՞նչ է ասում ինքը՝ Շիրակացին.— ահավասիկ: Ի «Երեսներորդ և ի չորրորդ ամի 2. Յուստինիանոսի կարգեցին Ալեքսանդրացիք զիննևտասն շորքտասաներորդն զատկաց՝ քսաննութեակ շրջագայութեամբ ՇԼԲ ամաց բոլորակն. եւ ի նոյն թագաւորի քսաներորդ և [չորրորդ] ամի՝ հայ թուականն կարգեցաւ»³³: «...Կարգեցին այլ յարմարումն թուոց և տօնից ճանապարհ անմոլար... Արդ մերումն կարգեցան այն ամն թուական Ժ և այն ժողովեցան մինչև ցայս ամս»³⁴: Պարզ է ասված. կարգեցին ՇԼԲ բոլորակը Հուստինիանոսի 34-րդ տարում (=561 թ.), կարգվեց հայ թվականը Հուստինիանոսի 24-րդ տարում (=551 թ.), մերը կարգվեց 10-րդ տարին (=562 թ.) և ժողովվեցին (տարիները) մինչև այս տարի, այսինքն՝ այդ տողերը գրելու տարին: Շիրակացին ինքն է ասում, որ մասնակից չի եղել (և չէր էլ կարող լինել) ո՛չ հայոց թվականը կարգելուն և ո՛չ էլ ՇԼԲ բոլորակը կազմելուն: Այս է իրողությունը և պատմական ճշմարտությունը:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչ է արել հայ տոմարագիտության բնագավառում Անանիա Շիրակացին, որին մեր միջնադարյան մատենագիրները միաբերան կոչում են մեծ գիտնական, այր իմաստուն և այլն, և այլն:

Մենք արդեն ասել ենք, որ միջնադարյան մեր բոլոր պատմիչներն ու տոմարագիրները՝ խոսելով հայկական թվականության և հայոց տոմարի մասին, միաբերան վկայում են, որ Անաստաս կաթողիկոսը հանձնարարել է Անանիա Շիրակացուն՝ հայկական անշարժ տոմար ստեղծել: Մատենագիրները վկայում են նաև, որ Անանիան կատարել է այդ գործը մեծ եռանդով ու աշխատանքով, անշարժ տոմարը՝ ավարտված վիճակում ներկայացրել է Անաստասին, որը պետք է եկեղեցական ժողովով հաստատել տար և գործադրության մեջ դնել, բայց մահացել է՝ չհասցնելով իրականացնել իր մտադրությունը: Հովհաննեսը գրում է. «Անաստաս կոչէ առ ինքն զմեծ Անանիա՝ անշարժ կարգել զտոմար մեր: Եւ արարեալ մեծաւ ջանիւ: Եւ իբրև կամեցան ժողով առնել, վախճանի սուրբն Անաստաս»³⁵: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Վանականի տեղեկությունը. «Երբ կամեցան առնել համառօտ և սեփական, մինչդեռ էին ի ջանս, մեռաւ կաթողիկոսն և յետ նորա արուեստաւորն, և այլ ոչ եղև ումեք փոյթ»³⁶: Այստեղ, մյուս աղբյուրների համե-

մատույթամբ, նորությունն այն է, որ Վանականը հայտնում է, թե Անաստասից հետո մահացել է նաև «արուեստաւորն», այսինքն՝ տոմարի մասնագետ Շիրակացին: Եթե այս տեղեկությունը ճիշտ է, ապա Շիրակացու մահը պետք է դնել 670—685 թթ. միջև: Նկատի ունենալով, որ Ա. Գ. Աբրահամյանի ուսումնասիրության համաձայն՝ «Շիրակացին ծնված պիտի լինի VI դարի վերջերում և, ամենաուշը VII դարի սկզբներում»³⁷, կարծում ենք, որ տեղեկությունը արժանահավատ է, ըստ որում նշված թվականներին Անանիան պետք է լիներ 75—85 տարեկան: Իսկ ի՞նչ էր արել Շիրակացին՝ Անաստասից հանձնարարություն ստանալուց հետո: Կազմել էր հինգհարյուրյակ («ՇԼԲ բոլորակ»)՝ անշարժ տոմարով և գրել այդ աղյուսակի կազմության սկզբունքները ներկայացնող մի աշխատություն: Ա. Գ. Աբրահամյանը՝ իր ուսումնասիրության մեջ խոսելով Շիրակացու տոմարական աշխատությունների մասին, գրում է. «Հայտնություն և Շիրակացու Ձատկի ճառերը նրա տոմարի մասերից են: Շիրակացու աղյուսակների մեջ կարևոր են նրա հայտնություն և զատկի աղյուսակները, որոնց համար անհրաժեշտ էր, որ Շիրակացին տեսական հիմնավորում տար: Եվ ահա Շիրակացին ձեռնարկում է մի ընդարձակ աշխատանք—գրում է հայտնության և զատկի իր ճառերը: ...Իր աղյուսակներից հետո, Շիրակացին, ըստ երևույթին, անհրաժեշտ է համարել տեսականորեն հիմնավորել 532 ամյա շրջանը և այդ նպատակով է գրված ՇԼԲ շրջանի տեսական այդ մասը»³⁸: Մենք հիմք չունենք ընդունելու ուսումնասիրողի այս եզրակացությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ դրանք անհրաժեշտ էին իր կազմած անշարժ տոմարի ըսկրզբունքները բացատրելու և ճշգրտությունն ապացուցելու համար: Համեմատելով Շիրակացու «Ձատկի ճառը» Անդրեասի տեքստի հայերեն թարգմանության և Հովհ. Իմաստասերի «Յաղագս իննևտասներեկ ամացն» աշխատության «Պատմութիւն սրբոյ զատկին» գլխի հետ, գտնում ենք որոշ հատվածների գրեթե բառացի նույնություններ: Դրանց մեջ որոշ հատվածների աղբյուրը Անդրեասի հայերեն թարգմանության այն բաժինն է, որ մենք համարեցինք թարգմանչի հավելումը, բայց կան տեղեր էլ, որոնց աղբյուրը, ամենայն հավանականությամբ, Շիրակացու «Ձատկի ճառն» է: Այդ նույնական հատվածների բանասիրական-տեքստաբանական ուսումնասիրությամբ այստեղ շենք դրադվի: Այդ մասին խոսելով՝ պարզապես ուզում ենք շեշտել, որ Շիրակացու այս աշխատությունը միջնադարում այնպիսի մեծ հեղինակություն է ունեցել, որ Անդրեասի թարգմանության արտագրողները խմբագրել են այն՝ Շիրակացու գրվածքից որոշ հատվածներ ներմուծելով:

³³ Շիր., էջ...

³⁴ Լ. Սեվյունով, նշված տեղում, էջ 98:

³⁵ Հովհ., էջ 133:

³⁶ Վաճակաճ, նշված աշխ., էջ 165:

³⁷ Շիր., էջ 38:

³⁸ Նույն տեղում, էջ 111—112:

Ինչ վերաբերում է Շիրակացու կազմած անշարժ տոմարին՝ այսինքն կայուն տոմարով կազմած ՇԼԲ բոլորակին, ապա մենք արդեն տեսանք, որ այդ տոմարը, Անաստասի մահվան պատճառով, կեղծեցական ժողովի կողմից չի հաստատվել և գործադրության մեջ չի դրվել, իսկ հաջորդներն էլ, ինչպես ուղղակի կերպով վկայում են Գանձակեցին և Վանականը, անփութ են գտնվել և հոգ չեն տարել արդեն պատրաստի տոմարը հաստատելու և գործածելու մասին: Անշարժ տոմարով կազմված այդ ՇԼԲ բոլորակը, առայժմ եղած տվյալներով, մեզ չի հասել, ուստի և նրա մասին դատողություններ անել չենք կարող:

Այսպես, ուրեմն, Անանիա Շիրակացին Անաստասի հանձնարարության համաձայն կազմել է 532 տարիների տոնացույց («ՇԼԲ բոլոր») անշարժ տոմարով և դրանով իսկ հայոց շարժական տոմարը դարձրել անշարժ: Իսկ նրան վերագրված 532-ամյա՝ շարժական տոմարով կազմված և հրատարակված աղյուսակներն իրականում ոչ նրանն են, ոչ էլ Աթանասինը, այլ մեզ հասած դանազան դատկացանկերից կցմցված մի աղյուսակ, որպիսին չէր կարող կազմվել VI դարում:

Մենք ասացինք, որ հայոց տոմարների պատմության մեջ VI դարի խոշորագույն իրադարձությունը հայկական թվականության սահմանումն է կամ կարգումը, այսինքն՝ տարիների անընդհատական հաջորդականությունը թվականներով հաշվելը (1 թվական, 2 թ., 3 թ., 4 թ... 10 թ., 100 թ. և այլն): Դրանով հայ ժողովրդի ժամանակաշարժության նախկին համակարգը, որ սահմանափակվում էր օրերի, ամիսների հաշվարկով՝ մեկ տարվա տեղումը (365 օր), թեկոսում էր մի նոր, ավելի բարձր փուլ, միամյա պարբերությունը փոխարինելով միմյանց հաջորդող տարիների անվերջորեն շարունակվող թվարկումով կամ հաշվով: Տեսանք նաև, որ հայոց թվականի սահմանումը 532-ամյա պարբերաշրջանի հայտնագործությունից և դրան համապատասխանող «ՇԼԲ բոլորակը» կազմելուց անկախ է: Եվ շնայած դրան, հայկական տոմարների պատմության մեջ հայոց Մեծ թվականի սկիզբը սովետական շրջանում կապել են սովորաբար «ՇԼԲ բոլորակի» հետ և այն էլ՝ Շիրակացուն վերագրված աղյուսակների հետ: Այս վերջին հանգամանքն էլ, ահա, առաջ է բերել Մեծ թվականի սկզբի, ինչպես նաև Մեծ թվականի, որպես օրացուցային համակարգի, բնութագրության հետ կապված վեճերը:

Մեծ թվականի սկզբնավորմանը վերաբերող վեճը կարելի է հանգեցնել հետևյալ հարցին. հոռմեական (քրիստոնեական) ո՞ր թվականից է սկսվել Մեծ թվականը և դրան համապատասխան՝ տրված հայկական թվականին քանի՞ տարի պետք է գումարել համապատասխան թվականը գտնելու համար կամ հակառակը՝ տրված հոռմեական թվականից քանի՞ տարի պետք է հանել՝ հայոց Մեծ թվականի տարեթիվը գտնելու համար: Հայագիտության մեջ սովորաբար երեք տարբեր տարեթիվեր են

ընդունվել՝ 551, 552, 553: Սրանցից ո՞րն է ճշմարիտ.— Ըստ սկզբունքի՝ և ոչ մեկը: Մենք արդեն գիտենք, որ 6-րդ դարում, ինչպես և դրանից հետո, հայերը շարունակել են հայոց Բուն թվականը, այսինքն՝ արեգակային շարժական օրացույցը: Գիտենք նաև, որ այդ օրացուցային համակարգի համաձայն հայոց տարեմուտը կամ ամանորը, որ է նավասարդի 1-ը, 552 թվականին եղել է հուլիսի 11-ին: Սա նշանակում է, թե այդ երեք թվականներից (551, 552, 553) որն էլ իբրև Մեծ թվականի սկիզբը համարելու լինենք, հայոց տրված թվականին հուլյան (քրիստոնեական) թվականության համապատասխան տարեթիվը գտնելու համար պետք է գումարենք երկու թվականներից մեկն ու մեկը, այն է՝ 550 կամ 551, 551 կամ 552, 552 կամ 553: Այդպես է, որովհետև հայկական տարին սկսվել է հուլիսի 11-ով, որ նշանակում է, թե տարեթիվ (551, 552 կամ 553) այդ օրվանից մինչև տարեվերջը հայկական տարվա միայն մի մասն է (ընդամենը 174 օր կամ 5 ամիս 24 օր կամ նավասարդի 1-ից մինչև արաջ 24-ը՝ ներառյալ), իսկ երկրորդ մասն անցել է հուլյան հաջորդ տարվան (ընդամենը՝ 191 օր կամ 6 ամիս և 11 օր կամ արաջ 25-ից մինչև ավելյաց 5-ը՝ ներառյալ): Ըստ այսմ, եթե հայոց Մեծ թվականի սկիզբը համարենք հոռմեական 551 թվականը (նավասարդի 1 = հուլիսի 12), ապա տրված հայոց տարեթիվին պետք է գումարենք 550 կամ 551, եթե՝ 552-ը, ապա՝ 551 կամ 552, և եթե՝ 553-ը, ապա՝ 552 կամ 553: Սա տոմարագիտորեն բացարձակապես ճշգրիտ սկզբունք է, որն է առարկություն չի վերցնում, ուստի և մենք էլ առաջնորդվում ենք այդ սկզբունքով:

Այժմ պարզենք, թե նշված երեք թվականներից որը պետք է ընդունել որպես հայոց Մեծ թվականի սկիզբ: Վերը, Մ. Չամչյանի հետազոտության արդյունքները ներկայացնելիս, տեսանք, որ նա՝ 1. Ժամագոտության արդյունքները ներկայացնելիս, տեսանք, որ նա՝ 1. Ժամագոտության արդյունքները ընդունում է 551 թվականին: Մ. Օրմանյանը ճշգրտված թվականներով ժամանակի կաթողիկոսն է համարում ներսես Բ Բագրեվանդացուն, 2. Աճառյանը և ժամանակակից հայ պատմագիտությունը՝ վանդազուն, 2. Աճառյանը և ժամանակակից հայ պատմագիտությունը՝ նույնպես³⁹, ներսես Բ Բագրեանդացին (Աշտարակեցին) աթոռակալել է 548 թվականից մինչև իր մահը՝ 557 թվականը: Ուրեմն հաստատ է, որ Մեծ թվականի սկիզբը դրվել է ներսեսի օրոք, բայց ո՞ր թվականին: Մեր մատչյալ գրքերը միաբերան ասում են, որ թվականի սահմանումը կամ կարգումը եղել է Հիզորուզիտի նահատակության տարում, ըստ որում նույն թվականին են դնում նաև Դվինի ժողովը: Սակայն թե Հիզորուզիտի նահատակության և թե ժողովի թվականները մեր մատենագիրների մոտ խիստ հակասական են: Քանի որ հայերը պատմական դեպքերը մոտ խիստ հակասական են: Քանի որ հայերը պատմական դեպքերը մոտ խիստ հակասական են ոչ թե որոշակի թվականությամբ, այլ թագավորների,

³⁹ Տե՛ս, օրինակ, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, 1982, էջ 252:

կաթողիկոսների և այլն տարիներով, ապա այդ շփոթն էլ ավելի մեծանում է: Տվյալ դեպքում մեր մատենագիրները տալիս են Հուստինիանոս կայսեր և Խոսրով Անուշիրվանի գահակալության տարիները, ինչպես և հայոց Մեծեմ մարզպանի տարիները: Ըստ այդմ, ոմանք հայ թվականի կարգումը դնում են Հուստինիանոսի 24-րդ տարում (=551 թվական), ոմանք՝ 25-րդ, և Խոսրովի 22-րդ, բայց նաև՝ 23 կամ նույնիսկ 25-րդ տարում, այսինքն՝ դարձյալ 551, 552 կամ 554 թվականին: Ինչպես տեսանք, Մ. Չամչյանը ժողովի թվականն է համարում 551-ը, Օրմանյանը՝ 554 թ. մարտի 29-ին, որ ընդունված է նաև ՀՄ Հանրագիտարանում, իսկ Հ. Աճառյանը՝ 551 և 554 թթ. «Ներսես Բ Աշտարակեցի կամ Բագրևանդացի. կաթողիկոս հայոց «548—557 թթ.» Բագրևանդի Աշտարակ գյուղից էր. հաջորդեց Առնոդ Առեստացի կաթողիկոսին. դուժմարեց Դվինի 551 թ. և 554 թ. ժողովները՝ կեղեցական բարեկարգության, տոմարի հաստատման և նեստորական աղանդի դեմ մաքառելու համար»⁴⁰: Ճիշտ ենք համարում այս տարեթվերը, ըստ որում Հր. Աճառյանը հիանալիորեն գիտեր հայոց տոմարը, իսկ հիշյալ խնդիրը լուծելու համար չի բավարարվել Մ. Չամչյանի և Մ. Օրմանյանի ուսումնասիրություններով ու մեր մատենագրական տպագրված աղբյուրներով, այլ օգտվել է նաև բազմաթիվ ձեռագիր աղբյուրներից, մասնավորապես՝ Յալամավորքի Չեռագրերից ու ճառընտիրներից: Բացի դրանից, Մ. Օրմանյանն էլ, որ Դվինի երկրորդ ժողովի տարին է համարում 554-ը, ըստ էության երկու ժողով է ընդունում. առաջին ժողովը, որի «գումարման հրավերը ավելի կանուխ եղած է, բայց որևէ պատճառով մը եպիսկոպոսներ հապաղած են հավաքվել, ասոր համար Ներսես ծանր ոճով թուղթ մեղադրութեան կգրե ուղացող եպիսկոպոսներուն... այս մեղադրական ուղղված է ինն եպիսկոպոսների՝ «ամենն ալ հարավային գավառներու եպիսկոպոսներ»⁴¹: Հր. Աճառյանը ճիշտ է վարվում, որ այս առաջին հավաքը նույնպես ժողով է համարում. բանի որ 70 եպիսկոպոսների բացակայությունը չէր կարող ժողովը խափանել, մանավանդ որ ըստ Օրմանյանի՝ 554 ժողովին էլ «10 մեղադրյալներն 3 միայն ներկայացած են»⁴², ինչ վերաբերում է 554 թվականին, ապա այդ ևս հավանական չի թվում. Խոսրով Անուշիրվանը գահ է բարձրացել 531 թ. և նրա 24-րդ տարին իսկապես 554 թվականն է, բայց մեր մատենագիրները Խոսրովի հետ և նրանից առաջ հիշում են Հուստինիանոսի օրոնը, որինակ. Կողեռը գրում է. «Ի ԻՅ ամին Յուստինանոսի կայսեր, ի հիմնարկութեան մեծ եկեղեցւոյն սրբոյն Սոփիայ, և ի ԻՅ ամին Խոսրովու պարսից արքայի: Արդ յայն տարուջ յորում գթուականն եղին ՄՈՂԶ ամ

էր յԱդամա մինչև ի հայ թուականն. և ի ծննդենէն Քրիստոսի մինչև ի սրբոյն Գրիգորի ելս ի վիրապէն ամբ ՄՂԶ, և անտի մինչև ցհայ թուականն ամբ ՄՂԶ, որ լինի ի ծննդենէն Քրիստոսի մինչև ցհայ թուականն ամբ ՇԾԲ»⁴³: Հուստինիանոսի 25-րդ տարին 551/552 թվականն է, Խոսրովի 22-րդ տարին՝ նույնպես: Ադամից մինչև հայոց թվականը՝ 5672, որից եթե հանենք 552, կստանանք 5120 տարի՝ Ադամից մինչև «Քրիստոսի ծնունդը» (արարչության այդպիսի թվական մեզ հայտնի չէ). «Քրիստոսի ծննդից» մինչև Գ. Լուսավորչի՝ վիրապից դուրս գալը՝ 276 տարի և դրանից հետո՝ մինչև հայոց թվականը՝ դարձյալ 276 տարի՝ ընդամենը 552. «Քրիստոսի ծննդից» մինչև հայոց թվականը՝ ՇԾԲ—552, ինչպես տեսնում ենք, շատ թվականներ աղավաղված են, բայց և այնպես հայոց թվականի սկիզբը բոլոր դեպքերում 552 թվականն է գալիս: Նույնպես և՛ Սամուել Անեցու ժամանակագրությամբ. Ադամից մինչև «Քրիստոսի ծնունդը» 5198 տարի⁴⁴ (արարչության հայոց թվական), ապա՝ «աստանոր լցեալ լինին ամբ ի ծննդենէն Քրիստոսի ՇԾԳ, յորում և բովանդակեցան կանոնք Մ. եկին (= երկերիւրեկին) Անդրիասայ... ապա իմաստունք ժամանակին ի միասին եկեալ կարգեցին թուականն հայոց... Իսկ ի Ժ-երորդ ամին թուականին էաս անուն իմաստուն մտօք ժողովեաց առ ինքն...»⁴⁵: Ըստ այսմ, 553 թ. Անդրեասի 200-ամյակի ավարտը, և հայոց թվականի կարգումը, 563-ին՝ Ալեքսանդրիայի ժողովը: Քանի որ հաշիվը հայկական քրիստոնեական թվականությամբ է, ապա պետք է հանենք 2 տարի, ուրեմն կստանանք 551 և 561 թվականները: Վերը տեսանք, որ նույնն է ստացվում նաև Հովհաննես Իմաստասերի ժամանակագրությամբ: Ի մի բերելով այս երեք հեղինակների տրվյալները, ինչպես և մեր մյուս մատենագիրների տվյալները, որոնցից մի քանիսը բերել ենք վերևում, կարող ենք ընդունել, որ Դվինի 2-րդ ժողովի առաջին հավաքը տեղի է ունեցել 551 թվականին: Քանի որ այդ հավաքին չեն ներկայացել 10 եպիսկոպոսներ, ապա ժողովի հիմնական հարցը՝ նեստորականության խնդիրը և կանոնների սահմանումը, քննության չդրվեցին, և միայն տոմարի հարցը քննարկվեց: Սա ինքնին բխում է այն փաստից, որ հայոց թվականի սկզբնավորումը մեր բոլոր պատմիչներն ու տոմարագետները պայմանավորված են համարում Անդրեասի 200-ամյակի ավարտումով: Արդ, այդ 200-ամյակը, ինչպես գիտենք, ավարտվել է 552 թվականով, և, հասկանալի է, 551 թվականին, Դվինի հավաքի ժամանակ արդեն պետք է որոշելին, թե ինչ են անելու առաջիկա (552 թ.) զատկից հետո: Հարցի քննության առաջին և առաջնակարգ

⁴⁰ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Կ. Պ, էջ 38:
⁴¹ Մ. Օրմանյան, Նշված աշխ., Կ. Ա, էջ 547, 548:
⁴² Նույն տեղում, 549 (§ 369):

⁴³ Մատենադարան, ձեռ. № 1999, էջ 67բ:
⁴⁴ Սամուելի Բանանայի Անեցույ Հուսարմունք ի դրոց պատմագրաց..., Վաղարշապատ, 1893, էջ 51:
⁴⁵ Նույն տեղում, էջ 74—75:

արդյունքը եղավ հայոց թվականության կարգումը: Ըստ այսմ՝ հայոց թվականը կարգելու որոշումն ընդունվել է 551 թվականին, Գվիկի 2-րդ ժողովի առաջին հավաքում. բացի դրանից, այդ հավաքի ժամանակ գրվեց և ընդունվեց շնորհակալացած եպիսկոպոսներին ուղղված «Մեղադրական թուղթը», որի տակ, բացի կաթողիկոս Ներսեսից, ստորագրել են, ըստ Մ. Օրմանյանի, 9 նշանավոր եպիսկոպոսներ: Այս փաստն էլ վկայում է, որ, այնուամենայնիվ, հավաքվածների եթե ոչ ժողով, գոնե խորհրդակցության նման մի բան եղել է, որովհետև «Մեղադրական թղթին» հավանություն տալու և նրա տակ ստորագրելու համար պետք է որ ստորագրողները կարդային ու հաստատեին այն: Եվ այսպես, 551 թվականին որոշվեց սահմանել հայկական թվականությունը՝ Անդրեասի զատկացանկի ավարտման տարվանից, այն է՝ 552 թվականից. հայկական ամանորն այդ թվականին համընկնում էր հուլիսի 11-ին, ուստի և հայոց Մեծ թվականի սկիզբն է 552 թվականի հուլիսի 11-ը: Մենք վերը հիշեցինք, որ մեր բոլոր մատենագիրները Հիզարուզիտի նահատակությունը դնում են հայոց թվականի առաջին տարում, ըստ Օրմանյանի, Հիզարուզիտը նահատակվել է 553 թվականի փետրվարի 25-ին, որ հայոց թվականության առաջին տարվա երկրորդ կեսն է: Բոլոր տվյալները համապատասխանում են միմյանց, ուրեմն Մեծ թվականի սկզբի որոշումն էլ ճիշտ է:

Կարգելով հայոց թվականություն՝ ինչպիսի՞ օրացուցային համակարգով հաշվեցին տարիները՝ շարժական, թե՞ անշարժ: Հայագիտության մեջ ընդունված է, որ հայոց Մեծ թվականը շարժական տոմար է եղել, սակայն 1866 թ. Հ. Իգնատիոս Աղամյանը⁴⁶ «Բազմավեպ»-ում և 1983—84 թթ. Գրիգոր Բրուտյանը⁴⁷ «Էջմիածնում» հանդես եկան հոգվածներով, որոնցով ուզում են ապացուցել, թե իբր Մեծ թվականը եղել է անշարժ օրացուցային համակարգ ներկայացնող տոմար: Երկու հեղինակներն էլ որպես ելակետ են ընդունում «Շիրակացու մատենագրության» մեջ հրատարակված «ՇԼԲ բոլորակը» և դանազան թվաբանական խաղերով ու միմյանց բացասող դատողություններով հանգում թյուր եղբակացությունների: Մենք այստեղ կանգ չենք առնի թվաբանական այդ խաղերի ու հակասական դատողությունների վրա և կբավականանանք երկու անառարկելի փաստերի վերհիշումով:

1. «Շիրակացու մատենագրության» մեջ հրատարակված «ՇԼԲ բոլորակը», ինչպես ապացուցեցինք, Շիրակացունը չէ. մեզ հասած դանազան ՇԼԲ աղյուսակների հիման վրա այդ աղյուսակը սարքել է (կամ՝

ինչպես ինքն է գրել՝ «վերականգնել է») Ա. Գ. Արրահամյանը՝ աղյուսակների վերջից դեն նետելով 28 տարիների ցանկը և սկզբից ավելացնելով 10 տարիներին, որով ընդգրկել է 553—1084 թթ. զատիկները: Այդ աղյուսակը գործնականորեն կարելի է օգտագործել՝ այդ թվականների ավագ լրման, զատիկի ամսաթվերն ու շաբաթվա օրերն իմանալու, բայց ոչ հայոց Մեծ թվականի մասին դատողություններ անելու համար, թեև, ոչ հայոց Մեծ թվականի մասին ՇԼԲ աղյուսակը կաղմված է հայոց շարժական տոմարով:

2. Հայոց թվականության և Շիրակացու մասին խոսող մեր բոլոր մատենագիրները միաբերան վկայում են, որ Անաստասը հանձնարարել է Անանիա Շիրակացուն՝ հայոց տոմարը վերածել անշարժի, այսինքն՝ կաղմել ՇԼԲ աղյուսակ՝ անշարժ տոմարով և հայոց թվականությունն էլ դարձնել անշարժ: Շիրակացին կատարել է այդ գործը, բայց նրա կատարածը գործադրության չի դրվել:

Այս երկու փաստերը բավական են Հ. Ի. Աղամյանի և Գ. Բրուտյանի թվաբանական խաղերն ու մտամարզանքները հերքելու համար:

Ինչպե՞ս պետք է գտնել, թե հայոց Մեծ թվականի տվյալ տարին մ. թ. որ թվականն է և հակառակը՝ տվյալ քրիստոնեական թվականը հայոց Մեծ թվականի ո՞ր տարին է: Քանի որ հայոց տարին սկսվում է հուլիսի 11-ով, ապա մեր մեկ տարին ընկնում է հուլյան երկու տարիների՝ 552-ի հուլիսից մինչև դեկտեմբերի 31-ը՝ ներառյալ, և 553-ի հունվարի 1-ից—հուլիսի 10, 553-ի հուլիսի 11-ից դեկտեմբերի 31 և 554-ի հունվարի 1-ից—հուլիսի 10-ը և այլն: Սա նշանակում է, թե եթե տվյալ իրադարձությունը տեղի է ունեցել հուլիսի 11-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակամիջոցում, ապա հայոց թվականին պետք է գումարել 551, որով կստանանք հուլյան տոմարի թվականը, իսկ եթե տեղի է ունեցել դեկտեմբերին հաջորդող հունվարի 1-ից մինչև հուլիսի 11-ը, ապա պետք է գումարել 552: Օրինակ. ա) Ընդունենք, թե հայոց առաջին թվականի տրե՛ ամսի 1-ին տեղի է ունեցել ինչ-որ բան. պետք է որոշենք, թե դա հուլյան տոմարի ո՞ր թվականին է համապատասխանում: Քանի որ հայոց Նավասարդի մեկը համապատասխանել է հուլիսի 11-ին, ապա տրե՛ի 1-ն էլ կհամապատասխանի հոկտեմբերի 9-ին, դեպքը տեղի է ունեցել հուլիսի 11-ից—դեկտեմբերի 31-ի միջև, ուստի և հայոց թվականին պետք է գումարենք 551. 1+551=552 թվական: բ) Ընդունենք, որ հայոց 1 թվականի արեգի 1-ին տեղի է ունեցել ինչ-որ բան. արեգ ամսվա մեկը համապատասխանում է հուլյան հաջորդ տարվա փետրվարի 6-ին: Դեպքը տեղի է ունեցել հունվարի 1-ից—հուլիսի 10-ի միջև, ուստի և հայոց թվականին ավելացնել 552. 1+552=553 թվաբան պետք է հայոց թվականին ավելացնել 552. 1+552=553 թվական (փետրվարի 6): Այս օրինակները վերաբերում են հայոց Մեծ թվականի առաջին տարվան, երբ Նավասարդի 1-ը համապատասխանում էր

⁴⁶ Հ. Իգնատիոս Աղամյան, Հայկական թվականի մասին գրեթե իրենք, «Բազմավեպ», 1966, № 7—8, էջ 183—192, № 9—10, էջ 216—223:

⁴⁷ Գրիգոր Բրուտյան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, «Էջմիածին», 1983, № 8, էջ 41—44 և 1984, № 5, էջ 54—55:

Հուլիսի 11-ին, սակայն մենք դիտենք, որ հայոց ամանորը 4 տարում 1 օրով առաջ էր ընկնում, ուրեմն 556-ին ամանորը կլինեք Հուլիսի 10-ին, 560-ին՝ Հուլիսի 9-ին, 660-ին՝ հունիսի 14-ին և այլն: Հետևաբար՝ նպատակահարմար է որպես ելակետ ընդունել հայոց ամանորը և սահմանել հետևյալ կանոնը. երե հայոց թվականով դեպի տեղի է ունեցել նավասարդի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակամիջոցում, պետք է գումարել 551, իսկ երե տեղի է ունեցել հունվարի 1-ից մինչև նավասարդի 1-ի մինչև ընկած ժամանակամիջոցում, գումարել 552: Հակառակը, այսինքն՝ հոտմեական թվականով հայոց Մեծ թվականը գտնելու համար, տվյալ հոտմեական թվից պետք է հանել 551 կամ 552 տարի՝ տրված կանոնի համաձայն: Այդ կանոնը տարիների հաջորդական շարքում հանգում է հետևյալին: Ինչպես պարզ կերպով կարելի է հասկանալ, հայոց ամանորը՝ նավասարդի 1-ն առաջ է շարժվում դեպի հունվար, մինչև որ 1320 թվականին հասնում է հունվարի 1-ին, և որովհետև 1320 թ. նահանջ տարի է, ապա հայոց տարին ավարտվում է դեկտեմբերի 30-ով, իսկ դեկտեմբերի 31-ը դառնում է հայկական հաջորդ տարվա առաջին օրը՝ նավասարդի 1-ը (հուլյան մեկ տարում՝ երկու հայկական ամանոր): Քանի որ այդ մեկ օրով հայոց Մեծ թվականը ավելանում է մեկ տարով (հունվարի 1 = հայոց 768 թ. նավասարդի 1, դեկտեմբերի 31 = հայոց 769 թ. նավասարդի 1), ապա պարզ է, որ հոտմեական թվականը գտնելու համար 1320-ից հետո պետք է հայկական տվյալ թվականին գումարել 550 կամ 551 տարի՝ տրված կանոնի համաձայն: Օրինակ՝ որոշենք, թե հայոց 902 թ. նավասարդի 1-ը և սահմիի 1-ը հուլյան որ թվականին են ընկնում. քանի որ հայոց թվականը հայտնապես հուլյան 1320-ից հետո է, ապա պարզ է, որ նավասարդի 1-ը գտնելու համար պետք է տրված հայկական թվին գումարենք 550, իսկ սահմիի 1-ը գտնելու համար՝ 551 (սահմիի 1 = հունվարի 27). $902 + 550 = 1452$, $902 + 551 = 1453$: Ուրեմն հայոց 902 թվականի ամանորը եղել է հուլյան 1452 թ. (նոյեմբերի 28), իսկ սահմիի 1-ը՝ 1453 թ. (հունվարի 27):

Մինչև այժմ բերված օրինակները, ինչպես և տրված բացատրություններն ու կանոնները վերաբերում են այն դեպքերին, երբ թվականի հետ տրված են նաև ամիսը (և ամսաթիվը), սակայն մատենագրության մեջ, ինչպես և վիմական արձանագրություններում, շատ հաճախ հիշվում է միայն թվականը: Այդպիսի դեպքերում հայոց թվականով հուլյանը որոշելիս պետք է գումարել 551 և 552 (1320 թվականից հետո՝ 550 և 551), որով կստանանք հայոց Մեծ թվականին համապատասխանող հուլյան երկու թվական: Օրինակ՝ տրված է հայոց Խէ (47) թվականը. համապատասխան հուլյանը կլինի $551 + 47 = 598$ -ը կամ $552 + 47 = 599$, որը կարտահայտենք $598/9$ կամ $598 - 599$ թթ. ձևով:

Տրված հուլյան թվականից հայոց Մեծ թվականի տարեթիվն իմանալու համար գումարման գործողությունը պետք է փոխարինել հանման գործողությամբ. օրինակ՝ 1452 թ. նոյեմբերի $28 = 1452 - 550 =$ հայոց 902 թ. նավասարդի 1 ; 1453 թ. հունվարի $27 = 1453 - 551 = 902$ սահմի 1 ; 1012 թ. հունվարի $20 = 1012 - 552 =$ հայոց 460 մարգաց 25 ; 1012 թ. 1 ; 1012 թ. հունվարի $20 = 1012 - 551 =$ հայոց 461 թ. սահմի 3 և այլն: Ինչպես հեշտությամբ կարելի է հասկանալ, այս դեպքում նույնպես՝ եթե դեպքը տեղի է ունեցել հունվարի 1-ից մինչև հայոց ամանորը, հանում ենք տեղի է ունեցել հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի վերջը՝ 551. բերված 552, իսկ եթե՝ հայոց ամանորից մինչև դեկտեմբերի վերջը 20 (1012 թ. ավերջին երկու օրինակներից առաջինում տրված է հունվարի 20 (1012 թ. ամանորը եղել է մարտի 18 -ին), ուստի և հանել ենք 552 , իսկ երկրորդում՝ մայիսի 20 (ամանորից հետո է), հետևաբար և հանել ենք 551 : Եվ վերջապես, ինչպես որ հայոց որևէ թվական կարող է համապատասխանել հուլյան երկու տարեթվերի (օրինակ՝ հայոց 35 թ. = հուլ. $586/7$ թթ.), հուլյան երկու տարեթվերի (օրինակ՝ հայոց 35 թ. = հուլ. $586/7$ թթ.), այնպես էլ հոտմեական որևէ թվական, որի ամիսը նշված չէ, կարող է համապատասխանել հայոց երկու տարեթվերի, օրինակ՝ 596 թ. = հայոց $44/45$ թթ., որովհետև 596 թվականի առաջին մասը (հունվարի 1-ից մինչև հունիսի 30) հայոց 44 թվականին է պատկանում, իսկ երկրորդ մասը (հունիսի $30 =$ նավասարդի 1 -ից մինչև դեկտեմբերի 31 -ը) հաջորդ 45 թվականին:

Հայագիտության մեջ, ինչպես ասացինք, հայոց Մեծ թվականի ըստ վերջի մասին, հետևաբար նաև հայոց թվականով հուլյանը և հակառակը՝ հուլյանով հայկականը գտնելու համար գումարվող կամ հանվող տարիների քանակի մասին տարբեր կարծիքներ են արտահայտվել: Այսպես, 1956 թ. հրատարակած իր մի հոդվածում⁴⁸, Ա. Գ. Աբրահամյանը փորձում է ապացուցել, որ հայոց Մեծ թվականի սկիզբն է 553 թ., և «Հովհաննես Իմաստասերի մատենագրության» մեջ էլ գրում է. «Վերջերս մենք հանդես եկանք մի հոդվածով և պաշտպանեցինք այն տեսակետը, որ հայկական թվականության սկիզբը պիտի համարել ոչ թե 552 -ը, այլ 553 -ը»⁴⁹: Այս կարծիքը մենք քննության չենք առնի, քանի որ հետազոտում, իր «Հայ դիր և գրչություն» աշխատության մեջ⁵⁰ արդեն ընդունել է տոմարագետներ Բ. Թումանյանի և Հ. Բաղալյանի տեսակետը: Դրան հակառակ, Իգնատիոս Հ. Աղամյանն իր արդեն հիշված հոդվածի մեջ այն թյուր տեսակետն է առաջ քաշել, թե իբր՝ «կրնանք առանց որևէ տարակույսի

⁴⁸ Ա. Գ. Աբրահամյան, Տարեթվերի և ամսաթվերի գործածությունը՝ հայ մատենագրության մեջ, «Էջմիածին», 1956, № 1—3:

⁴⁹ Հովհ., էջ 200:

⁵⁰ Ա. Գ. Աբրահամյան, Հայոց դիր և գրչություն, էջ 112—114:

հաստատել, որ հայոց Մեծ թվականը սկսած է 553-ին, փոքր թվականն ալ 1085-ին, իսկ քրիստոնեական և հայկական թվականներու տարբերությունը միշտ 552 եղած է: Հետևաբար հայոց տոմարական թվականեն քրիստոնեականին անցնելու համար, պետք է ավելացնել 552, փոխադարձաբար քրիստոնեականեն հայկականին անցնելու համար, պետք է հանել 552»⁵¹: Հոգվածագրի այս վարկածը հիմնված է այն թյուր պատկերացման վրա, թե իբր հայոց Մեծ թվականի սկիզբը նաև Շիրակացու անունով հրատարակված ՇԼԲ-ի սկիզբն է: Իրոք այդ աղյուսակի առաջին տարին և առաջին դատիկը (ինչպես և՛ ծնունդը, բարեկենդանը, լրումը) 553 թվականինն է, բայց մենք վերն ապացուցեցինք, որ՝

1. Հայոց Մեծ թվականի և առհասարակ «հայ թվականի» — ինչպես անվանում են մեր մատենագիրները, — սկզբնավորման որոշումն ընդունվել է Դվինում՝ 551-ին, իսկ թվականն սկսվել է 552 թ. հուլիսի 11 = նավասարդի 1-ով:

2. Կարգված հայոց թվականը բացարձակապես անկախ էր ՇԼԲ պարբերաշրջանից, որովհետև մինչև 561 թվականի Ալեքսանդրիայի ժողովն այդ պարբերաշրջանի մասին դեռևս ոչ մի պատկերացում գոյություն չունեի:

3. Շիրակացու անունով հրատարակված ՇԼԲ բոլորակը Շիրակացույնը չէ, իսկ Աթանասի ՇԼԲ բոլորակն սկսվել է ոչ թե 553, այլ 562 թվականի զատիկով:

Որպեսզի մեր ասածն ապացուցենք, մի քանի օրինակ ենք բերում՝ հայկական և հռոմեական թվականների զուգահերթությամբ՝ դրանց համապատասխանությունը որոշելու համար:

1. «Գրեցի զսա յըստ մեզ մարդեղութեան թուին Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ, ՈԳԾ. և ԺԸ. (1318), և ըստ Խոսրովային տօմարին՝ ՉԿԷ (767)»⁵²: Հայոց Մեծ թվականին (767), պետք է գումարել 551 (767 + 551) = 1318:

2. Ոսկերեանի «Գործք առաքելոցի» մեկնությունը թարգմանվել է, «Յամի վեցհազարերորդի հինգհարիւրոդի առաջներորդի (6501) արածոց աշխարհի և ի հազարերորդի և թմանատներորդի և թներորդի (1077) կենարարի մերոյ զալըստեան, և Խոսրովային թուոյ Հայկազանցս հինգհարիւրոդի քսաներորդի հինգերորդի (525), ի թագաւորութեան Դովկի»: Հայոց 525 + 552 = 1077 թ., ինչպես նշված է: 6501 — 1077 = 5424 արարչության ալեքսանդրյան թվականն է, որ սակայն 5423 տարի է. մեկ տարվա տարբերությունը բացատրվում է նրանով, որ հայոց տարին բաժանվում է հռոմեական 2 թվականի վրա. ձեռագիրը գրվել է հայկա-

կան տարվա երկրորդ կեսում՝ հռոմեական հաջորդ տարվա հունվարից հետո (փետրվարի 3-ին), որի պատճառով էլ գումարվում է 552:

3. «Ստեփաննոս գրիչը Սեբաստիայում ձեռագիր է ընդօրինակել «Ի թուին յալիտենից, որ է Ադամա 3ՊԻԱ (6821), և ըստ Հայկական թուականի ՉԿԲ (762), յամսեանն յուլիս ԺԸ (18), յատուր շորեքշաբթի, և տանուտէր՝ Խոյն»⁵³: Հայոց Մեծ թվականի 762-ին մեր նախատարդի 1-ը եղել է հունվարի 2-ին, հուլիսի 18-ը ամանորից հետո է, ուրեմն հռոմեականն է հունվարի 2-ին, հուլիսի 18-ը ամանորից հետո է, ուրեմն հունվարի 2-ին հունվարից է գումարել 551: 762 + 551 = 1313: Այդ թվականի համար պետք է գումարել 551: 762 + 551 = 1313: Այդ թվականի հունվարի 19-ն իրոք եղել է շորեքշաբթի, տարվա տանուտերը՝ Խոյն: Ադամից («արարչությունից») հաշված 6821 — 1313 = 5508 (արարչության բյուզանդական թվական):

4. Հովհաննես Ավագերեցը գրել է. «Եղև խաւար արեգականն ի տրէ ԺԵ (15) է Հայոց 3Չ (388) թուական»⁵⁴: Տրէ ամիսը նավասարդից հետո է, ուրեմն պետք է 388-ին գումարել 551 = 939 թ.: Ըստ Հ. Բաղալյանի «Օրացույցի պատմության» մեջ տրված աղյուսակի՝ 939 թվականին արեգակի խավարում է եղել հունվարի 23-ին և հուլիսի 19-ին, որ համապատասխանում է արէի 15-ին:

Զմմառի ձեռագրերի ցուցակից Ա. Գ. Աբրահամյանը բերում է ծոաղատիկների մի ցանկ, որի մեջ նշված են, օրինակ, հետևյալները.

«Հայոց թուականին Ժ (10) էր՝ պատտեաց Իրիոն զատիկն (հայոց 10 + 551) = 561: Եւ ժամանակ էանց եղև ՃՁ (667)՝ պատառումն զատիկ. հաշվարկը ճիշտ է. 106 + 551 = 667...»⁵⁵:

Սրեմն մատենագրական աղբյուրներում նշված հայոց թվականները հուլյանի վերածելիս երկու տարով ավելին է ստացվում (գումարվում է 553 կամ 554.), օրինակ՝ Հովհ. Իմաստասերը գրում է. «Յայսմ խաւարման արեգականն էր թուական... ի գալստենէ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՃԺԵ (1115)... և էր բուն թուական հայոց ՇԿԲ (562)»⁵⁶: Հայոց «բուն թուական» է կոչված Մեծ թվականը, որի 562 տարեթիվն 551 գումարելով կստանանք 1113, որ չի համապատասխանում նշված քրիստոնեականին. պատճառն այն է, որ Իմաստասերն առաջնորդվել է հայոց քրիստոնեական թվականով (արարչությունից մինչև «ծնունդ Քրիստոսի» 5198 տարի), որի համաձայն էլ Հայոց Մեծ թվականի առաջին տարին է համարում, ինչպես ասել ենք, 553 թ.:

Ըստ այդմ, որպեսզի նշված հայոց և հռոմեական թվականների համապատասխանությունը հասնենք, հայոց 562-ին պետք է գումարենք 553 (= 1115)՝ այնուհետև դրանից հանելով 2 տարի, ուստի և ավելի

⁵³ Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1931, էջ 255:

⁵⁴ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 25:

⁵⁵ Ա. Գ. Աբրահամյան, Հայոց դիր և գրչություն, էջ 7:

⁵⁶ Հովհ., էջ 278:

⁵¹ Իգնատիոս Հ. Ադամյան, նշված հոդվ., «Բազմավեկ», 1966, № 9—10-ում:

⁵² Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950,

ճիշտ է հայոցը թողնել 1113 (562+551), իսկ հուլյանից հանել 2 (1115-2=1113): Լ. Բաղալյանը՝ բերելով Իմաստասերի այս տեղեկությունը, ցույց է տալիս, որ իրոք 1113 թվականին է եղել արեգակի խավարում և ոչ թե 1115-ին⁵⁷:

Թեև, ինչպես ասել ենք, հայոց թվականություն կարգելը սահմանվեց 551-ին, սակայն դեպքերի, իրադարձությունների և այլնի հիշատակությունը հայոց տարեթվերով՝ համեմատաբար ուշ է սկսվում: Մտենազրույթյան մեջ, ըստ առայժմ եղած տվյալների, առաջին անգամ հայոց Մեծ թվականով արձանագրվել է Համազասպ Արծրունուն տանջամահ անելու, ապա զլխատելու դեպքը՝ ութերորդ դարի պատմիչ Ղևոնդ Երեցի «Պատմության» մեջ. «Գործեցաւ այս յիշխանութեանն Մուսիի, յաղապետութեանն Խազմայ, յաւուրս սրբոյ յայտնութեանն տեառն, յորում էր թուականս հայոց ՄԼԳ»⁵⁸: 233+552=785 թ.: նույն ժամանակին է պատկանում նաև վիմադիր արձանագրությունների առայժմ հայտնի առաջին թվագրված արձանագրությունը: Դա Թալինի Մայր եկեղեցու հետևյալ արձանագրությունն է. «ՄԼԲ թուականութեան հայոց ես Ուխտատուր վանականս և Տուտի եղբայր իմ բերաք զաղբիրանիս ի քարակապ նու (?) ատեն ի Թալին. թէ յիշխանաց որ խլե իմ մեղացս (պարտ)ական եղ(ի)ց»⁵⁹: Հայոց ՄԼԲ թվականը=մ թ. 783/4 թ. (232+551/2=783/4):

Հայոց Մեծ թվականը գրավոր հուշարձաններում հիշվել է Թուականութիւն Հայոց, Թուականութիւն Յարեթեան, Թուականութիւն Ասքանազեան, Թուականութիւն Թորգոմեան, Թուարեթութիւն Արամեան, Թուարեթութիւն Հայոց տոմարիս, Թուական Խոսրովային, իսկ Հովհ. Իմաստասերը կոչում է նաև Բուն թուական Հայոց: Այս անվանումներից Հարեթյան, Ասքանազյան և այլն հասկանալի են. մեր մատենագիրները հայերին էլ անվանել են Ասքանազեան ազգ (տոհմ), Հարեթեան ազգ և այլն: Խոսրովային անվանումը կապված է Խոսրով Անուշիրվանի հետ, քանի որ նրա թագավորության տարիներին է ընդունվել հայկական թվականությունը: Մեծ թվական անվանումը տրվել է ի հակադրություն Սարկավազադիր տոմարի, որ, ինչպես ասել ենք, կոչվել է Փոքր=Մտրուկ թվական: Հակադրությունը հասկանալի է. Փոքր թվականը բովանդակում է միայն մեկ հինգհարյուրյակ (ՇԼԲ), մինչդեռ Մեծ թվականն՝ սկսվելով 552-ից, շարունակվել է անընդհատաբար նաև հետագայում:

⁵⁷ Լ. Բաղալյան, նշված աշխ., էջ 78:

⁵⁸ Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, ՍՊԲ, 1887, էջ 165:

⁵⁹ Ա. Գ. Աբրահամյան, Հայոց գիր և գրություն, էջ 87:

5. ՀԱՅՈՑ ՓՈՔՐ (ՍԱՐԿԱՎԱԳԱԳԻՐ) ԹՎԱԿԱՆԸ

Հայոց առաջին ՇԼԲ աղյուսակի ավարտումից հետո անհրաժեշտ էր նոր աղյուսակ կազմել՝ հաջորդ 532 տարիների համար, և այդպիսի աղյուսակ կազմեց XI դարի խոշորագույն գիտնական և բանաստեղծ Հովհաննես Իմաստասերը (Սարկավագր):

Մենք արդեն գիտենք, որ Աթանասի (Եղվարդյան) ՇԼԲ-ի առաջին դատիկը 562 թվականին է, հետևաբար և վերջին դատիկն էլ պետք է լիներ 1093-ին (561+532=1093), սակայն, ինչպես հայտնի է, Իմաստասերի կազմած հինգհարյուրյակը, որ ամբողջական վիճակով մեզ է հասել տարբեր գրչազրեքով, սկսվում է 1085 թվականի դատիկով և վերջանում 1616 թվականով (1084+532=1616): Վերը բերել ենք նաև իր իսկ՝ Իմաստասերի գրածը՝ «ՇԽԲ (542) թուին սկիզբն Շ-եկին»¹: Ըստ Իմաստասերի, հայոց Մեծ թվականի սկիզբն է 553/4-ը, որ, ինչպես ասել ենք, հայոց քրիստոնեական թվականով է (2 տարով ավելի հոմեական քրիստոնեականից), ուստի և՛ 553+542-2=1093 թ.: Սա պատահական թյուրիմացություն է, թե ինչ-որ բացատրություն ունի: Հարցի պատասխանը գտնելու համար նախ քննության առնենք Հովհաննեսի ՇԼԲ աղյուսակը:

Այդ աղյուսակը բաղկացած է 19 սյունակից. 1. նահանջ (յուրաքանչյուր 4-րդ տարվա դիմաց այս սյունակում նշված է՝ և), 2. թուական (ՇԼԲ-ի 1-ից մինչև 532 տարիները՝ հերթականությամբ), 3. վերադիր, 4. ելթներեակ, 5. Տանուտէր, 6. Աւր յայտնութեան, 7. Առաջաւ(առաջաւորաց տոնի ամիսը), 8. Քանիք (նույն տոնի ամսաթիվը), 9. Բուն բարեկենդան (ամիսը), 10. Քանիք (ամսաթիվը), 11. Լրումն (ամիսը), 12. Քանիք (ամսաթիվը), 13. Օր լրման (շաբաթվա օրը), 14. Զատիկ (ամիսը), 15. Քանիք (ամսաթիվը), 16. Պենտիկոստէ (զատկի կիրակիից հաշված՝ 50-րդ օրը), 17. Քանիք (ամսաթիվը), 18. Վարդավառ (ամիսը), 19. Քանիք (ամսաթիվը):

Աղյուսակը կազմված է քրիստոնեական հին (Հուլյան) տոմարով. հայկական տոմարով զուգահեռը չունի, որովհետև քառամյակի նահանջ օրվա հավելումով հայկական տոմարը կայունացվել է. տարեսկիզբը՝ նա-

¹ Հովհ., էջ 133:

վասարդի 1, համապատասխանում է օգոստոսի 11-ին, ուստի և՛ հուլյան և հայկական ամիսների համապատասխանությունը կայուն է:

Առաջին տարվա հիմնական տվյալները հետևյալներն են.

վերադիր՝ 2, յոթներյակ՝ 2, հայտնություն՝ հուն. 6, երկուշարթի, առաջավորաց տոն՝ փետր. 9, բուն բարեկենդան՝ մարտի 2, լրում՝ ապրիլի 13, կիրակի, զատիկ՝ ապրիլի 20:

Այս բոլոր տվյալները վերաբերում են 1085 թվականին, երբ, իրոք, լուսնի ավագ լրումը եղել է ապրիլի 13-ին (օրը կիրակի), զատիկը՝ հաջորդ կիրակի օրը՝ ապրիլի 20-ին:

Եթե այս տվյալները համեմատենք Շիրակացուն վերագրված և հրատարակված ՇԼԲ աղյուսակի հետ, ապա կտեսնենք, որ երկու աղյուսակների առաջին տարվա տվյալները նույնական են, ըստ որում մեկի առաջին տարին է 553 թվականը, մյուսինը՝ 1085-ինը: Հենց սրանով էլ բացատրվում է Հովհ. Իմաստասերի վերը նշված հակասությունը: Աթանասի հինգհարյուրյակն սկսվել է 562 թվականի զատիկով և ավարտվել 1093 թվականով, ուստի և՛ ճիշտ է Իմաստասերի այն տեղեկությունը, որ նոր Ծ-յակը (500-յակը) գրվել, կարգվել է հայոց 542-ին (հուլյան 1094-ին), բայց «գրվելը», այսինքն՝ կարգվելը, սկսվելը կամ սկիզբը չէ: Հինգհարյուրյակը կարող է կարգվել կամ կազմվել այսօր, բայց զրա սկիզբը կարող է լինել 10—20 տարի առաջ կամ հետո: Այդպես էլ եղել են Իմաստասերի Ծ-յակի դրումը՝ կարգումը և սկիզբը: Հովհաննեսը կազմել է իր 500-յակը 1094 թվականին՝ Աթանասի 500-յակի ավարտումից անմիջապես հետո, բայց սկսել է իր 500-յակը 1085 թվականի զատիկով: Հաշվարկը միանգամայն պարզ է: Հովհաննեսն իր համար որպես ելակետ է ընդունել հայոց Մեծ թվականի սկիզբը՝ 552 թվականը և մեկ 500-յակի պարբերաշրջան գումարելով (552+532=1084), իր 500-յակն սկսել է հաջորդ տարվանից:

Սկսելով իր ՇԼԲ-ն 1085 թվականի զատիկով՝ բնականաբար Հովհաննեսը պետք է դա համապատասխանություն մեջ դնել հայոց Մեծ թվականով հաշվված տարիներին: Եվ իսկապես նա այդպես էլ վարվել է: Թեև Աթանասի հինգհարյուրյակն ավարտվել է 1093 թ. զատիկով, սակայն իբրև 532 տարվա պարբերաշրջանի սկիզբ ընդունելով Մեծ թվականի առաջին տարին (552-ի հուլիսի 11, զատիկը՝ 553-ի ապրիլի 20-ին), վերջին տարին էլ, բնականաբար, համարել է 1084 թվականը = հայոց 522 թվականը, զատիկը՝ մարտի 31 = հոռի 2-ին: Եթե նկատի ունենանք, որ հոռի 2-ը հայկական տարվա 32-րդ օրն է, ապա կտեսնենք, որ հայոց տարին սկսվել է 1084 նահանջ տարվա փետրվարի 29-ով (= Նավասարդի 1), այլ կերպ ասած, հայոց տարիների հաշվով արդեն սկսվել էր 533 թվականը: Քանի որ 1084 թվականի զատիկը պատկանում էր նախորդ 532-ամյա պարբերաշրջանին, ապա հասկանալի է, որ Հով-

հաննեսի ՇԼԲ-ի առաջին զատիկն էլ պետք է լինել 585-ինը, ինչպես և կա:

Ինքնին հարց է ծագում. իմանալով, որ հայերի օգտագործած առաջին Ծ-յակը (հինգհարյուրյակը) սկսվել է 562 թվականով և ավարտվել 1094-ի զատիկով, ինչու է տասը տարով ետ տարել իր ՇԼԲ աղյուսակի սկիզբը և դարձրել 1084-ը, որով նախորդ հինգհարյուրյակի ըստակի սկիզբը և դարձրել 552 թվականը (բայց առաջին զատիկը՝ 553 թվականին էլ դառնում էր 552 թվականը, մանավանդ, այն պատկանին): Այս հարցն անխուսափելի է դառնում, մանավանդ, այն պատճառով, որ իր տոմարական աշխատությունների մեջ ապացուցում և իրեն ելակետ է ընդունում այն դրույթը, որի համաձայն բոլորակի գրույթը՝ այսինքն 500-յակի սկիզբը պետք է դնել լուսնի ավագ լրումը՝ ապրիլի 4-ին: Գիտենք, որ Անդրեասի 200-ամյակի առաջին տարում (353 թ.) լուսնի ավագ լրումն իրոք եղել է ապրիլի 4-ին, որ և էսայան պարբերաշրջանի առաջին տարվա՝ 562 թ. զատկական լրման օրն է (նշանակում է՝ նաև Աթանասի ՇԼԲ աղյուսակի առաջին տարվա լրումը), և, վերջապես, 1094 թվականի զատկական լրումը: Այս բոլորն իմանալով, ասվելին՝ ապացուցելով զրա ճշգրտությունը դանազան հիմնավորումներով և հատկապես արարչության տվյալներով, այնուամենայնիվ իր տոմարի սկիզբն է դարձրել 1084 թվականը, զատկական առաջին տարին՝ մարի սկիզբն է դարձրել եղել է ապրիլի 13-ին (զատիկը՝ ապրիլի 1085-ը, որի ավագ լրումը եղել է ապրիլի 13-ին (զատիկը՝ ապրիլի 20-ին): Պատասխանը միայն մեկն է. Հովհաննեսն իր բոլոր հաշվումները, ինչպես ստորև կտեսնենք, համապատասխանեցնում է միմյանց անբար, ընդհատորեն հաջորդող 532-ամյա պարբերաշրջանների, նույնիսկ այն ընդհատորեն հաջորդող 532-ամյա պարբերաշրջանների, որի համաձայնեցրել ոչ թե նեկ հինգհարյուրամյա պարբերաշրջանը և դա համաձայնեցրել ոչ թե նախորդ հինգհարյուրամյա աղյուսակին, որն, ինչպես ցույց ենք տվել, անկախ էր հայկական թվականություն (Մեծ թվականը) սահմանելու տարվանից, այլ հայոց Մեծ թվականին: Սրանով իսկ նա թվականությունը վերածել է հաջորդաբար կրկնվող 532-ամյա պարբերաշրջանների թվունը «Քրոնիկոնների», ինչպես անվանել են վրացիները: Դրա վրա է հիմնված և այն, որ հենց ինքը՝ Հովհաննեսն իր հինգհարյուրյակը կոչում նրված և այն, որ հենց ինքը՝ Հովհաննեսն ի հակադրություն Մեծ կամ հին թվականի, է նոր կամ Փոքր թվական, ի հակադրություն Մեծ կամ հին թվականի, որ նա կոչում է նաև Բուն թվական: Բնական կլինել նաև, որ շարունակոր նա կոչում է նաև Բուն թվականը՝ որպես իր տոմարի առաջին օր կելով հայոց Մեծ թվականի դրույթունը՝ որպես իր տոմարի առաջին օր կելով հայոց Մեծ թվականի փետրվարի 28 = Նավասարդի 1-ը: Սակայն ընդունել 1085 թվականի փետրվարի 28 = Նավասարդի 1-ը, որ, Հովհաննեսն իբրև իր տոմարի ամանոր է ընդունել օգոստոսի 11-ը, որ,

ինչպես ընդունված է հայագիտության մեջ, համապատասխանում է մ. թ. 428 թվականին: Իրոք էլ, 428—431 թվականներին հայոց Նավասարդի 1-ը համընկել է հուլյան տոմարով օգոստոսի 11-ին: Վերը մենք տեսանք, որ այդ զուգահեռությունը վրա հենվելով՝ Ղ. Ալիշանն այն կարծիքին է հանգել, թե 428 թվականի օգոստոսի 11 = Նավասարդի 1-ը հայոց Բուն թվականի նահանջից նահանջ է եղել և դրանից ելնելով էլ՝ երկու Հայկյան շրջան ետ գնալով, Բուն թվականի սկիզբն է համարել մ. թ. ա. 2492 թ.: Հերքելով այդ կարծիքը՝ մենք Հովհաննեսի աշխատություններում եղած փաստերով ապացուցեցինք, որ նահանջից նահանջը եղել է 1004 թվականին և համապատասխանաբար հայոց Բուն թվականի ըսկիզբն էլ՝ մ. թ. ա. 457 թ.: Բայց հերքել 428 թ. նահանջից նահանջի տարի լինելը դեռ հարցի լուծումը չէ, որովհետև Հովհաննեսի ընդունած տոմարական տարեկալը՝ Նավասարդի 1-ի, օգոստոսի 11-ին համապատասխանելն անհերքելի փաստ է, իսկ այդպիսի համապատասխանություն՝ հայոց Բուն թվականի սկզբնավորումից ի վեր, եղել է միայն 428 թվականին (չենք հիշում 1888 թ., որ Հովհաննեսի դարաշրջանից հետո է): Հետևաբար, այն հարցը, թե ինչո՞ւ Հովհաննեսն իր տոմարի սկզբի՝ ամանորի համար 428 թվականի դրությունն է ընդունել, մնում է բաց: Քանի որ Ղ. Ալիշանի վարկածը ճիշտ չենք համարում, ապա պետք է ծանոթանանք առաջ քաշված մյուս վարկածներին և դրանց, ինչպես և Հովհաննեսի աշխատությունների քննությամբ, գտնենք առաջադրված հարցի պատասխանը:

Մ. Օրմանյանը, հանգամանորեն խոսելով Իմաստասերի անշարժ տոմարի մասին՝ գրում է. «Հինգհարյուրյակի լրման 1084 տարին, նահանջ տարի մըն էր Հուլյան տոմարով, և ամանորն ալ ճիշտուճիշտ փետրվար 29 նահանջ օրվան վրա կիյնար, և այդ տարիեն սկսավ հայոց սարկավազադի կամ անշարժ տոմարը. բայց չենք գիտեր, թե ինչ ձևով Նավասարդի 1-ը փետրվար 29-են մինչև օգոստոս տարին, ինչ որ հիմն էր Հայկյան շրջան կոչված 1460 տարիներու դրությունը»²: Այս հատվածի միտքն այն է, թե Հովհաննեսի՝ Նավասարդի 1-ի տեղափոխությունը փետրվարի 29-ից օգոստոսի 11-ին, որպես 428 թվականի դրության կրկնություն, իր էությունը Հայկյան շրջանի հիմունքով է կատարվել, ըստ որում՝ հայոց շարժական տոմարի որևէ ամսաթվի համապատասխանությունը հուլյան տոմարի տվյալ ամսաթվին կարող է տեղի ունենալ 1460 տարին մեկ անգամ: Քանի որ օգոստոսի 11 = Նավասարդի 1 համապատասխանությունը Հովհաննեսի տոմարով կրկնվում է 1084 թվականին և շարունակվում, ապա Մ. Օրմանյանն էլ շեշտում է, որ չգիտի, թե ինչ ձևով է այդ տեղափոխությունը կատարվել, քանի որ 428-ից մինչ-

չև 1084-ը 656 տարի է կազմում և ոչ թե 1460: Այս նույն սկզբունքի վրա է հիմնված նաև Ն. Ակինյանի այն կարծիքը, ըստ որի՝ Նավասարդի 1-ը օգոստոսի 11-ին փոխադրելը «կամայական է և չէ հեցած տոմարագիտական որևէ հիման վրա»³: Չենք ընդունում այս կարծիքը, որովհետև Հովհաննեսի նման հմուտ տոմարագետը կամայական, քմահաճ կերպով տարեկալի տեղափոխություն չէր կատարի: Դրան ի պատասխան, Ա. Գ. Աբրահամյանն էլ գրում է. «Հովհաննեսն այդ բարեփոխությունը կամայական ձևով չի կատարել, նա ունեցել է սկզբունք և հաշվի է առել տոմարագիտական ամենանուրբ հաշիվները: ...Հովհաննեսի ելման կետը տվյալ խնդրում գարնանամուտն է հանդիսացել. ե՞րբ է եղել հնում գարնանամուտը հայկական ամիսների հաշվով»⁴: Այնուհետև նա մեջ է բերում Հովհաննեսի հաշվումները, որոնցով նա որոշում է հինգերորդ դարի թարգմանական գրականության մեջ եղած զանազան տոմարների ամիսների և ամսաթվերի զուգահեռությունը հայկականի հետ, և բերում Հովհաննեսի այդ հաշվումներից մի քանիսը՝ իր մեկնաբանությամբ: Ահավասիկ դրանցից երկուսը. «Հովհաննեսը մեջբերում է անում Կյուրեղի Կոստանդիանոս կայսրին ուղարկված թղթից՝ «Վասն խաչին պատուականի», ուր ասված է որ՝ «Երևել խաչին յէ մայիս ամսոյ, այսինքն գլուխ ահեկանոյ»: Սարկավազը Կյուրեղի այս տեղեկությունն ամենից հավաստին է համարում և նշում, որ՝ «հաւանեալ ընտրեցաք կանովնել երանելոյն Կիրղի»: Եթե մայիսի 7-ը համապատասխանում էր ահեկանի վերջին օրվան, ապա Նավասարդի 1-ը համընկնում էր օգոստոսի 11-ին, իսկ գարնանամուտը լինում է արեգ ամսի 12-ին»⁵: Ճիշտ են այս հաշվումները, և մենք ստորև կիրկնենք Հովհաննեսից այստեղ բերված խոսքերը, բայց ի՞նչ է նշանակում այդ համապատասխանությունը սահմանումը: Ա. Գ. Աբրահամյանը վերջին հաշվով լոկ հավաստում է հայտնի փաստը, առանց, սակայն, բացատրելու այն: Բերելով Հովհաննեսի մի այլ հաշվարկը՝ նա գրում է. «Ըստ այս հաշվի, աշնանային հավասարությունը եղել է հոռմեական սեպտեմբերի, հունաց զորպիոս և ասորական իրով ամիսների 18-ին, եգիպտական թովթ ամսի 21-ին, և հայոց հոռի ամսի 9-ին: Եթե այս հավասարությամբ որոշելու լինենք Նավասարդի 1-ը, ապա նա ընկնում է հոռմեական օգոստոս, հունական լյոսոս, ասորական արամ ամիսների 11-ին, երրայական ար ամսի 23-ին և եգիպտական մեսուրի ամսի 18-ին»⁶: Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, Հովհաննեսը որոշում է միայն աշնանային գիշերահավասարի օրվա համապատասխանությունները՝ հայկական, հոռմեական, հունական և

³ «Հանդէս ամսօրեայ», 1947, № 3, էջ 173:

⁴ Հովհ., էջ 84:

⁵ Նույն տեղում, էջ 84:

⁶ Նույն տեղում, էջ 85:

² Մ. Օրմանյան, նշված աշխ., էջ 1308—1309, էջ 900:

եզիպտական տոմարներով: Իհարկե, իմանալով, թե երեք անշարժ տոմարների ո՞ր ամսվա ո՞ր օրն են եղել զարնանային և աշնանային գիշերահավասարները, և գտնելով հայոց շարժական տոմարի համապատասխան ամիսներն ու ամսաթվերը, կարելի է հեշտությամբ որոշել նաև, թե նավասարդի 1-ը հոռոմեական (նաև հունական, եզիպտական և այլն) տոմարի ո՞ր ամսվա ո՞ր օրվան է զուգահեռ: Գրանից, սակայն, չի կարելի եզրակացնել, թե Հովհաննեսն իր տոմարի սկիզբը փետրվարից օգոստոսի 11-ն է փոխադրել՝ իմանալով, որ 428 թվականին օգոստոսի 11-ն է համապատասխանել նավասարդի 11-ին, և այդ թվականի դրությամբ էլ ընդունել որպես իր տոմարի սկիզբ: Այս շփոթից դուրս գալու համար պետք է դիմենք իրեն իսկ՝ Հովհաննեսին: Այդ հաշվումները Հովհաննեսը կատարում է իր մի աշխատության մեջ, որ հրատարակողի կողմից վերնագրված է. «Հովհաննեսի հայկական ամիսների զուգընթացության մասին աշխատությունը»⁷: Այստեղ Հովհաննեսը նախ խոսում է այն մասին, որ երբայցիները և հոռոմեացիները տարբեր կարծիքներ ունեն հայոց ամիսների կարգի, մասնավորապես՝ զարնանային գիշերահավասարի մասին, գտնում, որ դրանք երկուսն էլ սխալ են, ապա հայտնում այն կարծիքը, ըստ որի նախնիների վկայության համաձայն, գիշերահավասարը հայոց ութերորդ ամսվա՝ արեգի 12-ին է եղել, որը համապատասխանում է հոռոմեական մարտի, հունական դյուստրոսի և ասորական ադարի 20-ին, եզիպտացիների պեմենոլթի 24-ին և եբրայցիների հավելյաց շոբսին: Ահա այս բանն ապացուցելու համար նա բերում է եվսեբիոսի տվյալները և իր հաշվումներով ցույց տալիս վերը բերված զարնանային և աշնանային գիշերահավասարների օրերը: Այդ բոլորից հետո նա գրում է. «Բավական են ասացելով ցուցանել թե՛ յարեգ ամսոյ հաւասարի տիւն գիշերոյ և գարուն ժամանակի ստուգապես»⁸: Այդ համեմատությունների և առհասարակ այդ աշխատության մեջ մեզ համար կարևոր է այն փաստը, որ Հովհաննեսի բոլոր հաշվումները՝ թե՛ զարնանային և թե՛ աշնանային գիշերահավասարների, թե՛ ամանորի և թե՛ զատկական տոնի ժամանակի որոշման համար, համընկնում են 428 թվականի դրությամբ: Այստեղ էլ, ուրեմն, մենք կանգ ենք առնում նույն հարցի առջև. ինչո՞ւ 428 թվականն ընտրեց, չե՞ որ իր մյուս աշխատությունների մեջ նա բազմաթիվ այլ հաշվումներ է կատարում՝ սկսելով «արարչության թվականից» մինչև մեծ թվականի վերջը՝ դարձյալ այլ ժողովուրդների (հոռոմեացիների, եբրայցիների, եզիպտացիների և այլոց) տոմարների զուգահեռությամբ. ինչո՞ւ ուրիշ թվական չի ընտրում: Վերջին հաշվով, եթե նա գիտեր 428 թվականի ամիսների և ամսաթվերի

համապատասխանությունը հոռոմեական ամիսներին ու ամսաթվերին, ապա կարող էր մի ավելի նշանավոր թվական ընտրել (ասենք՝ դրերի, դյուսի, քրիստոնեություն ընդունելու և այլն): Այս փաստը, ինչպես ասել ենք, շատ տարակարծությունների տեղիք է տվել, սկսած այն վարկածից, ըստ որի 428 թվականը եղել է նահանջից նահանջի տարի, մինչև կամայական (ասել է թե՛ պատահական) ընտրությունը: Մեր երեք աստղագետ-տոմարագետներն էլ, ցավոք սրտի, մատենագիրների այդ մասին տված տեղեկությունները, մասնավորապես Հովհաննեսի մատենագրությունը, հարկ եղածին պես չեն ուսումնասիրել. դրանցից Լ. Սեմյոնովը, ինչպես տեսանք, հետևում է Ղ. Ալիշանին, իսկ Հ. Բաղալյանը և Բ. Թումանյանը՝ Ա. Աբրահամյանին: Հ. Բաղալյանը գրում է. «Հովհաննես Սարկավազը իր կազմած անշարժ օրացույցով ցանկացել է նոր տարին դարձյալ համարել այն օրը, որն առաջին անգամ տոնել են մեր նախնիները»⁹: Գրեթե նույնն է ասում նաև Բ. Թումանյանը. «Հովհաննես Սարկավազը տարեկազմի այդ տեղափոխությունը կատարեց, ինչպես ինքն է գրում, զանազան խառնաշփոթություններից խուսափելու համար, և նա որպես տարեկազմի ընտրել է Մեսրոպ Մաշտոցի ու նրա աշակերտների 428 թվականին օգտագործած օրացույցի տարեմուտը»¹⁰: Բ. Թումանյանի այս կարծիքի աղբյուրն է, ինչպես նշված է տողատակի ծանոթագրության մեջ, Ա. Աբրահամյանի «Հայ գրի ու գրչության պատմությունը», որի 269-րդ էջում կարդում ենք. «Հովհաննես Իմաստասերը նոր ՇԼԲ աղյուսակում կրկնեց 1085 թվականը: Ծարժական տոմարով 1085 թվականին հայկական ամանորը՝ նավասարդի 1-ը, ընկնում էր մարտի 1-ին, սակայն Իմաստասերն անմիջապես շարունակեց այդ ամսաթիվը: Նա իր առջև հաստատ սկզբունք էր դրել, հայկական տոմարը դարձնել անշարժ, ուստի և անհրաժեշտ էր սահմանել հայկական ամանորի ճիշտ ամսաթիվը: Նա շուրջից վերցնել հարևան երկրներում՝ Բյուզանդիոնում և Պարսկաստանում գործածական տոմարներից ոչ մեկը՝ ոչ հունվարի 1-ը և ոչ էլ մարտի 31-ը, այլ, ուսումնասիրելով հին հայկական մատենագրությունը, աշխատեց պարզել, թե V դարում Մեսրոպ Մաշտոցը և նրա աշակերտները ինչ ամանորով են առաջնորդվել: Նա պարզեց, որ 428 թվականին հայկական ամանորը եղել է օգոստոսի 11-ին, այդ էլ նա ընդունեց ամանոր»¹¹: Այս եզրակացություն մասին դատողություն անելուց առաջ, անհրաժեշտ է ուղղել երկու բացահայտ սխալ. 1) 1085 թվականին հայկական ամանորը մարտի 1-ին չի համապատասխանել, այլ փետրվարի 28-ին: Ինչպես բազմիցս ասել ենք, 1084 թվականին նավասարդի 1-ը համապատասխանել է փետրվարի 29-ին, իսկ 1085 թվա-

⁷ Նույն տեղում, էջ 240—244:

⁸ Նույն տեղում, էջ 244:

⁹ Հ. Բաղալյան, *Նշված աշխ.*, էջ 82:

¹⁰ Բ. Թումանյան, *Տոմարի պատմություն*, էջ 118:

¹¹ Ա. Աբրահամյան, *Հայոց գրի ու գրչության պատմություն*, 1959, էջ 269:

կանը, որ հասարակ տարի էր, փետրվարի 29-ը չուներ, ուստի և ամա-
նորն ընկավ փետրվարի 28-ին: 2) Մեսրոպը և նրա աշակերտները մեկ
ամանորով շին առաջնորդվել և չէին էլ կարող այդպես վարվել, որով-
հետև նրանց ժամանակ, ինչպես և հետագայում, հայերն ունեին շաբ-
ժական տոմար, և եթե 428 թվականին ամանորը օգոստոսի 11-ին էր,
այս 427 թվականին օգոստոսի 12-ին էր, 420-ին՝ օգոստոսի 13-ին,
416-ին՝ օգոստոսի 14-ին... 404-ին (ներառյալ 405, 406, 407 թթ., որոնց
մեջ զետեղում են գրերի գյուտը)՝ օգոստոսի 17-ին, կամ 432-ին՝ օգոս-
տոսի 10-ին և այլն, և այլն: Ինչո՞ւ այդ թվականներից մեկնումեկը չընտ-
րեց, որոնք բոլորն էլ այն ամանորերը (Նավասարդի 1-երը) կլինեին,
որոնցով առաջնորդվել են Մեսրոպ Մաշտոցը և նրա աշակերտները՝ յու-
րաքանչյուր քառամյակում: Եթե այդպես է, ապա հարցը մնում է դարձ-
յալ նույնը՝ ինչո՞ւ անպայման 428-ը, և ոչ թե, ասենք, 406-ը (գրերի
գյուտի թվականը, երբ Նավասարդի 1-ը համապատասխանում էր օգոս-
տոսի 17-ին), կամ 440-ը (Սահակի և Մեսրոպի մահվան տարին, երբ
Նավասարդի 1-ը համընկնում էր օգոստոսի 8-ին): Գրանցից որևէ մեկն
ընտրելն, իրոք որ, հիշարժան մի թվականի ընտրություն կլիներ, մինչ-
դեռ Հովհաննեսն ընտրեց 428-ը, որ հայ ժողովրդի համար ողբերգական
թվական էր. չէ՞ որ հենց այդ թվականին վերացավ Արշակունիների թա-
գավորական հարստությունը և պարթևների կաթողիկոսական «դինաս-
տիան» (428-ին աթոռազրկվեց Սահակ Պարթև կաթողիկոսը և կաթողի-
կոսական աթոռին նստեց Սուրմակ ասորին): Մնում է ավելացնել, որ
Հովհաննես Իմաստասերի մատենագրության մեջ ամփոփված աշխա-
տություններից և ոչ մեկում Մեսրոպ Մաշտոցի անունը թեկուզ մի ան-
գամ էլ չի հիշվում: Հրատարակչի կողմից կազմված անվանացանկում
հիշվում է Մեսրոպ Մաշտոցի անունը և տրվում են այն երեք էջերը, որոն-
ցում այդ անունը հիշատակվում է (էջք 105, 106, 133). դրանցից առաջին
երկուսը ներածական ուսումնասիրության էջերն են. ուսումնասիրողը խո-
սում է Մեսրոպին, ինչպես և Գրիգոր Լուսավորչին, Ներսեսին, Սահակին
և ուրիշների նվիրված Հովհաննեսի ներբողների մասին, բնականաբար
հիշելով Մեսրոպ Մաշտոցի անունը: Երրորդը՝ էջ 133-ը, չունի Մեսրոպ
Մաշտոց անունը, այնտեղ գրված է. «Յե՛ս (341) Մաշոց ճգնաւորական
հանդիսի պայծառանայր»: Անվանացանկում այդ Մաշոց անունը բեր-
վել է և հղվել Մեսրոպ Մաշտոց անվան, բայց դա բացահայտ թյուրի-
մացություն է: Նշված 341-ը հայոց Մեծ թվականի տարեթիվն է, հուլ-
յան տոմարով՝ 891 (341+552=2)¹²: Մեսրոպ Մաշտոցն ո՛ւր, իննե-
րորդ դարն ո՛ւր: Ամբողջ թյուրիմացությունն առաջացել է սրանից, իսկ
սա էլ՝ Հովհաննեսի գործածած «առաջնոց», «հնոց», «նախնեաց իմաստ-

նոց», «այրք անուանիք», «հարցն մերոց առաջնոց» և նման արտահայ-
տություններից, որոնք, սակայն, Մեսրոպին ու Սահակին չեն վերաբե-
րում, այլ քրիստոնեական եկեղեցու հայրերին, ինչպես, օրինակ՝ «զեր-
կոտասան ութերորդի ամսոյն ըստ հայում կանոնեցաք պատահել, ոչ
առանց առաջնոց և հնոց արանց իմաստնոց», «եւ ասեն զայս այրք
անուանիք յիմաստութեան և փառաւորք, յորոց մի է սբանչելին Անա-
տոլիս Աղեքսանդրացի...»¹³ և այլն:

Եվ այսպես, պատմագետ-տոմարագետի ստեղծած այս շփոթը թյու-
րիմացություն մեջ է գցել մեր աստղագետ-տոմարագետներին, իսկ ա-
ռաջագրված խնդիրը մնացել է չլուծված: Ուստի և մենք մերժել ենք 428
թվականը Հովհաննես Իմաստասերի կողմից որպես ելակետային տարե-
թիվ կամ դարագլուխ համարվելու մասին մինչև այժմ արտահայտված
բոլոր կարծիքները: 428 թվականը ո՛չ նահանջից նահանջի (ապոկա-
տասի) տարի է եղել, ինչպես կարծում են Ղ. Ալիշանը և նրան հետե-
վողները, ո՛չ գարնանամուտի և Նավասարդի 1-ի համապատասխանու-
թյան տարեթիվ, ո՛չ էլ Մեսրոպի և նրա աշակերտների ժամանակ եղած
ամանորի և օգոստոսի 11-ի կայուն համապատասխանությունը թվական,
որպիսին չի եղել V դարում (նաև հետագայում, մինչև Փոքր թվականի
սկիզբը):

Ճիշտ կերպով հերքելով առաջ քաշված բոլոր հին և նոր վարկած-
ները, մենք հայոց բուն թվականի սկզբին նվիրված մեր հոդվածի մեջ
ընդունելով, որ Հովհաննես Իմաստասերն իր անշարժ տոմարի ամանո-
րը համապատասխանեցրել է 428 թվականի դրություն, դրա պատճառն
ենք համարել Անդրեասի տոնացույցի գործադրությունը: Ինչպես ապա-
ցուցեցինք 3-րդ գլխում, Անդրեասի 200-ամյակի ներածությունը հայե-
րեն է թարգմանվել 421 թվականին, որից հետևում է նաև, թե 200-ամ-
յակն էլ համապատասխանեցվել է հայոց տոմարին ու ստեղծվել հայ-
կական զուգահեռը դարձյալ 20-ական թվականներին, իսկ 428 թվակա-
նից (Ներսեսի կամ աշտիշատյան տոնացույցի ավարտումից անմիջա-
պես հետո) գործադրության մեջ դրվել: Այս վարկածը, որ մի ժամա-
նակ մեզ միակ հավանական էր թվում, այժմ մերժում ենք, որովհետև
դա չի տալիս գլխավոր հարցի պատասխանը. իսկ ինչո՞ւ գործադրու-
թյան առաջին՝ 428 թվականը, և ոչ թե ամբողջ 200-ամյակի առաջին
տարին, այսինքն՝ 353 թվականը: Մեր բոլոր միջնադարյան տոմարագետ-
ները և մատենագիրները, որոնք խոսում են Անդրեասի 200-ամյա գա-
տակացանկի մասին կամ թեկուզ և թուուցիկ կերպով հիշում այդ գա-
տակացանկը, անխտիր գրում են՝ Մ-եակ կամ երկերիւրեակ Անդրէասայ: Ինքը՝
Հովհաննես Իմաստասերն էլ գրում է. «Անդրէաս, եղբայր Մազնոսի

¹² Հովհաննեսի հիշած այդ Մաշոցի մասին, տե՛ս Հ. Անադյան, Հայոց անձնա-
նունների բառարան, հ. 2, 1946, էջ 215:

¹³ Հովհ., էջ 240—241:

եպիսկոպոսի, կարգեաց տոմար երկուհարիւրից ամաց... Ի սպառել Անդրեասեան տոմարին երկուհարիւրից...¹⁴ Տամարն Անդրէասայ երկուհարիւր ամացն ի շորս նիսան սպառեցաւ¹⁵ և այլն: Ինքնին հարց է առաջանում. այսպես ամեն առիթով «200-ամյա տոմարը» հիշող տոմարագետը ինչու պետք է իր համար որպես դարագլուխ ընտրեր այդ տոմարի 77-րդ տարին. ի՞նչ կարևոր էր, թե հայերը որ թվականից են գործադրել այն: Ի դեպ, տրամաբանորեն առավել հարմարը կլիներ Անդրեասի տոմարի ավարտման տարին ընդունել որպես ելակետ, քանի որ դա կհամապատասխաներ նաև հայոց Մեծ թվականի սկզբին: Բայց Հովհաննեսն այդպես չի վարվել. նա ո՛չ Անդրեասի տոմարի առաջին տարին է ելակետ ընդունել, ո՛չ էլ վերջինը: Այս դատողությունից էլ ենելով՝ մենք ճիշտ չենք համարում մեր հիշյալ վարկածը:

Եվ այսպես, մերժելով բոլոր վարկածները, այդ թվում նաև մերը, մենք կանգնում ենք դարձյալ նույն հարցի առջև: Ինչու՞ Հովհաննեսն իբրև իր կայուն տոմարի ամանոր (Նավասարդի 1) ընտրեց օգոստոսի 11-ը, որ համընկնում էր 428 թվականի համապատասխանությունը (Նավասարդի 1 = օգոստոսի 11): Բայց այդ հարցին պատասխանել փորձելուց առաջ, մի ուրիշ հարց առաջադրենք.— իսկ ճիշտ է, արդյոք, որ Հովհաննեսն իբրև ելակետ է ընդունել հենց 428 թվականի գրությունը (Նավասարդի 1 = օգոստոսի 11): Մեր պատասխանն է՝ ոչ, որովհետև՝

1. Նավասարդի 1 = օգոստոսի 11 համապատասխանությունը եղել է ոչ միայն 428, այլև 429, 430, 431 թվականներին, այսինքն՝ մի ամբողջ քառամյակ. իսկ դա նշանակում է, թե Հովհաննեսը կարող է նկատի ունեցած լինել ոչ թե անպայման 428, այլ 429 կամ 430 կամ էլ՝ 431 թվականը, այսինքն՝ 428—431 քառամյակի տարիներից որևէ մեկը: Սա էլ, իր հերթին, նշանակում է, թե մինչև այժմ առաջադրված հարցը պետք է խմբագրել հետևյալ ձևով.— Ինչու՞ է Հովհաննեսն իր տոմարի համար որպես ամանորի օր ընդունել 428—431 թթ. քառամյակի համապատասխանությունը. քառամյակի ո՞ր տարին է նկատի ունեցել և ինչ պատճառով: Սակայն այս խմբագրված հարցադրումն էլ ճիշտ չէ, որովհետև՝

2. Նավասարդի 1 = օգոստոսի 11 համապատասխանությունը գոյություն է ունեցել ոչ միայն մ. թ. 428—431 թվականներին, այլև մ. թ. ա. 1033—1036, 2493—2496, 3953—3956 և այդպես շարունակ՝ հեռագարձ հաշվով յուրաքանչյուր 1460-րդ տարով սկսվող քառամյակում¹⁶: Իսկ սա նշանակում է, թե մեր կողմից խմբագրված հարցադրումը դարձյալ պետք է սրբագրել հետևյալ ձևով. Նավասարդի 1 = օգոստոսի 11

համապատասխանությունն իր տոմարի կայուն տարեկիրը ընդունելու համար Հովհաննեսն Իմաստասերն այդպիսի զուգահեռություն ունեցող քառամյակներից հայկյան շրջաններից (1460-ամյա պարբերաշրջաններից) որի՞ քառամյակն է որպես ելակետ ընտրել: Իմաստասերի հրատարակված աշխատությունների հանգամանալից ուսումնասիրության վրա հենվելով՝ պատասխանում ենք. և ո՛չ մեկը: Ավելին. Հովհաննեսի աշխատությունների մեջ էլ հայկական և հռոմեական, հունական, եգիպտական, հրեական ամիսների զուգահեռությունների մեջ օգոստոսի 11—Նավասարդի 1 համապատասխանությունը ո՛չ մի տեղ չի հիշվում, բացի «նառնախորանից», որը, սակայն, իր անշարժ տոմարի ամիսների զուգահեռությունն է ուրիշ ժողովուրդների ամիսների հետ: Սրանից բխում է այն հետևությունը, որ իր տոմարի ամանորի որոշումը հիմնված չէ որևէ որոշակի թվականի Նավասարդի 1-ի և հուլյան համապատասխան ամսվա ու ամսաթվի զուգահեռության վրա: Ամանորը փետրվարի 29-ից օգոստոսի 11-ին փոխադրելը Հովհաննեսի համար ոչ թե ելակետային տվյալ է եղել, այլ մի ուրիշ տվյալից ինքնին մակարեվող համապատասխանություն: Այդ ուրիշ տվյալը զարնանային գիշերահամարի, որ նույնն է, թե զարնանամուտի օրն է: Վերը մենք տեսանք, որ Ա. Գ. Աբրահամյանը Հովհաննեսի կողմից հայոց ամանորը օգոստոսի 1-ը դարձնելը բացատրում է նրանով, որ «Հովհաննեսի ելման կետը տվյալ խնդրում զարնանամուտն է հանդիսացել»¹⁷: Սա միանգամայն ճիշտ դրույթ է: Ցավոք սրտի, այդ ճիշտ դրույթը կոահելով, նա այնպիսի մեկնաբանություն ու հիմնավորում է տալիս, որ ըստ էության բացասում է այդ դրույթը: Ահավասիկ այդ մեկնաբանությունները:

1. Բերելով Հովհաննեսի այն հաշվումները, որոնցով նա որոշում է զարնանային գիշերահամարի օրը՝ Ա. Աբրահամյանը եզրակացնում է, թե նա «աշխատեց պարզել, թե 5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցը և նրա աշակերտները ի՞նչ ամանորով են առաջնորդվել: Նա պարզեց, որ 428 թվականին հայկական ամանորը եղել է օգոստոսի 11-ին, այդ էլ նա ընդունեց ամանոր»: Մենք վերն ապացուցեցինք, որ Մեսրոպը, ինչպես և նրա աշակերտները մեկ ամանորով չեն առաջնորդվել, որովհետև տոմարը շարժական էր և ամանորը 4 տարում մեկ օրով առաջ էր շարժվում:

2. Յուրյ տալով, որ Հովհաննեսն իր հաշվումներով գալիս է այն հետևություն, թե գիշերահամարի օրն է մարտի 20 = հայոց արեգի 12-ը, հենց նույն աշխատության մեջ Ա. Գ. Աբրահամյանը մի այլ առիթով գրում է. «Մեր ուսումնասիրությունից պարզվել է, որ հին հեթանոսական հայկական տարեմուտը անվիճելիորեն եղել է մարտի 22-ին՝ գար-

¹⁷ Ա. Աբրահամյան, Հայոց գրի ու դրույթի պատմություն, էջ 259:

¹⁴ Նույն տեղում, էջ 272:

¹⁵ Նույն տեղում, էջ 275:

¹⁶ Մեր հաշվումների մեջ առաջնորդվում ենք պատմական կամ ժամանակագրական մեթոդով և ոչ թե աստղագիտության մեջ ընդունված հուլյան պարբերաշրջանով:

նանային գիշերահավասարի օրը»¹⁸; Մենք տեսանք, որ Ա. Գ. Աբրահամ-
յանն իր հրատարակած վերջին գրքում որպես հայոց տարեմուտի և գար-
նանային գիշերահավասարի օր է համարում մարտի 21-ը, 428 թվակա-
նի ամանորի որոշման մասին մեջբերման մեջ՝ մարտի 20-ը՝ ըստ Հով-
հաննեսի, այստեղ էլ՝ «անվիճելիորեն» մարտի 22-ը: Եթե այս երեք
թվերը ճիշտ են, ապա Հովհաննեսը պետք է ընդուներ ամանորի երեք
տարբեր օրեր՝ օգոստոսի 11, 12 և 13: Այսպես, ահա, Ա. Գ. Աբրահամ-
յանը ջնջում է իր ճիշտ կերպով կուսած ելակետային գրույթը:

3. Առաջ քաշելով ճիշտ գրույթը, Ա. Գ. Աբրահամյանը տալիս է դրա
հետևյալ հիմնավորում-բացատրությունը. «Հովհաննեսն իր այս աշխա-
տություն մեջ նախ կանգ է առել դարնանային գիշերահավասարի վրա:
Նա բերում է գոյություն ունեցող տարբեր տեսակետները և գտնում, որ
գոյություն ունեցող տեսակետներից ամենից ճիշտը մարտի 20-ն է, որը
համապատասխանում է... հայոց արեգի 12-ին: ... Նա մեջբերումներ է
անում վաղ քրիստոնեական աչքի ընկնող հեղինակներից... Փիլոնից, Հով-
սեպոսից, Անատոլիս Ալեքսանդրացուց և այլն: Մեծ ուշադրություն է
դարձված Եվսեբիոսի եկեղեցական պատմության վրա, որից բերված են
բազմաթիվ մեջբերումներ»¹⁹: Այս բոլորը ճիշտ են, բայց այդ ճշմարտու-
թյունն իմանալով՝ ասել, թե Հովհաննեսը «պարզեց, որ 428 թվականին
հայկական ամանորը եղել է օգոստոսի 11-ին, այդ էլ նա ընդունեց ամա-
նոր», նշանակում է Հովհաննեսի հաշվումները հանգեցնել բացահայտ
անհեթեթություն: Այո՛, Եվսեբիոսի պատմությունից մեջբերված տվյալ-
ների համաձայն Հովհաննեսը հաստատում է, որ դարնանային գիշե-
րահավասարը եղել է մարտի 20 = արեգի 12-ին: Բայց ե՞րբ: Եվսեբիոս
Կեսարացին ծնվել է 367 թ., մահացել 340-ին, ինչպես կարող էր պատ-
մության մեջ պատմել ինչ-որ դեպքեր կամ պարզապես հիշատակել ինչ-
որ ամսաթվեր, որոնք վերաբերում են 428 թվականին: Այսպես են նաև
մյուս հեղինակներից կատարված մեջբերումները, որոնց համաձայն
Հովհաննեսը կատարում է իր հաշվումները: Այդ հաշվումներից ոչ մեկը
428 թվականին չի վերաբերում և, առնաստիճան, մեծ մասամբ պատ-
մական ժամանակաշրջանի հետ էլ կապ չունի:

Եզրակացությունը պարզ է. Հովհաննեսը նպատակ չի ունեցել պար-
զելու՝ թե 428 թվականին հայոց նավասարդի 1-ը հուլյան ո՛ր ամսվա
ո՛ր ամսաթվին է համապատասխանել, որպեսզի այդ նույն ամսաթվին
էլ դարձնի իր տոմարի նավասարդի 1-ը:

Իսկ ի՞նչ է ցանկացել որոշել նա իր հաշվումներով:

Հովհաննեսն իր աշխատությունների մեջ նպատակ է ունեցել որո-

շելու գիշերահավասարի օրվան՝ մարտի 20-ին համապատասխանող
ամիս-ամսաթիվը՝ հայկական շարժական տոմարով:

Այս պատասխանը, սակայն, տոմարագիտական տեսակետից ճիշտ
չէ, որովհետև հնարավոր չէ վերացական կերպով, առանց որևէ թվակա-
նի, որոշել մարտի 20-ի համապատասխան ամսաթիվը հայոց շարժա-
կան տոմարով: Կարելի է որոշել, թե հուլյան տոմարի այսինչ թվականի
մարտի 20-ին ո՛ր ամսվա ո՛ր օրն է համապատասխանել, բայց եթե
որևէ թվական չի տրվում, ապա հնարավոր չէ այդ համապատասխանու-
թյունը գտնել, որովհետև հայկական տարվա բոլոր ամիսների բոլոր
օրերն էլ հաջորդականորեն համընկնում են մարտի 20-ին՝ 1460 տարի-
ների ընթացքում: Եվ չնայած դրան, Հովհաննեսի տոմարագիտական աշ-
խատությունների մեջ բոլոր հաշվումները հանգում են գիշերահավա-
սար = մարտի 20 = հայկական այսինչ ամսվա այսինչ օրը բանաձևին:
Հասկանալի է, որ տոմարագետ Հովհաննեսը չէր կարող թյուրիմացաբար
այդպիսի սխալ հարցադրման պատասխանը գտնելուն ձգտել, ուստի և
նա ինչ-որ սկզբունք կամ ելակետ է ունեցել: Այո՛, նա ունեցել է պար-
զուղ ելակետ և այդ ելակետը նույնքան որոշակի ու կոնկրետ թվա-
կան է եղել, որքան որ, ասենք, հուլյան տոմարի որևէ թվականը կլի-
ներ: Չգտելով որոշել գիշերահավասարի օրը հայկական շարժական տո-
մարի ամիս-ամսաթվով՝ Հովհաննեսը որպես ելակետային թվական է
ընդունել ոչ թե հայոց Բուն թվականի, կամ Մեծ թվականի, կամ հուլ-
յան տոմարի որևէ տարին, այլ արաբաշարժական առաջին տարին: Իր բոլոր
տոմարական աշխատությունների մեջ, խոսելով լուսնի ավագ լրումի,
զատկի և մասնավորապես գիշերահավասարի մասին, իր բոլոր հաշվում-
ները կատարում է արաբաշարժական թվականով: Որպեսզի այդ բանն ապա-
ցուցենք և դրա հետ նաև բացատրենք նրա հաշվումների ու տոմարա-
կան զուգարկությունների հիմունքը, սկսենք հենց արաբաշարժական թվակա-
նի՝ Հովհաննեսի բնութագրությունից:

Հայտնի է, որ արաբաշարժական բազմաթիվ թվականներ են ձեղել (յո-
թանասնից կամ Եվսեբիոսի, Կայսերական, ասորական, ալեքսանդրյան,
Հոմեական և այլն), ըստ որում արաբաշարժական տարիների սկիզբը ոմանք
հաշվել են աշխարհի ստեղծման օրը, ոմանք՝ Ադամի դրախտից վտա-
րելու օրը: Հովհաննեսն իր հաշվումները կատարում է երկրորդի համա-
ձայն, հետևյալ պատճառաբանությամբ: «Եթե կամիցիս յեկանելոյն
Ադամայ ի դրախտէն գիտել զժամանակն, վալ ԲՃՂԸ (5198)* և դամս՝ որ
ի ծննդենն փրկչին, ի վերայ բեր. և մի հաւատար՝ որոց ասեն զլինելու-
թիւնն աշխարհի գիտել զժամանակ, զի գիտէ միայն՝ որ ստեղծն: Իսկ
մեզ յայտնի թերևս է, յետ յանցանաց մարդոյն ժամանակն ըստ մեծին

¹⁸ Հովն., էջ 300.

¹⁹ Նույն տեղում, էջ 94.

* Հրատարակածի մեջ՝ ԲՃԼԸ (5128), որ հայտնապես սխալ է. ձեռագրում (՝)
սխալագրությամբ Ղ-ն դարձել է Լ (հմտ. նույն էջում. «Միանգամայն՝ ԲՃՂԸ»):

Մովսեսի, որ համարի մինչև յինքն ամս ՎՉԻԹ (3729) ըստ Եւթանասնիցն Քարգամանութեան»²⁰: Ըստ այսմ, Հովհաննեսը տարիներէ իր հաշվարկն սկսում է Ադամի՝ դրախտից վտարվելու պահից, և մինչև Քրիստոսի ծնունդը հաշվում է 5198 տարի կամ այլ կերպ ասած՝ ընդունում է արարչութեան Յոթանասնից կամ Եվսերիոսի թվականութիւնը, որ նաև հայոց արարչութեան թվականն է: Այս ելակետն ընդունելով՝ նա իր աշխատութիւնների մեջ ձգտում է ճշգրիտ կերպով որոշել գարնանային գիշերահավասարի և լուսնի ալիագ լրման օրերը՝ արարչութեան առաջին տարում: Այդ նպատակով Հովհաննեսը նախ որոշում է արարչութեան թվականի և հինգհարյուրյակի (էասյան պարբերաշրջանի) կապը: Նա բերում է արարչութեան տարբեր թվականներ (Անդրեասի, կայսերական, Շիրակացու, Եպիփանի, եբրայական և այլն)՝ ավելացնելով. «նաև այլ բազումք գրեցին վասն ժամանակացն անցելոց և ամենեքեան անմիաբան հանդիպին գու: Զի որպէս արուեստ բժշկութեան ոչ ի սկզբանցն ճշդիւ ամենայն գիտացեալ եղև, այլ առ սակաւ սակաւ, նոյնպէս և շրջաբերութիւն արեգական և լուսնի առ սակաւ սակաւ գիտացեալ եղև ի ձեռն Ե-եակ բոլորիդ, այլ ոչ թուական յԱդամայ»²¹: Այսպես, որեմն, ըստ Հովհաննեսի, արարչութեան թվական կողմածք ոչ այլ ինչ է, եթե ոչ էասյան պարբերաշրջանով հաշված՝ անցյալ ժամանակը մինչև արարչութիւնը: Այս էլ, ահա, որպէս ելակետ ընդունելով, նա կատարում է իր հաշվարկները: «Լինի բուն թուական մինչև յառաջին Ղիմպիադն ամբ ՏՈՆ (4640), որ ուղիղ բերէ զկարգ հինգհարիւրեկիդ: Եւ ըստ Եւսեբեայ՝ ՏՆԻԿ (4424), յԱդամայ մինչև ի Մովսէս՝ ՎՉԻԵ (3725) ամ, և հինգհարիւրեկիդ եւթն յելից. և ի Մովսեսէ մինչև ի սկիզբն Ղիմպիադացն՝ ԶԺԵ (915): Եւ ըստ Եւսեբեայ՝ ՉԼԵ (735): Եւ յԱդամայ՝ ՏՈՆ (4640)»²²: Ստուգենք այս թվականները. մինչև օլիմպիադայի թվականը՝ 4640 տարի, որին պետք է գումարենք 776 (օլիմպիադայի թվականն սկսում է մ. թ. ա. 776 թվականից), կստանանք 5416, որը բաժանելով 532-ի, ունենում ենք 10 պարբերաշրջան և 96 տարի. մինչև օլիմպիադայի սկիզբը՝ 4640 բաժանած 532-ի=8 պարբերաշրջան և 384 տարի: Ադամից մինչև Մոսես՝ 3725: 532=7 պարբերաշրջան և 1 տարի. 1+915 (Մովսեսից մինչև օլիմպիադա) +776=1696 (Մովսեսից մինչև Քրիստոս), 1696: 532=3 հինգհարյուրյակ և դարձյալ 96 մնացորդ: Թեև ասվում է, թե 4640-ը «ուղիղ է բերում հինգհարյուրյակը», բայց ինչպես պարզ կերպով երևում է, միայն մեկն է, որ իսկապէս «ուղիղ է բերում», այն է՝ Ադամից մինչև Մովսես 3725 տարին: Հովհաննեսն ինքն էլ, իհարկե, դա գիտեր և այդ պատճառով էլ հատկապէս գրում է. «Եւ յԼԹ ամին Հերովդեայ ծնաւ Քրիստոս, որ լինի

ղիմպիադա ճԻ (120) և ամբ նՁԳ (483) և բուն թուական ՐՆԻ (5420), զի ժամանակ հինգհարիւրեկիդ ուղիղ գայցէ, քանզի գիտութիւն սորա է ոչ միայն գտանել զաւուրս լրմանց լուսնի, այլ բազում գոյ գիտութիւն ի ձեռն նահանջմանց քսանութեկին, որ ի բազմաց զանխուլ և միայն յայտնի այնոցիկ է, որ կարող են հմտաբար հոլովեցուցանել յետսագարձութեամբ ընդ կրկնումն, և այնպէս կարեն տեսանել իբր ի հայելոջ զանցեալ ժամանակս»²³: Այստեղ էլ, ինչպես կարելի է տեսնել, ունենք՝ 5420: 532=10 հինգհարյուրյակ և 100 տարի մնացորդ, որ Հովհաննեսն էլ նշում է: Անցնելով հոռմեական թվականին՝ գրում է. «Վասն թուականին հոռովմոց այսպէս գիտացաք. ճՁ (180) հանապազ յաւելու: Եւ այս է պատճառ. զի մուտ բոլորին յապրիելի շորիցն է և արն երեքշաբթի, և հոռովմ թուականն յապրիելի երեքտասանիցն և արն ուրբաթ, թուեա ինն խորան և ի տաս կանոնին ապրիելի շորս և արն հինգշաբթի, որ է բուն թուականին սկիզբն, լինի ի ծննդեանն Քրիստոսի ՐՆԻ (5420), ըստ Ե-եակ թուականի, իսկ զճՁ (180) յաւելեալ ՐՈ (5600) որ են Ե-եակը տաս և ամբ ՄՁ (280)»²⁴: Հաշվարկը միանգամայն ճիշտ է. եթե 5420-ը 10 հինգհարյուրյակ է և 100 տարի, ապա 180 գումարելով՝ կունենանք 10 հինգհարյուրյակ և 280 տարի: Այս հաշվարկների համար, ինչպես պարզվում է, Հովհաննեսն իբրև ելակետ է ընդունում էասյան պարբերաշրջանի առաջին զատկի տվյալները, որոնք, իրենց հերթին, նույնանում են Քրիստոսի խաչելութեան թվականի տվյալներին. «Ի խաչելութեան աստուածն բանի ինն էր թուականն, և ի կարգել հինգհարիւրեկին նոյնպէս ինն էր, զի անցեալ էր շրջան մի, և յետ տասն ամի, ապրիելի շորս, օրն երեքշաբթի, զայն եղին սկիզբն բոլորին»²⁵:

Շատ պարզ է ասված. խաչելութիւնը տեղի է ունեցել տասնիններյակի 9-րդ տարում, իններորդ տարում էլ կարգվեց հինգհարյուրյակը, իսկ տասը տարուց հետո (ավելի ստույգ՝ 10-րդ տարում)՝ հինգհարյուրյակի առաջին զատկին է՝ ապրիլի 9-ին, կիրակի (զատկական լրումը՝ ապրիլի 4-ին), երեքշաբթի օրը: Այս տվյալների մասին մենք շատ ենք խոսել և գիտենք, որ հինգհարյուրյակը կարգվել է 561-թվականին, էասյան հինգհարյուրյակի առաջին զատկական տարին է 562 թվականը, որի զատկական լրումը եղել է ապրիլի 4-ին, զատկելը՝ ապրիլի 9-ին: Սակայն Հովհաննեսը, առանց առանձնապէս շեշտելու, անցում է կատարում հայոց Մեծ թվականին՝ խաչելութեան իններորդ տարվա համապատասխան տարեթիվ՝ դարձյալ իններորդ տարի, զուգադրելու նպատակով, որով ստացվում է. հայոց Մեծ թվականին գումարած 9 տարի=561 թվական: Այս զուգադրութիւնն էլ, ահա, դառնում է այն հիմքը, որի

²¹ Նույն տեղում, էջ 224:

²⁰ Հովհ., էջ 131:

²² Նույն տեղում, էջ 228:

²³ Նույն տեղում, էջ 226:

²⁴ Նույն տեղում, էջ 226:

²⁵ Նույն տեղում, էջ 226—227:

վրա կառուցում է իր տոմարական հաշվումները և որոշում ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ հայերի զատկական տոնի, գիշերահավասարի և լուսնի ավագ լրման օրերը:

Այսպես, գրելով, որ Ադամից մինչև ջրհեղեղը 2242 տարի է, ջրհեղեղից մինչև Ելթը (Եգիպտոսից դուրս գալը)՝ 1483, շարունակում է. «Եւ լինի յԱդամայ ՎԶԻԵ (3725) մինչև յԵլան, ած ճԶ (180), լինի ՎԶԵ (3905), երթ Ելթն բոլոր, մնա ճԶԱ, որ է թուականն հոռովմի: Ած ՄԻԸ (228) զհանապազորոն, լինի ՆԹ (409), որ է թուականն հայոց յԵլան»²⁶: Վերժանենք այս հաշվումները. Ադամից մինչև Ելթը՝ (3725—180): 532=7, մնացորդ՝ 181 տարի, որ համարում է հոռմեական թվականը. հայտնապես «հոռմի փոքր թվական» կոչվածն է, որին պետք է գումարել 780՝ մ. թ. տարեթիվն ստանալու համար. 181+780=961: Հայոց Մեծ թվականի 409-ը հավասար է 552+409=961: Թվաբանությունը ճիշտ է, և թվերը բռնում են իրար: Բայց և այնպես, թվականների աղավաղում ու բացթողում կա, որովհետև, ինչպես վերը բերված հատվածում տեսանք, Ադամից մինչև Ելթը 3725 տարի է, Ելթից մինչև Քրիստոսի ծնունդը՝ 1473, ընդամենը՝ 5198: Ստուգենք այս թվերն իր ժամանակագրությամբ.

«Եթե կամիցիս յԵլանելուցն Ադամայ ի գրախտէն գիտել զժամանակն, կալ ԲՃՂԸ (5198)* և զամս որ ի ծննդենէ փրկչին ի վերայ բեր...

Յագամայ ի ջրհեղեղն....	ՍՄԽԲ (2242)
...ի ջրհեղեղէն ի ծնունդն Աբրահամու՝	ՋԽԲ (942)
Անտի յԵլան յԵգիպտոսէ	ՇԵ (505)
Անտի մինչև ցՍողոմոնի շորրորդ ամն...	ՆԶ (480)
Անտի մինչև ցՆորոգումն տաճարին...	ՇԺԲ (512)
Անտի մինչև ի ծնունդն Քրիստոսի	ՇԺԸ (518)
Միանգամայն՝ ԲՃՂԸ (5198) ²⁷ :	5199

Ըստ այսմ՝ մեջբերման «լինի ՆԹ (409), որ է թուականն հայոց յԵլան» պետք է ուղղել «ի ծննդենէն Քրիստոսի», որով կունենանք մ. թ. 961 թվականը²⁸:

Այս եղանակով, ահա, համապատասխանություն է ստեղծում մի կողմից արարչություն, մյուս կողմից՝ օլիմպիական ու հոռմի թվականների և հայոց Մեծ թվականի միջև (արարչությունից մինչև Մեծ թվ.—5751, օլիմպիական՝ 133-ի 2-րդ տարի=1330=մ. թ. 554—2=552, Հոռմի (փոքր)՝ 1 թ.=մ. թ. 781=հայոց 229, Հոռմի 280=հայոց

508=մ. թ. 1060, Հոռմի 181=հայոց 409=մ. թ. 959): Բերված համապատասխանություններից կարևորագույնն է «ի ծննդեանն Քրիստոսի հայոց թուականն 508 և հոռմն՝ ՄԶ (280)», որի մասին հատկապես կիսովի ստորև:

Այս համապատասխանությունները Հովհաննեսի համար որպես հիմք են ծառայում, որպեսզի արարչության առաջին տարվա գիշերահավասարի և լուսնի ավագ լրման օրը որոշի: Այսպես, արարչության թվականները քննություն անելուց և հիշյալ համապատասխանություններն ըստեղծելուց հետո, գրում է. «բայց վասն արուեստիդ տումարի յառաջագոյն նախ Մովսէս գրեաց եբրայեցուցն հրամանաւ աստուծոյ՝ ի շորեքտասաներորդ աուր ամսոյն նիսան տանել յԵգիպտոս զտան Ելթն ի գարնանային հասարակաբորութեանն, յորժամ տին սկսանի յաղթահարել զգիշեր»²⁸: Սա արդեն այն պահը կամ կետն է, որից, ըստ Հովհաննեսի, սկիզբ է առնում զատիկը: Եվ քանի որ արդեն հայտնի է զատիկի օրը (ի շորեքտասաներորդ աուր ամսոյն նիսան), ապա դրան էլ պետք է համապատասխանեցվեն բոլոր հաշվումները, ըստ որում այդ հաշվումների հիմքում էլ գրվում է եբրայական տոմարը, որ աստուծու կողմից է տրվել՝ Մովսէսի միջոցով: «Արդ՝ պարտ է դնել հիմն շինուածոյ արուեստիդ զեբրայացուցն, զի հասարակածդ յեբրայեցուց աւելեացն շորեցն հանդիպի, յայտ է՝ թէ առաջին աւր աւելեացն է արարչութեան սկիզբն, և վերջին աուրն պատկերն Ելթներեակ է տարւոյն», որ է հինգշաբթի, և յաուր ուրբաթու նիսան մտանէ, և լինելութիւն մարդոյն, և արեգակն ի խոյն մտանէ»²⁹: Այս հատվածի մեջ էլ, ինչպես տեսնում ենք, բերվում են նոր տվյալներ՝ ա) գիշերահավասարը հրեական ավելյաց շորրորդ օրն է, բ) քանի որ լուսինն ստեղծվեց արարչության շորրորդ օրը (արեգակի և աստղերի հետ), ապա արարչության սկիզբը՝ առաջին օրն է ավելյաց 1-ը, գ) ուրբաթ օրն սկսվում է նիսանը («յաուր ուրբաթու նիսան մտանէ»), որ նշանակում է, թե հրեական օրն սկսվում էր արեամուտից, ուստի և ուրբաթ օրվա երեկոյից մինչև շաբաթ օրվա արեամուտը նիսանի 1-ն է: Այդ օրն էլ ստեղծվում է մարդը, իսկ կիրակի օրը «աստված հանգստանում է»: Այս տվյալները Հովհաննեսը բերում և ջանում է հաստատել իր տարբեր աշխատություններում, բայց առավել հանգամանորեն՝ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» աշխատության մեջ: Դրանք են այն հիմքը, որոնց վրա պետք է կառուցել այս արվեստի, այսինքն՝ տոմարի, շենքը («պարտ է դնել հիմն շինուածոյ արուեստիս») և այն էլ՝ ըստ եբրայականի:

²⁶ Նույն տեղում, էջ 228:

* Տպագրվել է ԲՃԼԸ (5138), որ ուղղում ենք ԲՃՂԸ (5198):

²⁷ Նույն տեղում, էջ 131:

²⁸ Նույն աշխատության մեջ, մի այլ տեղ, զուգադրում է հայոց 508 և Հոռմի 280=մ. թ. 1060 թ. (էջ 226):

²⁸ Նույն տեղում, էջ 224:

* Տպագրված է «Ելթներեակ և տարւոյն», որ անիմաստ է, ուստի և ուղղում ենք՝ «Ելթներեակ է տարւոյն»:

²⁹ Նույն տեղում, էջ 225:

Եթե այժմ ի մի բերենք բոլոր ելակետային տվյալները, ապա կըստանանք հետևյալ պատկերը: Լուսինն ստեղծվեց ավելյաց 4-ին, արարչություն 4-րդ օրը, մեկ օր հետո Նիսանի 1-ն էր, Նիսանի 14-ը զատկի օր է՝ գարնանային գիշերահավասարի ժամանակ («ի գարնանային հասարակադրութեան»), դրա հետ միասին, ինչպես գիտենք, Նիսանի 14-ը լուսնային ամսվա 15-ն է կամ լուսնի ավագ լրման օրը: Բայց այստեղ առաջ է գալիս մի հարց. իսկ քանի՞ օրական էր լուսինն իր ստեղծման պահին: Պարզվում է, որ այս հարցն զբաղեցրել է բազմաթիվ կրոնագետ-ժամանակագիրների, որոնք իրարամերժ կարծիքներ են հայտնել, մինչդեռ առանց դրա որոշման հնարավոր չէ պարզել, թե զատկի տոնը հիմնադրելու տարում կամ թեկուզ արարչության տարում լուսնի ավագ լրումը կամ որ նույնն է՝ Նիսանի 14-ը երբ է եղել: Եվ Հովհաննեսը, բնականաբար, քննության առարկա է դարձնում այդ հարցը. «Այլ վասն լուսնի ստեղծման ոմանք ասացին հնգետասանարեայ, ոմանք՝ մետասանարեայ, ոմանք երկու աւերայ, բայց մեզ չէ փոյթ վասն այդր ինչ հակառակելոյ, այլ միայն ստուգիւ գիտել զառաջին լրտան լուսնիդ: Զի տէր Եփրեմ յԱրարածոց մեկնութեանն ասէ մետասանարեայ զլուսինն, որ յաւելեալ լուսնի յամին առաջնում: Սորա են, զի յամենայն ամի յաւելուն նմա մետասան ար և այն լինի վերադիր լուսնի...»³⁰, Եվ այսպես, լուսինն ստեղծվել է տասնմեկ օրական, և այդ տասնմեկ օրն է, որ վերադիր է դարձել (մենք գիտենք, իհարկե, որ այդ 11 օրը արեգակնային և լուսնային տարիների տարբերությունն է. 365—354=11, բայց այժմ մեզ հետաքրքրողը Հովհաննեսի բացատրությունն է): Եթե ավելյաց 4-ին լուսինը 11 օրական է ստեղծվել, ապա լիալուսինը կլիներ Նիսանի 3-ին. բայց լիալուսինը պետք է լինի Նիսանի 14-ին: Ուրեմն ինչ-որ բան տեղում չէ՞: Այո՛, քանի որ լուսնի լրումը գտնելու համար պետք է գումարել տարվա վերադիրը, իսկ արարչության առաջին տարին վերադիր լինել չէր կարող, որովհետև «մինչ չև՞ ևս ընթացեալ լուսինն ընդ երկոտասան ամիսըդ, և ոչ հինգ հաւելեացն յաւելեալ, զիա՞րդ լինի վերադիր»³¹: Նշանակում է՝ հնարավոր է միայն արարչության երկրորդ տարվա վերադիրը գտնել և դրանով էլ՝ լուսնի լրումը, որը պետք է համապատասխանի Նիսանի 14-ին, որովհետև «մեծին Մովսէսի հրամայէ աստուած տաւնել յԵփրատոս ի շորեքտասան Նիսան գառնազեն, զոր Տէրն ի վերնատունն աշակերտաւք ճաշակեաց զգառն խորհրդոյ և դադարեցոյց զգատիկն՝ սկսեալ գառամբ»³²: Այսպես, ահա, Հովհաննեսը արարչությունից հասնում է զատկին, որ հիմնվել է Մովսէսի կողմից (իհարկե՝ աստուծու

հրամանով): Բայց ինչպե՞ս է այդ Նիսանի 14-ը նույնացնելու արարչության 11-օրյա լուսնի հետ. շատ պարզ կերպով: «Միևնույն ար հանդիպի արարչութեանն, և աւետեացն և մկրտութեանն, սոյնպէս և յանցանացն Ադամայ, և շարշարանացն փրկչին, և էլիցն Իսրայելի... և յարութեանն փրկչին: Եւ էլիցն ի ծովէն Մովսէսի միևնոյն ար հանդիպի»³³: Ստացվեց նույնական օրերի երկու շարք՝ ա) արարչության, ավետյաց և մկրտության, բ) Ադամի հանցագործության, Քրիստոսի շարշարանքների, Եփրատոսից դուրս գալու (ելք) և հարության, որ է զատկը: Այս շարքերից երկրորդը հանգեցնում է հետևյալին. «Եթե լուսինն մետասանարեայ ստեղծաւ ըստ Եփրեմի ի մարտի Ի-նն (քսանն), ի մարտի Ին-ն (քսան և հինգն) գտանի վեշտասանարեայ, որ է Նիսան շորս և արեգ եւթնետասն, եթե միաշաւիղ ընթացան և ստեղծան արեգակն և լուսինն, յայրիլի 4 լինի լրումն»³⁴: Ահա և ավարտը. որոշվեց լուսնի լրման օրը (որ է զատկը), և գիշերահավասարի օրը՝ երեք տոմարական համակարգերի զուգահեռությամբ. գիշերահավասար=մարտի 20=Նիսանի 1=արեգի 12, ավագ լրումը=այրիլի 4=Նիսանի 15=արեգի 2: Եթե այս տվյալները համեմատենք վերը բերված՝ հրեական ավելյաց 4=11 օրական լուսնի ստեղծում, ապա կտեսնենք որ անհամապատասխանություն գոյություն ունի. քանի որ ավելյաց 4-ին լուսինը տասնմեկ օրական է, ապա լրումը պետք է լինի շորս օր հետո, այն է՝ Նիսանի 3-ին: Բայց Հովհաննեսին հետաքրքրողը «առաջին տարվա» լուսնի ավագ լրումն է, որի համար այդ թվերին պետք է գումարել 11 (վերադիրը): Հաշվումները մատչելի դարձնելու նպատակով վերցնենք հուլյան տոմարով տրված ամսաթվերը. լուսինն ստեղծվեց 11 օրական, գիշերահավասարի օրը՝ մարտի 20-ին, նույն ամսի 25-ը Նիսանի 4-ն է, լուսինը՝ 16 օրական, իսկ Հովհաննեսը գրում է, թե լրումը այրիլի 4-ին է, ուղիղ 10 օր հետո, երբ լուսինը պետք է լիներ 26 օրական: Աղավաղված է, թե Հովհաննեսն է սխալ հաշվել.— ոչ՝ մեկը, և ոչ էլ՝ մյուսը: Հովհաննեսն արդեն զգուշացրել է, որ առաջին տարին, երբ լուսինը (և արեգակը) դեռևս տարեկան ընթացքը չի կատարել, չի կարող վերադիր լինել, ուստի և տարեկան շրջանից հետո եկող լրումը պետք է գտնել (առաջին տարվա Նիսանի 4-ին լուսինն արդեն 16 օրական էր): Ըստ այսմ, մարտի 20-ից (=հրեական ավելյաց 4-ից) հաշվելով մեկ լրիվ լուսնային տարի (354 օր), պետք է առաջ գանք, որով կհասնենք հաջորդ տարվա մարտի 9-ին: Սակայն դա դեռ բավական չէ. սկսվել է 2-րդ տարին, ուրեմն պետք է գումարել վերադիրը՝ 11 օր, որով կհասնենք մարտի 20-ին՝ լուսնային և արեգակնային տարիների հավասարությամբ: Այս-

³⁰ Նույն տեղում, էջ 225:
³¹ «Տպագրվածում՝ «մինչև ևս», ուղղում ենք «մինչ չև ևս»:
³² Նույն տեղում, էջ 225:
³³ Նույն տեղում, էջ 225:

³³ Նույն տեղում, էջ 227:
³⁴ Նույն տեղում, էջ 227:

պիտով մարտի 21-ը կլինի մարտյան նորալուսնի առաջին օրը, նեոմենիան՝ 22-ին, որ է հրեական նիսանի մեկը. նիսանի 14-ը (լուսնային ամսվա 15-րդ օրը) կամ լուսնի զատկական լրումը՝ ապրիլի 4-ին: Եթե այժմ հիշենք Անդրեասի 200-յակի առաջին տարվա (353 թ.) տվյալները, ապա կտեսնենք, որ դրանք նույնությունը համընկնում են այս ամսաթվերին: Եվ քանի որ հինգհարյուրյակի առաջին տարին էլ, ինչպես տեսանք, էասյանները համարեցին 562 թվականը (19-երյակի 12-րդ տարին), ապա բնականաբար, այդ տարվա տվյալներն էլ նույնանում են թե Անդրեասի առաջին տարվա և թե արարչության հիշյալ ամսաթվերի հետ: Եվ Հովհաննեսը հենց այդպես էլ գրում է. «Մի ար հանդիպի Եգիպտոսի լրմանն, և Եզրին, և շարձարանացն տեառն և հինգհարի. րեկին դնելոյ»³⁵: Սակայն եթե այս տվյալները կան, ապա հեշտությամբ կարելի է գտնել նաև արարչության առաջին տարվա վիճակը: Այսպես. քանի որ մարտի 20-ին լուսինը 11 օրական էր, ապա լրումը պետք է լիներ նույն ամսվա 25-ին (որի սփիզը 24-ի արևամուտն էր), իսկ սրանից հետևում է, թե «լուսինն մեռասանաւրեայ ստեղծաւ ըստ Եփրեմի ի մարտի Ի-նն, ի մարտի ԻԵ-ն գտանի վեշտասանօրեայ» նախադասությունը վերաբերում է հենց արարչության տարվան, որի լրումը հենց մարտի 25-ն է, իսկ շարունակության «յապրելի շորս լինի լրումն» նախադասությունը՝ հաջորդ տարվան:

Այժմ տեսնենք, թե ինչպես են համապատասխանեցվում հայոց ամսաթվերը հոռեականի և արարչության հետ: Վերը բերված հատվածում մարտի 25-ը զուգադրվում է նիսանի և արեգի 17-ի հետ, որից բխում է, որ արարչության առաջին տարում արեգի 1-ը եղել է մարտի 9-ին, գիշերահավասարը՝ արեգի 12-ին = մարտի 20-ին: Եվ Հովհաննեսը այդպես էլ գրում է. «Կալ ՆԹ (409) զհայ թուականն ՆԸ (408) երթ, մնայ Ա (1), որ է բուն թուական յելսն յԵգիպտոսէ: Այդ անսուտ վկայութիւն վասն հայ և հոռով թուականացդ և մուտ բոլորիդ՝ ըստ արարչութեանն»³⁶: Մի փոքր դրանից առաջ էլ հայոց 409 թվականն է հիշում՝ բերելով ամսաթվերի զուգադրությունը. «Կալ ՃՁԱ (181) զհոռով թուականն, ած ՄԻԸ (228), լինի ՆԹ (409), որ է թուական հայոց արարչութեան ամին»³⁷: Այստեղ, ինչպես և նախորդ 508 թ., չպետք է համարել հայոց տարեթիվը արարչության տարում (արարչությունից առաջ թվականություն չէր կարող լինել), այլ արարչության առաջին տարվա ու հայոց 409 թվականի, և Եգիպտոսից դուրս գալու տարվա ու հայոց 508 թվականի լուսնի հասակի, առանձնապես ավագ լրման ամսաթվերի հա-

մապատասխանություն: Այդ համապատասխանությունը հանգում է հետևյալ ընդհանուր բանաձևին. «Լրումն՝ յարեգ ԺԷ, հասարակածն՝ յարեգ ԺԲ, արարչութիւնն՝ յարեգ Թ, հոռով լրումն՝ մարտի ԻԾ, երբայցեոցն՝ նիսան շորս»³⁸: Ահա և Հովհաննեսի բոլոր հաշվումների արդյունքը. արարչության տարվա գիշերահավասարի օրը՝ մարտի 20-ը համապատասխանում է արեգի 12-ին, լրումը՝ մարտի 25 = արեգի 17-ին, արարչությունը, այսինքն՝ արարչությունն սկսելու օրը (արարչության առաջին օրը)՝ արեգի 9-ին: Սրանք են այն ելակետային ամսաթվերը, որոնց համապատասխանեցվում են Հովհաննեսի կայուն տոմարի ամիսներն ու ամսաթվերը: Ահա այդ համապատասխանության թվաբանական հաշվարկը. եթե լուսնի լրման օրը՝ մարտի 20-ը, արեգի 17-ն է, ապա արեգի 1-ը եղել է մարտի 9-ին, համապատասխանորեն՝ գիշերահավասարի օրը՝ արեգի 12 = մարտի 20-ին, արարչության առաջին օրը՝ արեգի 9 = մարտի 17-ին: Սա, իհարկե, միայն թվաբանական հաշիվ է. ըստ Հովհաննեսի՝ արեգի 9 = մարտի 17-ից այն կողմ չի կարելի անցնել, որովհետև արարչությունից առաջ ոչինչ չկար (հետևաբար և՛ ոչ օր, ոչ ամիս, ոչ էլ տարի), բայց և այնպես հաշիվը իրական է, քանի որ այդ ելակետային տվյալներից բխում է Հովհաննեսի կայուն տոմարի ամիսների ու ամսաթվերի համապատասխանությունը՝ հետևյալ տրամաբանությամբ: Կայուն օրացուցային համակարգով արարչության առաջին տարվա ամսաթվերը նույնությամբ համընկնում են երկրորդ տարվա ամսաթվերին, և եթե հայոց տոմարն էլ անշարժ է, ապա հայոց ամսաթվերն էլ պետք է նույնական լինեն, հետևաբար և դարձյալ կունենանք արեգի 1 = մարտի 9, արեգի 12 = մարտի 20 (գիշերահավասար): Ինչ վերաբերում է լուսնի լրմանը, ապա բնականաբար ամսաթիվը պետք է փոխվի, որովհետև առաջին տարում «ոչ արեգակն զնահանջս զումարեալ է, ոչ լուսին՝ զիննևտասներեակս»³⁹, իսկ երկրորդ տարվանն արդեն վերը բերեցինք: Որպեսզի լուսնի ավագ լրման և զատկի հետ մեր հաշիվը փակենք, անհրաժեշտ ենք համարում ասել հետևյալը. Հովհաննեսի հաշվումները հարմարեցված են 19-երյակների համակարգին, ըստ որում, ինչպես հայտնի է, տասնիններյակի առաջին տարվա վերադիրն է 0 (երկրորդինը՝ 11 և այլն): Սրանից ինքնին բխում է այն, որ էասյան պարբերաշրջանն էլ, որ 19-երյակի և 28-ամյակի արտադրյալն է, իր, ինչպես և հաջորդ տասնիններյակների առաջին տարում պետք է ունենա 19-երյակի առաջին տարվա ամսաթվերը: Եվ քանի որ, ինչպես տեսանք, ըստ Հովհաննեսի լուսնի արարչության, Եգիպտոսից ելման (Եգիպտոսից դուրս գալու), ավետյաց ու մկրտության և «շարձարանացն տեառն և հինգհարիւրեկին դնելոյ» միևնույն օրն են եղել, ապա պարզ է, որ այդ

³⁵ Նույն տեղում, էջ 226:

³⁶ Նույն տեղում, էջ 227:

³⁷ Նույն տեղում, էջ 226—227:

³⁸ Նույն տեղում, էջ 227:

³⁹ Նույն տեղում, էջ 227:

նույն ամսաթիվներն էլ պետք է կրկնվեն յուրաքանչյուր հինգհարյուրյակի առաջին տարում, որից հետևում է, որ հինգհարյուրամյա պարբերաշրջանի առաջին տարում հայոց արեգի 12-ը (գիշերահավասարի օրը), պետք է լինի մարտի 20-ին: Այս ամսաթիվն է, ահա, որ Հովհաննեսի անշարժ տոմարի հիմքերի հիմքն է դարձել:

Հարց է ծագում. ինչո՞ւ է Հովհաննեսը գիշերահավասարի օր դարձնում իր տոմարի ամանորի և բոլոր մյուս կրոնական տոների որոշման ելակետը. արդյոք այն պատճառով չէ՞, որ նա ցանկացել է իր տոմարը համաձայնեցնել հայոց Բուն թվականի ամանորի՝ մարտի 20-ի հետ: Իհարկե, նա գիտեր, որ հայոց Բուն տոմարի սկիզբը եղել է 1004 թվականից 1460 տարի առաջ, գիտեր, որ 1004—1007 թվականների ամանորը համապատասխանել է մարտի 20-ին, ուստի և Բուն թվականի առաջին տարում ևս ամանորը պետք է մարտի 20-ին եղած լինի: Սրա օգտին է խոսում նաև այն փաստը, որ Հովհաննեսն իր մի քանի գրվածքներում հատկապես շեշտում է, որ մարտի 20-ին (= արեգի 12-ին) գարնանամուտ է: Եվ այնուամենայնիվ, գիշերահավասարի օրվան առաջնակարգ նշանակություն տալը դրանով չի պայմանավորվել, այլ հենց իր ՇԼԹ աղյուսակով: Մենք արդեն ասացինք, թե այդ աղյուսակն ինչ տրվյալներ է պարունակում: Արդ, քննելով այդ տվյալները, համոզվում ենք, որ 532-ամյա պարբերաշրջանի այդ տոնացույցի առանցքային խնդիրն է զատկի ամսվա և ամսաթվի որոշումը, որովհետև մյուս տոները կամ կայուն օր ունեն, կամ էլ՝ եթե օրերը կայուն չեն, ապա որոշվում են զատկի օրով: Այսպես, ծննդյան տոնը կայուն էր (հայ եկեղեցու համար՝ հունվարի 6), իսկ Բուն բարեկենդանը շարժական էր և պետք է լիներ զատկից յոթ շաբաթ (49 օր) առաջ (50-րդ օրը զատիկն էր), պենտեկոստեն՝ զատկական կիրակիի 50-րդ օրը և այլն: Ինչպես տեսնում ենք, անշարժ տոնի օրը ինքնին հայտնի է (այդ պատճառով էլ Հովհաննեսն իր աղյուսակում ամսաթիվ չի նշում, այլ միայն շաբաթվա օրը), իսկ շարժական տոները կախման մեջ են զատկի տոնից, և դրա պատճառով է, որ տոնացույցները սովորաբար անվանում են պարզապես զատկացանկ: Սակայն հայտնի է, որ զատկի օրն էլ, իր հերթին, կախման մեջ է երկու ամսաթիվերից՝ ա) գիշերահավասարի օրվանից, բ) դրան հաջորդող լուսնի լրումից, որ ինքնին արդեն նշանակում է, թե զատկացանկ կազմելու համար առաջին հերթին պետք էր որոշել գարնանային գիշերահավասարի օրը, ապա և՛ դրան հաջորդող լուսնի լրման օրը՝ տասնիններյակի յուրաքանչյուր տարվա համար: Եվ, ինչպես տեսանք, Հովհաննեսը հենց դա էլ իր կարևորագույն խնդիրն է դարձրել: Հուլյան անշարժ տոմարով հայոց եկեղեցու ընդունած գիշերահավասարի կայուն օրը մարտի 20-ն էր: Մնում էր որոշել, թե հայոց նոր ստեղծվող անշարժ տոմարի համար տարվա ո՞ր օրը պետք է համապատասխանեց-

նել դրան: Արդեն ասել ենք, որ 1084 թվականին, որով վերջանում էր հայոց Մեծ թվականի 532-րդ տարին և սկսվում 533-րդը, նավասարդի 1-ը եղել է փետրվարի 29-ին: Հաջորդ՝ 1085 թվականին, որով սկսվում է Հովհաննեսի զատկացանկը, նավասարդի 1-ը փետրվարի 28-ին է եղել, գիշերահավասարը՝ նավասարդի 21 = մարտի 20-ին:

Միանգամայն տրամաբանական կլիներ, իհարկե, հենց փետրվարի 28-ն էլ դարձնել իր անշարժ տոմարի ամանորը, կամ էլ իբրև ամանորի օր ընդունել հայոց Մեծ թվականի առաջին տարվա՝ 552 թվականի նավասարդի 1 = հուլիսի 11-ը: Սակայն Հովհաննեսն ուրիշ տրամաբանություններ էր առաջնորդվում. իր գրածի համաձայն, հինգհարյուրյակի առաջին օրը և գիշերահավասարի (ինչպես և լուսնի ստեղծման, եգիպտոսից ելնելու և այլն) օրերը նույնն են, ուստի և նոր հինգհարյուրյակի գիշերահավասարի օրը՝ իր անշարժ տոմարի համար, հարմարեցնում է գիշերահավասարի կայուն օրվան՝ մարտի 20-ին: Այս նպատակով է նա բարդ ու բազմազան հաշվումներ կատարում և հասնում այն հետևությունների, որ լուսնի ստեղծման օրը = արարչության 4-րդ օրը եղել է մարտի 20-ին = հայոց շարժական տոմարի արեգի 12-ին: Այդ արդյունքին հասնելուց հետո նա բերում է եկեղեցու հայրերի տարբեր կարծիքները արարչության թվականի, կրոնական տոների որոշման և այլ ժամանակագրական տվյալների մասին և ամփոփում հետևյալ ձևով. «Արդ՝ զի բազումս թողաք վկայութիւն բազմաց վասն այս իրաց: Բայց բաւական են ասացեալդ, ցուցանել թէ՛ յարեգ ամսոյ հաւասարի տին գիշերոյ և գարուն ժամանակի ստուգապէս»⁴⁰: Այս բանն ապացուցելու համար նա հաճախ դիմում է Եզրի, Եփրեմի, Եւսեբիոսի և այլոց վկայակոչումներին՝ հատուկ ուշադրութեան արժանացնելով հատկապես 5-րդ դարում թարգմանված գործերում հանդիպող հայոց, հռոմեական, եբրայական, երեմն նաև եգիպտական ու հունական տոմարներով ամիսամսաթիվերի ղուգադրութիւնների վրա, որոնք, իհարկե, վերաբերում են ոչ թե հինգերորդ դարին, այլ շատ ավելի վաղ ժամանակներին: Այս բոլորի հիման վրա, հաստատված համարելով, որ գիշերահավասարը ըսկզբնապես (արարչության ժամանակ) եղել է արեգի 12-ին, որն իր հերթին համապատասխանել է մարտի 20-ին, Հովհաննեսն իր անշարժ տոմարի համար էլ ընդունում է այդ օրը և դրանով էլ որոշում իր տոմարի նավասարդի 1-ի կայուն օրը: Եթե արեգի 12-ը համապատասխանում է մարտի 20-ին, ապա նավասարդի 1-ն էլ կրնկնի օդոստոսի 11-ին, և հենց այդ էլ Հովհաննեսն ընդունում է որպես իր անշարժ տոմարի մշտական (կայուն) ամանոր:

Այն ամենը, որ մենք շարադրեցինք արարչության, գիշերահավա-

⁴⁰ Հովհ., էջ 244:

սարի օրվա և այլնի մասին, Հովհաննեսը հանգամանորեն բացատրել է իր «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» աշխատութեան մեջ, որ հրատարակված է նրա «Մատենագրութեան» մեջ (էջ 222—235): Այդտեղ նա շատ թվականներ է հիշատակում, բերում է երբայական, հոռմեական ու հայկական ամսաթվերի բազմաթիվ զուգահրոթյուններ, բնականաբար՝ բոլորը անցած ժամանակների համար, սակայն դրանցից ոչ մեկը (բացի արեգի 12, հոռիի 9 զուգահրոթյուններից) չի համապատասխանում ոչ միայն 428, այլև առհասարակ V դարի որևէ թվականի վիճակին: Այսպես, օրինակ, «Արդ՝ ի մկրտութեան տեան Բուն թվականն Ինժ (5450), գնա զըրջանսն, մնայ ճԼ(130), ած ճԶ(180) հանապազօրոն, լինի 3Ժ (310) հոռոմ թուականն, ած ՄԻԸ (228), մնա վեց հայոց թուականն, լրումն յապրիլի ԺԸ և եթներեակն երկու, ի նիսանի ԻԸ և եթներեակն հինգ, ի քաղոց երեսուն և եթներեակն երկու և օրն հինգշաբթի»⁴¹, քաղոց ամսի 30 = ապրիլի 18 համապատասխանությունը եղել է մ. թ. 23—26 թթ.: Կամ՝ «խաչելութիւնն յապրիլի ԺԵ-ն, ... ի քաղոց ԻԸ». քաղոց 28 = ապրիլի 15 համապատասխանությունը եղել է մ. թ. 19—22 թթ.: Ինչպես տեսնում ենք, այս զուգահրոթյունները ոչ մի կապ չունեն մ. թ. V դարի հետ. բայց դրանք կապ չունեն նաև բերած 19—22, 23—26 թվականների հետ (որոնք ցույց են տալիս հայոց Բուն թվականի և հուլյան տոմարի համապատասխանությունները), այլ բոլորովին այլ հաշվումների վրա են հիմնված. արարչութեան 5450 թ., որից հանելով 10 շրջան (ՇԼԲ)՝ ստանում ենք 130 տարի մնացորդ, դումարելով 180 տարի «հանապազօրոն» = 310 տարի, գումարելով 228 = 538, որից հանելով մեկ շրջան (532 տարի), մնում է 6, որ Հովհաննեսը կոչում է հայոց վեց թվական: Այս բոլորը ցույց են տալիս, որ իր տոմարի տարեսկիզբը՝ Նավասարդի 1-ը փետրվարի 29-ից օգոստոսի 11-ը փոխադրելու համար նկատի չի ունեցել ոչ 428 թվականի, ոչ էլ, առհասարակ, V դարի որևէ թվականի վիճակը:

Այս բոլորի եզրակացությունը հետևյալն է. Հովհաննեսն իր անշարժ տոմարի Նավասարդի 1-ը համապատասխանեցրել է օգոստոսի 11-ին՝ առաջնորդվելով արարչութեան իր ընդունած տվյալներով, որոնք հանգում են հետևյալին. լուսնի (արեգակի և բոլոր լուսատուների) ըստեղծումը՝ արարչութեան շորթորդ օր, որ եղել է մարտի 20-ին՝ գիշերահավասարի օրը. դրան համապատասխանել է հայոց շարժական օրացույցի արեգի 12-ը, որից բխում են՝ արեգի 1 = մարտի 9 և Նավասարդի 1 = օգոստոսի 11 համապատասխանությունները: Սա էլ, իր հերթին, նշանակում է, թե Հովհաննեսի ընդունած ամանորի օրվա և 428 = 431 թվականների Նավասարդի 1 = օգոստոսի 11 համապատասխանությունը

նրա կողմից որոշված արարչութեան տարվա ելակետային տվյալների և հայոց Բուն թվականի 885—888 թթ. դրութեան պատահական զուգահրոթյուն է, որ ոչ մի նշանակություն չի ունեցել Հովհաննեսի համար՝ հայոց և հուլյան ամիսների ու ամսամուտերի զուգակցություն խնդրում:

Այս բոլորից հետո մեզ մնում է խոսել Փոքր կամ Սարկավագադիր տոմարի ամսամուտերի և հուլյան ամսաթվերի համապատասխանության, նահանջ տարվա մեկ հավելյալ օրվա տեղի և հինգհարյուրյակի առաջին ու վերջին տարիների զատկական ամսաթվերի մասին:

Հովհաննեսի տոմարի ամսամուտերի և հուլյան համապատասխան ամսաթվերի զուգահրոթյունը կարծես թե առանձնապես դժվարին խնդիր չէ. բավական է տարին սկսել օգոստոսի 11-ից և 30-ական օր հաշվելով գնալ մինչև 365-րդ օրը (հաջորդ տարվա օգոստոսի 10-ը): Այդ գործն արդեն կատարել են մեր տոմարագետները, որոնց ստացած արդյունքները հետևյալ պատկերն ձև ներկայացնում.

Նավասարդի 1	օգոստոսի 11
Հոռիի 1	սեպտեմբերի 10
Սահմիի 1	հոկտեմբերի 10
Տրեի 1	նոյեմբերի 9
Քաղոց 1	դեկտեմբերի 9
Արաց 1	հունվարի 8
Մեհեկանի 1	փետրվարի 7
Արեգի 1	մարտի 9 (կամ 8)
Ահեկանի 1	ապրիլի 8 (կամ 7)
Մարերի 1	մայիսի 8 (կամ 7)
Մարգաց 1	հունիսի 7 (կամ 6)
Հրոտից 1	հուլիսի 7 (կամ 6)
Ավելյաց 1	օգոստոսի 6 (կամ 5) ⁴²

Այս տախտակի առաջին մասը (Նավասարդ-մեհեկան) անվերապահորեն ճիշտ է, երկրորդ մասը՝ ոչ: Ըստ տախտակի, ինչպես պարզ կերպով երևում է, հասարակ տարիներն ունեն՝ արեգի 1 = մարտի 9, ահեկանի 1 = ապրիլի 8, մարերի 1 = մայիսի 8, մարգաց 1 = հունիսի 7, հրոտից 1 = հուլիսի 7, ավելյաց 1 = օգոստոսի 6 համապատասխանությունը, իսկ նահանջ տարիները մեկ օրով շուտ (մարտի 8, ապրիլի 7 և այլն): Այս կրկնակի համապատասխանությունը խախտում է հայոց ամսամուտերի և հուլյան ամսաթվերի անշարժությունը, իսկ մյուս կողմից՝ խախտում է Հովհաննեսի կողմից բազմաթիվ բարդ հաշվումներով հաս-

⁴¹ Նույն տեղում, էջ 234:

⁴² Բ. Քումպեյան, Տոմարի պատմություն, էջ 117—118, 2. Բաղայան, նշված աշխ., էջ 92:

տատված՝ գիշերահավասարի օրվա կայունությունը (արեգի 12=մարտի 20): Բանն այն է, որ երեք հասարակ տարիներին արեգի 1-ն ընկնում է մարտի 9-ին, իսկ 4-րդում՝ նահանջ տարում, փետրվարին ավելացած մեկ օրվա պատճառով արեգի 1-ն ընկնում է 8-ին: Համապատասխանորեն 3 հասարակ տարիներում գիշերահավասարը լինում է արեգի 12=մարտի 20-ին, իսկ 4-րդ տարում՝ արեգի 11=մարտի 19-ին: Ինքնին հարց է ծագում. ինչի՞ համար էին այդքան հաշվումներն ու ամսաթվերի համապատասխանեցումները, եթե վերջիվերջո նորաստեղծ անշարժ տոմարի վեց ամսամուտերը և, մանավանդ, գիշերահավասարի օրը շոբս տարվա ընթացքում մեկ օրով առաջ ու ետ պետք է շարժվեին: Բայց այդ շարժումն անխուսափելի է դարձել, որովհետև մեր բոլոր տոմարագետներն անխտիր ընդունել են, որ Հովհաննեսն իր տոմարի մեջ նահանջ տարվա մեկ հավելյալ օրը զետեղել է ավելաց օրերի վերջում. ըստ այսմ, նահանջ տարում հավելյացն սկսվելով օգոստոսի 6-ով՝ ունենում է 6 օր (օգոստոսի 6-ից 10-ը ներառյալ՝ 5 օր+1 հավելյալ օր (հայկական նահանջ տարվա 366-րդ օրը)=6 օր, որից հետո՝ օգոստոսի 11=նավասարդի 1: Ճիշտ չէ այս հաշվարկը, որովհետև հուլյան տոմարի օգոստոսի 10-ի և 11-ի միջև ավելանում է 1 օր, որը հաշվի չի առնվում հուլյան ամսաթվերի մեջ: Տրամաբանական կլիներ և օրերի հաշիվն էլ ճիշտ կլիներ, եթե նահանջ տարվա նավասարդի օրն էլ տեղափոխվեր օգոստոսի 12-ին և այդպես շարունակվեր մինչև մեհեկանի վերջը և արեգի 1-ը (հաջորդ տարվա մարտի 9-ը): Մի կողմ թողնելով «տրամաբանականը» և «ոչ տրամաբանականը», ասենք, որ մենք չկարողացանք պարզել, թե ինչ փաստի վրա հենվելով են մեր տոմարագետները հանգել այն պնդումին, որ նահանջի 1-ը հավելյացի վերջում է դրվել: Մենք ուշադրությամբ կարդացինք Հովհաննեսի «Մատենագրություն» մեջ զետեղված բոլոր աշխատանքները՝ գտնելու համար թեկուզ մի ակնաբակ, որը ցույց տար, թե նահանջի 1 օրը հավելյացին է ավելացրել, բայց չգտանք: Ուստի և ստիպված ենք ուրիշ որևէ եղանակով ստուգել, թե նահանջի մեկ հավելյալ օրը տարվա ո՞ր ամսվա վրա է ավելացրել: Դրա համար ունենք հետևյալ երկու միջոցները:

1. Եթե նահանջի 1 օրն ավելացրած լիներ հավելյաց 5 օրերի վրա, ապա, ինչպես տեսանք, նահանջ տարում արեգի 1-ը պետք է լիներ մարտի 8-ին, հետևաբար և արեգի 12-ը՝ մարտի 19-ին: Այս դեպքում իր ՇԼԲ աղյուսակում գիշերահավասարի օրը շոբս տարին մեկ անգամ պետք է նշված լիներ մարտի 19: Բայց աղյուսակում այդպիսի բան չկա. բոլոր 532 տարիների համար նշված է մարտի 20, անկախ այն բանից՝ տարին նահանջ է, թե հասարակ: Կարելի է թերևս մտածել, թե նահանջ տարիներին գիշերահավասարի օրվան՝ մարտի 20-ին համապատասխանեցրել է արեգի 13-ը: Բայց դա բացառում ենք հետևյալ եր-

կու պատճառներով. ա) Հովհաննեսը, որ այդքան մանրամասն կերպով բացատրում է, թե ինչու և ինչպես է շոբս տարիների ընթացքում մեկ օր «ծածուկ մուտք գործում» տարիների օրերի մեջ և 1460 տարիների ընթացքում այդ մեկական օրերը կուտակվելով դառնում են մեկ տարի, որը պետք է դուրս նետել, այն Հովհաննեսը, վերջապես, որը բացատրում է, թե ինչու իր Փոքր թվականից Մեծ թվականն ստանալու համար պետք է ավելացնել 533 տարի և ոչ թե 532, չէր կարող հատկապես շեշտել, է ավելացնել 533 տարում այդ մեկ օրվա տարբերության պատճառով խախտող նահանջ տարում այդ մեկ օրվա տարբերության պատճառով խախտվում է մարտի 20=արեգի 12 համապատասխանությունը՝ փոխարինվելով մարտի 20=արեգի 13-ով: բ) Ինչպես տեսանք, Հովհաննեսի մարտի 20=արեգի 12 համապատասխանության 4-րդ օր=մարտի բոլոր հաշվումները հանգում են արարչության 4-րդ օր=մարտի 20=արեգի 12 հավասարության. այդքան շարշարվել արարչության օրերը որոշելու, դրանք դուրս դրել հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերին և հետո արեգի 13-ը դարձնել գիշերահավասարի օր, առնվազն սրբապղծություն կլիներ իր համար:

Ասվածները թույլ չեն տալիս ընդունելու, թե Հովհաննեսն իր տոմարի մեջ 4 տարին մեկ անգամ մարտի 20-ը համապատասխանեցրել է արեգի 13-ին, կամ էլ արեգի 12-ին՝ մարտի 19-ը, որ կնշանակեր հայոց եկեղեցու ընդունած գիշերահավասարի օրվա փոփոխականություն:

2. Քանի որ իր աշխատությունների մեջ Հովհաննեսը չի ասում, թե նահանջ տարվա մեկ հավելյալ օրը որտեղ է զետեղել, իսկ հինգհարյուրամյա աղյուսակն էլ բացառում է ավելյացի վրա ավելացրած լինելու վարկածը, ապա միակ հավաստի միջոցը «Խառնախորանում» տրված 15 ժողովուրդների ամիսների ու ամսաթվերի համապատասխանության ուսումնասիրությունն է: Խառնախորանը տախտակ է, որի ձախ էջի 19 սյունակներում տրվում են հոտմեական վերադիրները, լուսնի կիսակնեքը, յոթներյակները (հոտմեական), շաբաթագիրը, ապա՝ հոտմեական (հոտմեքը, յոթներյակները (հոտմեական), եգիպտացոց և իւրոց, ամիսի հայոց, ամիսի պարսից, այնուհետև՝ շաբաթվա օրերի տանուտերերը և այլն: Մեզ համար կարևորն են ընդգծված անվանումներով սյունակները, որոնց մեջ տրվում են ամսաթվերը 1-ից մինչև վերջ: Աջ էջում տրված են հիշված ժողովուրդների ամիսները, դրանց հերթակարգով, ամսանորը և այլն: Առաջինը, բնականաբար, հոտմեականն է և «իւրոց»-ը (հոտմեական, ասո-րական), 2-րդը՝ պարսից, 3-րդը՝ հայոց, 4-րդը՝ «եբրայեցոց և իւրոց», 5-րդը՝ եգիպտացոց և իւրոց: Հասկանալի է, որ մեզ համար կարևորը

* Այս «իւրոց»-ները նշանակում են տվյալ օրացուցային համակարգին հետևողները. եգիպտացոց և իւրոց-ի մեջ մտնում են եգիպտացիները, եթովպացիները, ամենացիները, բյութանացիները, կապադովկացիները, վրացիները, աղվանները:

Հայոց և հոռոմեական ամիսների ու ամսաթվերի զուգահերոթյունն է, որը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Արաց	1 = հունվարի 8	Նավասարդի	1 = օգոստոսի 11
Մեհեկանի	1 = փետրվարի 7	Հոռիի	1 = սեպտեմբերի 10
Արեգի	1 = մարտի 9	Սահմիի	1 = հոկտեմբերի 10
Ահեկանի	1 = ապրիլի 8	Տրեի	1 = նոյեմբերի 9
Մարերի	1 = մայիսի 8	Քաղոց	1 = դեկտեմբերի 9
Մարգաց	1 = հունիս 7	(տարին վերջանում է հունվարի 7 =	
Հրոտից	1 = հուլիսի 7	քաղոց 30-ով, հունվարի 1-ը՝ քա-	
Ավելյաց	1 = օգոստոսի 6	ղոց 24):	

Սրանք Հովհաննեսի կազմած տախտակի տվյալներն են, ըստ որում օգոստոս ամսվա էջում գրված է. «Հայոց Նաւասարդ, ամիս առաջին և տարեմուտ Մարկաւագին»: Ինչպես կարելի է տեսնել, տախտակը ոչ «կամ»-ով երկրորդ ամսաթիվ ունի, ոչ էլ ծանոթագրություն այն մասին, որ նահանջ տարիներին արեգից-հավելյաց ամսամուտերը մեկ օրով առաջ են ընկնում: Դրա փոխարեն, սակայն, կա մի շատ կարևոր բան, որ մեր տոմարագետները շին նկատել. դա հենց մեր բրոնածն է՝ նահանջի մեկ հավելյալ օրվա տեղը: Մատենադարանի № 2068 ձեռագրում⁴³ բովանդակվող «Խառնախորանի» մարտ ամսվա էջում (ձեռագրի 263 ա էջ) գրված են. «պարսիկը զար նահանջին աստ գնեն», «հայք զաւելորդ նահանջին աստ գնեն», որ նշանակում է, թե նահանջ տարվա հավելյալ օրը պարսիկները և հայերը ավելացնում են մարտ ամսվա մեջ: Ավելի ստույգ՝ պարսիկները հավելյալ օրը գրել են մեհրան (7-րդ) ամսվա 30-ի և արանի (8-րդի) 1-ի միջև, իսկ հայերը՝ մեհեկանի 30-ի և արեգի 1-ի միջև: Քանի որ արեգի 1-ը կայուն կերպով համապատասխանում է մարտի 9-ին, ապա հավելյալ օրը ավելացել է մեհեկանի 30-ին, որով նահանջ տարում ունեցել է 31 օր: Ըստ այսմ, մեհեկանը, որի 1-ը անփոփոխ կերպով համընկել է փետրվարի 7-ին, իսկ 30-ը՝ մարտի 8-ին, նահանջ տարիներին իր մեջ է առել փետրվարի 29-ը (= մեհեկանի 23) և ավարտվել դարձյալ մարտի 8-ին (= մեհեկանի 31): Սրանով էլ, ահա, Հովհաննեսն ապահովել է իր տոմարի ամսամուտերի կայուն համապատասխանութունը հուլյան ամսաթվերին և, որ գլխավորն է, արեգի 12-ի և գիրչերահավասարի կայուն օրվա՝ մարտի 20-ի զուգակցութունը: Այսպիսով, վերը բերված տախտակը վերակառուցելով՝ կստանանք հայոց Փոքր Բվականի ամսամուտերի և հուլյան ամիս-ամսաթվերի համապատասխանությունների հետևյալ պատկերը:

Նավասարդի	1—օգոստոսի 11	Արեգի	1—մարտի 9
Հոռի	1—սեպտեմբերի 10	Ահեկանի	1—ապրիլի 8
Սահմի	1—հոկտեմբերի 10	Մարերի	1—մայիսի 8
Տրեի	1—նոյեմբերի 9	Մարգաց	1—հունիսի 7
Քաղոց	1—դեկտեմբերի 9	Հրոտից	1—հուլիսի 7
Արաց	1—հունվարի 8	Ավելյաց	1—օգոստոսի 6
Մեհեկանի	1—փետրվարի 7		

Տասներկու ամիսներն ունեն 30-ական օր, ավելյացը՝ 5 օր, հասարակ տարին 365 օր, նահանջը՝ 366 օր. մեկ հավելյալ օրը դրվում է Մեհեկանի վերջում, որով նահանջ տարվա այդ ամիսն ունենում է 31 օր: Վերը մենք արդեն ասացինք, որ Հովհաննեսի տոնացույցն սկսվում է 1085 թվականի զատիկով, իսկ դա նշանակում է, թե նրա անշարժ տոմարը (Մարկավագադիր կամ Փոքր տոմարը) սկսվում է 1084 թ. օգոստոսի 11-ով և առաջին տարվա զատիկն ընկնում է հեկեկանի 13-ին, որ է՝ 1085-ի ապրիլի 20-ը: Սրա համաձայն էլ՝ Փոքր թվականից մ. թ. տարեթիվն ստանալու համար պետք է տրված թվականին գումարել 1083 տարի, եթե դեպքն ընկած է Նավասարդի 1-ի և արաց 23-ի (օգոստոսի 11-ի և դեկտեմբերի 31-ի) միջև կամ 1084 տարի, եթե դեպքը տեղի է ունեցել արաց 24-ի և ավելյաց 5-ի (= հունվարի 1-ի և օգոստոսի 10-ի միջև)⁴⁴: Օրինակ. Գ. Հովսեփյանի «Հիշատակարանք ձեռագրացում» Եղիշեի պատմության կոշավանքի ընդօրինակության մասին գրված է. «Ի Հայկազեան թուականին վեցհարիւրերորդի և երկուց տասանց՝ ված է. «Ի Հայկազեան թուականին վեցհարիւրերորդի և երկուց տասանց՝ եղակաւ միով առաւելաւ. և ըստ նորում շրջանիս միոյ յբեկենի և երկց տասանց և քառից երկուց, և ըստ ծննդեան կենարարին և մերոյ ազատութեան ի մահոտանէ անմահութին... ՌՃԶԳ (1174)⁴⁵: Մեծ թվականի 621 + 551/2 = 1172/3, Փոքր թվականի 50 + 30 + 8 = 88 + 1083/4 = 1171/2, Քրիստոսի ծննդից 1174—2 (քանի որ նշվել է հայոց քրիստոնեական թվականով) = 1172 թվականին: Փոքր թվականին՝ 88, գումարելով 533, ստանում ենք Մեծի 621 թվականը, ինչպես նշված է: Հակադարձ զուգակցության համար տրված հոռոմեական թվականից պետք է հանել 1083 կամ 1084 տարի: Օրինակ՝ 1113-ի սեպտեմբերի 1 = Փոքր թվ. 30-րդ տարվա Նավասարդի 22. 1114-ի մարտի 20 = Փոքր թվ. 30-րդ տարվա արեգի 12:

Հայոց Փոքր թվականից Մեծ թվականի տարեթիվն ստանալու հա-

⁴³ Տպագիրը՝ Հովն., էջ 165:

⁴⁴ Հմմտ. Բ. Փավսեյան, Օրացույցի պատմություն, էջ 119, Ա. Գ. Աբրահամյան, Հայոց գիր և գրություն, էջ 114: Հ. Բաղալյանն իր «Օրացույցի պատմությունում» գրում է, թե պետք է գումարել կամ հանել 1084 կամ 1085 (էջ 93), որ սխալ է:
⁴⁵ Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 411:

մար տրված թվականին պետք է գումարել 533, իսկ Մեծ թվականից Փոքրն ստանալու համար՝ հանել 533: Օրինակ՝ Փոքր թվականի 312 թ. = $312 + 533 = 845$ (= մ. թ. 1396/7 թ.), կամ Մեծ թվականի 700 թ. = $700 - 533 =$ Փոքրի 167 թ.:

Հովհաննես Իմաստասերի տոմար-տոնացույցն ընդհանուր գործածություն չի ստացել, հավանաբար այն պատճառով, որ եկեղեցական ժողովով չի հաստատվել: Այդ տոմարն ստեղծվելուց հետո էլ մեծ մասամբ շարունակել են տարեթվերը հաշվել հայոց Մեծ թվականով, հաճախ էլ՝ երկուսով միաժամանակ, ինչպես տեսանք բերված օրինակում:

* * *

Մ. թ. XII դարում կազմվում է Ստեփաննոսի նույնպես անշարժ տոմարը, որի սկիզբն է 1084 թ. մարտի 1 = նավասարդի 1-ը, իսկ XVII դարում՝ Աղարիա Ջուղայեցու («ջուղայեցիների»), 1707-ին՝ վարդան Կարբեցու, 1759-ին՝ Սիմեոն Երևանցու անշարժ տոմարները, բոլորի ըսկիզբն էլ՝ 1616 թվականը, այսինքն Հովհաննեսի տոնացույցի ավարտման տարին ($1084 + 532 = 1616$): Այդ տոմարների մասին տե՛ս Բ. Թումանյանի «Տոմարի պատմություն» և Հ. Բաղալյանի «Օրացույցի պատմություն» աշխատություններում:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ՀԱՅՈՑ ԲՈՒՆ ԹՎԱԿԱՆԻ ԱՄՍԱՄՈՒՏԵՐԻ
ԵՎ

ՀՈՒՆՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԱՄՍԱԹՎԵՐԻ
ՁՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ — 457 ԹՎԱԿԱՆԻՑ
ՄԻՆՁԵՎ + 2464 ԹՎԱԿԱՆԸ՝ ՀԻՆ ՏՈՄԱՐՈՎ

Մ Ա Ն Ո Ք Ո Ւ Ի Ք Յ Ո Ւ Ն

1. Հուլյան դարաշրջանը պատմական ժամանակագրության համար օգտագործվող հուլյան օրացուցային համակարգն է, որի սկիզբն է համարվում մեր թվականության 1-ին («Քրիստոսի ծննդյան») տարվա հունվարի 1-ը: Աստղագիտության և տոմարագիտության մեջ ընդունված է այդ թվականին նախորդող տարիները հաշվել հակադարձ ուղղությամբ՝ նշանով, օրինակ՝ -1 թվական, -457 թվական, -1560 թվական և այլն:

Աստղագիտության մեջ +1-ին նախորդող թվականը համարվում է 0, որից հետո միայն սկսվում է -1, -2 և այլն: Ըստ այսմ, աստղագիտական թվահաշվով -1 թվականը +1-ին նախորդած 2-րդ տարին է, -2-ը՝ 3-րդ տարին և այլն: Մեր կազմած աղյուսակներում մենք աստղագիտական թվահաշվով չենք առաջնորդվել, որովհետև Բուն թվականը՝ սկսվելով -457-ից, անընդհատորեն շարունակվել է, այլ կերպ ասած՝ -1 և +1 թվականների միջև միամյա դադար կամ բացթողում չի եղել, այլ -1-ի անմիջական շարունակությունն է եղել +1-ը:

2. Տախտակում հուլյան թվականների և ամսաթվերի համապատասխանությունները սկզբից մինչև վերջ տրված են նին տոմարով: Հայոց ամսամուտերի և նու տոմարի ամսաթվերի համապատասխանությունը գտնելու համար տախտակում տրված ամսաթվին պետք է ավելացնել՝

- 1582 թ. դեկտեմբերի 5-ից մինչև 1700 թ. փետրվարի 29-ը՝ 10 օր
- 1700 թ. մարտի 1-ից մինչև 1800 թ. փետրվարի 29-ը՝ 11 օր
- 1800 թ. մարտի 1-ից մինչև 1900 թ. փետրվարի 29-ը՝ 12 օր
- 1900 թ. մարտի 1-ից մինչև 2100 թ. փետրվարի 29-ը՝ 13 օր

մյուսիսի նամակ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1	457	457	3. 20	4. 19	5. 19	6. 18	7. 18	8. 17	9. 16	10. 16	11. 15	12. 15	1. 15	2. 14	3. 15	456
2	456	456	3. 20	4. 19	5. 19	6. 18	7. 18	8. 17	9. 16	10. 16	11. 15	12. 15	1. 14	2. 13	3. 15	455
3	455	455	3. 20	4. 19	5. 18	6. 17	7. 17	8. 16	9. 15	10. 15	11. 14	12. 14	1. 14	2. 13	3. 14	454
4	454	454	3. 19	4. 18	5. 18	6. 17	7. 17	8. 16	9. 15	10. 15	11. 14	12. 14	1. 13	2. 12	3. 14	453
5	453	453	3. 19	4. 18	5. 18	6. 17	7. 17	8. 16	9. 15	10. 15	11. 14	12. 14	1. 13	2. 12	3. 14	452
6	452	452	3. 19	4. 18	5. 18	6. 17	7. 17	8. 16	9. 15	10. 15	11. 14	12. 14	1. 13	2. 12	3. 14	451
7	451	451	3. 19	4. 18	5. 18	6. 17	7. 17	8. 16	9. 15	10. 15	11. 14	12. 14	1. 13	2. 12	3. 14	450
8	450	450	3. 19	4. 18	5. 17	6. 16	7. 16	8. 15	9. 14	10. 14	11. 13	12. 13	1. 12	2. 11	3. 13	449
9	449	449	3. 18	4. 17	5. 17	6. 16	7. 16	8. 15	9. 14	10. 14	11. 13	12. 13	1. 12	2. 11	3. 13	448
10	448	448	3. 18	4. 17	5. 17	6. 16	7. 16	8. 15	9. 14	10. 14	11. 13	12. 13	1. 12	2. 11	3. 13	447
11	447	447	3. 18	4. 17	5. 17	6. 16	7. 16	8. 15	9. 14	10. 14	11. 13	12. 13	1. 12	2. 11	3. 13	446
12	446	446	3. 18	4. 17	5. 17	6. 16	7. 16	8. 15	9. 14	10. 14	11. 13	12. 13	1. 12	2. 11	3. 13	445
13	445	445	3. 17	4. 16	5. 16	6. 15	7. 15	8. 14	9. 13	10. 13	11. 12	12. 12	1. 11	2. 10	3. 12	444
14	444	444	3. 17	4. 16	5. 16	6. 15	7. 15	8. 14	9. 13	10. 13	11. 12	12. 12	1. 11	2. 10	3. 12	443
15	443	443	3. 17	4. 16	5. 16	6. 15	7. 15	8. 14	9. 13	10. 13	11. 12	12. 12	1. 11	2. 10	3. 12	442
16	442	442	3. 17	4. 16	5. 16	6. 15	7. 15	8. 14	9. 13	10. 13	11. 12	12. 12	1. 11	2. 10	3. 11	441
17	441	441	3. 16	4. 15	5. 15	6. 14	7. 14	8. 13	9. 12	10. 12	11. 11	12. 11	1. 10	2. 9	3. 11	440
18	440	440	3. 16	4. 15	5. 15	6. 14	7. 14	8. 13	9. 12	10. 12	11. 11	12. 11	1. 10	2. 9	3. 11	439
19	439	439	3. 16	4. 15	5. 15	6. 14	7. 14	8. 13	9. 12	10. 12	11. 11	12. 11	1. 10	2. 9	3. 11	438
20	438	438	3. 16	4. 15	5. 15	6. 14	7. 14	8. 13	9. 12	10. 12	11. 11	12. 11	1. 10	2. 9	3. 10	437
21	437	437	3. 16	4. 15	5. 15	6. 14	7. 14	8. 13	9. 12	10. 12	11. 11	12. 11	1. 9	2. 8	3. 10	436
22	436	436	3. 15	4. 14	5. 14	6. 13	7. 13	8. 12	9. 11	10. 11	11. 10	12. 10	1. 9	2. 8	3. 10	435
23	435	435	3. 15	4. 14	5. 14	6. 13	7. 13	8. 12	9. 11	10. 11	11. 10	12. 10	1. 9	2. 8	3. 10	434
24	434	434	3. 15	4. 14	5. 14	6. 13	7. 13	8. 12	9. 11	10. 11	11. 10	12. 10	1. 9	2. 8	3. 9	433
25	433	433	3. 15	4. 14	5. 14	6. 13	7. 13	8. 12	9. 11	10. 11	11. 9	12. 9	1. 8	2. 7	3. 9	432
26	432	432	3. 14	4. 13	5. 13	6. 12	7. 12	8. 11	9. 10	10. 10	11. 9	12. 9	1. 8	2. 7	3. 9	431
27	431	431	3. 14	4. 13	5. 13	6. 12	7. 12	8. 11	9. 10	10. 10	11. 9	12. 9	1. 8	2. 7	3. 8	430
28	430	430	3. 14	4. 13	5. 13	6. 12	7. 12	8. 11	9. 10	10. 10	11. 9	12. 9	1. 8	2. 7	3. 8	429
29	429	429	3. 13	4. 12	5. 12	6. 11	7. 11	8. 10	9. 9	10. 9	11. 8	12. 8	1. 7	2. 6	3. 8	428
30	428	428	3. 13	4. 12	5. 12	6. 11	7. 11	8. 10	9. 9	10. 9	11. 8	12. 8	1. 7	2. 6	3. 8	427
31	427	427	3. 13	4. 12	5. 12	6. 11	7. 11	8. 10	9. 9	10. 9	11. 8	12. 8	1. 7	2. 6	3. 8	426

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
172	286	2	6	4	7	6	6	5	9	4	10	4	10	4	285
173	285	2	6	4	6	6	5	7	8	3	11	3	11	2	284
174	284	2	5	4	6	6	5	7	8	3	11	2	12	2	283
175	283	2	5	4	6	6	5	7	8	3	11	2	12	2	282
176	282	2	5	4	6	6	5	7	8	3	11	2	12	2	281
177	281	2	5	4	6	6	5	7	8	3	11	2	12	2	280
178	280	2	4	3	6	4	4	7	8	3	10	2	12	3	279
179	279	2	4	3	6	4	4	7	8	3	10	2	12	3	278
180	278	2	4	3	6	4	4	7	8	3	10	2	12	3	277
181	277	2	4	3	6	4	4	7	8	3	10	2	12	3	276
182	276	2	3	3	5	4	4	6	7	3	9	2	11	1	275
183	275	2	3	3	5	4	4	6	7	3	9	2	11	1	274
184	274	2	3	3	5	4	4	6	7	3	9	2	11	1	273
185	273	2	3	3	5	4	4	6	7	3	9	2	11	1	272
186	272	2	3	3	5	4	4	6	7	3	9	2	11	1	271
187	271	2	2	3	4	3	3	5	6	2	8	1	10	1	270
188	270	2	2	3	4	3	3	5	6	2	8	1	10	1	269
189	269	2	2	3	4	3	3	5	6	2	8	1	10	1	268
190	268	2	1	3	3	4	2	5	2	6	1	7	1	7	267
191	267	2	1	3	3	4	2	5	2	6	1	7	1	7	266
192	266	2	1	3	3	4	2	5	2	6	1	7	1	7	265
193	265	2	1	3	3	4	2	5	2	6	1	7	1	7	264
194	264	1	3	1	3	1	5	1	5	3	6	3	7	2	263
195	263	1	3	1	3	1	5	1	5	3	6	3	7	2	262
196	262	1	3	1	3	1	5	1	5	3	6	3	7	2	261
197	261	1	3	1	3	1	5	1	5	3	6	3	7	2	260
198	260	1	3	1	3	1	3	3	4	3	4	3	4	3	259
199	259	1	3	1	3	1	3	3	4	3	4	3	4	3	258
200	258	1	3	1	3	1	3	3	4	3	4	3	4	3	257
201	257	1	3	1	3	1	3	3	4	3	4	3	4	3	256
202	256	1	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	255
203	255	1	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	254
204	254	1	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	253
205	253	1	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	252
206	252	1	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	251

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
207	251	1	28	3	29	4	28	5	28	6	27	7	27	8	26
208	250	1	28	3	29	4	28	5	28	6	27	7	27	8	26
209	249	1	28	3	28	4	27	5	27	6	26	7	26	8	25
210	248	1	27	2	26	3	26	4	26	5	25	6	25	7	24
211	247	1	27	2	26	3	26	4	26	5	25	6	25	7	24
212	246	1	27	2	26	3	26	4	26	5	25	6	25	7	24
213	245	1	27	2	26	3	26	4	26	5	25	6	25	7	24
214	244	1	26	2	25	3	25	4	25	5	24	6	24	7	23
215	243	1	26	2	25	3	25	4	25	5	24	6	24	7	23
216	242	1	26	2	25	3	26	4	25	5	24	6	24	7	23
217	241	1	26	2	25	3	26	4	25	5	24	6	24	7	23
218	240	1	25	2	24	3	26	4	25	5	24	6	24	7	23
219	239	1	25	2	24	3	26	4	25	5	24	6	24	7	23
220	238	1	25	2	24	3	26	4	25	5	24	6	24	7	23
221	237	1	25	2	24	3	26	4	25	5	24	6	24	7	23
222	236	1	24	2	23	3	25	4	24	5	24	6	23	7	22
223	235	1	24	2	23	3	25	4	24	5	24	6	23	7	22
224	234	1	24	2	23	3	25	4	24	5	24	6	23	7	22
225	233	1	24	2	23	3	25	4	24	5	24	6	23	7	22
226	232	1	24	2	23	3	25	4	24	5	24	6	23	7	22
227	231	1	23	2	22	3	24	4	23	5	23	6	22	7	21
228	230	1	23	2	22	3	24	4	23	5	23	6	22	7	21
229	229	1	23	2	22	3	24	4	23	5	23	6	22	7	21
230	228	1	23	2	22	3	24	4	23	5	23	6	22	7	21
231	227	1	22	2	21	3	23	4	22	5	22	6	21	7	20
232	226	1	22	2	21	3	23	4	22	5	22	6	21	7	20
233	225	1	22	2	21	3	23	4	22	5	22	6	21	7	20
234	224	1	22	2	21	3	23	4	22	5	22	6	21	7	20
235	223	1	22	2	21	3	23	4	22	5	22	6	21	7	20
236	222	1	21	2	20	3	22	4	21	5	21	6	20	7	19
237	221	1	21	2	20	3	22	4	21	5	21	6	20	7	19
238	220	1	21	2	20	3	21	4	20	5	20	6	19	7	18
239	219	1	20	2	19	3	21	4	20	5	20	6	19	7	18
240	218	1	20	2	19	3	21	4	20	5	20	6	19	7	18

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
309	149	1	3	2	2	2	2	3	4	3	2	1	1	3	1
310	148	1	2	2	2	2	3	3	4	4	2	2	2	2	2
311	147	1	2	2	2	3	3	3	4	4	2	2	2	2	2
312	146	1	2	2	2	3	3	3	4	4	2	2	2	2	2
313	145	1	2	2	2	3	3	3	4	4	2	2	2	2	2
314	144	1	1	2	3	2	2	3	4	4	2	2	2	2	2
315	143	1	1	1	3	1	2	3	3	3	2	2	2	2	2
316	142	1	1	1	3	1	2	3	3	3	2	2	2	2	2
317	141	1	1	1	3	1	2	3	3	3	2	2	2	2	2
318	141	12	3	1	3	1	2	3	3	3	2	2	2	2	2
319	140	12	3	1	3	1	2	3	3	3	2	2	2	2	2
320	139	12	3	1	3	1	2	3	3	3	2	2	2	2	2
321	138	12	3	1	3	1	2	3	3	3	2	2	2	2	2
322	137	12	3	1	3	1	2	3	3	3	2	2	2	2	2
323	136	12	3	1	3	1	2	3	3	3	2	2	2	2	2
324	135	12	3	1	3	1	2	3	3	3	2	2	2	2	2
325	134	12	3	1	3	1	2	3	3	3	2	2	2	2	2
326	133	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
327	132	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
328	131	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
329	130	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
330	129	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
331	128	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
332	127	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
333	126	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
334	125	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
335	124	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
336	123	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
337	122	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
338	121	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
339	120	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
340	119	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
341	118	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2
342	117	12	2	3	3	2	2	3	3	3	2	2	2	2	2

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
343	116	12	25	2	23	4	24	5	24	7	23	10	21	20	115
344	115	12	25	2	23	4	24	5	24	7	23	10	21	20	114
345	114	12	25	1	23	4	23	5	23	6	22	7	22	11	113
346	113	12	24	1	23	4	23	5	23	6	22	7	22	11	112
347	112	12	24	1	23	4	23	5	23	6	22	7	22	11	111
348	111	12	24	1	23	4	23	5	23	6	22	7	22	11	110
349	110	12	24	1	23	4	22	5	22	6	21	7	21	11	109
350	109	12	23	1	22	4	22	5	22	6	21	7	21	11	108
351	108	12	23	1	22	4	22	5	22	6	21	7	21	11	107
352	107	12	23	1	22	4	22	5	22	6	21	7	21	11	106
353	106	12	23	1	22	4	22	5	22	6	21	7	21	11	105
354	105	12	22	1	21	4	21	5	21	6	20	7	20	11	104
355	104	12	22	1	21	4	21	5	21	6	20	7	20	11	103
356	103	12	22	1	21	4	21	5	21	6	20	7	20	11	102
357	102	12	22	1	21	4	20	5	20	6	19	7	19	11	101
358	101	12	21	1	20	4	20	5	20	6	19	7	19	11	100
359	99	12	21	1	20	4	20	5	20	6	19	7	19	11	98
360	98	12	21	1	20	4	19	5	19	6	18	7	18	11	97
361	97	12	20	1	19	4	19	5	19	6	18	7	18	11	96
362	96	12	20	1	19	4	19	5	19	6	18	7	18	11	95
363	95	12	20	1	19	4	19	5	19	6	18	7	18	11	94
364	94	12	20	1	19	4	18	5	18	6	17	7	17	11	93
365	93	12	19	1	18	4	18	5	18	6	17	7	17	11	92
366	92	12	19	1	18	4	18	5	18	6	17	7	17	11	91
367	91	12	19	1	18	4	18	5	18	6	17	7	17	11	90
368	90	12	19	1	18	4	18	5	18	6	17	7	17	11	89
369	89	12	18	1	17	4	17	5	17	6	16	7	16	11	88
370	88	12	18	1	17	4	17	5	17	6	16	7	16	11	87
371	87	12	18	1	17	4	17	5	17	6	16	7	16	11	86
372	86	12	18	1	17	4	16	5	16	6	15	7	15	11	85
373	85	12	17	1	16	4	16	5	16	6	15	7	15	11	84
374	84	12	17	1	16	4	16	5	16	6	15	7	15	11	83
375	83	12	17	1	16	4	16	5	16	6	15	7	15	11	82
376	82	12	17	1	16	4	16	5	16	6	15	7	15	11	81

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
377	82	12	17	1	16	4	15	5	15	6	14	7	14	8	13
378	81	12	16	1	15	4	15	5	15	6	14	7	14	8	13
379	80	12	16	1	15	4	15	5	15	6	14	7	14	8	13
380	79	12	16	1	15	4	15	5	15	6	14	7	14	8	13
381	78	12	16	1	15	4	15	5	15	6	14	7	14	8	13
382	77	12	15	1	14	4	14	5	14	6	13	7	13	8	12
383	76	12	15	1	14	4	14	5	14	6	13	7	13	8	12
384	75	12	15	1	14	4	14	5	14	6	13	7	13	8	12
385	74	12	15	1	14	4	14	5	14	6	13	7	13	8	12
386	73	12	14	1	13	4	13	5	13	6	12	7	12	8	11
387	72	12	14	1	13	4	13	5	13	6	12	7	12	8	11
388	71	12	14	1	13	4	13	5	13	6	12	7	12	8	11
389	70	12	14	1	13	4	12	5	12	6	11	7	11	8	10
390	69	12	13	1	12	4	12	5	12	6	11	7	11	8	10
391	68	12	13	1	12	4	12	5	12	6	11	7	11	8	10
392	67	12	13	1	12	4	12	5	12	6	11	7	11	8	10
393	66	12	13	1	12	4	11	5	11	6	10	7	10	8	9
394	65	12	12	1	11	4	11	5	11	6	10	7	10	8	9
395	64	12	12	1	11	4	11	5	11	6	10	7	10	8	9
396	63	12	12	1	11	4	11	5	11	6	10	7	10	8	9
397	62	12	12	1	11	4	10	5	10	6	9	7	9	8	8
398	61	12	11	1	10	4	10	5	10	6	9	7	9	8	8
399	60	12	11	1	10	4	10	5	10	6	9	7	9	8	8
400	59	12	11	1	10	4	10	5	10	6	9	7	9	8	8
401	58	12	11	1	10	4	9	5	9	6	8	7	8	7	8
402	57	12	10	1	9	4	9	5	9	6	8	7	8	7	8
403	56	12	10	1	9	4	9	5	9	6	8	7	8	7	8
404	55	12	10	1	9	4	9	5	9	6	8	7	8	7	8
405	54	12	10	1	9	4	8	5	8	6	7	7	8	6	7
406	53	12	9	1	8	4	8	5	8	6	7	7	8	6	7
407	52	12	9	1	8	4	8	5	8	6	7	7	8	6	7
408	51	12	9	1	8	4	7	5	7	6	6	7	8	6	7
409	50	12	9	1	8	4	7	5	7	6	6	7	8	6	7
410	49	12	8	1	7	4	7	5	7	6	6	7	8	6	7

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
411	48	12	8	1	7	4	7	5	7	6	6	7	8	6	7
412	47	12	8	1	7	4	6	5	7	6	6	7	8	6	7
413	46	12	7	1	6	4	6	5	6	5	6	6	7	6	7
414	45	12	7	1	6	4	6	5	6	5	6	6	7	6	7
415	44	12	7	1	6	4	6	5	6	5	6	6	7	6	7
416	43	12	7	1	6	4	6	5	6	5	6	6	7	6	7
417	42	12	7	1	6	4	5	5	6	4	7	4	8	3	9
418	41	12	6	1	5	4	5	5	6	4	7	4	8	3	9
419	40	12	6	1	5	4	5	5	6	4	7	4	8	3	9
420	39	12	6	1	5	4	4	5	6	4	7	4	8	3	9
421	38	12	6	1	5	4	4	5	6	4	7	4	8	3	9
422	37	12	5	1	4	3	4	4	5	4	6	3	7	3	8
423	36	12	5	1	4	3	4	4	5	4	6	3	7	3	8
424	35	12	5	1	4	3	4	4	5	4	6	3	7	3	8
425	34	12	5	1	4	3	4	4	5	4	6	3	7	3	8
426	33	12	4	1	3	3	4	3	5	3	6	2	7	2	7
427	32	12	4	1	3	3	4	3	5	3	6	2	7	2	7
428	31	12	4	1	3	3	4	3	5	3	6	2	7	2	7
429	30	12	4	1	3	3	4	2	5	2	6	1	7	1	7
430	29	12	3	1	2	2	4	2	5	2	6	1	7	1	7
431	28	12	3	1	2	2	4	2	5	2	6	1	7	1	7
432	27	12	3	1	2	2	4	2	5	2	6	1	7	1	7
433	26	12	3	1	2	2	4	1	5	1	5	3	6	2	7
434	25	12	2	1	1	1	3	2	4	1	5	3	6	2	7
435	24	12	2	1	1	1	3	2	4	1	5	3	6	2	7
436	23	12	2	1	1	1	3	2	4	1	5	3	6	2	7
437	22	12	2	1	1	1	3	2	4	1	5	3	6	2	7
438	21	12	1	1	1	1	3	1	4	3	4	3	5	4	3
439	20	12	1	1	1	1	3	1	4	3	4	3	5	4	3
440	19	12	1	1	1	1	3	1	4	3	4	3	5	4	3
441	18	12	1	1	1	1	3	1	4	3	4	3	5	4	3
442	17	11	3	1	2	3	4	2	5	2	6	2	7	2	7
443	16	11	3	1	2	3	4	2	5	2	6	2	7	2	7
444	15	11	3	1	2	3	4	2	5	2	6	2	7	2	7

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16																																			
580	122	10	27	11	26	2	24	3	26	4	25	5	25	6	24	7	24	8	23	9	22	10	22	11	23	12	24	13	23	14	22	15	22	16	23															
581	123	10	27	11	26	2	24	3	25	4	24	5	24	6	23	7	23	8	22	9	21	20	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40									
582	124	10	26	11	25	2	23	3	25	4	24	5	24	6	23	7	23	8	22	9	21	20	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40									
583	125	10	26	11	25	2	23	3	25	4	24	5	24	6	23	7	23	8	22	9	21	20	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40									
584	126	10	26	11	25	2	23	3	25	4	24	5	24	6	23	7	23	8	22	9	21	20	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40									
585	127	10	26	11	25	2	23	3	25	4	24	5	24	6	23	7	23	8	22	9	21	20	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40									
586	128	10	25	11	24	2	23	3	24	4	23	5	23	6	22	7	22	8	21	20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10
587	129	10	25	11	24	2	22	3	24	4	23	5	23	6	22	7	22	8	21	20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10
588	130	10	25	11	24	2	22	3	24	4	23	5	23	6	22	7	22	8	21	20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10
589	131	10	25	11	24	2	22	3	23	4	22	5	22	6	21	7	21	20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10		
590	132	10	24	11	23	2	21	3	23	4	22	5	22	6	21	7	21	20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10		
591	133	10	24	11	23	2	21	3	23	4	22	5	22	6	21	7	21	20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10		
592	134	10	24	11	23	2	21	3	23	4	22	5	22	6	21	7	21	20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10		
593	135	10	24	11	23	2	21	3	23	4	22	5	22	6	21	7	21	20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10		
594	136	10	23	11	22	2	20	3	22	4	21	5	21	6	20	7	20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10			
595	137	10	23	11	22	2	20	3	22	4	21	5	21	6	20	7	20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10			
596	138	10	23	11	22	2	20	3	22	4	21	5	21	6	20	7	20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10			
597	139	10	23	11	22	2	20	3	22	4	21	5	21	6	20	7	20	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10			
598	140	10	22	11	21	2	19	3	21	4	20	5	20	6	19	7	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10				
599	141	10	22	11	21	2	19	3	21	4	20	5	20	6	19	7	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10				
600	142	10	22	11	21	2	19	3	21	4	20	5	20	6	19	7	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10				
601	143	10	22	11	21	2	19	3	21	4	20	5	20	6	19	7	19	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10				
602	144	10	21	11	20	2	18	3	20	4	19	5	19	6	18	7	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10					
603	145	10	21	11	20	2	18	3	20	4	19	5	19	6	18	7	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10					
604	146	10	21	11	20	2	18	3	20	4	19	5	19	6	18	7	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10					
605	147	10	21	11	20	2	18	3	20	4	19	5	19	6	18	7	18	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10					
606	148	10	20	11	19	2	17	3	19	4	18	5	18	6	17	7	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10						
607	149	10	20	11	19	2	17	3	19	4	18	5	18	6	17	7	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10						
608	150	10	20	11	19	2	17	3	19	4	18	5	18	6	17	7	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10						
609	151	10	20	11	19	2	17	3	19	4	18	5	18	6	17	7	17	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10						
610	152	10	19	11	18	2	16	3	18	4	17	5	17	6	16	7	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10							
611	153	10	19	11	18	2	16	3	18	4	17	5	17	6	16	7	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10							
612	154	10	19	11	18	2	16	3	18	4	17	5	17	6	16	7	16	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10							
613	155	10	19	11	18	2	16	3	17	4	16	5	16	6	15	7	15	14	13	12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	0	1	2	3	4	5	6	7	8	9	10								

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
648	190	10	10	9	1	8	3	4	5	6	7	8	8	5	191
649	191	10	10	9	1	8	3	4	7	6	7	8	9	10	192
650	192	10	9	12	8	2	3	4	5	6	7	8	9	10	193
651	193	10	9	12	8	2	3	4	7	6	7	8	9	10	194
652	194	10	9	12	8	2	3	4	7	6	7	8	9	10	195
653	195	10	9	12	8	2	3	4	5	6	7	8	9	10	196
654	196	10	8	12	7	2	3	4	6	5	7	8	9	10	197
655	197	10	8	12	7	2	3	4	6	5	7	8	9	10	198
656	198	10	8	12	7	2	3	4	6	5	7	8	9	10	199
657	199	10	8	12	7	2	3	4	6	5	7	8	9	10	200
658	200	10	7	12	6	2	3	4	5	6	7	8	9	10	201
659	201	10	7	12	6	2	3	4	5	6	7	8	9	10	202
660	202	10	7	12	6	2	3	4	5	6	7	8	9	10	203
661	203	10	7	12	6	2	3	4	5	6	7	8	9	10	204
662	204	10	6	12	5	2	3	4	5	6	7	8	9	10	205
663	205	10	6	12	5	2	3	4	5	6	7	8	9	10	206
664	206	10	6	12	5	2	3	4	5	6	7	8	9	10	207
665	207	10	6	12	5	2	3	4	5	6	7	8	9	10	208
666	208	10	5	12	4	2	3	4	5	6	7	8	9	10	209
667	209	10	5	12	4	2	3	4	5	6	7	8	9	10	210
668	210	10	5	12	4	2	3	4	5	6	7	8	9	10	211
669	211	10	5	12	4	2	3	4	5	6	7	8	9	10	212
670	212	10	4	12	3	2	3	4	5	6	7	8	9	10	213
671	213	10	4	12	3	2	3	4	5	6	7	8	9	10	214
672	214	10	4	12	3	2	3	4	5	6	7	8	9	10	215
673	215	10	4	12	3	2	3	4	5	6	7	8	9	10	216
674	216	10	3	12	2	1	3	2	4	5	6	7	8	9	217
675	217	10	3	12	2	1	3	2	4	5	6	7	8	9	218
676	218	10	3	12	2	1	3	2	4	5	6	7	8	9	219
677	219	10	3	12	2	1	3	2	4	5	6	7	8	9	220
678	220	10	2	12	1	1	3	1	4	3	6	7	8	9	221
679	221	10	2	12	1	1	3	1	4	3	6	7	8	9	222
680	222	10	2	12	1	1	3	1	4	3	6	7	8	9	223
681	223	10	2	12	1	1	3	1	4	3	6	7	8	9	224

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
682	224	10	1	10	31	1	2	3	4	29	6	7	8	9	225
683	225	10	1	10	31	1	2	3	4	29	6	7	8	9	226
684	226	10	1	10	31	1	2	3	4	29	6	7	8	9	227
685	227	10	1	10	31	1	2	3	4	29	6	7	8	9	228
686	228	9	30	10	30	1	2	3	29	5	28	7	8	9	229
687	229	9	30	10	30	1	2	3	29	5	28	7	8	9	230
688	230	9	30	10	30	1	2	3	29	5	28	7	8	9	231
689	231	9	30	10	30	1	2	3	28	4	27	7	8	9	232
690	232	9	29	10	29	1	2	3	28	4	27	7	8	9	233
691	233	9	29	10	29	1	2	3	28	4	27	7	8	9	234
692	234	9	29	10	29	1	2	3	28	4	27	7	8	9	235
693	235	9	29	10	29	1	2	3	27	4	26	7	8	9	236
694	236	9	28	10	28	1	2	3	27	4	26	7	8	9	237
695	237	9	28	10	28	1	2	3	27	4	26	7	8	9	238
696	238	9	28	10	28	1	2	3	26	4	25	7	8	9	239
697	239	9	28	10	28	1	2	3	26	4	25	7	8	9	240
698	240	9	27	10	27	1	2	3	26	4	25	7	8	9	241
699	241	9	27	10	27	1	2	3	26	4	25	7	8	9	242
700	242	9	27	10	27	1	2	3	25	4	24	7	8	9	243
701	243	9	27	10	27	1	2	3	25	4	24	7	8	9	244
702	244	9	26	10	26	1	2	3	25	4	24	7	8	9	245
703	245	9	26	10	26	1	2	3	25	4	24	7	8	9	246
704	246	9	26	10	26	1	2	3	25	4	24	7	8	9	247
705	247	9	26	10	26	1	2	3	24	4	23	7	8	9	248
706	248	9	26	10	26	1	2	3	24	4	23	7	8	9	249
707	249	9	25	10	25	1	2	3	24	4	23	7	8	9	250
708	250	9	25	10	25	1	2	3	24	4	23	7	8	9	251
709	251	9	25	10	25	1	2	3	24	4	23	7	8	9	252
710	252	9	24	10	24	1	2	3	23	4	22	7	8	9	253
711	253	9	24	10	24	1	2	3	23	4	22	7	8	9	254
712	254	9	24	10	24	1	2	3	23	4	22	7	8	9	255
713	255	9	24	10	24	1	2	3	22	4	21	7	8	9	256
714	256	9	23	10	23	1	2	3	22	4	21	7	8	9	257
715	257	9	23	10	23	1	2	3	22	4	21	7	8	9	258

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
716	258	9.23	10.23	11.22	12.22	1.21	2.20	3.22	4.21	5.21	6.20	7.20	8.19	9.18	259
717	259	9.22	10.22	11.21	12.21	1.20	2.19	3.21	4.20	5.20	6.19	7.19	8.18	9.17	260
718	260	9.22	10.22	11.21	12.21	1.20	2.19	3.21	4.20	5.20	6.19	7.19	8.18	9.17	261
719	261	9.22	10.22	11.21	12.21	1.20	2.19	3.21	4.20	5.20	6.19	7.19	8.18	9.17	262
720	262	9.22	10.22	11.21	12.21	1.20	2.19	3.21	4.20	5.20	6.19	7.19	8.18	9.17	263
721	263	9.22	10.22	11.21	12.21	1.20	2.19	3.20	4.19	5.19	6.18	7.18	8.17	9.16	264
722	264	9.21	10.21	11.20	12.20	1.19	2.18	3.20	4.19	5.19	6.18	7.18	8.17	9.16	265
723	265	9.21	10.21	11.20	12.20	1.19	2.18	3.20	4.19	5.19	6.18	7.18	8.17	9.16	266
724	266	9.21	10.21	11.20	12.20	1.19	2.18	3.20	4.19	5.19	6.18	7.18	8.17	9.16	267
725	267	9.21	10.21	11.20	12.20	1.19	2.18	3.19	4.18	5.18	6.17	7.17	8.16	9.15	268
726	268	9.20	10.20	11.19	12.19	1.18	2.17	3.19	4.18	5.18	6.17	7.17	8.16	9.15	269
727	269	9.20	10.20	11.19	12.19	1.18	2.17	3.19	4.18	5.18	6.17	7.17	8.16	9.15	270
729	271	9.20	10.20	11.19	12.19	1.18	2.17	3.18	4.17	5.17	6.16	7.16	8.15	9.14	272
730	272	9.19	10.19	11.18	12.18	1.17	2.16	3.18	4.17	5.17	6.16	7.16	8.15	9.14	273
731	273	9.19	10.19	11.18	12.18	1.17	2.16	3.18	4.17	5.17	6.16	7.16	8.15	9.14	274
732	274	9.19	10.19	11.18	12.18	1.17	2.16	3.18	4.17	5.17	6.16	7.16	8.15	9.14	275
733	275	9.19	10.19	11.18	12.18	1.17	2.16	3.18	4.17	5.17	6.16	7.16	8.15	9.14	276
734	276	9.18	10.18	11.17	12.17	1.16	2.15	3.17	4.16	5.16	6.15	7.15	8.14	9.13	277
735	277	9.18	10.18	11.17	12.17	1.16	2.15	3.17	4.16	5.16	6.15	7.15	8.14	9.13	278
736	278	9.18	10.18	11.17	12.17	1.16	2.15	3.17	4.16	5.16	6.15	7.15	8.14	9.13	279
737	279	9.18	10.18	11.17	12.17	1.16	2.15	3.16	4.15	5.15	6.14	7.14	8.13	9.12	280
738	280	9.17	10.17	11.16	12.16	1.15	2.14	3.16	4.15	5.15	6.14	7.14	8.13	9.12	281
739	281	9.17	10.17	11.16	12.16	1.15	2.14	3.16	4.15	5.15	6.14	7.14	8.13	9.12	282
740	282	9.17	10.17	11.16	12.16	1.15	2.14	3.16	4.15	5.15	6.14	7.14	8.13	9.12	283
741	283	9.17	10.17	11.16	12.16	1.15	2.14	3.15	4.14	5.14	6.13	7.13	8.12	9.11	284
742	284	9.16	10.16	11.15	12.15	1.14	2.13	3.15	4.14	5.14	6.13	7.13	8.12	9.11	285
743	285	9.16	10.16	11.15	12.15	1.14	2.13	3.15	4.14	5.14	6.13	7.13	8.12	9.11	286
744	286	9.16	10.16	11.15	12.15	1.14	2.13	3.15	4.14	5.14	6.13	7.13	8.12	9.11	287
745	287	9.16	10.16	11.15	12.15	1.14	2.13	3.14	4.13	5.13	6.12	7.12	8.11	9.10	288
746	288	9.15	10.15	11.14	12.14	1.13	2.12	3.14	4.13	5.13	6.12	7.12	8.11	9.10	289
747	289	9.15	10.15	11.14	12.14	1.13	2.12	3.14	4.13	5.13	6.12	7.12	8.11	9.10	290
748	290	9.15	10.15	11.14	12.14	1.13	2.12	3.14	4.13	5.13	6.12	7.12	8.11	9.10	291
749	291	9.15	10.15	11.14	12.14	1.13	2.12	3.13	4.12	5.12	6.11	7.11	8.10	9.9	292

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
750	292	9.14	10.14	11.13	12.13	1.12	2.11	3.13	4.12	5.12	6.11	7.11	8.10	9.9	293
751	293	9.14	10.14	11.13	12.13	1.12	2.11	3.13	4.12	5.12	6.11	7.11	8.10	9.9	294
752	294	9.14	10.14	11.13	12.13	1.12	2.11	3.13	4.12	5.12	6.11	7.11	8.10	9.9	295
753	295	9.14	10.14	11.13	12.13	1.12	2.11	3.12	4.11	5.11	6.10	7.10	8.9	9.8	296
754	296	9.13	10.13	11.12	12.12	1.11	2.10	3.12	4.11	5.11	6.10	7.10	8.9	9.8	297
755	297	9.13	10.13	11.12	12.12	1.11	2.10	3.12	4.11	5.11	6.10	7.10	8.9	9.8	298
756	298	9.13	10.13	11.12	12.12	1.11	2.10	3.12	4.11	5.11	6.10	7.10	8.9	9.8	299
757	299	9.13	10.13	11.12	12.12	1.11	2.10	3.11	4.10	5.10	6.9	7.9	8.8	9.7	300
758	300	9.13	10.13	11.12	12.12	1.11	2.10	3.11	4.10	5.10	6.9	7.9	8.8	9.7	301
759	301	9.12	10.12	11.11	12.11	1.10	2.9	3.11	4.10	5.10	6.9	7.9	8.8	9.7	302
760	302	9.12	10.12	11.11	12.11	1.10	2.9	3.11	4.10	5.10	6.9	7.9	8.8	9.7	303
761	303	9.12	10.12	11.11	12.11	1.10	2.9	3.10	4.9	5.9	6.8	7.8	8.7	9.6	304
762	304	9.11	10.11	11.10	12.10	1.9	2.8	3.10	4.9	5.9	6.8	7.8	8.7	9.6	305
763	305	9.11	10.11	11.10	12.10	1.9	2.8	3.10	4.9	5.9	6.8	7.8	8.7	9.6	306
764	306	9.11	10.11	11.10	12.10	1.9	2.8	3.10	4.9	5.9	6.8	7.8	8.7	9.6	307
765	307	9.11	10.11	11.10	12.10	1.9	2.8	3.10	4.9	5.9	6.8	7.8	8.7	9.6	308
766	308	9.10	10.10	11.9	12.9	1.8	2.7	3.9	4.8	5.8	6.7	7.7	8.6	9.5	309
767	309	9.10	10.10	11.9	12.9	1.8	2.7	3.9	4.8	5.8	6.7	7.7	8.6	9.5	310
768	310	9.10	10.10	11.9	12.9	1.8	2.7	3.8	4.7	5.7	6.6	7.6	8.5	9.4	311
769	311	9.10	10.10	11.8	12.8	1.7	2.6	3.8	4.7	5.7	6.6	7.6	8.5	9.4	312
770	312	9.9	10.9	11.8	12.8	1.7	2.6	3.8	4.7	5.7	6.6	7.6	8.5	9.4	313
771	313	9.9	10.9	11.8	12.8	1.7	2.6	3.8	4.7	5.7	6.6	7.6	8.5	9.4	314
772	314	9.9	10.9	11.8	12.8	1.7	2.6	3.7	4.6	5.6	6.5	7.5	8.4	9.3	315
773	315	9.9	10.9	11.8	12.8	1.7	2.6	3.7	4.6	5.6	6.5	7.5	8.4	9.3	316
774	316	9.8	10.8	11.7	12.7	1.6	2.5	3.7	4.6	5.6	6.5	7.5	8.4	9.3	317
775	317	9.8	10.8	11.7	12.7	1.6	2.5	3.7	4.6	5.6	6.5	7.5	8.4	9.3	318
776	318	9.8	10.8	11.7	12.7	1.6	2.5	3.6	4.5	5.5	6.4	7.4	8.3	9.2	319
777	319	9.8	10.8	11.7	12.7	1.6	2.5	3.6	4.5	5.5	6.4	7.4	8.3	9.2	320
778	320	9.7	10.7	11.6	12.6	1.5	2.4	3.6	4.5	5.5	6.4	7.4	8.3	9.2	321
779	321	9.7	10.7	11.6	12.6	1.5	2.4	3.6	4.5	5.5	6.4	7.4	8.3	9.2	322
780	322	9.7	10.7	11.6	12.6	1.5	2.4	3.6	4.5	5.5	6.4	7.4	8.3	9.2	323
781	323	9.7	10.7	11.6	12.6	1.5	2.4	3.5	4.4	5.4	6.3	7.3	8.2	9.1	324
782	324	9.7	10.7	11.6	12.6	1.5	2.4	3.5	4.4	5.4	6.3	7.3	8.2	9.1	325
783	325	9.6	10.6	11.5	12.5	1.4	2.3	3.5	4.4	5.4	6.3	7.3	8.2	9.1	326

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
920	462	8	9	10	11	12	1	12	3	3	4	5	6	7	463
921	463	8	9	10	11	12	1	12	3	3	4	5	6	7	464
922	464	8	9	10	11	12	1	12	3	3	4	5	6	7	465
923	465	8	9	10	11	12	1	12	3	3	4	5	6	7	466
924	466	8	9	10	11	12	1	12	3	3	4	5	6	7	467
925	467	8	9	10	11	12	1	12	3	3	4	5	6	7	468
926	468	8	9	10	11	12	1	12	3	3	4	5	6	7	469
927	469	8	9	10	11	12	1	12	3	3	4	5	6	7	470
928	470	8	9	10	11	12	1	12	3	3	4	5	6	7	471
929	471	8	9	10	11	12	1	12	3	3	4	5	6	7	472
930	472	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	473
931	473	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	474
932	474	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	475
933	475	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	476
934	476	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	477
935	477	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	478
936	478	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	479
937	479	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	480
938	480	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	481
939	481	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	482
940	482	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	483
941	483	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	484
942	484	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	485
943	485	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	486
944	486	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	487
945	487	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	488
946	488	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	489
947	489	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	490
948	490	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	491
949	491	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	492
950	492	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	493
951	493	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	494
952	494	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	495
953	495	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	496
954	496	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	497

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
955	497	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	498
956	498	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	499
957	499	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	500
958	500	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	501
959	501	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	502
960	502	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	503
961	503	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	504
962	504	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	505
963	505	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	506
964	506	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	507
965	507	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	508
966	508	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	509
967	509	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	510
968	510	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	511
969	511	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	512
970	512	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	513
971	513	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	514
972	514	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	515
973	515	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	516
974	516	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	517
975	517	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	518
976	518	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	519
977	519	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	520
978	520	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	521
979	521	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	522
980	522	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	523
981	523	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	524
982	524	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	525
983	525	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	526
984	526	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	527
985	527	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	528
986	528	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	529
987	529	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	530
988	530	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	531

Table with 17 columns (1-17) and multiple rows of numbers. The columns are labeled with various terms like '1', '2', '3', etc. The numbers are organized in a grid-like structure.

1 2 3 4 5 6 7 8 9 10
Ա Բ Գ Կ Ը Թ Ժ

Table with 17 columns (1-17) and multiple rows of numbers. The columns are labeled with various terms like '1', '2', '3', etc. The numbers are organized in a grid-like structure.

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1400	942	4	5	6	4	7	4	10	2	11	1	12	1	3	31	391
1401	943	4	5	6	4	8	3	10	2	11	1	12	1	3	30	392
1402	944	4	5	6	4	8	3	10	2	11	1	12	1	3	30	393
1403	945	4	5	6	3	7	3	10	1	10	31	11	30	2	28	394
1404	946	4	5	6	3	8	2	10	1	10	31	11	30	2	28	395
1405	947	4	5	6	3	8	2	10	1	10	31	11	30	2	28	396
1406	948	4	5	6	3	8	2	10	1	10	31	11	30	2	28	397
1407	949	4	3	6	2	7	2	9	30	10	30	11	29	2	27	398
1408	950	4	3	6	2	8	1	9	30	10	30	11	29	2	27	399
1409	951	4	3	6	2	8	1	9	30	10	30	11	29	2	27	400
1410	952	4	2	5	2	7	1	8	31	9	30	10	29	2	26	401
1411	953	4	2	5	2	7	1	8	31	9	30	10	29	2	26	402
1412	954	4	2	5	2	7	1	8	31	9	30	10	29	2	26	403
1413	955	4	2	5	2	7	1	8	31	9	30	10	29	2	26	404
1414	956	4	1	5	1	6	30	9	28	10	28	11	27	2	25	405
1415	957	4	1	5	1	6	30	9	28	10	28	11	27	2	25	406
1416	958	4	1	5	1	6	30	9	28	10	28	11	27	2	25	407
1417	959	4	1	5	1	6	30	9	28	10	28	11	27	2	25	408
1418	960	3	31	4	30	7	29	8	27	10	27	11	26	2	24	409
1419	961	3	31	4	30	7	29	8	27	10	27	11	26	2	24	410
1420	962	3	31	4	30	7	29	8	27	10	27	11	26	2	24	411
1421	963	3	31	4	30	7	29	8	27	10	27	11	26	2	24	412
1422	964	3	30	4	29	7	28	8	27	10	26	11	25	2	24	413
1423	965	3	30	4	29	7	28	8	27	10	26	11	25	2	24	414
1424	966	3	30	4	29	7	28	8	27	10	26	11	25	2	24	415
1425	967	3	30	4	29	7	28	8	27	10	26	11	25	2	24	416
1426	968	3	29	4	28	7	27	8	26	9	25	10	25	2	24	417
1427	969	3	29	4	28	7	27	8	26	9	25	10	25	2	24	418
1428	970	3	29	4	28	7	27	8	26	9	25	10	25	2	24	419
1429	971	3	29	4	28	7	27	8	26	9	25	10	25	2	24	420
1430	972	3	28	4	27	6	26	8	25	9	24	10	24	3	23	421
1431	973	3	28	4	27	6	26	8	25	9	24	10	24	3	23	422
1432	974	3	28	4	27	6	26	8	25	9	24	10	24	3	23	423
1433	975	3	28	4	27	6	26	8	25	9	24	10	24	3	23	424

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1434	976	3	27	4	26	5	26	6	25	7	25	8	24	9	23	425
1435	977	3	27	4	26	5	26	6	25	7	25	8	24	9	23	426
1436	978	3	27	4	26	5	26	6	25	7	25	8	24	9	23	427
1437	979	3	27	4	26	5	26	6	25	7	25	8	24	9	23	428
1438	980	3	26	4	25	5	25	6	24	7	24	8	23	9	22	429
1439	981	3	26	4	25	5	25	6	24	7	24	8	23	9	22	430
1440	982	3	26	4	25	5	25	6	24	7	24	8	23	9	22	431
1441	983	3	26	4	25	5	25	6	24	7	24	8	23	9	22	432
1442	984	3	25	4	24	5	24	6	23	7	23	8	22	9	21	433
1443	985	3	25	4	24	5	24	6	23	7	23	8	22	9	21	434
1444	986	3	25	4	24	5	24	6	23	7	23	8	22	9	21	435
1445	987	3	25	4	24	5	24	6	23	7	23	8	22	9	21	436
1446	988	3	24	4	23	5	23	6	22	7	22	8	21	9	20	437
1447	989	3	24	4	23	5	23	6	22	7	22	8	21	9	20	438
1448	990	3	24	4	23	5	23	6	22	7	22	8	21	9	20	439
1449	991	3	24	4	23	5	23	6	22	7	22	8	21	9	20	440
1450	992	3	23	4	22	5	22	6	21	7	21	8	20	9	19	441
1451	993	3	23	4	22	5	22	6	21	7	21	8	20	9	19	442
1452	994	3	23	4	22	5	22	6	21	7	21	8	20	9	19	443
1453	995	3	23	4	22	5	22	6	21	7	21	8	20	9	19	444
1454	996	3	22	4	21	5	21	6	20	7	20	8	19	9	18	445
1455	997	3	22	4	21	5	21	6	20	7	20	8	19	9	18	446
1456	998	3	22	4	21	5	21	6	20	7	20	8	19	9	18	447
1457	999	3	22	4	21	5	21	6	20	7	20	8	19	9	18	448
1458	1000	3	21	4	20	5	20	6	19	7	19	8	18	9	17	449
1459	1001	3	21	4	20	5	20	6	19	7	19	8	18	9	17	450
1460	1002	3	21	4	20	5	20	6	19	7	19	8	18	9	17	451
(1461)	1003	3	21	4	20	5	20	6	19	7	19	8	18	9	17	452
1461	1004	3	20	4	19	5	19	6	18	7	18	8	17	9	16	453
1462	1005	3	20	4	19	5	19	6	18	7	18	8	17	9	16	454
1463	1006	3	20	4	19	5	19	6	18	7	18	8	17	9	16	455
1464	1007	3	20	4	19	5	19	6	18	7	18	8	17	9	16	456
1465	1008	3	19	4	18	5	18	6	17	7	17	8	16	9	15	457

Table with columns 1-17, containing a grid of numbers. The grid is 17 columns wide and approximately 80 rows high. The first column contains the number 1, and the last column contains the number 17. The numbers in the grid vary in length and spacing, often with dots or dashes between digits.

Table with columns 1-17, continuing the grid of numbers from the previous page. The grid is 17 columns wide and approximately 80 rows high. The first column contains the number 1, and the last column contains the number 17. The numbers in the grid vary in length and spacing, often with dots or dashes between digits.

Table with 17 columns (1-17) and 19 rows (1877-1910). Contains numerical data and alphanumerical codes.

Table with 17 columns (1-17) and 19 rows (1911-1945). Contains numerical data and alphanumerical codes.

Table with 17 columns (numbered 1 to 17) and rows containing numbers and their corresponding algebraic forms (e.g., 2044, 2045, ..., 2678).

Table with 17 columns (numbered 1 to 17) and rows containing numbers and their corresponding algebraic forms (e.g., 2679, 2680, ..., 2719).

Table with 17 columns (1-17) and multiple rows of numbers and text. Column 1 contains numbers from 2714 to 2748. Column 17 contains codes like 0-29, 0-31, etc.

Table with 17 columns (1-17) and multiple rows of numbers and text. Column 1 contains numbers from 2749 to 2783. Column 17 contains codes like 0-29, 0-31, etc.

Բ Ո Վ Ա Ն Գ Ե Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երկու խումբ	5
Ներածություն	7
Ա. Նախագիտելիք	7
Բ. Տոմարական համակարգերը հին Հայաստանում	14
1. Հին հայկական տամարը, նրա սկիզբը և Հայկյան շրջանները	21
Ա. Ամսանուններ	57
Բ. Թրանուններ	77
Գ. Ժամ և ժամանուններ	80
Դ. Պահ և պահանուններ	85
2. Զատիկ և զատիկացանկեր. Անդրեասի զատիկացանկեր	93
3. Աթանաս և Շիրակացի. Հայոց Մեծ թվական	151
4. Հայոց Փոքր (Սարկավագադիր) թվականը	183
Հավելված	213
Հայոց բուն թվականի ամսամուտերի և հուլյան դարաշրջանի ամսաթվերի զուգադրական առիտակ	213

Հրատ. խմբագիր՝ Ժ. Մ. Աղունց
Գեղ. խմբագիր՝ Հ. Ն. Գործակալյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Մ. Մանուշարյան
Սրբագրիչ՝ Ջ. Ն. Նաթանյան

ИБ № 1039

Հանձնված է շարվածքի 5.10.1985 թ.: Ստորագրված է տպագրության 6.05.1986 թ.:
ՎՋ 06683: Չափը 60x90՝/զ: Թուղթ № 1: Տառատեսակ «Գրքի սովորական»: «Բարձր»
տպագրություն: Տպագր 18,75 մամուլ: Հրատ.-հաշվարկ. 18,8 մամուլ: Տպարանակ 3000:
Հրատ. № 6654: Պա-վեր № 1919: Գինը՝ 2 ռ. 75 կոպ.:
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24 գ.:
Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արավյան փ. № 52:

Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.
Типография Ереванского университета, Ереван, ул. Абеляна № 52.